


865

L. III



1967


ՄՈՒՐԱ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

Իրար.

Խառնարանի Գրական



Նոր շրջան VII տարի

Հրատ. IXX տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԵԿՆԵՆ, ՀԵՍՏՐԵԿԵԿՆԵՆ ԵՒ ՔԵՂԵՔԵԿՆԵՆ

Ա Մ Ս Ա Ք Ի Ր

№ 1

Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր

1907



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Մադար., փող., 5.

1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1) ՄԱՐԳԱՐԷ, Պուշկինի, Թ. Լ. Մանուէլեանի 5
- 2) ԱՅՍՊԷՍ ԿԸ ԽՕՍԷՐ ԶԱՐԱԴՈՒՍՏՐԱՆ, Նիցշէի, Թ. Տ. Է.-ի 6
- 3) ԵՐԿՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ, Շիլլերի, Թ. Լ. Մանուէլեանի 11
- 4) ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅ, Մինաս Յոլակի 15
- 5) ԵՐԿԻՐԸ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ, Բ. Այվազեանի 32
- 6) ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ, Դ.-ի 39
- 7) ԱԲԴՈՒԼ-ՀԱՄԻԴԻ ԳԱՂՏՆԻ ԴԱԽԵՐԸ, Սէֆեր Բէյի . . . 49
- 8) ԵԳԻՊՏՈՍԻՑ, Ա. Շ.-ի, 58
- 9) «ՈՒ ՀՈԴԻՒՄ ՄԷՋ», բանաստեղծութիւն Հր. Փալեանի 64
- 10) ԲԱՐՁՐԱԴՈՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ, Իշ. Գ. Մ. Թումանովի 65
- 11) ԳՐԾՈՒՆԵԱՅ ԿԵԱՆՔԸ, Ռուզվելթի, Թարգմ. Դր. Ն. Ս.-ի 90
- 12) ՅԻՇԻՐ ՀՈՂԱԾԻՆ, Պլեշէեվի, Թ. Ա. Ժամուրեանի 103
- 13) ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, (Պատկեր կրթութեան հայ բուրժուայի կեանքից) Գ.-ի 104
- 14) Եւր. սոցիալիստները Ռուս. յեղ. մասին...
- 15) ՀԶՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՑ ՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, Մ. Կ.-ի 103
- 16) ԿԱՐԼ ՄԱՐԿՍԸ ԵՒ ՄԱՐԿՍԻԶՄԸ Բ. Իշխանեանի . . . 128
- 17) ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ 154
- 18) ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ 1) Առ. Նալբանդեանի «Առակներ» Լ. Մ. 2) Բրակէ «Կորչեն սոց.-դեմոկրատները» Նա. 3) Ե. Գողբաշվիլի «Ի՞նչ արաւ օրօրոյի երգը» Լ.
- 19) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ընտրողական պայքար.—Բիւրօկրատիական մանեօվներ.—Կաշնակցութիւնը ժողովրդի մէջ.—Կղերական քիւսկրատիայի «ժամանակաւոր» օրէնքը:
- 20) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մարդկային կեանքի ովկեանօսը.—Շարժումներ.—Պարսկական սահմանադրութիւնը.—Ֆրանսիական դեմօկրատիզմը.—Բայխտադի վերջին բնորոշումների առիթով.—Նոր դատարարականութիւն.—«Արմէնայի» խօստովանքը:
- 21) ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ
- 22) ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 156

ԲԱՅՈՒՆԷ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 թ.

„ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան VII տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Փակագում	Պարսկաստան	տարեկան 10 ռ.	Ս. Բաասսահման	տարեկան 12 ռ.	(32 ֆ.)
		կէս տարին 5 » 40լ		կէս տարին 7 »	(18 ֆ.)
		ամսական 90 կ.		ամսական	(3 ֆ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նա'եւ մաս-
մաս(5—5 ռ.), երկրորդ վճարը լինում է մայիսին: Տարր-
դարձոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանող-
ների, գիտացիների եւ քանութիւնների համար բաժանոր-
դագինն է (Ռուսաստ.) 8 ռուբլի տարեկան, որ կարելի
է վճարել մաս-մաս(4-4)ռ.:

Հասցէն. Тифлисъ «Мурчъ» Tiflis «Mourtch»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

Թիֆլիսում — խմբագրատանը (ձախմուտական փողոց, տ. № 12)
«Գուտենբերգ», «Կենտրոնական», «Новая Рѣчь» (Գոլովինսկիյ, արք. Թատ-
րոնի դիմաց) գրախանութներում եւ «Փարոս» կիսկում (Երևան, հրապ.)
Կայսերական ալի տեղեւոյց պէտք է դիմել՝ Тифлисъ,
въ редакцію журнала «МУРЧЪ».

Ա. Բաասսահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ընդունում է ամեն լեզուով: Յայտարա-
րութիւնների համար վճարում են.—1 երես ընտղ յայտարարութեան հա-
մար 10 ռ., 1/2 եր. 5., 1/4 եր.—2 ռ., տողատեղ (կորպ.)—40 կ.:

Խմբագիր՝ ԼԵՆՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Մ Ա Ր Գ Ա Ր Է

Պ ու շ կ ի ն ի

Духовной каждою тобою...

Հողով ծարաւի վերածնութեան՝
Դեզերում էի մռայլ անապատում,
Եւ մի սերովբէ ահա վեցթեան
Յանկարծ երևաց իմ ճանապարհում:
Մատներով թեթե՛ւ երազի նըման՝
Անցաւ իմ պղղտոր բիբերիս վըրան,—
Եւ լայն բացուեցան իմաստուն բիբեր,
Ինչպէս վախեցած արծըւի աչքեր.
Իմ ականջներին նա թեթեւ դիպաւ.
Եւ լոցրեց ժըխոր և ձայներ անբաւ,—
Եւ ես լըսեցի երկնի երերում,
Եւ վերին թըռիչք սուրբ ոգիների,
Եւ սողունների շարժումը ծովում,
Եւ հովիտներում փըթթելը որթի:
Եւ նա իմ բերնին մերձեցաւ հըպեց
Եւ մեղսոտ լեզուն արմատից պոկեց,
Իմ դատարկախօս լեզուն նենգաւոր,
Եւ իմ բերանում՝ մեռեալ ու սառած՝
Դըրեց իմաստուն օձի խայթ հըզօր
Իր աջ ձեռքովը՝ արիւնով ներկուած.
Եւ նա իմ կուրծքը սըրով պատառեց
Եւ հանեց սիրտըս. զողդող ու տըկար՝
Եւ իմ պատառուած կըրծքի մէջ դըրեց
Սըրտի փոխարէն՝ կըրակ բոցավառ.
Անապատի մէջ լուռ, դիակի պէս,
Ընկած էի ես,—և ասաց ինձ Տէր.
«Ելի՛ր, մարգարէ, և լըսի՛ր և տես.
Իմ կամքը թող քեզ լինի քաջալեր.
Եւ ծով և ցամաք շըրջազայելով
Մարդկանց սըրտերը բորբոքի՛ր խօսքով:»

Լ. Մանուէլեան

ԱՅՍՊԷՍ ԿԸ ԽՕՍԷՐ ԶԱՐԱԴՈՒՍՏՐԱՆ*)

Ն ի ց շ է ի

1

Երբ Զարագուստը ահա տարեկան եղաւ, թողուց իր հայրենիքը ու իր հայրենի լիճը ու դնաց գէպի լեռը. հող առանձնութիւնը ու մտային հաճոյքը վայելեց ու տասը տարի անընդհատ չնեղացաւ:

Բայց վերջապէս սիրտը փոփոխութիւն կրեց,—ու առաւօտ մը, արշալոյսին հետ միասին ոտքի ելնելով, գէպի արեգակը յառաջացաւ ու սա ձևով անոր խօսեցաւ:

—Ո՛ր մեծ աստղ. ի՞նչ ըլլալու էր քու երջանկութիւնըդ, եթէ շունենայիր բոլոր անոնք զոր կը լուսաւորես:

Տասը տարիէ ի վեր որ իմ քարայրս կուգաս, պիտի նեղանայիր քու լոյսէդ ու այս ճամբայէն, եթէ ես, իմ արծիւս ու իմ օձս չըլլայինք:

Բայց ամէն առաւօտ քեզի կսպասէինք, քեզի կօրհնէինք:

Ահա, ալ զգուած եմ իմ իմաստութենէս, ինչպէս մեղուն իր չափէն աւելի կուտակած մեղրէն: Պէտք ունիմ գէպ ինձ երկնցող ձեռքերու:

Պիտի ուզէի տալ ու բաշխել, մինչև որ իմաստուն մարդիկ իրենց խենդութեամբը ուրախ ըլլան ու ազբաս մարդիկ իրենց հարստութեամբը՝ երջանիկ:

Ահա թէ ինչու պարտաւոր եմ խորութեանց մէջ իջնալ, ինչպէս որ դուն երեկոյին կընես, երբ ծովերուն

*) Նիցշէի մասին տես «Մուրճ» 1905 թ, №№ 3, 5, 6.

ետեւը կերթաս, լոյսդ երկրին տակը տանելով, ո՞նձութեամբ տուցուն ասող:

Պարտաւոր եմ աներևութանալ քեզի պէս, մայր մտնել, ինչպէս որ կըսեն այն մարդիկ, որոնց մօտ կուգեմ իջնալ:

Օրհնէ՛ ուրեմն զիս, հանգարա աչք, որ կարող է աննախանձ նկատել նոյնիսկ անչափ երջանկութիւն մը:

Օրհնէ՛ պորթկալ ուղող գաւաթը, թող ոսկէզօծ ջուրը անկէ բղխի, ամէն կողմէ քու բերկրանքիդ ցոլքը բերելով:

Տես. այս գաւաթը վերստին կուգէ պարպուիլ ու Զարադուստրա վերստին կուգէ մարդ ըլլալ:»

Այսպէս սկսեց Զարադուստրայի վարիջումը:

2

Զարադուստրա առանձին լեռներէն վար իջաւ ու բնաւ մարդու չհանգիպեցաւ: Բայց երբ անտառներու մէջ գտնուեցաւ, յանկարծ իր առջևը կանգնեցաւ ծերունի մը, որ իր սուրբ հիւղակը թողած էր՝ անտառին մէջ արմատներ փնտռելու համար: Ու այսպէս խօսեցաւ ծերունին ու Զարադուստրային ըսաւ.

«Այս ճամբորդը ինձի անծանօթ չէ, բուսական տարիներ եղաւ որ ասկէց անցաւ: Անունը Զարադուստրա էր, բայց փոխուեցաւ:

Այն ատեն քու մոխիրդ լեռը կը տանէիր. այսօր ալ կուգես կրակդ ձորը տանել: Չե՞ս վախնար հրդեհածիւններու պատուհասէն:

Այո, Զարադուստրան ճանչցայ: Աչքը պայծառ է ու զգուանքի ոչ մէկ խիթ անոր շրթունքը կը փոսէ:

Չէ՞ որ պարողի մը տես կը յառաջանայ:

Զարադուստրա կերպարանափոխուեցաւ, Զարադուստրա մանկացաւ, Զարադուստրա արթնցաւ, ինչ ընելու ես այժմ քնանալու վրայ եղողներուն մօտը:

Առանձնութեան մէջ կապրէիր ծովի մէջ ապրելու պէս ու ծովը բեզի կը տանէր: Վայ քեզի, ցամաք ել-

նեղ կուգես: Վայ քեզի, կուգես որ մարմինդ վերստին ի՞նքդ քաշես:»

Զարդուստրա պատասխանեց. «Մարդերը կը սիրեմ:»

«Ինչո՞ւ ուրեմն, ըսաւ իմաստունը, անտառներու ու առանձնութեան մէջ գացի: Զէ՞ որ մարդերը չափազանց սիրելուս համար:

Այժմ Աստուածը կը սիրեմ. մարդերը բնաւ չեմ սիրեր: Մարդը ինձի համար չափազանց անկատար բան մըն է: Մարդուն սէրը զիս պիտի սպաննէր:»

Զարդուստրա պատասխանեց. «Ինչո՞ւ սիրոյ վրայ խօսած եղայ. մարդոց նուէր մը պիտի ընեմ:»

«Բան մը անոնց մի՞ տար, ըսաւ սուրբը: Նայէ աւելի որ անոնցմէ բան մը վերցնես ու օգնէ որ զայն կրեն—ուշիւն անոնց համար լաւագոյն պիտի չըլլալ. կը բաւէ որ ասիկա քեզի ալ լաւ գայ:

«Ու եթէ կուգես տալ, ողորմութենէ աւելի բան մը, մի՞ տար, ու սոչասէ՛ որ զայն քեզմէ ուզեն:»

«Ոչ, պատասխանեց Զարուդուստրա, ողորմութիւն չեմ ընել: Ողորմութիւն ընելու համար պէտք եղածին չափ աղքատ չեմ:»

Սուրբը Զուրադուստրային վրայ սկսաւ խնդալ ու սապէս խօսեցաւ. «Զանա այն տոտէն անոնց քու դանձեղ ընդունել տալու: Մենակեացներէն կը կասկածին ու չեն կարծեր որ բան մը տալու համար կուգան:

Անոնց ականջներուն, մենակեացին քայլերը փողոցներուն մէջ չափազանց տարօրինակէս կը թնդան:

Կասկածոտ որպէս թէ գիշերը, անկողիններնուն մէջը պառկած, մարդու մը քալելը լսելու ըլլային, արևուն ծագելէն շատ առաջ գուցէ իրենց իրենց կը հարցնեն. այս գողը ո՞ւր կը սպրդի:

Մի՛ երթար մարդոց մօտ, կեցիր անտառին մէջ. նայէ աւելի որ անասուններուն քովը երթաս: Ինչո՞ւ ինձի պէս չես ուզեր ըլլալ—արջարջերուն մէջը, թռչուն՝ թռչուններուն մէջը:»

«Ու սուրբը անտառներուն մէջ ի՞նչ կընէ», հարցուց Զարագուստը:

Սուրբը պատասխանեց. «Երգեր կը շինեմ ու զանոնց կերգեմ, ու երբ երգեր կը շինեմ, կը խնդամ, կուլամ, ու կը մըմրամ. ահա ասանկ Աստուածը կը փառաբանեմ:

Երգերով, արցունքներով, ժպիտներով ու մըմունջներով կը փառաբանեմ Աստուածը բարեկեց. որ իմ Աստուածս է: Սակայն ի՞նչ է մեզի ընելիք նուէրդ:

Երբ Զարագուստը այս խօսքերը լսեց, սուրբը բարեկեց ու անոր ըսաւ. «Ի՞նչ կընամ ունենալ քեզի տալիք: Բայց թող որ շուտով երթամ, որպէսզի քեզմէ բան մը չառնեմ»:—Ու այսպէս երկուքն ալ իրարմէ բաժնուեցան, ծերունին ու մարդը, խնդալով երկու փոքր մանչերու խնդալուն պէս:

Սակայն երբ Զարագուստը առանձին մնաց, այսպէս իր սրտին խօսեցաւ. «Կարելի է միթէ: Այս ծերուկ սուրբը իր անտառին մէջը դեռ չէ լսեր թէ Աստուած մնում է:»

3.

Երբ Զարագուստը հասաւ անտառներուն ամենէն մօտիկ քաղաքին, հոգ հանգիպեցաւ մեծ բազմութեան մը որ հասարակաց հրապարակին վրայ հաւաքուած էր. վասնզի ազդ ըլլած էին որ լարախաղաց մը պիտի երկնար: Ու Զարագուստը ժողովրդին խօսեցաւ ու անոր ըսաւ.

—Ձեզի գերմարդը կը քարոզիմ: Մարդը բան մը է, որ պէտք ունի բարձրանալու: Ի՞նչ ըրիք զայն բարձրացնելու համար:

Մինչև այժմ բոլոր էակները իրենցմէ բարձր ուէ բան մը ստեղծեցին, ու դուք կուզէք ըլլալ այս մեծ ալիքին տեղատուութիւնը ու մարդը բարձրացնելուն՝ նախընտրել անասնութեան վերադարձը:

Ի՞նչ է մարդուն համար կապիկը: Խեղկատակու-

թիւն մը կամ ցաւագին ամօթ մը: Ու ահա թէ ինչ պէտք է ըլլայ մարդը՝ գերմարդին համար. խեղկատակութիւն մը կամ ցաւագին ամօթ մը:

Մինչև մարդը՝ որդին (ճիճու) ճանապարհը դժեցիք ու գեռ ձեզի որդէն շատ բան մնաց:

Փամանակին կապիկ էիք ու հիմակ ալ գեռ մարդը կապիկէ մը աւելի կապիկ է:

Բայց ձեզմէ ամենէն իմաստունն ալ այլադան, հրէշտնման բան մըն է, տունկէ մը ու ուրուականէ մը շինուած:

Սակայն միթէ ձեզի ըսի՞ որ ուրուական կամ տունկ ըլլաք:

Ահա, ձեզի կը քարոզեմ գերմարդը:

Գերմարդը երկրին իմաստն է: Թոյ ձեր կամքը ըսէ. թող գերմարդը երկրին իմաստը ըլլայ:

Կը պաղատիմ ձեզի, եղբայրներս, երկրին հաւատարիմ մնացէք ու մի հաւատաք գերերկրային յոյսերու վրայ ձեզի խօսողներուն: Ասոնք թունաւոր էակներ են, գիտնան կամ ոչ:

Ասոնք կեանքը նշաւակող էակներ են, հոգեվարք ու թունաւորեալ էակներ, որոնցմէ երկիրը յոգնած է... թոյ երթան ուրեմն:

Փամանակին Աստուծոյ դէմ հայհոյանքը մեծագոյն հայհոյանքն էր, բայց Աստուած մեռած է ու հետը միասին մեռած են անոր հայհոյիչները: Այժմ աւելի սոսկալի բան մը եթէ կայ, այն ալ երկրին հայհոյել է ու երկրին իմաստէն աւելի անթափանցելիին աղիքները յարգել:

Փամանակին հողին մարմնին արհամարհանքով կը նայէր, ու այն ատեն այս արհամարհանքէն բարձր ոչինչ կար: Հողին կուղէր որ մարմինը նիհար, հրէշային, քաղցած ըլլայ: Այս կերպով կը մտածէր խոյս տալ անկէ ու երկրէն:

Ո՛հ, հողին ինքն ալ նիհար, հրէշային ու քաղցած էր. ու անդթութիւնը երեն համար հեշտութիւն մընէր:

Բայց դուք ալ, եղբայրներս, ըսէք ինծի. ձեր մարմինը ձեր հոգիին մասին ի՞նչ կ'իմացնէ: Միթէ ձեր հոգին խեղճութիւն, աղտեղութիւն ու արգահատելի ինքնագոհութիւն չէ:

Իրաւացնէ, մարդը աղտոտ գետ մըն է: Պէտք է ովկիանոս եղած ըլլալ առանց կեղտոտուելու աղտոտ գէտ մը ընդունելու համար:

Ահա, ձեզի գերմարդը կը քարոզեմ. անիկա այս ովկիանոսն է. ձեր մեծ արհամարհանքը անոր մէջ կըրնայ հոսել:

Աւելի ի՞նչ վսեմ բանի մը կրնայի սպասել: Մեծ արհամարհանքի տեսնն է: Ատեն մը ուր ձեր երջանկութիւնն իսկ զղուանքի կը փոխուի, ճիշդ ձեր ողջմտութեան ու առաքինութեան պէս:

Ատեն մը ուր կըսէք. «Ի՞նչ փոյթ երջանկութիւնս, որ խեղճութիւն, աղտեղութիւն ու արգահատելի ինքնագոհացում մըն է: Բայց իմ երջանկութիւնս պարտաւոր էր գոյութիւնն իսկ արգարացնել:»

Ատեն մը ուր կըսէք. «Ի՞նչ փոյթ ողջմտութիւնս: Միթէ գիտութեան ծարաւի է, ինչպէս առիւծը սնունդի: Ողջմտութիւնս ալ խեղճութիւն, ազդեցութիւն ու արգահատելի ինքնագոհացում է:»

Ատեն մը ուր կըսէք. «Ի՞նչ փոյթ առաքինութիւնս, որ տակաւին զիս չի զառանցեցուց: Ո՞րչափ յոգնած եմ իմ լարիքէս ու իմ չարիքէս: Այս բոլոր խեղճութիւն, աղտեղութիւն ու արգահատելի ինքնագոհացում է:»

Ատեն մը ուր կըսէք. «Ի՞նչ փոյթ արգարութիւնս: Զի տեսաց որ բոցավառ ածուխ ըլլամ: Ու արգարը բոցավառ ածուխ է:»

Ատեն մը ուր կըսէք. «Ի՞նչ փոյթ գթութիւնս: Միթէ գթութիւնը խաչ չէ, որուն վրայ կը դամին մարդիկը սիրողները: Բայց իմ գթութիւնս խաչահանութիւն մը չէ:»

Միթէ այսպէս արդէն խօսեցա՞ք: Միթէ արդէն

այսպէս պօռացիք: Աւանդ, ինչո՞ւ դեռ չլսեցի այսպէս պօռալնիդ:

Ոչ թէ ձեր մեղքերը—հապա ձեր գոհունակութիւնն է որ երկինքին դէմ կը պօռայ, նոյն խի՞ ձեր մեղքերուն մէջ ձեր ագահութիւնն է որ կը պօռայ երկինքին դէմ:

Ո՞ւր է ուրեմն կայծակը որ ձեզի իր լեզուովը լիզէր: Ո՞ւր է խենդութիւնը որով պէտք էր ձեզ պատուաստել:

Ահա, ձեզի կը քարոզեմ գերմարդը որ այս կայծակն ու այս խենդութիւնն է:

Երբ Զարադուստրան այսպէս խօսեցաւ, ամբոխին մէջէն մէկը պօռաց. « Բաւական է որքան մեզի լարախաղացին վրայ խօսք ըրին. ցուցուցէք զայն մեզի հիմակ »: Ու ամբողջ ժողովուրդը խնդաց Զարադուստրային վրայ: Բայց լարախաղացը, որ կը կարծէր թէ իր վրայ կը խօսէին, գործի սկսաւ:

8. Էլմաստան

ԵՐԿՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

(Die Teilung der Erde)

Շ Ի Լ Լ Ե Ր Ի

— «Առէք երկիրն», ասաց Զևսը երկընքից,
Ի լուր մարդկանց. «ասէք, ձերն է այս աշխարհ!
Ժառանգութիւն թողնում եմ ձեզ այս օրից.
Բաժանեցէ՛ք եղբայրաբար և արդար»:

Ու ձեռք ունէր, վազեց դէպի իր բաժին.
Մանուկ ու ծեր; դէ, առաջ են ըշտապում.
Մըշակն առաւ պրտուղները դաշտային.
Մեծատունը գընաց որսալ անտառում:

Վաճառականը լըցնում է ամբարներ,
Կրօնաւորը ընտրում է հին, թունդ գինին.
Արքան փակում հրապարակներ, կամուրջներ
Եւ յայտնում է. «Տասանորդը իմ բաժին»:

Ամենքից ուշ, երբ բաժանուած էր աշխարհ,
Հեռու տեղից եկաւ պոյէտն անազան.
Բայց ոչ մի տեղ, աւանդ, ոչինչ էլ չը կար.
Եւ ամեն ինչ ունէր տէր ու տիրական:

«Վայ ինձ, միթէ բոլոր մարդկանց մէջ միայն
Մոռացուած եմ ես, սիրեցեալ քո որդին»,
Կողկողազին խօսեց պոյէտն ողբաձայն
Եւ հըրաժեշտ տըւեց Զևսի գահոյքին:

— «Մինչ երազով տարուած էիր դու երկրում»,
 Խօսեց Աստուած. «էլ մի վիճիր դու ինձ հետ.
 Ո՞ւր էիր դու, երբ աշխարհն էր բաժանւում»
 «Բեզ մօտ էի», պատասխանում է պոյէտ:

— «Իմ հայեացքը դէմքիդ էի բեռում,
 Լըսում էի դաշն հընչիւններ երկընքի.
 Ներիր, որ քո մաքուր լուսով հրապուրուած՝
 Աշխարհային բարեքները կորցըրի»

— «Փոյթ չէ, ասաց Ձեռը ագնիւ պոյէտին.
 էլ իմը չեն աշուն, և որս, և շուկան.
 Բայց թէ կուգես ապրել ինձ հետ միասին,—
 Երկինքը բաց է քո առջի ամեն ժամ»

Հ. Մանուէլեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻՍԻՑ

Ա.

Քանուորական զարթնումն ու յառաջխաղացումը.—Կոմսուհի տիկին Վօրլօք
եւ իր դորժունէութիւնը.

Կայ հատուած մը, այժմ անկազմակերպ,
անծանօթ եւ անտեսուած, բայց որ կսպառ-
նայ զարթնում ու իր ուժղին հոսանքով
հեղեղելու—Լորդ Ռօզբըրի:

Տասնեակ տարի մը առաջ արտարերուած սոյն խօսքերը,
հին ու իրլիական մտացնոր սովեստներու եւ օղային օրօր-
ներով տարուերերող գուշակներու մարգարէութիւններ չէին,
խօսողը այնօրեայ ամէնէ հեղինակաւոր, սրահայեաց ու հեռա-
տես քաղաքագէտներէն մէկն էր,—Աղատական դահլիճի մի-
նիստը Լօրդ Ռօզբըրի,—որ կարտասանէր բանախօսութեան
մը առթիւ, իր շուրջ բոլորը օրէ օր կատարուող դէպքերէն
համոզուած:

Լօրդ Ռօզբըրի, որպէս Աղատական լիւրը մը՝ ի հարկէ
չէր յիշատակեր այդ «անկազմակերպ հատուածին» անունը,
անոր ապագայ գործունէութեան եղանակը, ձեն ու բնաւորու-
թիւնը՝ վաղահաս զարթնում մը չը տալու համար իր ունկրն-
դիրներուն ազոր վերաբերմամբ, բայց ինք գիտէր ու կը ճանչ-
նար այդ նորածին հիգրան իր սաղմնային վիճակին մէջ իսկ,
եւ վստահ էր անոր բռնելիք դիրքին եւ ունենալիք ազդեցու-
թեան:

Ի՛րեւ աշակուրջ եւ մօտէն հետախոյզ մը առօրեայ քաղա-
քական, ինչպէս եւ ընկերական անցուղարձերուն, եւ որպէս զգա-
յուն ականատես մը տիրող աղաղակիչ անիրաւութեանց ու
անհաւասարութեանց, չէր կրնար զսպել ինքզինքը նշմարելէ
մօտաւոր յանկարծական զարթնումի մը հաւանականութիւնը
հատուածի մը՝ որ թողուած էր անտես, անտիրական, մութին
մէջ, ցիւր ու ցան եւ անառաջնորդ եւ որ ընդունակ էր գլուխ

բարձրացնելու առաջին պատեհութեամբ, միայն թէ անգամ մը Դրօշը ծածանէր և զարթնումի նշանը տրուէր:

Եւ հատուածը՝ որուն ակնարկել կուզէր Ռօզըրըի, Անգլիոյ բանուորական մասն էր, դեռ ևս գոյութենէ իսկ զուրկ,— որպէս քաղաքականապէս կազմակերպուած դործօն ոյժ մը:

Անգլիոյ մէջ, ինչպէս և բազում երկիրներ, երկար ատեն աշխատաւոր դասակարգը հանդիսացած է ականատես մը լոկ շուրջը սանձարձակ տիրապետող շոայութեան, զեղխանքին ու ապականութեան՝ առանց կազմակերպած բողոքը ստեղծելու: Երկու հզօր հոսանք կար միայն—պահպանողականութիւն և ազատականութիւն—ու իր ասոնց ձեռքը գործիք մը ըլլալէ դատ ուրիշ պաշտօնի մը իրաւունքը չէր կարող ըմբռնել:

Ազատութիւնը՝ խօսքի, գրչի, և այլն, ինչպէս և աշխատանքի պայմաններու բաղդատական առաւելութիւնը ուրիշ ճնշող երկիրներու վրայ, միացած կրօնական գաղափարի գերիշխանութեան, մեծապէս կը նպաստէին Անգլիոյ զրկեալ դասակարգը քնատ և տգէտ դրութեան մէջ պահելու: Մանաւանդ կրօնական դոգման անհամեմատօրէն հսկայ դեր խաղացած է Անգլիոյ ընկերական հարցերու վերաբերմամբ ունեցած դանդաղութեան մէջ, տարածելով իր խոչնդոտները մինչև իսկ քաղաքական խնդրոյ վրայ՝ շնորհիւ Լորդերու կամ Բարձր Ժողովին, որ գոյութիւն ունի ժառանգականօրէն, առանց ժողովրդի կամքին, և որոնց մեծամասնութիւնը կը կազմեն, աշխարհական լորդերէ աւելի՝ հոգեւորական լորդեր,—եպիսկոպոսներ,—առանց որոնց վաւերացման ժողովրդէն ընտրուած Պարլամենթի անդամներու որոշումներն ու ծրագիրները արժէք չունին երբէք, ինչ խնդրոյ ալ վերաբերին ազոնը*):

Այդպէս, մշտական քարոզները հեղութեան, համբերութեան, ինքնազոհութեան՝ ապագայ երեակայական երանութեանց երազներով յափրացած՝ կասեցուցած են քայլը: Հափազանց խօսելով եթերային նիւթերու վրայ՝ մոռցնել տուած իրականութիւնը, կուրացուցած հոգին ու բանականութիւնը:

Սկսելու համար բարեփոխման և մաքրագործումի ուժեղ գործունէութիւն մը, անհրաժեշտ և անխուսափելի է եղած բաղնուիլ սոյն վիթխարի ապառաժին, որու գոյութիւնը կը թուականէ տասնեակ հարիւրաւոր տարիներ, որ իր զոհերուն մինչև ծովն է թափանցած՝ ըլլալով ամէնօրեայ սնունդը անոնց: Այսպիսի զարհուրելի արգելք մը, հաւանականաբար,

*) Այս կէտին վրայ աւելի մանրամասնօրէն պիտի ծանրանանք յետագայ տեսութեանց առթիւ:

զիւրին չէ խորտակել՝ սուանց ժամանակի բարեբար աջակցութեան և մտաւոր զարգացման:

Փրանսական Մեծ Յեղափոխութեան մեծագոյն գործերէն մէկը եղաւ այն՝ որ պատուեց կրօնքի վարագոյրը, որու ետեւ կը խաղացուէին ապականութեան և ոճիրներու ամէնէ անզուգական տեսակները, և իր մերկութեան մէջ ոչ միայն խորթ՝ այլ և հողկալի երեցաւ հասարակութեան, որովհետեւ, ան տեսաւ կրօնքը, դրական հոգաստ մը չը մատուցանէր զատ իրեն, ուրիշ երկու մեծագոյն թշնամիներու—միապետութեան ու դրամապետութեան (capitalism)—հետ ձեռք ձեռքի կառաջնորդէր զինքը անել ու յուսահատ լաբիւրինթոս մը:

Փրանսական Յեղափոխութեան «կարմիր սարսափն» էր որ մեծապէս ուշացուց Անգլիոյ աշխատաւոր ժողովն ընդվզումը հանդէպ իրենց դասակարգային կեղեքիչները:

Փրանսոս, անհամեմատ աստիճանով մը ընկճուած Եւրոպայի տէրունական աւազակներու, արքունական ոճրագործներու և ապականուած ցոփերու զարշառկարին ներքեւ, հիմնական ու կատարեալ յեղափոխութենէ զատ ուրիշ կերպով չէր կարող մաքրագործուել: Արքունական շրջանակը այն աստիճանի էր բերած իր բռնակալ և քամալար տիրապետութիւնը՝ որ ամէնէ խաղաղարարոյ հպատակներն անգամ ըմբոստացման էին մղած, և այսպէս, անխուսափելին հասաւ: Ժողովրդի տառջնորդները շուտով ըմբռնեցին այդ վարմունքի ապագան, և դիմեցին միակ ու անհրաժեշտ զարմանին—էովին յեղափոխման տիրող կարգերուն, որ նշանակեց բաղձաթիւ դո՛, առատ արիւն և «կարմիր սարսափ»:

Անգլիոյ միապետականութիւնը, դեռ շատ կանուխէն, օրէ ճիգ խնայած չէ մարդկային այս մեծ յեղաշրջումը պախարակելու և դատաւիտելու, ներկայացնելով զայն վայրագ ու արիւնոտ խառնուրդ ստահակներու գործ, որոնց արիւնէ զգացած հաճոյքը կը մղէր զիրենք համանման հրէշային խաղերու: Ու այս կարծիք մղձաւանջը այնպէս մը տիրացած էր տղէտ դասակարգին՝ որ կը սոսկար շշուէ մը հանելու՝ մի գուցէ զինքը մարդասպանի ոճիրով չը քարկոծելու համար: Դժբախտ դասակարգի մը բարեփոխման առաջարկ ու բողոք՝ հոմանիշ էր Փրանսական արիւնոտ շրջանի ներմուծման Անգլիայ, որ ոչ մէկուն ալ փախաքելի էր, առաւելաբար չարքաշ ժողովրդին՝ որ տակաւին բաւականաչափ ինքնազարգացում չունէր հարցին տնտեսական կողմերը ըմբռնելու: Իսկ մնացեալ դասերը, որ շատ լաւ կը հասկնային կացութիւնը, լոկ կը հրճուէին իրերու վիճակի մինչ այդ աստիճանը հասնելուն: Նախաձեռնութիւն մը Յունուար 1907.

ընել՝ պաշտպան հանդիսանալու. տառապող լափնածաւալ դասակարգի մը իր բովանդակ արտադրող ոյժերով՝ յիմարութեան մօտեցող յղացում մը պիտի համարուէր, մէկդի թողլով անփոխարինելի կորուստը սեպհական շահերու և յետագայ անսպաս հեղեղը նախատինքի։ Այսպէս, փրկութեան դործը, հակառակ բազմաթիւ ու բազմազան արգելքներու, մնացած էր բուն իրեն, տառապողին, իրրեւ միակ եղանակը։

Բանուորականութիւնը, և, հետեւաբար, ընկերավարութիւնը (սոցիալիզմ), առաջին ոխերիմ թշնամի ունեցաւ, շատ հաւանականօրէն, շահագործող ու առանձնաշնորհալ դասը, որու անմիջական օգնութեան հասաւ կրօնական օլիգարխին, ըլլալով աներեւակայելիօրէն աղքեցիկ, ձեռքի տակ ունենալով օրէնսգրական մեքենայի բանալին։ Առաջինը կեղծ ահագնազը նշեցուց երեւակայական արիւնալի անիշխանութեան մինչ կրկնորդը՝ մօտալուտ թագաւորութեամբ անաստուածութեան,—այսինքն անկարգադահութեան, սպականութեան, չարիքի, ոճիրներու և անբարոյականացման՝ որպէս նախակարապետ մօտալուտ ազդային դահալիժման զէպի մշտնջենական աւեր և կորուստ...

Իզուր ճգնեցան հալածուած դասի աննշան, տկար այլ յանդուգն առաջնորդները վանել այդ սուտ նախագուշակութիւնները. իզուր ջանացին ցուցնել յեղաշրջման մը պէտքը տիրող ընկերական պայմաններու, որ ոչ մէկ կերպով արիւն հոսել կը նշանակէր, որ ոչ մէկ կերպով կտառանար իրենց հաւատքին կամ զարգացման, այլ ընդհակառակը, կը բազմապատէր առանձնաշնորհումները և կը գնէր զիրենք լուսագոյն մակարդակի մը վրայ։

Այս գաղափարի հակառակորդները, որոնք, պէտք չէ մոռնալ, ոչխարի անմեղ ու յիսազաղասէր՝ մօրթով կը ճանչցուէին միշտ, իրրեւ յձախձախիչ և անժխտելի՝ վաստ բաւական է որ մասնացոյց ընէին Ֆրանսոան և գունազեղ պատկերներով իրականութիւնը ճիշտ հակառակ կողմէն պարզէին։ Վիճելու հող չէր մնար այնուհետեւ—իրաւունքը հակառակորդինն էր։

Անգլիական ամբոխը շատ տաքօրինակ և հետեւողական ընսուորութիւն ունի։ Ով որ կը ներկայացնէ մեծ ոյժ, ով որ ընդունակ է ազմուկ ու իրարանցում յատաջացնել, ով որ յաջողի խմորել զինքը հին սովորութիւններ յարգելու խրատներով—հող չէ թէ աղետաբեր վախճաններու տանին ատոնք զինքը—պիտի հետեւի։ Նորութիւններ որդեգրելու Ֆրանսական ու ամերիկեան փութկոտութիւնը չունի։ Իսկ այս քարովը կը

սլաոնայ անհամեմատորէն անխախտելի՝ երբ լսուած է կրօնքի սպասաւորներէ, որոնք գերիշխանած են զինքը հոգին:

Անգլիական հասարակութիւնը ունի զանազան բաժանումներ—ազնուապետութիւն (aristocracy), բարձր դասակարգ (High Life), միջին դասակարգ (Middle class) ու այս երեքէն վերջ իսկ՝ կայ տակաւին դաս մը, վարի միջին դասակարգ (lower middle-class) որ չուզեր հաւասարել զինքը «աշխատաւոր» կամ «ռամիկ» մասին: Ասոնց իւրաքանչիւրը թեթեւ հակառակութեան և սուր մրցումի մէջ են միմեանց հետ, մինչ իրենց միահամուռ ու սեղմուած վիթխարի բանակը իրեւ պատենէլ կանգնած է յետին դասակարգի (lower class) կամ աշխատաւոր ամբողջութեան դէմ: Կրօնքը բոլորին ալ զօրաւոր նեցուկներէն մէկն է և մեծապէս կը սիրեն ճանչցուիլ չեքմեռանդ հաւատացեալներ: Ուստի, իրենց շարքերը վստահօրէն իրար՝ օղմելու ամենէ ապահով տաղանգն է կրօնքի երևակայական անհետացման ու «անբարոյականութեան» և «վատութեան» հաւանական տիրապետման վայնասունքը:

Այսպէս, չնորհիւ վերոյիշեալ հնարամտութեան, ընկերվարականութեան ծնունդը, դեռ իր սողմին մէջ, Անգլիա մկրտուած է «անհաւատութեան» մակդիրով—ամէնէ հզօր զէնքը և ամէնէ վտանգեղանակը հասարակութիւնը ետ կեցնելու այդ դադափարին փարելէ, և, չնայելով ընկերական կարգերու հիմնական բարեփոխման առաքելներու ջերմեռանդ հաւատացեալի pose-ին, ինչպէս որ իրապէս էին, անապաշտութեան զազանը ցընցիլը մեծապոյն դժուարութիւններէն մէկն էր *):

Բարեկարգիչի մը ամբողջ քարոզը, իր բոլոր փաստերով ու ապացոյցներով, կարելի էր ջրել լակոնական ֆուզով մը, որ աւելի կազդէր քան ընդարձակ ընդդիմախօսութիւնները.— «անհաւատ է»,—ուստի և անիշխանական, մարդասպան, ոճբագործ, արիւնարբու հրէշ, անբարոյական և դեռ ինչ զղուիլի մակդիր որ կը բովանդակէ բառարանը:

Այսպիսի յայտնութիւններ, բնականաբար անհաւատաւի կը թուին երկրի մը մէջ՝ ուր բացարձակ ազատութիւն կը տիրապետէ: Բայց, եթէ կարգ մը երկիրներու ամբոխը ետ մնացած է ժամանակի պահանջներուն չափազանց ու ծայ-

* Շատ տարօրինակ հակասութեամբ մը, այսօր իսկ, Պարլամենթը զոնուող 45 բանուորական ներկայացուցիչներու մեծամասնութիւնը ջերմ քրիստոնեաներ են (հականգլիքան եկեղեցիին պատկանող) և անոնցմէ մէկ-երկուքը իւրաքանչիւր կիւրակի ը քարոզեն ժողովաբանի մէջ կրօնական դասեր:

րայեղ բռնակալութեան շնորհիւ, Անգլիոյ բանուորականութիւնը անշարժութեան դատապարտուած է իր վայելած կարգ մը ազատութիւններով:

Սակայն, տիեզերքի մէջ ամէն ինչ ենթակայ է յեղաշրջման անողոր օրէնքին: Եւ ապա, կայ այլ անխուսափելի ճշմարտութիւն մը: Թօմըս Բէյն, Ամերիկայի Անկախութեան համար ինք ալ իր զրջով կռուող անձնաւորութիւն մը, որու գործերու և կեանքին աւելի մօտէն պիտի ծանօթացնենք մեր ընթերցողները առաջին առթիւ մը, հետեւալ խօսքերը կըսէ Մարկիզ Լա Ֆայէթի ձօնած գրքոյկի մը նախաբան-նամակին մէջ:—«Մարդկութիւնը, ինձ կը թուի որ, միշտ հասուն է իր ճշմարիտ շահերը ըմբռնելու, պայմանաւ որ ատենը հերկայացուին իր հասկացողութեան յստակօրէն, և այնպիսի եղանակով մը՝ որ անձնական շահատակութեան կասկած չը յարուցանէ և չը վիրաւորէ չափազանց ինքնահաւանութեամբ: Երբ բարեկարգում կուզենք, պէտք չէ դատաւիտենք»:

Ճիշտ այս պարագան է որ տեղի ունեցաւ Անգլիա: Եւ թէպէտեւ մինչև օրս ալ ընկերվարական-սոցիալական (սոցիալ-դեմօկրատ) անունը անհաճոյ քանաձև մըն է ժողովրդի մէկ մասի ականջին, որոնք աւելի յարգուած և սիրուած են Անկախ Բանուորական Կուսակցութիւն անուն տակ*), այսուհանդերձ Բուրիքօնը անցուած է և ալ հին գէնքերը ոյժ չունին որպէս փաստ:

Ասկէ 20—25 տարի առաջ բանուորական դատակարգի գոյութիւնն ու անոնց շահերու համար ձայն բարձրացնելը մտքի ամենայնամար յղացումներէն մէկն էր: 12—15 տարի առաջ, գրեթէ այն պահուն երբ լօրդ Ռօզբըրի վերոյիշեալ խօսքերը կարտասանէր, անոնց բողոքը ովկէանի մէջ ինկող կաթիլ մըն էր: Սակայն և այնպէս, հետապէս քաղաքագէտը կզգար այդ «անկազմակերպ ու անծանօթ» հոսանքին ազդեցութիւնը և այսօր, այդ խօսքերը տկամայօրէն բացարձակ

*) Բաւական տարիներ առաջ Անգլիոյ սոցիալ-դեմօկրատ կուսակցութեան մէկ մասը բաժանուելով զանազան շարժառիթներէ մղեալ, ինքզինքնին հռչակեցին Անկախ Բանուորական Կուսակցութիւն (Independent Labour Party): Իրարու դէմ ոնէ զգալի թշնամանք չունին և միշտ պատրաստ են իրարու օգնել թէ Պարլամենթի մէջ և թէ դուրսը. միայն, եթէ ներքին է ըսել, Ա. Բ. Կ.-թեան զաղափարները աւելի չափաւորուած ու միասնեղուն չափ սուր չեն: Իրենց ձեռնպահութիւնը կըօնական և այլ հարցերու առթիւ՝ շահեցուած է իրենց բանուորական մեծամասնութիւնը, բայց բանուորական դասի հակառակորդները զանազանութիւն չեն դնել երբեք յարձակման պահուն և կը ջանան միեկնօրէն զոյնով պատկերայնել երկուքն ալ:

իրողութեան մըն են յանդած: Slowly but surely, (զանգաղ այլ վստահօրէն) եղած է Անգլիոյ ազգային նշանաբանը իր բոլոր գործերուն մէջ: Այդ դանդաղ բայց վստահ քայլը այս պահուս ըղձալի ճանապարհն է մտած և այսուհետեւ պէտքէ քալէ անվանդ և անկասելիօրէն:

Ժամանակ մը բոլոր առանձնաշնորհուած գասակարգերը կը շեղէին ժողովրդին, միտքը շարք մը այլ արտաքոյ գոռում-գոչումներով, — ինչպէս անկրօնութեան նախօրեակ, անխիստ-նութեան մերձեցում, արհեստութեան թաղաւորում, ազգային անջատում և քայքայում, բայց այժմ աշխատաւոր դասակարգը բաւականաչափ զարգացած է որպէս զի չտեսնէ այդ բոլորին ետեւ մէկ գլխաւոր վախ մը — վաշխստութեան, կողոպուտի և անիրաւութեան վարհուրելի հարուած մը որ չեն ուզեր բացէ ի բաց յայտարարել:

Պահպանողական շատ գլխաւոր հանդէս մը *) իր անցեալ համարին մէջ հրատարակած էր յօդուած մը՝ որ՝ հակառակ իր ամբաստանող լեզուին, մեծ առիթ կուտայ բանուորական դասին հպարտանալու իր կատարած հսկայ գործին վրայ այսօրոն կարճ ժամանակաշրջանի մը մէջ: Յօդուածագիրը կը խոստովանի թէ ընկերավարականութիւնը կը յառաջադիմէ Անգլիա, — ամէնէն անյուսալին — և աներեւակայելի վազքով մը: Անոնք սովորեցան, կըսէ, թէ ժողովուրդը չտրեւր «կարմիր սարսափի» խօսքեր ու գործքեր, հետեւաբար, իրենց պրօպագանդան յառաջ կը վարին խաղաղիկ և լուս միջոցներով, Ռմանք կը կարծեն թէ դոյութիւն չունին, թէ գործ մը ընելու ընդունակ չեն, սակայն և այնպէս, պարլամենթական ծրագիրները իրենց «քմահաճոյքներուն» չուրջը կը դառնան, և, դեռ աւելին, կը յայտարարէ որ պարլամենթական նախորդ նիստը բացարձակապէս ապացուցանեց թէ ընդդիմադրական ոյժ կոչուելու միակ արժանի կուսակցութիւնը բանուորականն է, չնայելով իրենց 45 թիւին հանդէպ 620 միւս դաւանանքի պատկանող անդամներուն, որոնց առաւել քան 400 ապաստականներ են: Յօդուածագիրը բանուորականութեան այս յառաջխաղացման մեծագոյն պատասխանատուութիւնը կը բարդէ ազատական դահլիճին վրայ որ անարգել ասպարէզ թողուցած է անոնց առջև և միշտ անոնց հաճելի ծրագիրներ ի լոյս կընծայէ, կամ անոնց առաջադրածները կը հիւրընկալէ առանց վարանումի: «Բանուորական» անունը թող չհրապուրէ, — կզգուշացնէ զրոգը խնամուտ, և համոզիչ խօսքերով, — որովհետեւ անոնք բոլորն ալ մէկ նպա-

* T* (National Review, Nov. № «The Coming Social Revolution».)

տակ և ուղղութիւն ունին միայն—սօցիալիզմ: Այս բառը կը սարսափեցնէ զիրենք, սակայն փախուստ չկայ հեղեղող հոսանքին առջև:

Իրաւ է որ Ազատական կառավարութիւնը առաւել զիջումներ կընէ բանուորական դասին, քան նախարարը, սակայն, ատոնք բնաւ դադրեցուցած են յիշիալ կուսակցութիւնը ազատականութիւնն ալ չարաչար քննադատութեան ենթարկելէ, որովհետեւ աշխատաւոր դասակարգին պահանջը մեծ ու բազմազան է ներկայ կառավարութենէն: Անոնց շտապուած խոստումներն էին որ զինքը ներկայ վիճակին բարձրացուցին: Լեւոնաց պէտքերուն անմիջական գոհացում տալու երաշխաւորութիւններն էին որ վաստակցուցին իրենց քուէներու: Չախջախիչ մեծամասնութիւնը ամենուրեք, բայց, հակառակ այս բոլորին, ներկայ ազատական կարինէթը, բարձրանալով գործի, գրեթէ մոռցաւ ամեն ինչ և շնորհած մէկ-երկու ասիլները բանուորական ներկայացուցիչներուն՝ բաւական սեպեց զանոնք լռեցնելու: Եւ այսպէս, շուարեցաւ տեսնելով թէ բանուորական կուսակցութիւնը չը տեսնուած պայքար կը մղէ ազատականութեան դէմ և ազատական թեկնածուներու դէմ բանուորականներ կը դրուին ընտրութիւններու ժամանակ: Քիր Հարդիի (գլխաւոր առաջնորդ (chief Whip) պարլամենթին մէջ բանուորական կուսակցութեան) հրապարակաւ մէկ պատասխանը այս անմիտ փաստաբանութեան դէմ շատ նշանակելի է:—Տասը տարի առաջ, յայտարարեց եռանդուն լիզըրը, 12 ներկայացուցիչ էինք պարլամենթի մէջ, բայց չը բաւականացանք ատով ու պայքարեցանք ու այսօր հասանք 50 ի: Կը կարծէք թէ պիտի բաւականանանք հիմա այսքանով. իհարկէ ոչ, հոգ չէ թէ դէմերնիս ունենանք ազատական կամ պահպանողական կառավարութիւն, քանի որ երկուքէն և ոչ մէկն ալ կը նպաստէ ու կաշխատի մեր առանձին շահերուն համար և մինչև որ ունենանք Չախջախիչ ներկայացուցչութիւն մը, պիտի շարունակենք մեր պայքարը....

Սա պարզ ու մէկին յայտարարութիւն մըն էր՝ որ շըմեցուց մեծախոստում ազատական կառավարութիւնը և պր. Հօլմէյն, պատերազմական միւստրի հոկտեմբեր 5-ի բանախօսութեան մը առթիւ ըրած յայտնութիւնը յատկանշանական էր:—«Եթէ, կըսէր իմաստուն միւստրը, պր. Քիր Հարդի կամ ուրիշներ, բանուորականութեան անուամբ երեան ըրեն Վերացական առաջադրութիւններ որոնք հակասական են ազատական սկզբունքներուն, այն ատեն ազատական կուսակցութիւնը պիտի ստիպուի սուր սուրի դալ իրենց հետ»:

Մը. Հօլտէյնի սոյն խօսքերը բոլորովին անպէտ էին, քանի որ արդէն բանուորականութիւնը շատոնց ի վեր նետած էր ձեռնոցը բուրժուական շահերու ջատագով կուսակցութեանց և իրենց ներկայ կեղծ յուսախարութիւնը հռչակելու կարիք չկար երբէք:

Վերոյիշեալ յօդուածագիրը, ովրայով հանգերձ ազատական կառավարութեան ուշ խելքի դալը, չյուսահատիր կամ լքեր խնդիրը: Բուռն կոչ մը կընէ թէ աղատական և թէ պահպանողական ներկայացուցիչներուն՝ մօռնալով իրենց կուսակցական ներքին երկրորդական կէտերը, ձեռք ձեռքի տան միշտ՝ երբ բանուորական հիգրան իր գլուխը սպառնայ բարձրացնել և միանգամ ընդ միշտ ջախջախեն դոյն, որովհետեւ, —կը գրէ,—անոնք ոչ միայն աղետալի են քաղաքականապէս, այլ և զարհուրաբեր պիտի ըլլան հասարակական ու անհատական շահերու տեսակէտով, երբ «բանուորական բռնապետութիւնը» թագաւորէ! Անոնք, կը շարունակէ, ոչ միայն իրենց լուծին տակ պիտի առնեն երկրին արդիւնաբերական մեքենան, այլ և պիտի «կոլորպտեն» «վաստակաւոր» անհատը իր «դառն աշխատութեան» արդիւնքէն և բոլորը դարձնեն «ըստբուկներ» իրենց անօրէն ու կամակատար իշխանութեան... այսպէս մեռցնելով ամենագլխաւոր բարիքը երկրի մը, այսինքն մրցումը, որ «առաջին ազգակն է յառաջադիմութեան»:

Բանուորականութեան դէմ զգացուած ատելութեան զըխաւոր շարժառիթը, վերջապէս, կտկտի երկտն գալ այս կամ այն պատրուակին տակ հոս: Մանկական հակառակութիւններ ալ ազդեցութիւն չունին. իսկ հոսանքը կը վազէ ու կը հեղեղէ անարգել: Խնչպէս պր. Հայնտմէն կը յայտնէր անցեալները մեծ ցոյցի մը մէջ, «առակապիտոնութիւնը ծովափն է՝ որուն պէտք է գան կոհակները», և, տարակոյս չկայ որ կուգան:

Հասարակութիւնը այլ ևս չը նայիր բանուորական ներկայացուցիչներու և առաջնորդներու վրայ որպէս երազող պարիսներ, ութօպիստներ, որոնք մտացնոր յղացումներով ժամապաճառ կըլլան. այլ կը տեսնէ անոնց մէջ իր բուն ու անմիջական շահերուն մէջ-միջոցի պաշտպանը: Աշխատաւոր դատակարար առանձին ու ինքնազուխ թողուած չէ հոս իր անհղ պայքարին մէջ այլ ևս: Անգլիական այժմու գրականութեան և գիտական կաճառին գլխաւոր հանճարներէն ոմանք հրապարակաւ կը հռչակեն իրենց դաւանանքը և անյաղթելի մարտիկներ են կանգնած իրենց գրչով ու խօսքով ի նպաստ զրկուած դասակարգի իրաւունքներուն:

Ներկայի մեծագոյն թատերագիրը, պր. Ջօրժ Բէրնըրտ

Շօ, որուն խաղերը միահամուռ գեվեստի կարժանանան ամէն գասակարգի և գոյնի մամուլէն, հանրածանօթ ընկերվարական մըն է ու իր խաղերը այդ համովման արտացոլացումն են մէկ ծայրէն միւսը, իր անմրցելի երգիծանքով և արհամարհանքով համեմուռ ընդգէմ գասակարգերը, թէպէտ ունի ընդիրներուն լաւագոյն մասը կը կազմէ աղնուական և բարձր, ինչպէս նաև մտաւորական դասը: Առաջնակարգ ընկերական-վիպագիրը, Հ. Կ. Ուէլս, որ նոյնպէս եղական է իր տաղանդով, հրապարակաւ ընդունուած champion մըն է աշխատաւոր դասակարգին և տակէ մի քանի շարաթներ առաջ հրատարակած մէկ հոյակապ վէպէն վերջ—«In the Days of Gomet», որ մարդկային երազուած երջանկութեան արտացոլացումն է իր գունագեղ պատկերներով,—գեւ առջի օրերս հրատարակեց շարք մը essay-ներ ընկերվարականութեան բռնելիք ապագայ դիւքին վրայ ընտանեկան կեանքին մէջ, առանց յիշատակելու իր մեծագոյն աշխատութիւնը, —«Ամերիկայի Ապագան»,—որպէս արդիւնք իր անցեալ տարուայ կատարած մանրախոյզ հետազոտութեան:

Այս, ինչպէս նաև կարգ մը յարաբերական պարագաներ, կը դնեն բանուորական դատի յաջողութիւնը գրական հողի վրայ: Ոչ ոք կը տարակուսի իր մօտաւոր յաղթանակին վրայ: ոչ ոք կը համարձակի ուրանալ անոր հօանդուն գործունէութիւնը: Ամէնէ աւելի կղզայ այս Ազատական Կառավարութիւնը, սակայն, որքան ալ ընդգիմութեան խրատներ և քաջալերական յորդորներ զրուին իբրեւ պատուար բարձրացնելու անոր հոսանքին առջև, անօգուտ է, յաջողութիւնը անհաւանական, արգիւնքը ազէտաբեր: Ինչո՞ւ: Որովհետեւ, այն օրը որ Ազատականութիւնը միահամուռ, բացարձակ ու պաշտօնական կռիւ հռչակէ բանուորականութեան գէմ, ինչպէս վերջինս ըրած է անվախօրէն, կառավարութեան անկման մահադանգը կը զօղանջէ*): Այդ կը նշանակէ իր «նստած ճիւղը սղոցել», զինք

*) Այս տողերը տակաւին փոստին չյանձնած աչքէ կանցնէի Լօնդոնի նշանաւոր հանդէսներէն մին, Contemporary Review, որ ազատական գրիչ մը, վաւերացնելով շուրջուած բոլոր հիացումները հանգեպ բանուորական յաջողութեան, իր սրտանց խնդակցութիւնը կը յայտնէ այն իրողութեան վրայ որ Ազատական ու Բանուորական կուսակցութիւնները կատարի հակառակութեան մէջ չընկան պարլամենթի բ. նիստին մէջ ինչպէս չարամիտ լիզուներ կը նախագուշակէին: Ինք ալ, անկեղծօրէն կը խոստովանի որ եթէ Ազատականները բացարձակ կռիւ մզեն բանուորականութեան գէմ Սօցիալիստ և այլն հռչակելով, ուշ թէ կանուխ պիտի թշնամի դարձնեն այն բոլոր բանուորները որ քուէ տուած են իրենց և զրկեն դաննք Պահպանողական Կուսակցութեան, ինչ որ բնաւ հաճելի չէ:

իր դիրքին վրայ պահող քուէները բռնաբարել և ինք իր գոյ-
ութեան սիւնները խախտել: Ու ասոր ապացոյցները մէկէ աւել-
ի են:—Ամբողջ քառորդ դար պարլամէնթի մէջ բանուորական
դատը պաշտպանող Ջօն Բըրնսը Կտրինէթի անդամ կարգելը
ամէնէ ակնկրան է Ազատականութեան ակամայօրէն պարտա-
ւորուած վիճակին՝ զիջումներ ընելու բանուորական պահան-
ջներուն:

Բայց, որքան ալ մեծ ու նշանակելի լինեն զիջումները,
որքան ալ հաշտ ընթանան դանադան խնդրոց մէջ, պայքարը
անձողոպրելի է, անհրաժեշտ ու հրաժայտական:

Անգլիոյ աշխատաւոր գասակարգի իր վիճակէն բարձրա-
բողոք դժգոհութիւնը մեծապէս զգալի կը դառնայ հետզհետէ:
Յոգնած Պանպանդակրին Կառավարութեան շահամուտթենէն,
կասկածոտ Ազատական Դանլիճի դիրքին, իր աչքն ու յոյսը
սեւեռած է իր ներկայացուցչութեան վրայ, որ, առանց վարա-
նութի կարելի է ըսել որ մեծ ապագայ կը խոստանայ, ըլլալով
երկրի պայմաններն ևս անհամեմատօրէն նպաստաւոր: Առօ-
րեայ անցքերուն մօտէն հետախոյզ մը կընայ ամենայն վստա-
հութեամբ գուշակել որ ապագայ ընդհանուր ընտրութիւն մը,
բանուորական ներկայացուցչութիւնը վերջնոյն նման պիտի
եռապատկէ իր այժմու թիւը: Եթէ Անգլիոյ բանուորութիւնը
ունենար զրամական այն ոյժը՝ ինչ որ ունին իրենց թշնամի-
ները, թերևս այսօր իսկ զեռ տասնեակ մը աւելի անդամներ
ունենար պարլամէնթի մէջ: Որովհետեւ, պէտք է յիշել որ Ան-
գլիա, ընդհանուր ընտրութեանց ատեն հարկ ու անհրաժեշտ է
զրամական զօրաւոր նեցուկ, անհատապէս թէ այլապէս: Հաս-
կանալի կը լինի սո՛ւ՝ երբ ըսինք թէ ներկայ պարլամէնթի

Մանաւանդ այս րոպէիս, երբ կատարեալ ճգնաժամէ մը կանցնի
Պարլամէնթը դատարարութեան հաճին նկատմամբ, Բանուորական և Ա-
զատական շահերը կը պահանջեն ամէն զնով սեղմ և հաշտ կենալ լօրդերու
բռնապետական ռե՛կոմ-ին զէմ՝ միահամուռ բողոքելու համար:

Տարօրինակ զուգադիպութեամբ մը պ. Քիւր Զարաի, համանման նը-
շանաւոր հանդէսի մը մէջ, ի պտտասխան կարգ մը հարցերուն թէ բա-
նուորական դատը պիտի պաշտպան հանդիսանայ Ազատականութեան թէ
ոչ, կըսէ:—«Պաշտպանած ենք կառավարութիւնը կամ հակառակած իրեն՝
ճիշդ ինչպէս որ զործաւորական շահերուն յարմար ենք սեղած»,—և ապա
յառաջ կըրթայ յայտարարել որ միևնոյն ուղղութեան պիտի հետևին միշտ,
եթէ աւանան որ ատանց իրենց աւանդները ոտնակոխ ընելու օգուտ մը
կրնան մատուցանել զիրենք ընտրող գասակարգին:

Աւելորդ է ըսել որ մանաւանդ այս վերջերս պարլամէնթի մէջ կա-
տարեալ նիզակցութիւն կը տիրէ, խնդրոյ ներքե Ըլլալով շարք մը բանուո-
րական շահերուն նպաստող ծրագիրներ, որոնք լաւ ընդունելութիւն են
զստած ազատական դահլիճէն:

անդամներէն ոմանք 7-800 ոսկի ծախսած են ընտրուելու համար, մինչդեռ քիչ չէ 500, 400, 200, 100, 50 և այլն ոսկի ծախսողներու թիւը (*): Կաշառեցի... ի հարկէ ոչ. անուանապէս արտօնութիւն չկայ այդ բանին. սակայն իւրաքանչիւր կուսակցութեան գործակատարներ հոս ու հոն կը վազեն, կը հաւաքեն անհատներ ու կը տանեն գինետուն. կը հրաժցեն ճաշերու, ընթրիքներու, երեկոյթներու, (սա նախ քան ընտրութեանց սկսումը) ուր զանազան կարգի ըմպելիներ,—աշխատասիր դասի պաշտամունքի տոարկան—առատօրէն կը հոսին, երբ, ընտրութեան ընթացքին համար, այդ յորդ սեղանէն օգտուողը բնական է որ իր քուէն զայն ընծայողին շնորհէ: Բայց այս «կաշառել» չը նշանակիր, հետեալաբար թոյլտրելի է: Բացի այդ, անգլիացի քուէարկուն առհասարակ չերթար քուէ տալու՝ մինչև որ օթոմօպիլ մը իր դուռը զգայ և զինքը չը տանի: Քուէարկուններու թիւը երբեմն կը հասնի տասնեակ հազարի: Հարկաւոր է ատենց կառք հայթհայթել, իսկ կառք հայթհայթելու համար անհրաժեշտ է մեծամեծ դումարներ: Աւ, բնական է որ

*) Յոյց տալու համար թէ ի՞նչ կը նշանակէ պարլամենթի անդամ ընտրուիլ Անգլիա, ինչպէս և Սկոթլանդ ու Իռլանդա, այստեղ յառաջ կը բերեմ վերջին ընդհանուր ընտրութեան (Յունուար 1906) առթիւ կատարուած ծախսերը, առնելով պաշտօնական Կապոյտ Գրքէն որ անցեալները հրատարակուեցաւ:—

Բնդհանուր դումարը 1,166,858 ոսկի ստերլինգ է, թէպէտև կառավարութեան թոյլատրած ծախսի maximum-ն է 1215630 ոսկի ստերլինգ:

Այս գումարը բաժնուած է հետեւեալ կերպով:—

Տպագրութեան և այլնի	418,216	ոսկ. ստեր.
Հրապ. ժողովներու	30,157	» »
Անհատական ծախսեր	64,054	» »
Դրագիրներու, լրաբերներու	129,752	» »
Այս ծախսերը բաժանուած են.		
Անգլիական ընտրութեանց	996,861	» »
Սկոթլանդական . . . »	138,381	» »
Իռլանդական . . . »	31,615	» »

Քուէներու ընդհանուր թիւն էր 5645104:—Ասոնցմէ 4,880,073 Անգլիոյ մէջ, 611,350 Սկոթլանդի, և 153,681 Իռլանդիոյ:

Իւրաքանչիւր քուէի միջին արժէքը կը լինի.—Անգլիա և Վալէս 4 շիլլին 1 պէնի (2 բուբլի), Սկոթլանդ 4 շիլլին 6 պէնի (2 բ. 20 կոպ.) Իռլանդա 3 շիլլ. 8³/₄ պէնի (1 բ. 41 կոպ.):

Քուէներու համար ամենամեծ գումարը ծախսուած Անգլիոյ հարաւային նահանգներէն մէկուն մէջ (Քէնթ, Սէվընօք բաժանում) ուր 44 քուէի համար թեկնածուն վատնած է 591 ոսկի կամ մօտաւորապէս 12¹/₂ ոսկի իւրաքանչիւր քուէի համար:

Պարլամենտական 670 նիւտերուն համար յառաջ եկած են 1273 քանդիկատ:

բանուոր ներկայացուցիչ մը, որուն ծախսերը պէտք է իր մասնաճիւղը, ինչպէս և յաճախ ըոյր մասնաճիւղերը հոգան, չը կրնար մրցումի մտնել ազատական ու պաշտպանողական խոշոր գրամատէրերու հետ, որոնք իրենց ծախսերը ինքնին կը հոգան:

Ճիշտը խօսելով, թէպէտև անձնապէս բոլորովին տեղեակ չենք մենք, սակայն մի բանի արժանահաւատ անդլիական օրաթերթեր յայտնեցին թէ Մր. Քարնըզի, հանրաժանօթ միլիօնատէր իըլանդացի-ամերիկացին, գրեթէ միակը միլիօնատէր կրեսոններուն մէջ՝ որ գիտէ գրամը օգտակար և գրական գործերու նուիրել, վերջին բնզհ. ընտրութեանց պահուն մեծապէս օժանդակած է Անգլիոյ բանուոր գասակարգին նիւթապէս՝ իրենց գործը դիւրացնելու համար: Քարնըզիի նկատմամբ անհաւատարի բան մը չէ սա. բայց և այնպէս, նշանակելի է այն տեսակէտով որ նոյն դուրսէն անհատներ իսկ սկսած են ճանչնալ այս մեծ գանգուածին անմիջական բարեփոխման անհրաժեշտութիւնը և կրցածնին չեն խնայեր ի նըպաստ:

Նկատի ունենալով այս բոլոր պարագաները, գիտողին համոզումը առաւել ևս կը զօրանայ և իր հաւատքը՝ Անգլիոյ բանուորական դարձնումին վրայ՝ կը գտնայ աւելի հոստատուն: Եթէ միայն Անգլիոյ բանուորական ոյժը, կազմակերպուած, հասնի այն քանակին ու աստիճանին, որու մէջ կը գտնուի այսօր Գերմանիա, յաղթանակը անտարակուսելի է հոս, որովհետև երկրին պայմանները չափէն աւելի բարենպաստ են:

Վերջ մը զնեիք առաջ այս համառօտ տեսութեան, պարտաւորուած կղզամ յիշել հոս Անգլիոյ բանուոր գասակարգին համար անխոնջ գործող ամէնէ նշանակելի ու հետաքրքրական դէմքերէն մէկը—Տիկին Կոմսուհի Վօրիքի, որ արժանի է ամէն յարգանքի

Լէյդի Վօրիք սէնթիմէնթալ և ունայնախօս գործիչ մը չէ: Իր գործունէութիւնը բազմակողմանի է, հզօր ու արդիւնաւոր:

Լայն ու աւելի մէկին գաղափար մը տալու համար այս իգէալիստ տիկնոջ վրայ, պիտի ջանամ քիչ մը մօտէն ծանօթացնել զինքը, առանց նիւթիս բնարանէն շեղելու:

Կոմսուհի Վօրիք չէ անոնցմէ՝ որոնք կեանքի բովանդակ թարմութիւնը հաճոյքով ու գեղիսանքով վատնած, վերջնալոյսի ժամերուն իրենց ապաստան կընտրեն խաղաղ անկիւն մը՝ ապաշաւի օրեր անցնելու, ինչպէս երբեմնի աշուտականութեան մէջ օրէնք էր դարձած, իրենց փախստարան ընտրելով վստա-

տան մը չոր ու մութ պատերը: Եւ ոչ ալ նիւթական կամ այլ տապանակներ մղած են զինքը իր բարձր զիրքէն կամաւոր ինքնազոհութեամբ մը իջնել մինչև արևելեան Լօնդօնի փարշահոտ ու ապականուած փողոցները և անծանօթ աշխարհէ մը եկող աւետարեր հրեշտակի մը նման այն տեղի սովորած բնակիչներուն արիութիւն, ինքնագիտակցութիւն և անողոր փայլաբար քարոզել ներկայ տիրող կարգերուն դէմ:

Լէյլի Վօրիք, բողոքի բարեգուշակ դիպուածով մը, օժտուած է այն ամէնով՝ ինչ որ մէկը կրնայ երբեք բաղձալ, անհատական երջանկութեան համար:

Ըլլալով դերկոմսի մը խղիկը և ամենէ աւելի, արտակարգօրէն գեղեցիկ, իր երեսմը արխատօկրատ դասակարգի մէջ մեծազոյն յաղթանակ մըն է եղած դեռ առաջին օրէն: Առանց լանոր երեկոյթ, պարահանդէս, և այլն առանց ծաղիկի դարուն կը նշանակէր: Ներկայ թագաւորի երեկոյթները—այն տուն Վալէսի իշխան—առաջնորդողը ապագայ Լէյլի Վօրիքն էր—դահլիճներու և պարասրահներու շարժուն ոգին, իր սովորական զուարթագեղ և ուսուստուն բնաւորութեամբ:

Այսպիսի սիրուած ու փայփայուած գեղեցիկութիւն մը բնական է որ անթիւ խնդրարկուններ ունենար—լօրեր, դուքսեր, իշխաններ, հարուստներ, ամէն դասակարգէ և գոյնէ սակայն ինք լծակից ընտրեց լօրս Բրուք, կոմս Վօրիքի,—ամէնէ հին ու պատմական տունը, որոնցմէ մեծաթիւ թագաւորներ են եկած: Իր ամուսնութենէն վերջ, թէպէտև նորէն ամէնուն պաշտելին, այսուհանդերձ, ժամանակի լաւագոյն մասը նուիրեց ամուսնոյն կալուածներու քննութեան և հետաքրքրուել սկսան իր իշխանութեան ներքև գտնուող ժողովրդին կեանքով:

Ներքինի մշտագլուարթ, վարվուուն և երեկոյթներէ անպակաս զիցունին դարձաւ տակաւօրէն մտածկոտ, շրջաշայեաց ու նախորդ կեանքի ճանապարհէն հեռու մնացող: Սա յառաջացուց իր հակառակորդներու, ինչպէս նաև բարեկամներուն մէջ ծաղրանքի, արհամարհանք և խժըրծանքի նիւթ, որոնցմէ ազդուելու պատրաստակամութիւն բնաւ ցոյց չէր տար տիկին Վօրիք: Աւելի մեծ ու վսեմ իդէալ մը կը տանջէր իր միտքը: Մտնելով ժողովրդին մէջ, տեսած էր զրկանքի ու թշուառութեան զարհուրելի պատկերներ, ճանչցած անոնց կեանքը մօտէն և ըլլալով զգայուն հոգի մը՝ այդ օրէն մոռնալ սկսած անպէտ ու գեղիս կենցաղը և բացած նոր էջ մը գործունէութեան:

Լէյլի Վօրիքի սրտին ամէնէ մօտիկ ծրագիրը եղած է մանուկներին ներկայ աննկարագրելի դրութեան բարուորումը և այս նպատակով ալ իր գաւառին մէջ բացած է շարք մը

գալրոցներ, տարրական, բարձր ու թէխնիրական և հոն, աղջիկ ու տղայ կուսանին բոլորովին նոր ու ընկերավարական սիստեմի վրայ: Եթէ Լէյզի Վօրիք սկսէր իր գործունէութիւնը սնափառ երազներով և ողորմութիւն բաշխելու եղանակով, թերևս, ոչ հասնէր ներկայ գիրքին և ոչ ալ արժանանար այսքան դնահատման:

Իր անվկանդ եռանդն ու աւելնը որ երբեմն կը զոհուէր անհոգ ժամանցներու, փոխադրեց ներկայ հետեւած գաղափարին և արդիւնքը այն եղաւ որ վերջ ի վերջոյ, մէկ կողմ նետելով ազնուական դաւադարդ, դեղիս կեանք, ապուշ շտալուծ, անպէտ ժամանցներ, եկաւ փարեցաւ բանուորական կարմիր Դրօշին՝ որպէս ամէնէ խիղախ ու աներկիւղ պրօպագանդիստ մը:

Նշանակելի է գիտնալ Լէյզի Վօրիք բանուորական Անկախ Կուսակցութեան ալ չէ որ կը պատկանի, որոնք բաղդատաբար չափաւոր ու խաղաղաբարոյ են ճանչցուած, այլ սօցիալ-դէմօկրատներուն,—փոքրամասնութիւնը բանուորական երկու հատուածներէց,—կրելով վրանին սօցիալիստ անունը և կարմիր դրօշի անունը յաճախապէս կրկնելուն համար, ինչ որ քիչ մը վախցնէ տգէտ դասը և հին նախապաշարման խրատիւլակը երևան կը հանէ:

Եթէ ամէն ոք լռէ յեղափոխական կոռւի նկատմամբ, Լէյզի Վօրիք պատրաստ է միշտ յիշել և, Անգլիոյ մէկ ծայրէն միւսը կը շրջի ան որպէս պրօպագանդիստ քարոզելով, խնդրելով, առաջարկելով ու հրամայելով զրկուած զստակարգին համախմբուիլ Կարմիր Դրօշին շուրջը ու մէկ ու ուժեղ հարուածով մը տապալել տիրող անհաստատ կարգերը և ստեղծել «ամէնուս բաղձալի» շրջան մը: Չկայ աւելի մեծ հաճոյք մը քան լսել իր լաւատես առողջանութիւնը «մեր մօտաւօր յաղթանակին» վերաբերմամբ, և բանուորներ, նախ սկիսպիկ, այժմ գրեթէ կը պաշտեն զինքը իբրև թագուհի մը, համոզուելով իր անկեղծ իղձերուն: Սօցիալ-Դեմօկրատ միութեան պատկանող մի քանի անդամներ, որոնք կը գննուին այսօր պարլամենթական նստարաններուն վրայ, իրենց յաղթանակը միայն և միայն կը պարտին Լէյզի Վօրիքի անխոնջ պրօպագանդին այնպիսի շրջանակներու մէջ՝ ուր շատ քիչեր պիտի բաղձային մտնել ու քարոզել: Իսկ այն անմիտ չարաքանութիւնները որ երևան եկան այդ պահուն, որպէս թէ տիկին Վօրիք 5--600 ոսկիի զոհարեղէն էր ծախած ընկերավարական պարլամենթական թեկնածուներուն օգնելու համար, թէև ճշմարտութիւն, այսուհանդերձ թշնամիներու կողմէ հրապա-

բախտած բամբասանքներ էին՝ լուկ ծաղրանքի նոր նիւթ մատակարարելու համար: Սակայն Լէյդի Վօրիք այսպիսի մանր և նոյն իսկ խոշոր թշնամանքներէ յուսահատող մը չէ: Ոչինչ կրնայ շեղել զինքը իր այժմու ճանապարհէն, ոչ նոյն իսկ ամուսնական պարտաւորութիւնները, թէև տակաւին կապրի իր կոմս ամուսնոյն հետ, բոլորովին սիրով ու երջանիկ:

Իր մասին աւելի լաւ գաղափար մը կարելի է կազմել հետեւեալ յայտարարութենէն:—«Մի քանի տարիներէ ի վեր իմ համակրանքս եղած է դէպի ընկերվարականները (սոցիալիս), այսինքն, ճշմարիտ բանուորական կուսակցութիւնը Անգլիոյ: Մէկ պատճառը որ կարողութեանս չափ կօգնեմ այդ կուսակցութեան՝ այն է թէ՛ չեմ կարծեր որ Անգլիոյ երկու հսկայ քաղաքական կուսակցութիւններէն և ոչ մէկն ալ բուսականաչափ ռամկապետական է բանուորական շահերու բարեփոխումով զբաղելու, մինչև որ չստիպուի այդ ընել հոգի ու միացեալ բանուորական ներկայացուցչութեան մը ներկայութեամբ՝ երեսփոխանական ժողովին մէջ, և կը յուսամ ի վերջոյ բանուոր կուսակցութիւնը այնպիսի քօնթրօլ մը պիտի ստանայ հոն որ պիտի կարողանայ երկրի տնտեսական պայմանները բոլորովին տարբեր կրողանի մը վրայ դնել»:

Ինչպէս վերև յիշեցինք, Լէյդի Վօրիք ջերմ պաշտպան մըն է աղքատ մանուկներու տէրութեան կողմէ հոգսցման (state maintenance) հարցին և այդ կէտին վրայ գրած է շարք մը բրօշուրներ: Կընդունի թէ անօգուտ ու ֆլասակար է մանկան ուղեղը ուսմունքով յոգնեցնել ճգնել՝ երբ անոր ստամոքսը պարապ է*):

Այս է ահա Լէյդի Վօրիքի, «կոմսուհի սոցիալիստին» գաղափարը և գործունէութիւնը: Դեռ անցեալները անձամբ լսեցի ինքըզինքը:—«Մենք աշխատաւորներս յուսահատելու չենք, կըսէր, որովհետև մեր գատը բնական ու անժխտելի է: Յեղափոխական Կարմիր Դրօշակին փարիէս ի վեր ունէ ճիշտ խնայած չեմ և կը յուսամ շարունակել անոր ծալքերուն տակ: Թշնամանք ու արգելքներ կասեցնելու չեն մեզ, որովհետև մերն է ապագան»:

Անգլիոյ բանուորական կուսակցութիւնները կը կարօտին մի քանի համաման գործիչներու, և ներկայ նշանները կապացուցանեն որ պիտի ունենան շուտով, որովհետև ան ջախ-

*) Միակ Լօնդօն առօրեայ տասնեակ հազարաւոր մանուկներ և տղանքներ դպրոց կերթան՝ առանց նախաճաշի և ճաշի, կամ մէկ-երկու շերտ հացով միայն:

ջախուսած է հախսապաշարեալ տտելութիւնը, ալ չեն հասկնար բանուոր անուամբ պարիսներ, այլ դասակարգ մը՝ որ իրաւունք ունի պահանջելու բաժինը իր աշխատութեան, բաժինը իր արդիւնարեւութեան, մասնակցութիւնը իր ստեղծած վայելքներուն, որ կը շնորհին մարդկութեան այն երջանկութիւնը որ կարգ մը ներշնչուած ապուշներ անտեսանելի ու անգոյ աշխարհներու մէջ վայելել կերագին, թողլով ներկայի միակ ու իսկակալն բարիքները պարագլտներու և հտհագործողներու:

Այս է ուրեմն Անգլիոյ բանուորական զարթնումի անցեալն ու ներկան իր ընդհանուր գծերուն մէջ—զարթնում մը որ բոլորը յանկարծակի բերաւ և որուն պատասխանատուութիւնը մերը չէ, կըսէ ամէնէ ետեւուն առաջնորդը Բանուորական Կուսակցութեան, քանի որ իրենք անմիտ նախագուշակումներով ինքնախաբէին եղած: Միևնոյն յուսախարութիւնը պիտի տեղի ունենայ երբ նոր ընտրութիւններ պատահին, կը շարունակէ, քանի որ վերստին համանման սնոտի բանդագուշանքներով կապին մեր գործունէութեան և յարատեւութեան նկատմամբ: Մենք որ ամբողջ 20 տարիներ պայքարած ենք այս դատին համար, վերջին խրոխտ զարթնումը բնաւ անակնկալ մը չէ մեզի, ինչպէս և չեն գալիք մեծագոյն յաղթանակները, որովհետև, կը յարէ յիշեալ յօդուածագիրը, «Բանուոր Կուսակցութիւնը տրամաբանական ու անսուսափելի արդիւնքն է ժողովրդական քուէին... Դա արտաքին ու տեսանելի ազդեցոյցն է անժառանգ ռամկապետութեան որոշման՝ ունենալու կառավարութիւն մը ժողովրդային, ժողովուրդէն ու ժողովրդին համար...» հիմա ոչ առիթները բազմապատուած են, հիմայ որ կը ներկայացնեն կայսերական պարլամենտին մէջ հեղինակաւոր ու ազդու առանձին ոյժ մը...

Այս տեսութիւնը՝ որ ջանացինք կարելի եղածին չափ ազատ պահել թէօրիական կնճռոտութիւններէ, ճիշդ ինչպէս տեղւոյս բանուորական մի քանի հատուածները կրնան՝ անտեղի ներքին վէճերու առիթ չտալու համար, կը յուսամ պիտի կրնայ ամփոփ դադափար մը տալ տիրող ներկայ դրութեան վրայ Անգլիոյ բանուորական դատին վերաբերմամբ:

Մեր սոյն անդրանիկ յօդուածը «Մուրճ»ին, սահմանուած չըլլալով առաջինն ու վերջինը, Անգլիոյ ընկերական հարցերու այլ և այլ խաւերը հետազօտած պահներուս մէկէ աւելի անդամներ առիթ պիտի ունենանք կրկին անդրադառնալու այս խնդրին, ու այնպիսի կէտեր՝ որ թողուած ու անտեսուած են հոս՝ պիտի աշխատինք աւելի լայն ու մանրամասնօրէն

բացատրել այնտեղ: Որովհետեւ, մեր կարծիքով, չկայ ընկերական հիմնական ու արդիւնաւոր բարեփոխման նպատակ ունեցող հարց մը այս պահուս՝ որ անսկզմանօրէն կապուած չըլինի բանութեան մեծագոյն հարցին, կամ, աւելի ճիշտ է ըսել, յառաջ չընկնուի այս դասին ուխտեալ մարդիկ հանդիսացող առաջնորդներու կողմէ, որոնք միայն ընդունակ են զգալու էականը, անհրաժեշտն ու հրամայողականը ժողովրդի իսկական պահանջներուն:

Մինաս Յոլա՛կ

Հօնոս

ԵՐԿԻՐԸ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՄԷՁ *)

Երկրի արեւակնային դիրքը:—Երկրիս բացարձակ զիրքի մասին տարածութեան մէջ մենք ոչինչ չենք իմանում, եթէ ոչ որ նա որպէս թէ կորած է մի անհունութեան մէջ, որը չի կարող ունենալ ոչ մի սահման:

Երկիրս մի գունդ է, շաղկապուած մի խումբ դեռ ևս թերի ճանաչուած այլ մոլորակների հետ միասին մի աստղի՝ Արեգակի, որի շուրջը բոլոր այս մոլորակները պտտում են իրենց յետեից՝ ճշգիւով մի կամ մի քանի երկրորդական մոլորակներ: Արեգակնային ամբողջ համադրութիւնը կազմում է մի մասը այն հեռաւոր սպիտակ կէտերի նման երկացող աստղերի, որոնք պտոյտ են գալիս հազարներով տարածութեան մէջ և որոնց ճանաչուած թիւը անցնում է 50000-ից: Սպիտակ շիկացած երկաթի նման փայլուն աստղերը, որոնք մեզ շրջապատում են, միասին վերցրած կոչւում են ծիր կաթին, որը պարունակում է մերի նման հազարաւոր արեգակներ: Այն Արեգակը նոյնիսկ, որի շուրջը պտոյտ է գալիս Երկիրը, ընաւ անշարժ չէ. մի արագ շարժումն տանում է նրան

*) Յիմնասերէնից թարգմանած այս զրուիւնը ամփոփ գաղափար կը տայ մեր այն ընթերցողներին, որոնք հնարաւորութիւն չեն ունեցել երկրի մասին գիտութեան խօսքը լսելու: Ծ. խ.

դէպի մի աստղ Հերկիւլի խմբից, որ իր կարգում դիմում է դէպի անյայտութիւն:

Արեգակնային համերաշխութեան մէջ, Երկիրս մէկն է այն ութ գլխաւոր մոլորակներից, որոնք շարժւում են Արեգակի շուրջը. միւսներն են՝ Մէրկուր, Վէնիւս, Մարս, Իւպիտեր, Սատուրն, Ուռանիւս և Նէպտիւն.—երկու առաջինները աւելի մօտեցած, մնացեալ հինգը աւելի հեռացած են կենդրոնական աստղից քան մենք: Բացի այդ, կան մի քանի հարիւր փոքրիկ մոլորակներ, որոնց որոշ մի մասը հաւանականաբար ստելի մեծ ծաւալի մոլորակի բեկորներն են:

Երկիրը արեգակային մոլորակների մէջ նշանաւոր տեղ չէ գրաւում. նա ամենափոքրներից մէկն է: Եթէ նա ունի մի երկրորդական մոլորակ՝ Լուսինը—Իւպիտերինը հնդից սակաւ չէն հաշոււմ մինչ այժմ ճանաչուած: Եթէ նա միւս կողմից անցնում է իր ծաւալի մեծութեամբ Մէրկուրի վերաբերեալ, Վէնիւսի, Մարսի, դորա փոխարէն Իւպիտէրը, Նէպտիւնը, Սատուրնը և Ուռանիւսը, ունին տարածութիւններ բոլորովին այլ մեծութեան. Իւպիտէրը մոնառանդ հաւասար է աւելի քան հազար չորս հարիւր երկրի մեծութեանը: Ինչ կը վերաբերի Արեգակին, նա 1,280,000 անգամ աւելի ծաւալով է քան մեր երկրագունդը:

Ասփոփելով ասածներս, երկիրս ոչ այլ ինչ է եթէ ոչ մի կէտ արեգակային համերաշխութեան մէջ և այս վերջինը մի կէտ է տարածութեան մէջ: Այդպիսով նկատւում է այն սխալը մեր նախնիքների որ պարզամտութեամբ դարձրել էին իրենց երկրագունդը աշխարհին կենդրոնը:

Երկրի ծագումը եւ պատմութիւնը.—Որտեղից է յառաջացել երկիրը: Ի՞նչպէս է նա կազմուել:

Տարբեր ժամանակաշրջաններում, գիտնականները և փիլիսոփաները փորձել են բացատրել տիեզերքի կազմուելու ձևը ընդհանրապէս, և երկրինը մոնառաւորապէս: Բայց միայն վերջին դարից սկսած է որ ենթադրութիւնները սկսել են լուրջ և գիտնական արդիւնքների վրայ հիմնուել: Աւելի ընդհանրապէս ընդունուածը է այն ենթադրութիւնը որ Լապլասը ¹⁾ դարպացրեց 1796 թուին իր՝ աշխարհիս դիրքը ներկայացման մէջ: Անկասկած այդ հիպոթեզան ներկայումս դեռ ևս կասկածելի է, բայց նա ունի առաւելութիւններ բացատրելու բաւականին ճշտու-

¹⁾ Ֆրանսիական հրշակաւոր մաթեմատիկոս և աստղագէտ. հասարակ երկրագործի ուղի և մաթեմատիկայի պրոֆեսոր իր ծննդավայրի ղինուո-րական դպրոցի:

թեամբ օրէնքների մեծ մասը որոնք ղեկավարում են մոլորակային սխտեմը:

Ըստ Լապլասի, տիեզերքի ամբողջ տարածութիւնը, որ ներկայումս գրաւուած է այդ սխտեմով, սկզբից լցուած էր մի գաղային զանգուածով չափազանց թեթեւ և պտտւում էր մի ընդհանուր շարժմամբ: Այս զանգուածքը սառելով ցուցումներից, մի խտացումն յառաջացաւ կենդրոնում և կազմեց Արեգակը: Մասնիկները մնալով այդ խտացման կենդրոնից դուրսը ժողովուեցան իրենց կարգին խմբով աւելի կամ սակաւ ծաւալով. տիեզերային ձգտողականութիւնը արգելեց նրանց անսահման կերպով հեռանալ, և նրանք շարունակեցին պտոյտ դալ կենդրոնի աստղի հետ, և իրենք իրենց շուրջ: Այդպէս եղաւ Երկրի և այլ արեգակնային մոլորակների սկզբնաւորութիւնը: Երկրորդական մոլորակները կազմուեցան միևնոյն գործողութեամբ այդ երկրորդական զանգուածքների շուրջը, որոնք անգաղար շարունակում էին սառել և խտանալ:

Արեգակնային սխտեմը այնուհետև գտնուեցաւ կազմակերպուած. կենտրոնում Արեգակը, գլխաւոր մասը սկզբնական գոգային զանգուածքի. ամբողջ շրջ սպառը—բեկորներ աւելի սակաւ նշանաւոր այն միևնոյն զանգուածքի. մոլորակները և իրանց երկրորդական մոլորակները պտտւում էին էլիպսային շաւղով:

Ըստ այդ դաւադրութեան, Երկիրս էր, իր ծագման ժամանակ, մի գաղային գունդ ուր ջերմութիւնը պահպանում էր գաղային վիճակի մէջ մարմինները, որոնց ներկայ քիմիան անուանում է պարզ-մարմիններ: ¹⁾ Այդ գաղային գունդը խտացաւ աւելի արագութեամբ քան արեգակային զանգուածքը, շնորհիւ իր նուազ ծաւալի: Սկզբում յառաջացաւ մի բաժանումն գաղերի մէջ. մինչդեռ ա մենաթեթեւները մնում էին ամպամած, ամենածանրերը հեղուկացան, ժողովուեցան մի կենդրոնական միջուկի մէջ, և, շնորհիւ ծանրութեան օրէնքի, բաժանուեցան ըստ նոյա աճող խտութեան: Նոյնիսկ շուտով այդ հանքային բաղադրութիւնը ծածկուեցաւ, մակերևոյթի վերայ, մի տեսակ կեղևով, անգաղար հաստանալով տաքութեան շարունակարար կորստից: Այդ առաջի կերպարանաւորութիւնը յառաջացրեց միւսները:

Կենդրոնական հնոցը, պահպանուելով սառչելու դէմ երկրային կեղևով, իր գոյութիւնը պահպանեց այնպէս փեղեցիկ որ

¹⁾ Քիմիայի մէջ գաղային վիճակի մէջ եղած պարզ մարմիններն են թթուածին, ջրածին, բորակածին և քլոր:

մեր երկրի խորը շերտերը դեռ ևս պիտի որ շիկացած վիճակի մէջ լինին, գոնէ մի մասը: Բայց զաղային շրջապատը, անջատուելով կենդրոնական կրակից երկրային կեղևով, սառուժ էր աւելի արագութեամբ, և հէնց որ ջերմութիւնը ընկաւ ցած ջրի եփման կէտից, գոլորշին խտանալով, անձրևները հեղեղուեցին երկրիս վերայ:

Երկրիս կազմող երեք տարրերը գոյութիւն ունեցան այնուհետև. բոթանուեցան մթնոլորդը, ցամաքը և ջուրը:

Հարկաւոր էին դեռ ևս բազմաթիւ կերպարանափոխութիւններ որպէսզի մեր մոլորակը դառնար բնակուելի կենդանիների համար, բոյսերի և մարդկանց: Նախկին շերտերը հաւասարութիւնը կորցնելով ներքին ուժերից, յետոյ քայքայելով մթնոլորտային շարժուող նիւթերից, սկսում են մեզ ասել պատմութիւնը կեանքի այս յաջորդաբար փոփոխութիւնների, ինչպէս երկաղնդիս մակերևոյթի վերայ այնպէս և ծովերի խորքում: Շատ անգամ, սկսած ամենահեռաւոր ժամանակներից ուր առաջին կազմակերպուած բջիջները արեւ են իրենց երևան գալը երկրիս վերայ, կեանքի պայմանները կերպարանափոխուել են. բոյսեր և կենդանիներ ըստացել են նոր ձևեր, նոր կլիմաների տակ, ամպամած կամ պարզ երկնակամարի, տաք ծովերի մէջ կամ սառած ցամաքների վերայ, շարունակ կերպարանափոխուել, երբեմն սառել, երբեմն այրուել արեգակից, երբեմն խեղդուել անձրևներից: Եւ այս կլիմաները, այս ցամաքները անդադար տատանուող, այս ծովերը աստիճանաբար ազատուելով իրենց տղմերից, որոնք կազմել են և կազմում են դեռ ևս ասպագայ ցամաքներ, այս բոլորը հասցրել են երկրագունդը այն անցողական վիճակի, որ մարդը սկսեց նորան ճանաչել:

Քանի՞ դար գործադրեց Երկիրս խտանալու համար, ամբանալու, անցկացնելու նախկին երկար շրջանը բուսական և կենդանական, կատարելու վերջապէս գանդաղ կերպարանափոխութիւնը որ աստիճանաբար նորան բերաւ այն վայրկեանին ուր մարդը կարողացաւ գաղափար կազմել բնութեան մասին: Հէլմհոլց ¹⁾ Ֆիզիկոսը որոշում է որ սակաւ չափեւր է լինի երեք և կէս միլիոն դարից միմիայն մեր մոլորակի տաքութիւնը իջնելու 2000 աստիճանից 200-ի:

Երկրիս մեր և տարածութիւնը:—Երկար ժամանակ մարդիկ չեն կարողացել գաղափար կազմել երկրի ճիշտ ձևի մասին: Նախկին յոյները նորան ներկայացնում էին ինչպէս մի հըսկայական ափսէ շրջապատուած մի անսահման ովկեանոսով և

¹⁾ Գերմանացի բնագետ և ֆիզիկոս, ծնունդ 1821 թ.

տիրապետուած մի փոս ընկած կամ գողաւոր երկնակամարով, որը միջից աստղերը քաշ էին ընկել: Սակայն այդ հեռաւոր ժամանակներից սկսած, մի քանի գիտնականներ նկատեցին ճշմարտութիւնը. Միլիացի ¹⁾ Թալէսը, ²⁾ Արիստոտէլը, ³⁾ Էռատոսթէնը, Ալէքսանդրիացի ⁴⁾ Պտղոմէոսը սովորեցնում էին երկրիս գնդաձևութիւնը. բայց նոցա գաղափարները մնացին կրթուած մարդկերանց ժառանգութիւն: Մարդիկ այդ գնդաձևութեան ասպացուցուած փաստը ունեցան միայն XVI-դ դարում, երբ Մագելլան ճանապարհորդը, մեկնելով Իսպանեայից արևմուտք, վերադարձաւ այնտեղ արեւելքից, աշխարհի շուրջը պտտելուց յետոյ: Մենք ունենք ներկայումս մեր տրամադրութեան ներքոյ մի շարք այլ փաստեր այդ խնդրի վերամաղրութեան ներքոյ մի շարք այլ փաստեր այդ խնդրի վերաբերեալ, մի քանիսները գործածական, ինչպէս նաւի նաւահանգիստ վերադառնալը, միւսները աւելի գիտնական, ինչպէս երկրի լուսնի վերայ ձգած խաւարման ստուերի ձևի եզրակացումը կամ երկրաբաժանական հաշիւներից, որը մեզ տալիս է երկնակամարի թեքութիւնը:

Ուրեմն երկիրս գնդաձև է. կամ աւելի ճիշտը, ինչպէս ամեն հեղուկային զանգուածք կեանք ստանալով իր վերայ պտոյտ գալու շարժումից, նա ունի իսկապէս մի էլիպսի ձև, պտոյտ գալուց տափակացած բևեռներում և ուռած հասարակածում: Բացի այդ, մակերևոյթի խորթութիւնները կտրտում են իր երեսը բարձրութիւններով և ճեղքուածքներով:

Այնուամենայնիւ բևեռների տափակութիւնը այնպէս փոքր է (մօտաւորապէս $\frac{1}{300}$) և խորթութիւնները մակերևոյթի համեմատութեամբ այնպէս աննշան՝ $\frac{1}{300}$ որ կարելի է, սովորական գործածութեան մէջ, նայել երկրի վերայ ինչպէս մի կատարեալ գնդի:

Իր տարածութիւնները մեզ այսօր յայտնի են՝ ահաւասիկ այդ թուերը.

Շրջապատը, 40,000 կիլոմետր:

Հասարակածային շառաւիղը, 6377 կիլոմետր:

Բևեռային շառաւիղը, 6357 կիլոմետր:

Միջին շառաւիղը, 6366 կիլոմետր:

1. Յոյն փիլիսոփայ Քրիստոսից 600 տարի առաջ 2. Հռչակաւոր յոյն փիլիսոփայ և Ալէքսանդր Մեծի դաստիարակ, 384 թւին Քրիստոսից առաջ: 3. Հռչակաւոր յոյն փիլիսոփայ Ալէքսանդրիայի գալոցի, 276 թ. Ք. առաջ, ձանձրացած կեանքից թոյլ տուեց իրեն մեռնել քաղցից 80 տարեկան հասակում: 4. Հռչակաւոր աստղագէտ 11 տ. Ք. յետոյ իր սխտեմով նա. ներկայացնում էր երկիրը աշխարհիս կենդրոն և հաստատ մարմին:

Մակերևոյթը, 510 միլիօն քառ. կիլօմետր (1000 անգամ մերանսիային հաւասար):

Բովանդակութիւնը 1 եռիլիօն քառ. խոր. կիլօմետր (1000 միլիարդ):

Միջին խտութիւն, 51₂ անգամ աւելի ջրի ծանրութիւնից: Երկրի շարժումը:—Երկիրը յառաջ է անցնում կրկնակի շարժմամբ.

1. Նա պտոյտ է գալիս ինքն իր վրայ արեւմուտքից արեւելք, մի երեակայական ասանցքի շուրջը որը միանում է երկրի մակերևոյթի հետ երկու կէտերում, Բեռն անուանուած:

Տեղդութիւնը այս շարժման ինքն իր վրայ կոչւում է օր և բաժանւում է քսան և չորս ժամի:

Այս առաջին շարժումը անուանւում է օրային շարժումն. նա յառաջացնում է օրերի և դիշերների յաջորդութիւնը: Սակայն և այնպէս իր արագութիւնը փոփոխւում է երկրագնդիս մէկ ծայրից միւսը. զէրօյի հաւասար րեւոններում, որոնք գտնւում են ասանցքի վրայ, նա աւելանում է հեռահեռէ որքան նրանից հեռանում են և նա ստանում է հասարակածի վրայ իր ամենամեծ աստիճանը, րեւոններից հաւասար հեռաւորութեան վրայ: Ս. Պետերբուրգում արագութիւնը շարժման 14 կիլօմետր է իւրաքանչիւր րոպէսում, Պարիզում 18 կիլօմետր, հասարակածի տակ 28:

2. Երկիրս պտոյտ է գալիս արեւակի շուրջը մի տեղափոխուելու շարժումով որը կատարւում է երբ նա արած է լինում 365 և կէս պտոյտ ինքն իր վրայ: Այդ այն շարժումն է ժամանակի որին տուել են Տարի 1) անունը: Միջին արագութիւնը որով երկիրը գործադրում է այս վերջին շարժումը հաւասար է 30 կիլօմետրի իւրաքանչիւր վայրկեանում: Այն ճանապարհը որ նա գծում է կոչւում է երկրային շուրջ, և տարածութեան թակերկեցիքի պատկերը ուր նա շարժւում է, ծիր խաւարման:

Այս տարեկան շարժումը այնպէս հակառակ մեր զգացմունքների վկայութեանը և կասկածուած հին դարերում երկու կամ երեք յոյն գիտնականներից, ապացուցուեցաւ XVII-րդ դարում Էնչ Կոպէրնիկից, յետոյ Կէպլէրից ²⁾ և Գալիլէից ³⁾: Նիւտոնը ⁴⁾, XVII-րդ դարում, բացադրեց մեխանիզմը համաշ-

1) Որը տօնում է ամբողջ լուսաւորեալ աշխարհ մեր յունուարի 1-ից 13 օր տոաջ, ըստ Գրիգոր XIII-րդ պապի վերանորոգած տոմարի 1572—1585: 2) Հռչակաւոր գիտնական աստղագէտ. 3) Հռչակաւոր մաթեմատիկոս, ֆիզիկոս և աստղագէտ իտալացի, 1560—1642: 4) Հռչակաւոր մաթեմատիկոս, ֆիզիկոս, և փիլիսոփայ անգլիացի 1642—1727:

խարային ձգտման գիւտի օրէնքներն յայտնելով:

Եթէ երկրի առանցքի շարժումը լինէր ուղղահայեաց արեգակի շուրջը պտոյտ գալու պատկերին, երկրագնտիս իւրաքանչիւր կէտը կստանար արեգակնային տարութիւնից հաւասար քանակութիւն: Մարդիկ կունենային միևոյն ձմեռը երկու բևեռներում ևս, ուր արեգակը մշտնջենապէս կը փայլէր հորիզոնի վրայ, միշտ միևնոյն ամառը հասարակածի վրայ, ուր ճառագայթները կը մնային անդադար ուղղահայաց կէսօրին միևնոյն ժամանակը միշտ գարուն և աշուն միջին շրջաններում ուր արեգակը ուղարկում է ճառագայթները անփոփոխ կերպով թեք:

Բայց երկրային առանցքը խոնարհուած է մօտաւորապէս 23 աստիճան ծիր խաւարման մակերևոյթի վերայ, և այդ խոնարհումը բերում է յաջորդաբար երկրի իւրաքանչիւր մասին այլ աստիճան տարութիւն և փոփոխական լոյս: Մինչդեռ իւրաքանչիւր բևեռը, խոնարհուելով վեց ամիս դէպի արեգակը, շուտ է դալիս մնացեալ վեց ամիսների ընթացքում դէպի մթութիւն տարածութեան ցրտութիւնը, արևադարձային շրջանի մէջ եղած իւրաքանչիւր կէտը գծում է արեգակի զիմաց, 182 կամ 183 օրուայ ընթացքում, մի պտոյտ, հետևելով մնացեալ 183 օրերի ընթացքում մի հակառակ պտոյտ:

Երկրային կեանքի բոլոր արտայայտութիւնները, սկսած ծովի և մթնոլորդի շարժումներից մինչ մարդկային հասարակութիւնների գոյութիւնը, կախուած է երկրի այդ փոփոխութիւններից Արեգակի ճառագայթների առաջ:

6. Այվազեանց

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Քնական եւ փոխանակցական տնտեսութիւն.—ինչ բան է «ապրանք».—
ինչ է օգտաւէտութիւնը (գործատւան արժողութիւնը)—ինչ է՝ զինք.—
որտեղից է վերցնում ապրանքի փոխանակցական արժէքը եւ ինչով է
որոշում.—դրամ:

Յայտնի է որ հին ժամանակներում առևտուրը այնքան
լայն զարգացած չէր, ինչպէս այժմ: Մարդիկ քիչ էին իրար
մէջ փոխանակում իրենց աշխատանքի արդիւնքները և իրենց
համար բոլոր անհրաժեշտ բաները մեծ մասամբ իրանք էին
պատրաստում: Կանայք, օրինակ, ազում էին իրանք հացահա-
տիկները ձեռքի երկանաքարերով, գործում էին կտորներ, ամ-
բողջ ընտանիքի համար շորեր էին կարում և այլն: Բայց մար-
դիկ վաղուց հասկացել են այդ ձևի աշխատանքի անշահաւէ-
տութիւնը: Մենք տեսանք արդէն («Մուրճ» № 11—12, երես 67)
թէ ինչ օգուտ է բերում մարդուն նրա տնտեսական գործու-
նէութեան մէջ աշխատանքի բարդ համադրութիւնը: Եթէ ես ինձ
համար և՛ շորեր եմ պատրաստում, և զաշտում եմ աշխատում,
և կօշիկներ եմ կարում, և ցորեն եմ ազում, և կահկարասիք եմ
շինում և այլն մի և նոյն ժամանակում, անշուշտ ես կօշիկներ
եմ կարում աւելի վատ քան կօշկակարը, կահկարասիք եմ շի-
նում աւելի վատ քան հիւսնը, գութանով աւելի տնյաջող
եմ գործում քան երկրագործը և այլն: Ամեն բան անել կարենալ
անհնարին է: Այդ հոսիս և առաջ: Երկրորդ, ոչ ամենը, ինչ
ինձ հարկաւոր է ես կարող եմ ձեռքի տակ ունենալ: Մեզ մօտ
Ռուսաստանում, օրինակ, չի աճում թէյի ծառ, ուստի ես ինքս
չեմ կարող թէյ շինել. հիւսիսում չի բուսնում ցորեն.—այն-
տեղ, ուրիմի այդ հանգամանքներում մարդիկ պէտք է մնան
առանց ցորենի հացի և այլն: Այդ պատճառներով մարդկանց
նիւթական պահանջները գոհացման այդ կերպը թողնուեց:
Սկսեցին բանը այնպէս ընկել, որպէս զի իւրաքանչիւրը զբաղուէր
միայն մի գործով, որը նա ամենից լաւ է հասկանում և որը

նրա համար աւելի յարմար է բնական պայմանների բերմամբ: Փոխարէնը իւրաքանչիւրը աւելսկսեց արդիւնաբերել ոչ միայն իր համար, այլ այն հաշւով որ նրա արդիւնքները կարելի լինէր վաճառել, այսինքն ձեռք բերել զրամ և նրանով դնել այն, ինչ որ նրան հարկաւոր է: Այսինքն, մարդիկ սկսեցին փոխանակել իրենց արդիւնքներով—և առաջուայ «քնախն» տնտեսութիւնը փոխարինուեց ներկայ—«փոխանակցականով»:

Այն արդիւնքները (продукты), որոնք նշանակում են վաճառելու համար սկսեցին կոչուել ապրանք: Այդ պայմանով ապրանք չի լինի այն ջուխտ կօշիկը որ կտրել է կօշկակարը իր համար, այլ միայն այն ջուխտը, որը նա մտադիր է վաճառել, ծախել: Իւրաքանչիւրը սկսեց արդիւնագործել միայն որ և է մէկ ապրանք, ծախել այդ և ապա արդէն շուկայում, վաճառանոցում, որոնել այն ապրանքը, որը նրան հարկաւոր է իր կարիքներին գոհացում տալու համար, որը նա ուզում է գնել:

Մենք այժմ կը ծանօթանանք թէ ինչպէս է մարդկանց մէջ կատարուում փոխանակութիւնը:

Ա Ր Ժ Է Ք

Մարդուն հարկաւոր իւրաքանչիւր առարկայ օգտակար է նրան, ունի օգտակարութիւն (полезность), կամ այլ խօսքերով. ունի սպառողական արժողութիւն (потребительная стоимость), այսինքն արժէք գործադրելիս: Ինձ հարկաւոր է թանաքաման, երկրագործին հարկաւոր է գութան, բոլոր մարդկանց հարկաւոր է արևի լոյս, ջուր, օդ—այդ բոլորը օգտակար է, ուրեմն—ունի օգտակարութիւն (գործածական կամ սպառողական արժողութիւն): Յետոյ, արդիւնքների այն քանակը, որ տալիս են փոխանակութեան ժամանակ որ և է իրի համար, կոչուում է փոխանակման արժէք, կամ ուղղակի այդ առարկայի արժողութիւնը:

Վերջապէս, զրամի այն քանակը, որ ստացուում է որևէ իրի փոխանակ կոչուում է նրա գինը: Այդպիսով, եթէ սեղանի համար փոխանակման մէջ ստացուած է 20 արշին կտաւ, ուրեմն այդ 20 արշին կտաւը կը լինի սեղանի արժողութիւնը և սեղանը կը լինի 20 արշին կտաւի արժողութիւնը: Եթէ սեղանի համար ստացուած է 6 բուբլի, ուրեմն սեղանի գինը հաւասար 6 բուբլու: Եթէ մի արշին կտաւի համար տալիս են 30 կոպէկ, ուրեմն 20 արշին կտաւի գինը միաժամանակ հա-

¹⁾ «Մուրճի» 1906 № 11—12-ում տպւած էր Արդիւնագործութեան երեք պայմանները. այս յօդաձի մէջ քննուում է փոխանակման (обмен) երեք լիքը: Գրւածքը քաղուած է Կարլեմը «Эконом. бек.» զրքից:

ւասար է, ինչպէս այս օրինակում, զրամի նոյն քանակին, ուստի մենք ասում ենք թէ նրանց արժողութիւնը հաւասարաւոր է: Մենք ներքեւ կը տեսնենք որ զինքն և արժողութիւնը (արժէքը) բոլորովին միեւնոյն հոմանիշ բանը չէ, ինչպէս կը թուէր առաջին անդամից:

Կարծող է արդեօք փոխանակման արժողութիւն ունենալ մի իր, որ ոչ մի բանի պէտքական չէ (այսինքն չունի գործածական արժէք): Ի հարկէ, ոչ: Ինչու ես պէտք է դնեմ մի իր, նրա փոխանակ գրամ կամ այլ արդիւնք տամ, եթէ նա ինձ հարկաւոր չէ: Մի անգամ մի արաք (ինչպէս պատմում է մի պատմարան) անապատում գտաւ մի արկղ մարդարիտներով: Նա այդ բրինձի տեղ ընդունեց և սկսեց եփել, իսկ երբ տեսաւ իր սխալը, վերցրեց և դէն շարտեց այն: Եւրոպայում մարգարիտը գործածուելով զարդարանքի համար, հետեւաբար ունենալով գործածական արժէք, ունի և ահագին փոխանակման արժողութիւն: Իսկ արաքին նա հարկաւոր չէր և նա նրան դէն զցեց:

Ուրեմն, գործածական արժողութիւն չունեցող իբր չի կարող ունենալ նաեւ փոխանակման արժէք: Եթէ իբրը փոխանակ որ և է մէկը որ և է բան է տալիս, ուրեմն այդ իբրը այդ գնողին մի բանի համար պիտանի է: Պատահում է նոյն իսկ այնպէս, որ առարկան բոլորովին ոչոքի հարկաւոր չէ, բացի մի անձի, իսկ այդ անձը պատրաստ է փոխանակը շատ բան տալ այդ առարկայի համար: Պատահում է այդ, օրինակ, որ և է պատկերի հետ, յիշատակի նուէրի հետ և այլն, մի խօսքով այնպիսի իբրի հետ, որ թանգ է միայն նրանով, որ գնողը կապում է նրա հետ որ և է յիշողութիւն և այլն: Այդ պէպերում իբրը, թէն չունի գործածական արժէք ուրիշների համար, սակայն ունի գործածական արժէք անձի համար և միայն այդ պատճառով նրա նամար ունի և փոխանակման արժողութիւն:

Արժէքների չափը: Արդեօք իւրաքանչիւր իր որ ունի՞ գործածական արժողութիւն ունի՞ նա և փոխանակման արժողութիւն: Արդեօք ամեն մի օգտակար առարկայի համար կարելի է փոխանակօրէն ստանալ մի բան: Նայէք ձեր շուրջը և զուր կը տեսնէք որ ոչ ամեն մի բանի համար: Ի՞նչը կարող է աւելի օգտակար լինել քան ջուրը, օդը, արեւի լոյսը: Առանց դրանց մարդ անկարող է ապրել: Բայց մենք որ և է բան վճարում ենք այդ բոլորից օգտուելու համար:—Ոչ: Ինչո՞ւ: Ահա մենք և մօտեցանք այն հարցին թէ որտեղից է գոյանում ապրանքների փոխանակման արժողութիւնը և թէ ինչպէս որոշել այն:

Փոխանակման արժողութիւնը չի կարող որոշուել որևէ իրի օգտակարութեամբ: Օգը և ջուրը օգտակար են, բայց չունեն փոխանակութեան արժէք: Հացը միշտ հաւասարապէս հարկաւոր է մարդկանց: Չկար այնպիսի ժամանակ երբ մարդուն հացը աւելի պակաս հարկաւորուէր, քան այժմ: Այնուամենայնիւ հացը միշտ թանգանում է: Երկաթը աւելի և աւելի պիտանի է դառնում մարդկանց, որովհետեւ քանի գնում է աւելի և աւելի մեծ թւով են շինւում մեքենաներ և գործիքներ, որոնց մասին առաջ զաղափար չունէին: Մինչդեռ երկաթը չի թանգանում, այլ էժանանում է. ուրեմն, ինչո՞ւն է պատճառը: Ուշադրութիւն դարձնենք այսպիսի հանգամանքի վրայ. ջրի համար սովորաբար մարդիկ ոչինչ չեն վճարում, իսկ քաղաքում ջրկիրը ստանում է որոշ քանակութեամբ փող իւրաքանչիւր վեղրօ ջրի համար: Ինչի՞ համար է նա ստանում: Ի հարկէ ոչ այդ ջրի համար, այլ այն աշխատանքի համար, որ նա վերցնում է իր վրայ լքցնելու, բերելու և թափելու ջուրը: Ենթադրենք թէ ես պէտք ունենայի իջնել ծովի ափը ջրասուզական զանգի մէջ, Ի հարկէ ես պէտք է վճարէի այն օգի համար, որով ես շնչում էի զանգի մէջ, այսինքն վճարէի այն աշխատանքի համար, որ գործադրուել է զանգը օգով լքցնելու համար:

Ինչո՞ւ է թանգանում հացը: Էնդուր որ հողերը ուժասպառւում են և աւելի քիչ են արտադրում հաց, հողի մշակումը աւելի և աւելի դժուարանում է: Ինչո՞ւ է էժանանում երկաթը: Էնդուր որ նորանոր երկաթհանքեր են գտնւում, էնդուր որ աւելի պակաս աշխատանք է դնում նրա ստացման համար:

Իսկ ռաւդից է վերցնում իրերի արժողութիւնը և ինչո՞ւ է նա որոշւում: Ահնեղե և որ միայն այն աշխատանքով, որ պորձադրւում է նրանց արդիւնաբերելու համար: Աւել է աշխատանքը — քարձր է և առարկայի արժողութիւնը: Պակաս է աշխատանքը — ցածր է և արժողութիւնը:

Այդպիսով. 1) փոխանակման արժէք ունի միայն այն, ինչ որ ունի գործածութեան արժէք. 2) քայց ոչ այն քոլորը, ինչ ունի գործածութեան արժէք, ունի անպատճառ և փոխանակման արժէք. 3) գործածութեան արժէք ունեցող առարկան ստանում է փոխանակման արժէք միայն այն դէպքում, եթէ նրա արդիւնաբերութեան համար աշխատանք է դրուած, եւ քանի աւելի մեծ է աշխատանքը, այնքան մեծ է արժէքը և քնդհակառակը:

Բանուորական օրը իբրեւ արժէքի չափ: Այդպիսով ամեն իր ունի փոխանակման արժէք միայն այն դէպքում, եթէ նրա

արդիւնաբերելու համար աշխատանք է բանեցրուած: Հետեւաբար, հաւասարաբժէք իրեր անուանուած են այնպիսիները, որոնց վրայ գործադրուած է հաւասարաքանակ աշխատանք: Եթէ 1 սեղանը=20 արշին կտաւի=1 ջուխտ կօշիկ=3 լամպիկ ալյն, դա նշանակում է որ մի սեղան արդիւնաբերելու համար նոյնքան աշխատանք է գործադրուած, որքան և 20 արշին կտաւի վրայ, որքան և 3 լամպի վրայ և ալյն: Այդ, ինչպէս չափել աշխատանքի այդ քանակը: Այդպիսի չափի իբրև միաւոր ծառայում է բանուորական օրը, այսինքն այն բոլոր ժամերի թիւը որ բանուորը գործադրում է օրուայ ընթացքում բանելու վրայ: Եթէ վերև յիշած բոլոր իրերի արժողութիւնը իրար մէջ հաւասար է և եթէ 1 այդպիսի սեղան շինելու համար պահանջուած է 20 բանուորական ժամ, կամ երկու բանուորական օր, հետեւաբար, նոյնքան բանուորական օր է գործադրուած 20 արշին կտաւ կամ մի ջուխտ կօշիկ կամ 3 լամպ և ալյն արդիւնաբերելու համար:

Հասարակականօրէն-անհրաժեշտ բանուորական ժամանակ:—Նշանակում է—մի իր, որ շինելու համար մսխուած է 10 բանուորական օր, ունի կրկնակի աւելի փոխանակման արժէք, քան այն, որի վրայ մսխուած է 5 բանուորական օր, և ընդհակառակը և ալյն: Սակայն ուշադրութիւն դարձնենք հետեւեալ հանգամանքի վրայ: Մի և նոյն իրը, նայած բանուորի ճարպիկութեան, կարելի է շինել աւելի արագ և աւելի դանդաղ: Կա վարպետը լանուած է աւելի լաւ շինուածքներ աւելի արագ, քան վատ վարպետը աւելի վատ շինուածքներ պատրաստելիս: Այդ պատճառով, մատնանշած կանոնի հիման վրայ, վատթարագոյն շինուածքները պէտք է աւելի թանգ գնահատուէին քան լաւագոյնները, եթէ նրանց վրայ աւելի շատ ժամանակ է գործադրուած: Այդ կը լինէր անարդար և երբէք այդպէս չի պատահում: Այն ժամանակ բաւական կը լինէր աւելի դանդաղ բանել, աւելի շատ փող վաստակելու նպատակով: Ահա ինչու ասածին պէտք է աւելացնել նաև հետեւեալը. իրը արդիւնաբերելու համար գործադրած ժամանակի ոչ ամեն մի րանակ որոշում է իրի փոխանակման արժէքը, այլ միայն այն քանակը, որ անհրաժեշտօրէն հարկաւոր է գործադրել նրա վրայ, բանելու գոյութիւն ունեցող անդամներում:

Վերցնում է միայն այն միջին ժամանակը, որ սովորաբար գործադրում են այդ արդիւնաբերութեան վրայ: Այդ միջին ժամանակը կոչւում է հասարակականօրէն-անհրաժեշտ բանուորական ժամանակ: Դիցուք որևէ տեղ, ուր չկան ուստայնական մեքենաներ, կտաւը գործում են ձեռներով և ասինք պատրաս-

տում են օրեկան 3 արշին: Ուրեմն 1 արշինի արժեքը հաւասար է բանուորական օրի 1/3-ի, և այդ ժամանակը, հետեւաբար, է հասարակականօրէն-անհրաժեշտ բանուորական ժամանակ 1 արշին կտաւի համար. Թող այդտեղ ներմուծուի մեքենայ, որ տայ օրեկան 30 արշին կտաւ: Մի արշին կտաւի հասարակականօրէն-անհրաժեշտ բանուորական ժամանակը այժմ կը դառնայ $\frac{1}{30}$ բանուորական օրի: Եւ բոլոր ձեռագործ ջուրհակները ստիպուած կը լինեն իրանց կտաւը վաճառել 10 անգամ աւելի էժան, եթէ ուզենան նազդել իրանց արդիւնաբերածները, թէ՛ նրանց այդ բանուածքները 10 անգամ աւելի թանկ են նստում, քան մեքենայի պատրաստածները: Այստեղից հակառակ է, որ միլենաների ներմուծումով հասարակականօրէն-անհրաժեշտ բանուորական ժամանակը և նրա հետ նաեւ բանուածքի արժեքը կրճատուում են:

Քնական և շուկային զինք (պահանջ և առաջարկ):

Իբրի այդ արժողութիւնը, որ գոյանում է նրա արդիւնաբերելու վրայ գործադրած աշխատանքի շնորհիւ և որոշուած հասարակականօրէն—անհրաժեշտ բանուորական ժամանակի քանակով, կոչւում է նրա քնական արժողութիւն: Եթէ մի մեծ սեղան արդիւնաբերելու համար հարկաւոր է 40 բանուորական ժամ և եթէ նոյնքան ժամեր են հարկաւոր գութան շինելու համար, այդ դէպքում սեղանը կը լինի այդ գութանի քնական արժեքը: Վաճառանոցում, այսինքն իրեր գնելիս կեանքի մէջ, գնողը չի տեղեկանում ի հարկէ թէ քանի՞ բանուորական ժամ է մտնում գնուող առարկայի վրայ և թէ ինչպէս է գնահատուած բանուորական ժամը: Նա սովորաբար տալիս է ապրանքի համար միջին գին, ի հարկէ ցանկալով որքան կտրելի է էժան վճարել:

Վաճառողն էլ կարիք չունի իւրաքանչիւր դէպքում պատճառաբանել և յայտարարել այդ հաշիւները գնողի առաջ, այլ ուղղակի ցանկանում է որքան կտրելի է թանկ ծախել: Գնողը աւելացնում է, վաճառողը պակասեցնում, նրանք սակարկութիւն են անում և վերջապէս համաձայնում են որեւէ միջին գնի վրայ: Ահա այն գինը, որի վրայ նրանք համաձայնութեան են գալիս կամ «բարիչում են», կոչւում է շուկային գին: Ինչու է նա որոշուած: Այդ շատ պարզ է: Եթէ վաճառանոցն են բերել, զիցուք, 10 հոսելի, իսկ գնել ցանկացողների թիւը 20 մարդ է, ի հարկէ ամեն մէկը կը շտապի աւելի վճարել, որ ձեռք բերի իրան հարկաւոր հոսելին: Գինը բարձրացաւ: Իսկ եթէ վաճառանոց են բերել 20 հոսելի, իսկ գնել ցանկացողների թիւը միայն 10 հոգի է, հակառակ հետեանքը կը լինի. ամեն մի

վաճառող կաշխատի թէկուզ էժան, բայց գլխից անել, նազդել ապրանքը: Գինը կընկնի: Բանուածքների ամբողջ քանակը որ ուզում են դնել կոչւում է պահանջ: Բանուածքների ամբողջ քանակը որ ուզում են ծախել կոչւում է առաջարկ: Եթէ առաջարկը աւելի է պահանջից, գները ընկնում են, եթէ պահանջը աւելի է առաջարկից՝ գները բարձրանում են: Եւ որովհետեւ պահանջի և առաջարկի չափի ամեն մի լուպէում տարբեր է, ուստի և շուկային գները մշտապէս տատանւում են: Դիցուք, առաջարկը, օրինակի համար, գութանների վերաբերմամբ երկար ժամանակի ընթացքում պահանջից բարձր է: Գները աւելի և աւելի են ընկնում: Ասենք գները ընկել են գութանի քնական արժէքից ցած: Ի՞նչ դուրս կը գայ գրանից: Գութանները չեն հանիլ իրանց շինելու համար արած ծախքերը և կը ծախուեն փաստով, նրանց շինելը ձեռնառու չի դառնալ, ուստի առաջարկը վերջ ի վերջոյ կը կրճատուի:

Թող առաջարկը այնքան կրճատուի որ պահանջից պակասի: Այն ժամանակ շուկային գինը կը սկսի նորից բարձրանալ: Դիցուք այն բարձրացաւ քնական արժողութիւնից վեր: Այդ արդիւնադործութիւնը, ուրեմն, կը դառնայ միւսներից աւելի ձեռնառու, նրանով կը սկսեն աւելի պարապել քան առաջ, առաջարկը կրկին կուժեղանայ, կրկին կանցնի պահանջից և շուկային գինը, հետեալաբար, կրկին կընկնի մինչև բնական արժէքի մոկերեւոյթը և այլն: Այդպիսով, շուկային դիրք տարրերը ունենալով ոչ այլ կերպ եթէ ոչ քնական արժէքի շուրջ, ժամանակաւորապէս մերթ րարձրանալով, մերթ իջնելով այդ միջին չափից կամ վեր կամ ցած: Իսկ միջին չափը, ինչպէս տեսանք, որոշում է աշխատանքը, իսկ շուկայինը—պահանջ-առաջարկը: Այդ երեք հիմնական պայմաններից է կազմւում իւրաքանչիւր իրի գինը:

Բացառութիւն, մոնսպօլիա:—Ի հարկէ մանր առևտուրի ժամանակ յաճախ գները չիմանալու պատճառով սակարկութիւն անել չուզենալով կամ այլ պատճառներով երբեմն մի իր գընւում է չափազանց թանկ կամ չափազանց էժան: Սակայն բոլոր մեծաքանակ առևտուրի գները ենթարկւում են մատնանիշ արած կանոններին և բացի այդ որոշում են նաև հատով վաճառման գները:

Բայց կայ այնպիսի ընդհանուր մի գէպը, երբ ոչ մէկը այդ կանոններից չի գործադրւում: Այդ այն ժամանակ է երբ որ և է ապրանքի առևտուրը ազատ չէ, այլ տրուած է բացառապէս մի անձի կամ տէրութիւնը վերապահել է իրան («մոնոպօլիա»): Այդպէս, օրինակ, առաջներում ոչ ոք չէր կարող վաճառել մեղանում արագ, բացի նրանցից որոնք վերցրել էին

այդ առևտուրը կապալով: Այդպէս դեռ այժմ էլ Եւրոպայի մի քանի տէրութիւններում չի կարելի ոչ ոքից ծխախոտ գնել, բացի գանձարանից: Պացի է, որ այդ դէպքում մօնօպօլիստը (մենաշնորհ ունեցողը) կարիք չունի զիջելու, ոչ ոք չի կարող նրա առաջարկած գները պակասեցնել, գնողներ միշտ կը լինեն: Այդ պատճառով այդ դէպքում ապրանքները ծախւում են շատ ուռցրած գներով ի փաս գնողների և ի մեծ օգուտ վաճառողների: Բայց այդ և մի քանի այլ բացառիկ դէպքերի, տպրանքների արժէքը որոշւում է ընդհանուր պծերով վերև ցոյց տուած կանոններով, որոնք պարտաւորիչ են իւրաքանչիւր ազատ առևտուրի համար:

Դ Բ Ա Մ

Փոխանակցական առևտրի անյարմարութիւնները.— Երևակայէք մի բողոք որ դրամ կամ փող, բնաւ չկայ: Դիցուք ես դարբին եմ: Ինձ մօտ պտտրաստ է, օրինակ, խոփը, ես ուզում եմ ծախել այն և ստացած փողով ինձ համար հաց գնել: Բայց ինչպէս այդ անեմ առանց դրամի: Ես պէտք է խոփը փոխանակեմ հացի: Ես գնում եմ երկրագործի մօտ և խնդրում նրանից՝ տալ ինձ հաց և փոխարէնը վերցնել խոփը: Իսկ ի՞նչ կանեմ ես, եթէ խոփը նրան հարկաւոր չէ և նա ինձ մերժի: Ես կը գնամ մի ուրիշի մօտ, կը խնդրեմ նրանից նոյնը և երկար մահ կը գամ մինչև որ գտնեմ մէկին ով կը համաձայնի փոխանակել հացը խոփին: Բայց եթէ ես, օրինակ, ապրում եմ այնպիսի մի նահանգում ուր հացը չի վաճառւում, այլ գնւում է: Ի՞նչ պէտք է ես անեմ իմ խոփի հետ: Ես ստիպուած պիտի այն ուղարկեմ մի այլ նահանգ և այնտեղից ստանամ հաց: Բայց լաւ է դեռ որ խոփը այնպիսի ապրանք է որ չի փչանալ, մինչև որ ես հաղար ու մի դիմումներից յետոյ հաց կը ճարեմ, իսկ եթէ ես մագործ եմ, իսկ եթէ իմ միսը կը փչանայ, մինչև որ ես փոխանակեմ այն հացի, ի՞նչ պէտք է անեմ փչացած մսի հետ այն ժամանակ, ի՞նչպէս ես ձեռք կը բերեմ այն հացը, որ ինձ հարկաւոր է, առանց որին ես չեմ կարող ապրել և որն հայթայթելու համար ես աշխատում եմ: Բացի այդ անյարմարութիւններից փոխանակցական առևտրի մէջ կան և ուրիշ անյարմարութիւններ, երբ ապրանքները փոխանակւում են ոչ դրամով, այլ ուրիշ որևէ ապրանքով: Պարզէ փոխանակցական առևտրի դժուարութիւնը: Եւ միայն վայրենի ժողովուրդ՝ երբ, որոնց կարիքները շատ պարզ են, որոնք շատ քիչ ապրանքներ ունեն, իսկ դրամ ոչ, միայն նրանք են այսպիսի փոխանակցական առևտուր անում: Կուլտու-

յապէս զարգացած ժողովրդների մօտ փոխանակցական առևտուրը վաղուց վերացել է:

Դրամի նշանակութիւնը.—Մարդիկ վաղուց հասկացել են, որ շատ աւելի յարմար է իւրաքանչիւր ապրանք փոխանակել որ եւ է մէկով: Եթէ բոլորը փոխանակում են մէկ ապրանքով, այն ժամանակ զրանով կարելի է ճարել ամեն բան, ուրեմն, այն ապրանքը բոլորին հարկաւոր է: Ահա իբր այդպիսի ապրանք ծառայում է դրամը կամ փողը: Դրամի գործածութեամբ ես—գարրինս—կարիք չունեմ անպատճառ որոնել այնպիսի երկրագործի կամ հացի առևտրականի, որոնց հարկաւոր լինէր իմ վաճառելի խոտիք: Ես ծախում եմ նրան ամեն մի պատահածին, որին նա հարկաւոր է, և փոխարէնը նրանից ստանում եմ զրամ, որով կարող եմ զնել ինձ համար այն ինչ ցանկանում եմ: Փոխանակութիւնը եւ ամեն տեսակ վճարները չափազանց հեշտանում են: Այդ նախ և առաջ: Երկրորդ՝ դրամը պահպանում է արժէքութիւնները: Ամեն մի արդիւնք երկար ժամանակ ընկած մնալով փչանում է: Կան այնպիսի արդիւնքներ, որոնք շատ շուտ են փչանում. զրանցից են ուտելիքները: Երկար ժամանակի համար պատրաստել զրանց չի կարելի: Եթէ, օրինակ, կաթնավաճառի բոլոր օրուայ հացի, մսի և այլ բաների պահանջները այն քանակով են, որ հաւասարաբաժէր է մի վեդրօ կաթի, այդ դէպքում կաթնավաճառը իր արդիւնաբերութիւնը կը յարմարեցնի այնպէս որ օրեկան ստանայ հէնց մի վեդրօ կաթ, որովհետեւ հակառակ պարագայում նա պէտք է աւելի հաց, միս և այլն ստանար և այդ բոլոր աւելորդուկը պահէր: Յետոյ, ի՞նչ պէտք է անէր պետութիւնը եթէ հարկերը հպատակներից հաւաքուէին նրանց արտադրած արդիւնքներով: Ի՞նչպէս կարող էր նա պահել արդիւնքների այդ տնաբին քանակութիւնը: Մինչդեռ դրամը հեշտացնում է այդ պահպանութիւնը: Կաթնավաճառը ծախում է բոլոր կաթը որ տալիս է նրան կովը: Հարկաւոր քանակի հաց, միս և այլն գնելուց յետոյ աւելացած փողը նրա մօտ մնալով չի փչանալ: Պետութիւնը հարկերը դրամով հաւաքելով ունի չի փչանում արդիւնքներից, որովհետեւ դրամը չի փչանում: Հետեւաբար արժէքութիւնները չեն փչանում պահպանւում են նրանով որ նրանց փոխանակում են դրամով:

Դրամի տեսակները.—Դրանք են դրամի ներկայացրած ամենազլխաւոր յարմարութիւնները: Այդ և այլ պայմաններով բոլոր ժողովուրդները կամաց-կամաց սահմանում էին իրենց մէջ այն միջին ապրանքը, որ սկսել են անուանել դրամ: Սովորաբար դրամ էին դարձնում այն ապրանքը, որի տեսակից ժողովրդի մօտ աւելի շատ էր ճարւում: Որսորդական ցեղերի մօտ

իրրև գրամ՝ դործեն ածուժ՝ զաղաններն մորթիները, թափա-
ռականների մօտ—անասունները, այլ տեղերում—աղբ, Աֆրի-
կայի մի քանի ծովափեայ նեղր ցեղերի մօտ—ծովային խղունջ-
ները և այլն: Բայց սակաւ առ սակաւ բոլոր այդ տեսակի
գրամները փոխանակուժ էին մետաղներով: Մորթիների, անա-
սունների և այլնի փոխարէն սկսեցին գործածել այդ նպատա-
կով երկաթ, պղինձ, անագ և այլն, նախ այն պատճառով, որ
մետաղները ամենից հեշտ է պահել, երկրորդ՝ նրա համար որ
մետաղները կարելի է բաժանել ինչ մանր մասի ուզում հս:
Մի մարդ, որ, օրինակ, ուզում է աղ գնել և փոխանակելու
ուրիշ բան չունի լացի անասուններից՝ ստիպուած է մի ամբողջ
եզան կամ ամբողջ ոչխարի արժէքով աղ գնել: Շատ սակաւ
գէղքերում կաշոյում էր նրան աւելի պակաս քանակով աղ առ-
նել, որովհետեւ այն ինչ որ նա տալիս էր՝ նրա փոխանակ
(կզը, ոչխարը) չի կարող առանց կորստի փոքր եւ մեծ մասերի բաժա-
նել: Պարզ է որ այդ անյարմարութիւնը վերանում է մետաղ
գրամի գործածութեամբ: Պահպանելու և մաս-մաս անուելու յատ-
կութիւններն են, որոնց շնորհիւ սկսեցին գերադասել մետաղ-
ները իրրև գրամ: Վերջապէս, բոլոր մետաղները իրենց տեղը
տուին «աղնիւ» մետաղներին—ոսկուն և արծաթին, որովհետեւ
նրանք, մատնանշած յարմարութիւններից բացի, ունեն և մի
շատ կարևոր յարմարութիւն—նրանք շատ արժէքաւոր են փոքրիկ
քանակութիւնների մէջ անդամ: Կէս իմպերեալը, որ արժէ 5 բուլ-
լի, շատ քիչ է տարբերում իր մեծութեամբ արծաթէ տասը
կոպէկանոցից, իսկ հրքան երկաթ հարկաւոր կը լինէր այդ
զուամարի համարժէք: Համարեա 2 փութ! Պարզ է թէ որքան
աւելի յարմար է իրրև վճար ստանալ այդ փոքրիկ ոսկէ
գրամը, քան այդ ահագին քանակի երկաթը: Երրորդ «աղնիւ»
մետաղը՝ լուսնոսկին կամ պլատինը շատ քիչ քանակով է գըտ-
նում երկրագնդի վրայ, ուստի չի կարող գործադրուել, իբրև
գրամ: Թանգագին քարերը թէև նմանապէս շատ սուղ արժեն,
բայց չեն կարող մետաղի նման հեշտութեամբ մաս-մաս անուել
և բացի այդ հեշտութեամբ կեղծուժ են: Այդ բոլոր պատճառ-
ներով այժմ բոլոր լուսաւորուած ժողովուրդների մօտ ընդուն-
ուած է ոսկին և արծաթը իբրև միակ նիւթ, որից շինում է
գրամ: Միայն փոքրիկ վճարների համար շատ չնչին քանակու-
թեամբ, իբրև օժանդակ գրանց, ծառայում է պղինձը:

Միւս անգամ կը խօսենք վարկի (կրեդիտի) մասին:

ԱՐԴՈՒԼ-ՀԱՄԻԴԻ ԳԱՀՏՆԻ ԴԱԽԵՐԸ

Ս Է Փ Է ր ք Է յ *)

Մայիսի 30-ին, 1876 թ. առաւօտեան ժամը 4-ին գենե-
րալ Ռաֆիգ փաշան մտնելով սուլթան Աղիզի ննջարանը՝ յա-
նուն զօրքի ու ազգի առաջարկեց նորան հրաժարուել գահից:
Պալատը շրջապատուած էր արդէն բազմաթիւ զօրքերով:

Զը տեղեց մի ժամ, այն ինչ թնդանութիւնները սկսեցին որո-
տալ և մուղղէինները ազադակել մինարէների բարձունքից
ի գիտութիւն ընդհանուրի՝ թէ Մուրադ V-ը բարձրացաւ օս-
մանեան գահը: Այս բոլորը մանրամասն ծրագրուել ու գործա-
դրուել էր մինիստրների ընդհանուր համերաշխութեամբ:

Ութ օր չանցած՝ մի փոխ-գնդապետ, ազգով չէրկէզ, յար-
ձակուեց խորհրդի նստած մինիստրների վրայ, սպանեց նորան-
ցից երկուսին և վիրաւորեց չորսին առըճանակի հարուածնե-
րով: Այդ միջոցին զժրախտ սուլթան Աղիզը «ինքնասպանու-
թիւն» էր գործել: Քսան հոգի Կ. Պօլսի ըժշկներից պէտք է
հաստատէին այդ ինքնասպանութիւնը վրաւոր կերպով: Այս
տրագիքական մահուան խոր ազդեցութեան տակ սուլթան
Մուրադը կորցրեց իր խելքը, սակայն նորա կուսակիցները
չըլտուած ջանքեր գործ զրին նորան գահի վրայ պահելու, և
խկապէս յաջողուեցաւ նորանց նորա հիւանդութեան լրջու-
թիւնը ծածկել ամբողջ երեք ամիս. բայց վերջի վերջոյ ճշմար-
տութիւնը հրապարակ ելաւ: Մուրադին յաջորդեց Արդուլ-Հա-
միդը: Միայն թէ պետութեան սանձը նորա ձեռքը տալուց
ստաջ՝ նորան ստորապրել տուին մի զօքումէնտ, որի զօրու-
թեամբ նա պարտաւորուեցաւ տալ երկրին սահմանադրութիւն,
մի դաքումէնտ, որ իսկոյն և եթ յանձնուեց Շէյխուլ-իսլամ
Խէյրուլլահ Էֆէնդու պահպանութեանը:

Այս զէպքերը կատարուելիս պետութեան արտաքին քա-
ղաքականութիւնը հետզհետէ ընդունումէր աւելի լարուած կեր-
պարանք: Կառավարչական անկայուն դրութիւնը մի կողմից և

*) Կրճատումներով „La Revue“-ից (1906, № 23):
Յունուար 1907.

Հէրցոգովինայի, Բոսնայի ու Բուլղարիայի յեղափոխութիւնները միւս կողմից ամեն ինչ տակն ու վրայ կ'ընէր։ Ամենուրեք տիրումէր քառասական դրութիւն։ Իսկ Համիդը ամենից կարեւոր ու ստիպողական գործը համարումէր՝ իր սեփական գահը ամրապնդել։ Նախ և առաջ հեռացրեց այն պետական անձանց, որոնք հեշտացրել էին իր գահ բարձրանալը։ Հին պալատից տեղափոխուեց Իլ'գիզի բլրակի վրայ։ Այդ տեղը նա ամրացրեց ամենայն խնամքով, որպէս զի դա կարողանար դիմադրել ամեն յարձակմունքի իր անձի դէմ։

Այդ ժամանակամիջոցում պայթեց սուս-թրքական պատերազմը։ Թիւրքիան, ինչպէս գիտենք, յաղթուեց ամսթալի կերպով, և վերջապէս կնքուեց հաշտութեան դաշնագիրը 1878 թ.։

Սորանից յետոյ սուլթան Համիդը նուիրեց իր ամբողջ ուշադրութիւնը ստեղծել մի բէժիմ—միակ իր տեսակի մէջ։ Ոչ մի գետալոս չ'է կարողացել երբեք այդ անհեթեթ բէժիմի նմանը հնարել։ Մաքիադէլի և Լուիզ Մ-ի մտքովն անգամ չէ անցել այդ։ Նա ունէր միայն մի *idée fixe*, միայն մի դիւանաւած ու հիւանդոտ միտք՝ իր գոյութիւնը պահպանել—հա կուռակ ամենքի և ամեն ինչի, ինչ միջոցներով էլ լինի—ներքի թէ աններքի։ Այդ նպատակին հասնելու համար՝ նա գործ դրեց ամեն ճիգ ու ջանք ջախջախել, խորտակել իր նախորդներին ժամանակից մնացած պետական մարդկանց։ Նա հեռացրեց այն ամեն զօրավարներին, որոնք անկախ մտքի կամ ազատ զապափարի ամենափոքրիկ տրամադրութիւն կ'ենց յոյց տալիս։ Իսկ նորանց տեղը նշանակեց Գալաթայի լիւսէից ու զինուորական կրթարաններից զուրս եկած նորաթուխ երիտասարդներին։ Կ. Պօլսում եղած զօրաբանակը բաժանեց երկու մասերի—առաջին և երկրորդ կօրպուսի։ Այդ զօրամասերից մէկը գրեց մի լոկ սնուանական զինուորական մինիստրի հրամանատարութեան տակ, իսկ միւրը նշանակեց իր անձի պահպանութեան համար։ Վերջինս վայելում է սուլթանի սուսնձին հողատարութիւնը, իսկ մայրաքաղաքի ու գաւառի միւս զօրամասերը զուրկ են ամեն խնամքից—սոված ու բոքիկ։

Նա ղետեղել է մի ահագին ալբոմի մէջ գատնաւոր օֆիցէրների լուսանկարները իրանց ժանրամասն կենսագրութիւններով, մինչդեռ պատերազմական մինիստրը նորանցից ոչ մէկի ոչ երեսն է տեսել և ոչ՝ էլ անսունները դիտէ։ Այսպէս սուլթանը ունի իր ձեռքի տակ մի բանակ՝ միշտ պատրաստ իրան պաշտպանելու և անձնուիրութեամբ ծառայելու։

Սուլթանի զգուշութեան ու խոհեմութեան արտասովոր միջոցներից մէկն էլ սա է, որ նա զօրադունդերի միջև ցեղա-

կան փոխադարձ անվստահութիւն ու կասկածոտութիւն է սերմանում: Իր զօրագունդը բաղկանում է ալբանացիներից, սիրիացիներից, թիւրքերից և մինչև անգամ սեամորթ խափշիկներից: Ալբանացիներն ունին թիւրք սպաներ, թիւրքերը՝ ալբանացի և այլն և այլն. նաւատորմիղը դրուած է իրան անձնուէր մի փաշայի հրաժանատարութեան տակ, որի միակ պարտաւորութիւնն է պահել այդ նաւատորմիղը Սակեղջիւրի պղտոր ջրանցքի մէջ:

Նա լցրել է դատատանական ատենաները օյնպիսի մարդիկներով, որ գաղափար անգամ չ'ունին իրաւաբանական օրէնսգիրտութիւնից: Դորանց ձեռքով բանտարկել է տալիս մարդկանց և մահաւճիտներ է արձակում ըստ իր քմհաճութեան:

Զինուորական բոլոր դպրոցները հսկում են ուշի ուշով օյնպիսի մարդիկներից, որ բոլորովին ստորաքարշ ոտրուկներ են իրանց պետին: Եթէ մի որ և է դժբախտ մէկը համարձակուի կարգով մի կտակածելի գիրք խփոյն կը ձերբակալուի գիշերով և շղթայակալ կուղարկուի կամ Տրիպօլի ներսերը կամ Արաբիայի հրակեղ անապատները:

Յանուն արտաքին քաղաքականութեան սուլթանը ստեղծել է մի նոր պաշտօնական մարմին, որի միասիւնն է ոչ թէ երկրի շահերը արտասահմանում պաշտպանել, այլ հսկել մամուլի վրայ, կաշառքներով բռնադրօսել տալ ճշմարտութիւնը և քողարկել սուլթանական ախտաոթ ըէժիմի փտութիւնները: Իսկ ինչ վերաբերում է ներքին քաղաքականութեան՝ նա, իր կրօնակից թիւրքերին մոռացնել տալու համար իրանց անտանելի դրութիւնը՝ զրգուում է ռասային կռքեր, առաջ է բերում ցեղական երկպառակութիւն և վայրարար նեւտում մէկին միւսի վրայ: Շնորհիւ այս անմիտ և յանցաւոր խաղի կորցրել է նա իր ամենագեղեցիկ գաւառները ու աւերել շատ ուրիշները:

Նա ստեղծել է Կ. Պօլսում 40 հազար մարդուց բաղկացած լրտեսների մի ահապին բանակ, որը պարտաւոր է ներկայացնել պալատին հազարաւոր տեղեկագրեր ոչ թէ իրանց նկատած ու լսած այլ և իրանց ձեռքով հնարած ու սարքած դէպքերի վրայով: Ոյդ բանում սուլթանն ինքն էլ անգործ չէ մնում: Նա ևս հայթայթում է այդ իր արբանեակներին երևակայական կոմպլոտների ծրագիրներ ու ցուցմունքներ: Բայց դա բոլորը չէ: Ոյդ անհամար լրտեսների վրայ էլ նշանակուած են ուրիշ բազմաթիւ լրտես—վերահսկիչներ: Զօրապետներ և կառավարչապետներ հսկում են իրանց ստորադրեալներից, որոնք կարող են հեռազրով մատնել նորանց, և եթէ հարկը պահան-

ջէ, նոյնիսկ բանտարկել: Դեսպաններին անգամ լրտեսում են իրանց կանանցից, քարտուղարներից ու զբաղօմաններից: Այս քստմանի գործի համար գործածուում են առհասարակ ճշմարիտական պաշտօնեաներ:

Նա առել է իր ձեռքը հեռագրատան ու պոստատան հըսկողութիւնը: Ո՛չ մի հեռագիր, ճշմարիտ համակ, ինչքան էլ աննշան լինեն գորանք, չեն տրուում իրանց հասցէատէրերին, առանց սուլթանի հաւատարիմ գործակալների զրօշմին: Հեռախօսը արգելուած է: Էլէկտրական լուսաւորութիւնը չէ թոյլատրուած: Ոչ մի ժողովք, լինի դա հարսանիք, յուղարկաւորութիւն կամ մի այլ հանդէս չը պէտք է հանդուրժիլ առան իրադէի: Բնական է, որ նա պէտք է և կերակրէ այդ լրտես-գործակալներին, զարդարէ նորանց կուրծքը շքանշաններով և պահովէ նորանց ապրուստը ոռճիկներով ու կենսաթոշակներով: Աւելի հեշտացնելու համար այդ մարդկանց ստոր գործողութիւնները տալիս է դրսնց բարձր աստիճաններ:

Պետական խորհուրդը դարձրել է նա ձրիակներին մի ահագին խումբ, որ կայանում է 300-ից աւելի շահագործողներից: Ոստիկանական նախարարութեան բարձրաստիճանների թիւը հասնում է 150-ի կային կային: Կան շատ խորհրդականներ, որոնք պետական ճշմարիտ նիստին չեն մասնակցել: Նորանք ուղարկոււմ են միայն իրանց սպասաւորներին պետական գանձարանը՝ թոշակներ ստանալու համար: Եթէ մի որ և է անձ թոյլ տայ իրան այդ սուլթանական կլիէնտներին ամենափոքր քննադատութեան ենթարկել, այդպիսին կամ իսկոյն կը ջախջախուի կամ կաքսորուի պետութեան ամենախոր անկիւնները: Քանի՜ ները բռնակալութեան այդ խեղճ ու կրակ զոհերից արգէն կորել են անհետ: Եթէ Փոքր Ասիայի կաղէմատները, Արաբիայի անապատներն ու Բոսպորի յատակները լեզու գային ու խօսային, մարդկութիւնը պիտի սոսկսւր...

Ժամանակ առ ժամանակ անկախ մամուլը Եւրոպայում հրապարակ է հանում միայն մի մասը Բոսֆորի տփերում կատարուած ոճիրներից: Այդ ելեկտրական լոյսի թափանցիկ ճառագայթները մերկացնում են երբեմն սուլթանական նախճիրների արիւնոտ դաշտը. բայց դա լոկ վարկենական մի մերկացում է: Ի՞նչ ասենք ապա այն արիստոկրատական ու ֆինանսական կոշուած մամուլի մասին: Դա սրօղում է ճշմարտութիւնը հեշտութեամբ, որովհետեւ սուլթանը խոստանում է դրանցից իւրաքանչիւրին 5-6 հարիւր բաժանորդագրութիւններ: Յաճախ հանդիպել ենք մենք Կ. Պօլսում այս օրգանների ներկայացուցիչներին՝ գերմանացի, աւստրիացի, ամերիկացի և,

աւանդ, Քրիստոսի: Մենք տեսել ենք արդարութեան, ճշմարտութեան այդ կատաղի պաշտպաններին—շնչասպառ, հե ի հե, պոռոտախօս և իրարու սղծուած՝ Բարձր Դռան նորանցքներում, Իլդիլի կուլիաներում, որոնք սպասում էին արժանանալ մեծ պետի ուղեգրութեան կամ նորա մի բարեացակամ հայեացքին: Համիդի իշխանութեան ընթացքում անթիւ ու անհամար խլամբազիրներ ակնհայտութեամբ են տաճկական մեղալներով ու շքանշաններով: Այդ տեսակ պայմաններում ինչո՞ւ պահանջել որ նա արժէք տայ Եւրոպայի հասարակական կարծիքներին: Նա շարունակում է իր քաղաքականութիւնը առանց ուշադրութիւն դարձնելու ուրիշին: Ո՞վ է կարող մի առ մի թուել այդ արիւնհարքու պետի սխաղործութիւնները: Քանի՞ քանի՞ պետական ակնաւոր մարդիկ են զաւաճանօրէն սպանուել: Քանի՞ներն են տասնեակ տարիների ընթացքում անմեղ տեղը տառապում քսոտրավայրերում ու մութ բանտերում: Եւ այդ բոլորը մի մարդու անսանձ բռնակալութեան շնորհիւ, նորա մատնիչ ու դաւաճան արքանեակների շնորհիւ:

Երեսուն տարի է ահա, որ Թուրքիան դարձրել է նա մի ընդարձակ բազար: Իւրաքանչիւր կառուղիի վրայ, իւրաքանչիւր փողոցի անկիւնում, իւրաքանչիւր անց ու դարձ անողի ճակատին գրուած է փայլահնայայտ տառերով՝ «ծախումենք խղճմտանք»: Հայրը մատնում է որդուն, կինը դաւաճանում է իր մարդուն, վաղեմի բնիկը կոխ տալով է անցնում իր ընկերով դիակի վրայով: Մենք չափազանցութիւնների մէջ չենք ընկնում մեր այս մերկացումներով. ոչ, այլ հարկաւոր է մեծ հռովմայեցի պատմագրի վրձինը նկարագրելու համար այդ զանաբարոյ կառավարութեան միջին պատկերը:

Մարդ մնում է զարմացած՝ թէ ինչպէս կարելի է որ մի մարդ առանց կրթութեան, առանց մինչև անգամ տարրական դաստիարակութեան հասնի մի այնպիսի ընդունակութեան, որ կարողանայ շահագործել մի ամբողջ ժողովուրդ: Նորա նախորդները՝ հակառակ իրանց շոյալութիւնների գէթ մի բան արել են զօրքի և նաւատորմի համար: Իսկ Համիդը միայն զբաղուել է իր անձով: Եւրոպական կրէդիտորների աչքի առաջ աչքակապութիւններ տնելու համար նա հիմնել է այսպէս կոչուած՝ «պարտքի Մնդուկը»: Այդ հիմնարկութիւնը դրամական փոխադրութիւնների ձևի տակ, առանց փոխադրութիւնների անուն տալու, կորզում է ահագին դրամալներ—մանաւանդ Ֆրանսիայից: Իւրացրել է պետութեան պատկանող հողերը ու դրել մի քրիստոնեայ միւնիստր այդ գործի գլուխը և այս մասնօլորները հասցրել են արքայապատկան եկամուտները 3 մի-

լիօնից 30 միլիօնի, Կցենք զորան անարեկան 20 միլիօն մակ-
սային եկամուտ, 10 միլիօն կալուածական եկամուտներ, 10—
12 միլիօն ամենազեղեցիկ գաւառներէից չորթած եկամուտներ
և մէնք կըզանք մի ֆանտաստիկական գումարի որպէս սուլ-
թանական հասոյթ—մի հասոյթ, որ զերագանցում է ամենա-
մեծ թագակիրներէ հասոյթներէից։ Ոսկի է հարկաւոր այդ մար-
դուն և միմիայն ճակի։ Ոսկիով է նա տիրապետում։ Հակառակ
իր ահագին եկամուտի աղբիւրներէից՝ լինում են բոլորներ, երբ
այդ մարդը յուսահատում է դործողութեան այդ եղանակից։
Այն ժամանակ ստեղծում է նա նորանոր շքանշաններ, դանա-
զանակերպ աստիճաններ։ Գործ է ածում և այդ միջոցները,
բայց, աւանդ, իր աստիճանի չարաչար։ Մի հարուածով նուա-
տացնում, տապալում է ամենաքաջ մարդկանց, որոնք իրա-
ւունք ունին ստանալ այդ շքանշանները, իսկ յանկարծ բար-
ձրացնում է ախպիսիներին, որ զուրկ են ամեն արժանաւո-
րութիւններից։

Այս թագակիր եղերնադործի համար պակաս չեն աջա-
կիցներ ու գործակիցներ—նչ թէ միայն իրան շրջապատող-
ներից, այլ և Եւրոպայի գիւլումամաններից։ Ի՞նչեր չենք տես-
նում Եւրոպայի քաղաքական պատմութեան մէջ։ Կանգլէրների,
մինիստրների բռնած դիրքը, նորանց յանցաւոր անտարբե-
րութիւնը դէպի սուլթան Համիդը։ Իր զահակալութեան առա-
ջին օրերում նա պատերապմ հրատարակեց Ռուսիայի դէմ Ան-
գլիայի դրդումով։ Եթէ մի կողմից մեծն Բրիտանիայի յետին
միաբը Ռուսական ուժերի ջլատումն էր, միւս կողմից սուլթան
Համիդը այդ անմիտ պատերազմով ցանկանում էր միայն ա-
ղատել իրան այն զինուորական ու վարչական անձինքներից,
որոնց վրայ վստահութիւն չունէր։ Թէկուզ այդ պատերազմը
դրեց նրան որոշ նեղ կացութեան մէջ, սակայն նրան յաջո-
ղուեց այդ խառնաշփոթութեանից օգտուելով հեռացնել կաս-
կածելի կամ աւելի ուղիղն ասած ազատամիտ մարդկանց։
Հետևաբար Մնգլիան անգլիտակցաբար սուլթանին գործակից
եղաւ՝ Թիւրքիան կազմալուծելու գործին մէջ։ Այդ Անգլիան,
իսկ Ֆրանսիան։—Աւանդ, դա էլ իր մի բանի անյոյժ փինսո-
սիստների շնորհիւ սուլթանի գանձապետի դերը խաղաց։

Թողնենք Անգլիայի ու Ֆրանսիայի կատարած դերը ու
զանք Գերմանիային—այն Գերմանիային, որ համարում է
վերին աստիճանի բարոյական, բանաստեղծական, փիլիսո-
փայական... Ի՞նչ նպատակների հետեւ է ընկել Գերմանիան,—
նա ունի միայն մի գիտաւորութիւն՝ այն է, հարուստացել իր
համազգիներին Թիւրքիայի հաշուին, ձեռք բերել իր գործա-

կալների համար առատ թողանք: Իսկ ի՞նչ մտածենք մի կայսրի մասին, որը Բոսֆորը այցելելուց և 125 թանդագին առարկաներով լի արկղներ սեփականելուց յետոյ՝ վերադարձաւ իր երկիրը այն կոտորածի հետեւալ օրը, երբ 10,000 զիւղներ սփռուած էին Կ. Պոլսի փողոցների մէջ: Դուցէ՛ հկել էր մխիթարել այն մարդուն որ թափել էր տուել այնքան անմեղ արիւն:

Ռուսիայի բռնած զէրը Արդուլ Համիդի նկատմամբ ոչ պակաս դատապարտելի է քան Գերմանիայինը: Ոչ մէկի համար դադանիք չէ և անգլիական «Կապոյտ Գիրքը» վկայ է այդ բանին՝ թէ իշխան Լորանովի թելադրութեամբն էր, որ 200,000 անգլէն հայեր կոտորուեցան երկու տարուայ ընթացքում: «Թող նորանց ջարդեն» վճիռ էր արձակել աշուատոհմ քաղաքագէտը. եւ սուլթանը չնշտցաւ այդ զիւական գործը ի կատար ածելու: Յիշենք նաեւ այն, որ Համիդը լպրշօրէն ուղարկեց Պ. Բուրգ 1,200,000 ֆրանքի արժողութեամբ մարդարխտներ. . .

Թէկուզ աւելի բիչ չափերով բայց և Աւստրիան ու Իտալիան յետ չեն մնացել իրանց շողքորթութիւններով ու զիջող քաղաքականութիւնով դէպի սուլթանը: Այս երկու տէրութիւնների վառասիրութիւնն եւ պահանջումէր, որ այդ միահեծան պետր առաջ տանէր իր քստմնելի գործը. մինչև իսկ քաջաւերումէին նորան և զիմադրում ամեն մի օտար միջամտութեան: Նորանք մտածել են ու մտածումն զեւ՝ թէ Թիւրքիան ինչքան աւելի կազմալուծուի, այնքան աւելի հեշտ կլինի իրանց համար բաժան-բաժան անել նորա մնացորդները: Արդուլ-Համիդը լաւ գիտէ որ ոչ մէկը այդ պետութիւններից չի մոռանալ իր վայրագ հաւանութիւնը: Նա օգտւումէ այդ հանգամանքներից ու արամադրութիւններից: Նա զիտակցումէ որ նորա այդ տեսակ պետական սիստեմը պիտի տանէ երկիրը կործանման, սակայն իր պետութեան ապագայի հաւրը իորա մօտ կարեւորութիւն չունի: Նորա գէվիզը եղել է՝ «ինձնից յետոյ ջրհեղեղ լինի, իմ ի՞նչ փոյթը»:

Սուլթանը այդ բոլոր իշխաններին, մարքիզներին ու մինիստրներին անց է կացրել մազից և զիտէ, որ նորանց կարելի է գնել զեղին ոսկու կլորիկ կոտորներով, իսկ ոսկին բաւարարութիւն չի տալիս՝ կը հանէ իր պայուսակից կապալադերբ — մէկին՝ երկաթուղային մի գծի արտօնութիւն, միւրին՝ թնդանօթների ու ռազմանաւերի պատուէրներ, կայն: Կար միայն մի թաղակիր անձնաւորութիւն, որ կազմումէր բացառութիւն, և այդ անձնաւորութիւնը մի կին էր՝ Վիկտորիա թագուհին: Դա

մի փաստ է, որ արժանի է պատմութեան մէջ արձանագրուելու:

Ինչ ընդունակութիւն այդ փոքրիկ, նիհար, հիւանդոտ, հողագոյն դէմքով ու փախուսիկ հայեացքով մարդու մէջ: Առաջին անգամին թուովէ նա հրապուրիչ, փաղաքուշ ու թովիչ:

Բոլոր իր ունկիւրութիւնների ժամանկ նա գանգատուովէ՝ թէ ինքն անզօր է իր ուղածին չափ բարիք անել: Նա ամբաստանում է իր շրջապատը: «Ինձ շրջապատողները անընդունակ, շահամուռ ու փառատենչ են», ասում է նա: Ցաւ է յայտնում, որ իր միջնորդները նեխուած ու իր պաշտականները քսու ու ստորաքարշ մարդիկն են: Սակայն նա ինքն է, որ ընտրել է թէ մէկին թէ միւսին: Նա աշխատում է հաւատացնել, թէ միշտ ներդրամութիւն է քարոզում. բայց աններդրամիտների վատթարագոյնը հէնց ինքն է: Նա առ երես ցոյց է տալիս բարեպաշտութիւն. բայց ոչ Աստուծուն է հաւատում և ոչ սատանային: Նա հանդիսաւոր երգումներով խոստումներ է տալիս. բայց նորա յետին միտքն է գործնցից ոչ մէկը չկատարել: Նա միայն մի նպատակ ունի—խաբել իր խօսակցին:

Քիչնոտ ու դաժան է նա և միջնոյն ժամանակ վախկոտ: Մշտապէս հալածւում է երեակայական վտանգներից ու ցնորքներից: Կայծակը ազդում է նորան խեղադրութեան հասնող արագութեամբ: Աքլորի կանչը սարսեցնում է նորան: Երբ նա տեսնում է մի կատու այգու միջով անցնելիս, աճապարանօք ներս է նետւում իր սենեակը ու փակւում այնտեղ մի քանի օրեր: Նա այդ հասարակ երեոյթը համարում է որպէս մի չարագուշակ բան: Եթէ այդ կատուն սև է, նա չի քնում: Այսպէս՝ մի կողմից գիշակեր արծուի սրատեսութիւն, միւս կողմից թուլատեսութիւն—հակասութիւնների մի կատարեալ խառնուրդ: Նա թոյլ չի տալիս դադային լուսաւորութիւնը մայրաքաղաքում, որովհետև նորան հաւատացրել են՝ թէ կարելի է գինամիտ սահեցնել դադի խողովակների մէջ ու պայթում առաջ բերել: Նա Բէրայի փողոցներից այլ ևս չի անցնում, որովհետև ջրի հոսանքը կասկածների առիթ է տալիս նորան և հաստատուն է, թէ մի գուցէ այդ հոսանքների մէջ պայթուցիկ նիւթեր լինեն դրուած: Նորա մօտ ծառայում են երկու վատահամբաւ օտարականներ՝ Ջէքի փաշան—մի կրօնափոխ գերմանացի և Ջէմիլ փաշան՝ նոյնպէս մի հաւատուրաց լեւզիացի, որոնց տուել է գեներալի պաշտօններ: Նորան համոզացրել են՝ թէ այդ երկու արկածախնդիրները կարող են յետ կանչել մեռելներին ու խօսել տալ: Եթէ մեր այս պատմածները ստոյգ չեն, դորա համար պատասխանատու պէտք է համարել սուլթանի ամենանշանաւոր պաշտականներից մէկին: Մեր այս երկու

բարեպաշտուղ խեղկատկները յետ են կանչել Սալիմ II-ին, մեծն Սուլէյմանին, Մուրադ IV-ին, Ռիշէլիօյին, Նապօլեօնին, Թարէյլանին, Թիէրին, Աալի փաշային ու շատ ուրիշներին: Եւ այդ արտառոց տեսարանը կրկնուել է շատ անգամ ոռու-թըքական պատերազմի ու հայկական կոտորածների ժամանակ:

Եւրոպայի բոլոր կարինէտները շատ լաւ գիտեն՝ թէ սուլթան Համիդը որ աստիճանի թշուառութեան մէջ է գցել իր ժողովուրդը: Սակայն նիւթականի ազդեցութիւնը այնչափ մեծ է, որ ամեն մարդ փակումէ իր աչքերը, խլացնումէ իր ականջները, որպէսզի ոչինչ չը տեսնէ ու ոչինչ չը լսէ: Նորանք գիտեն, որ մի փոսած դիակ կայ Եւրոպայի սահմաններում, որի գարշահոտութիւնը թունաւորումէ ամենամաքուր օրը ու մըթնեցնումէ ամենապայծառ երկինքը. բայց աւանդ, նորանց նշանաբանն է՝ «չը միջամտել»: Կոյր, խռովստէր քաղաքագէտների յանցաւոր անտարբերութիւն:

Արթուն խիղճ ունեցողը մի հայեացքով միայն կարող է տեսնել՝ թէ ինչպէս այդ վատանուն մարդը նետել է իր խեղճ ժողովուրդը թշուառութեան գիրկը: Ոչ մի սուլթան չի կորցրել այնչափ հողեր, ինչքան այդ դաժանաբարոյ բռնապետը: Նորանից խել են Հերցէգօվինան ու Բօսնիան: Գրեթէ ամբողջ Թեսալիան, Բուլղարիան, Վալաքեան, Մօլտավը, Կիպրոսը, Կրետական կղզին, Եգիպտոսը, Ռուսաստանին կից ասիական սահամանագիծը: Դա դեռ բաւակոյն է: Անդամահատութեան պրոցէսը դեռ շարունակուումէ: Նա արդէն սկսել է կորցնել և Մակեդօնիան ու Արաբիան:

Կրկնում են՝ նա խրել է իր ժողովուրդը աննկարագրելի թշուառութեան ծովի մէջ: Անբարոյականեցրել է իր երկիրը և հասցրել մինչև այնտեղ, որ վաղ թէ անագան աւար պիտի դառնայ առաջին սիրտ անող յարձակուողին: Եւ դա միայն մի բանի տարիներին հարց է:

Բայց ի՞նչ պէտք է լինեն այդ մօտալուտ կատաստրօֆի հետևանքները: Հաւանական է, որ դորանք շուտով երևան կը դան, Եւրոպան այն ժամանակ աչքերը կը բանայ ու կը տեսնէ՝ Բայց արդե՞ք ուչ չի լի՞նի:

Աղբ. Ս. Ջյան.

Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի Ց

Հայ հողատէրեր.—Եղիպտոսի տաքութիւնը, փոշին, ճանճեր եւ մժուղներ:—Արմաւենիներու դուզաւորութիւնը կամ սրտուատը.—Ոտար վարժարաններ:—Լաւ թուխս դնելու ձեւը.—Կայծարարէ զանակներ եւ զանազան զործիքներ.—Պեղումներ, հնութիւնք.—Հին ներկիք, աղանոցներ, շարարի զործարաններ եւ եղեղնոցներ: Հողային բերքեր:

Եգիպտոսի հողատէրերու աչքը լմյս, օրերն ամեն կողմերէ մարդիկ կը լեցունին Եգիպտոս, որոնք մի մի ընկերութեան ներկայացուցիչներ են եւ ահագին գումարներ կը բերեն հետին Եգիպտոսի մէջ մեծաքանակ հողեր գնելու համար: Հայերէն շատ բնէր հետամտեցան հողեր գնելու: Պօղոս փաշա նուպար եւ Պետրոս էֆ. Կարապետեան բացառութիւն կը կադմեն այս առթիւ, որոնք ի բնէ մասնապիտութիւն ըրած են հող առնելու եւ լեցուն գնով ծախելու:

Թէ ինչպէս կարճ ժամանակում հողատէրեր են դառել մի բանի հայեր—զրա մասին գաղափար կու տայ հետեւեալ օրինակը:

Վերին Եգիպտոսի մէջ հողատէրեր կան, որոնց ժամանակին բոնի հող տրուած է կառավարութեան կողմէ: Ասկէ 40—50 տարիներ առաջ Մինիէ քաղաքին մէջ մի հայ դերձակ կը տնտեսուէր, իր արհեստով ապրուստ գտնելու համար, ժամանակ մը հոն աշխատելով կը բարեկամանայ տեղւոյն կառավարչապետի հետ: Հողային կալուածներ բաշխելու առնին նա որքան կը ստիպէ հայ արհեստաւորին որ խնդրագիր մը գրէ հողեր ընդունելու համար, մինչեւ անգամ 600 ֆէտան մշակելի հողեր պիտի տրուին իրեն՝ միմիայն աղերսազրով մը: Հայ արհեստաւորը կը վախնայ եւ կաղաչէ կառավարչապետը որ չստիպէ իրան այն առթիւ: Ժամանակ մը անցնելէ յետոյ հողեր կը տիրապետեն՝ ու Մինիէի կառավարչապետը որպէս հետաւան անձնաւորութիւն մը, նորէն կը համոզէ իր սիրեցեալ հայ դերձակը, որպէսզի տասն ոսկի գտնէ եւ 600 փէտան (ֆէ-

տան 4000 քառակուսի մետրէն աւելի է) հող առնէ: Երբ կը տեսնէ որ համոզումներ օգուտ չեն բներ, ինքը կը վճարէ յիշեալ գումարն և յարմարագոյն տեղէ մը 600 ֆէլան հող կը չափէ հայ գերձակի անունով. բարեբախտաբար այդ օրեր զերձակի փեսան Արարկերէն Մինիէ կը փոխադրուի ընտանեօք. երբ կը տեսնէ որ իր աները փախուստ կուտայ հողատիրութենէ, կ'առավարչապետի խորհրդով ինքը խնդրադիր կուտայ և որոշեալ հողերը գազանապէս աներոջ անուան վրայ գրել կուտայ. ճիշտ այն գետափի քովեր, ուստի դարեր առաջ Յովսէփ Գեղեցիկը նկարագին ջուր հանած է «Ֆէյումի» ընդարձակ դաշտերը ուռուկիւռ համար: Այս գետակը մինչև այսօր «Յովսէփի գետ» կը կոչուի տեղացի ժողովուրդէն: Ահա ճիշտ այդ գետակի սկիզբն առած վայրի վրայ կը տրուի հողեր հայ գերձակին՝ տասն ոսկի ծախքով: Այժմ 40 տարիներ անցած են այն երջանիկ օրերէն և հայ գերձակի ժառանգորդներ իւրաքանչիւր ֆէլանէն տարեկան տասն ոսկի վարձք կ'ընդունեն ու փառաւոր կեանք կը վարեն: Խնդրագիր տուող փեսան զեռ կէ՛ դանի է և կանուանուի «Կարապետ Գրիգորեան», նոյնպէս Ստեփան Օհաննէսեան որ հասգուցեալ գերձակ «Պապօ» ի եղբօր որդին է: Թէ Կարապետ Գրիգորեան և Թէ Ստեփան Օհաննէսեան՝ ճշմարիտ գաւառացիի տիպը կը կրեն՝ իրանց նահապետական հիւրասիրութեամբ ու կրօնասիրութեամբ:

*

Մինիէէն մինչև Ֆէյում հինգ ժամ կը տեւէ ճեպընթաց շոքեկաւորով: Ահա կրտսիով լեցուած մի խոշոր փուռի մէջ մըտնել կը կարծէ ճամբորդը, այնքան սասաիկ տաք կ'ընէ Եգիպտոսի մայրսեան ամիսը, որ «խամսին» կանուանեն տեղացիք: Աւազի փոշիները մարդս կը խեղդեն, շունչերնիւ կարգելուի տաքէն, պտուղներն ալ տաքութենէն կեռան, ճանճերու և մժգուկներու շատութեան պատճառաւ՝ ամեն մարդ սոխալուած է մի մի ձիու պոչ կամ արժաւենիի տերեւներէն շինուած ճանճաւանիչ բռնելու, որովհետեւ Եգիպտոսի ճանճեր ուրիշ վայրերու ճանճերուն չեն նմանիր. մինչև ձեռք բռնած վանիչը չը զպչի իրենց, չեն փախիր: Մուսան կըստիպէ գրապետին երկու տող բան գրելու Եգիպտոսի մէջ, սակայն ճանճեր կը լիցուին աչաց, ձեռաց, գրչի և նոյն իսկ մեկան ամանին մէջ, ալ մուսան ալ կը փախչի, ոգին ալ հետ, գործ չունիս ձեռքիդ բռնած պոչով վանէ ու վանէ. դարձեալ անոնք կուգան ու կը ճանճրացնեն գրողը. ահամայ պիտի թողուս գրելու գործ, կամ թէ ստիպեալ ես գրելու, ամեն երեսի վրայ մեկանի թափթըփ-

ուկներ պիտի ընես, կսմ այնպէս պիտի գրես, որ չորանալէ վերջ դու ինքդ հաղիւ կարենաս կարգալ, ինչպէս ներկայ ձեռագրէն ալ կարող էք երեւակայել:

*

Ֆէյուսը՝ Եգիպտոսի գրախոսն է, իր առատ խաղողի այգիներով, պտղատու պարտէզներով և բամբակի արդիւնարեւութեամբ: Այս ամեն մշակելի հողերը կը ջրուին Յովսէփի Նեղոսէն հանած առատ ջրով: Ասկէ տարբեր ընկերութեան մի փոքրիկ շոգեկառքով պիտի մեկնենք Պօղոս փաշա Նուպարի «Թամիէ» ագարակը, ուր երկու ժամին պիտի հասնինք: Ահա հեռուէն կ'երևի Առաքել պէյ Նուպարի հսկայ ապարանքը, որ ընդարձակ մի դաշտի մէջ բազմած է նազելական հարսի նմանութեամբ: Շոքեկառքը շինուած է մինչև Պօղոս փաշայի ագարակի ծայրը. հոն կ'իջնանք, ուր կը հիւրասիրուինք մի քանի գաւառացի հայերէ: Օ՛հ, 12000 ֆէտան հող ունեցող մի հայ գաւառապետի ազատ հողի վրայ կը գտնուենք. ուր մօտ 1000 աշխատաւորներ մը ջրւներու նման կեռուն ու կը զեռուն. ոմանք ջուր առնող առուններու վրայ, ոմանք՝ նոր շինութիւններուն հող, քար, շաղաղ և այլն նիւթեր փոխադրելու վրայ, ոմանք կը հերկեն, կը ջրեն, կը հնձեն ու կը կահնեն, բոլորի ձեռք ունեցած գործիքներն ալ Պօղոս փաշա Նուպարի արուեստագիտական հմտութեամբ պատրաստուած, մանաւանդ անոր հնարած ելեքտրական արօրներ և այլն գործիքներ՝ այցելուներ կըսքանչացունեն: Հայ աշխատաւորներ շատ քիչ կան հոս, որոնք ամսականաւոր պաշտօնեաներ են, իսկ մնացեալի քիչ օրավարձով գոհ եղող «ֆալա»ներ են: Որքան աչք կը զօրէ տեսնելու տափարակ դաշտեր, մինչև գաճաճ լեռներ, ամենքն ալ հայ փաշային կը վերաբերին: Մենք նստած ենք մի նորատունկ ուռենիի հովանիին ներքեւ, ուստի կը դիտենք սե հողի ընդարձակութիւնը. ջրառուններու կանոնաւոր ուղղութիւնը, ածուններու բաժանումներն ու ցանուած արմտիքներու տեսակները: Ուռենին ու մշակելի սե հողերը յիշեցնել կ'ուտայ մեղ թիւրքհայ Հայաստանը ու անոր անուշ օդն ու ջուրը... Արդեօք նորատունկ այգիները ու ելեքտրականութեամբ ընդունած ջուրերը պիտի ազդեն այս կլիմայի վրայ—ոմանք հաւանական կը կարծեն: Կը պատմեն թէ՛ Պօղոս փաշան հինգ տարի առաջ այս հողեր գնած է կառավարութիւնէն 75000 անգլ. լիրէով և երեք տարիէն վերջ արգէն գինը հասած է իւր հարապէտ շտհագործութեամբ և աշալուրջ հսկողութեամբ ու տնտեսագիտութեամբ: Ինչպէս կը պատմեն գիտցողներ, Պօղոս փաշան

որ հող գնելու ելնէ, անոր քովեր գտնուած հողերու գիներ զգալի կերպով կը բարձրանան, ինչպէս և արժէքաթուղթեր: Անցեալ ամիսներու մէջ՝ Գահիրէէն մինչև Մաթարիէ աւան գտնուած աւազուտ միջավայրն որ 350,000 ֆէտան տարածութիւն ունի, ֆրանսիացիի մ' ընկերութեամբ գնած է, իւրաքանչիւր ֆէտան մէկ եգիպտական ոսկիով: Այս տարածութեան միջէն մի նոր զրամվէի գիծ պիտի բանալ, որով հողերու գիներն աւելի պիտի բարձրանան և մաս առ մաս ծախուին: Ինչպէս կիմանա՞մք՝ մի նոր թաղ ալ պիտի շինէ Պողոս փաշա և ժամանակամիջոցաւ տայ անոնց, որոնք շինուած տուներ կ'ուզեն ունենալ ու մէկ անգամով չեն կարող գինը վճարել:

*

Թամիէէն վերստին Ֆէյում կը վերադառնանք, շոքեկառքը արագութեամբ կ'ընթանայ ու մի քառորթ ժամէն հաղիւ կը կտրենք Պողոս փաշայի կալուածի լայնքը: Ճանապարհին կը պատահինք մերթ արմաւենեաց այգիներու, արաբ մասնագէտներ կը բարձրանան արմաւենիներու վրայ, որոնք ճճան աղջկանց գլուխներու նման ցիր ու ցան կը բարձրանան գէպի վեր: Այս եղանակին մէջ ինչո՞ւ մարդիկ կ'ենեն ու կը հասնեն արմաւենիներու մինչև այդ բարձրութիւնը, կը հարցնենք մեր տեղացի ընկերոջ.

—Արուն էգէն կը դատեն, կը պատասխանէ:

Հետաքրքրութիւննիս կը լռնէ, ու բացատրութիւն կը լսնորենք: Ահա ուզեկիցներուս հետեւեալ պատմութիւնը: Արմաւենիներ արու և էգ են, երբ ժամանակը հասնի անոնց զուգորութեան, պարտիզպաններ արու ծառէն մաս մը ծաղիկ կը կտրեն և էգերու ծաղիկներու մէջ կը դնեն ու հիմա ալ վերցնելու ժամանակն է. առանց այս գործողութեան՝ կարելի չէ որ էգ արմաւենին պտուղ տայ. իսկ արուններն արդէն պտուղ չ'ունին, միայն թէ կը ծաղկին էգերու նման:

*

Վերին և Ստորին Եգիպտոսի ամէնէն կարեւոր քաղաքներու և գիւղերու մէջ ամերիկացիք ու կաթոլիկ միսիօնարութիւններ ունին իրենց երկեւեռ—(տեղ տեղ գիշերօթիկ) վարժարաններ, հիւանդանոցներ ու դեղարաններ: Մայրապետներ ու գթութեան քոյրեր ամենայն ճարպիկութեամբ կը ջանան քաղաքակրթել և իրենց գումանութեան զարձունել Պալատ Ժողովուրդը, իսկ վերջիններն, միմիայն լեզուագիտութեան նպատակաւ կը յաճնեն իրենց զաւակներ այն հաստատութիւններուն, որովհետեւ Եգիպտոսի մէջ՝ լեզուներ չը գիտեցող և ու-

սուժ չ'ունեցող չի կարող պաշտօն անել և ապագայ պատրաստել:

Նգիպտական հին արեստներէն մնացած է մի միայն հաւ թուրս դնելու եղանակը: առանց գործիքի կամ աստիճանաշափի՝ վարպետը հաւկիթներ կը նտրէ և փուռի մէջ կը դնէ, որոշեալ վարկերին հաւկիթներէն զուրս կը ընեն ձագուկներ: Ասիկա արհեստմ'է, որոյ վրայ կը զարմանան Նւրոպացիները:

*

Նգիպտական պեղումներէն նորանոր հնութիւններ դուրս կուգան, շատ տեղեր՝ ուր կը կարծուի թէ առատ հնութիւններ կան, յատուկ պահապաններու հսկողութեան յանձնուած են, որպէսզի գողտնի պեղումներ չկատարուին: Նոր պեղումներէն կայծաքարէ սղոցներ, դանակներ և զանազան գործիքներ գըտնուած են Լուքսորի և Պալեանէի մօտեր: Նոյնպէս և զանազան գոյն ունեցող աւարկաներ, թ'նչ նիւթերէն պատրաստուած են, որոնք մինչև այսօր եղծուած չեն, ու չեն ալ եղծուիր մինչև անգամ «թէզասլ» հեղուկով լուացած պարագային:

Հնութիւններ պեղելու միջոցին, պատահած են շատ առարկաներու, որոնք օգտուն չեն պէս փոշիացած են. շատ տեղեր ալ երբ գումնէ ներս մտնել ուզեր են, իսկոյն մեռած են, արուեստական քար մը կամ հարուած լը կրելով: Տակաւին նոր մոմիաներ դուրս կ'ընեն Վերին Նգիպտոսէն, որոնց մարմիններ քարացած ու աչքերնին ապակիացած: Այն արհեստն անհետացած է հին Նգիպտացոյ հետ, ինչպէս նաև շատ հնագոյն արհեստներ, որոնք դուրս կ'ընեն, սակայն անոնց շինելու բազմաթիւ քանակ մասին ոչ ոք գաղափար չէ կրցեր ունենալ միջին ալսօր:

Պալեանէի հայ բնակիչներէն մինը պատմեց ինձ թէ՛ անցեալ տարի մի քառանկ վալան իր մըրաստանը թռչուններէն ու կենդանիներէն զերծ պահելու համար իր տան մէջ գտած մարդկային մումիան մըրաստանի կեդրոնը կը դնէ*): Աշնան ատեններ, երբ ալ միրգեր կը վերջանան, կը դարնէ ու խորտակէ որոյ քովէն մագաղաթեայ մի թղթի կտոր դուրս կ'ընէ, վրան շշանագրեր գրուած, թուղթի կտորը միայն կը վերցունէ և մի հնագէտի կը ծախէ: Հնագէտը կը կարգայ հետեւեալը — «Վերջէն մըրաստանին մէջ պիտի լինի»): Հնագէտը կը հաւաքէ նաև մումեայի կտորներն ու Նւրոպայ կը փոխադրէ: Վեր-

*) Բոստան գործուղողի:

Չապէս հնուցիւններ են, որոնք Եգիպտոսէն Եւրոպայ կը փոխադրուեն մեծ քանակութեամբ: Երբեմն ճարպիկ արարներ կը յաջողին իրենց նոր շինած առարկաներէն ալ կլկեցունել կարգ մը միամիտ Եւրոպացւոց իբրեւ հնութիւն:

*

Վերին Եգիպտոսի ամեն գիւղեր առհասարակ Աղանոցներուն, իւրաքանչիւր տուն հարիրաւոր փոքրիկ ծակեր բացած է պատերու վրայ, ուր կը հաւաքուին աղանիններ, որոնց ծիրտեր կը գործածուին իբրեւ հող պարարտացնող աղբ, մանաւանդ սխառնոցներու և ձմերուկանոցներու համար. այսօր սեաւ ձմերուկներու խոշորութիւնը գրեթէ կը մըցի Տիգրանակերտի ձմերուկներու հետ, բայց ոչ համեմութեամբ: Հասարակ ժողովրդի կերակուրը գրեթէ աղանիի միւս է: Երբեմն խորոված աղանիններ կը բերեն շոգեկառքի վապոններու մէջ ու կը ծախեն ճամբորդներուն:

Շաքարի ամենէն խոշոր գործարաններ կը գտնուին Վերին Եգիպտոսի մէջ, շաքարեղեգի առատութեան պատճառաւ: Վերջին տարիներս Փրանսական ընկերութիւն մը գնեց Եգիպտոսի բոլոր շաքարի գործարաններ, որոյ համար ալ շաքարի գինը բաւականաչափ սուղցաւ:

Սիստ գետաբնակի է տեսնել շաքարեղեգի հունձը. վագոններու մէջ, ճանապարհներու վրայ ու ամեն տեղ, ուր որ գիտես իւրաքանչիւր ոք, ֆալահներէն սկսեալ մինչև քաղաքուկրթուած Եւրոպացիներ, մի-մի շաքարեղեգի ձող բռնած՝ կը կրծէն ու կը կրծեն, ախորժանքով ու հաճոյքով:

Ասկէ իբր 8—10 տարի առաջ Եգիպտոսի դաշտերը տարին մի անգամ կը մշակէին. բայց ջրամբարներ շինուելէն վերջ, միեւնոյն հողը տարին չորս անգամ կը մշակեն, ժամանակի ու եղանակի համաձայն սերմեր ցանելով: Առաջներ՝ երբ Նեղոս գետ կը բարձրանար ու դաշտեր ջրելով կը ծածկէր, երկրագործներ պիտի սպասէին միեւն ուր ջուրեր ցումաքէին, ապա վարէին ու ցանէին. իսկ այժմ այլ ևս նոյն սանձարձակ Նեղոսը չէ մնացեր որ ուղած տեղերը ծածկէ. գիտութիւնն ու մարդկային հանճարը սանձ դրած է անգուսպ Նեղոսի բերանը և ուղած տեղը կառաջնորդէ:

Եգիպտոսը՝ բացի պարտէզներէն և այգիներէն՝ մեծ քանակութեամբ բամբակ, շաքարեղեգ, ֆուլ (բակլա), սոխ, սըխտոր, դեղնախնձոր (դանազան տեսակ), եգիպտացորեն, հացահատիկներու ամեն տեսակ, նմանապէս բանջարեղէններու ա-

մեն տեսակ կը մշակէ: Տեղական ժողովրդեան պիտոյքներ հոգալէ վերջ, ուրիշ երկրներ ալ կը փոխադրէ իր բերքերէն:

Ա. Շ.

*
* *

Ու հողիիս մէջ՝ անսահման, անծայր,
Որպէս մի վառ սասող՝ մութ հորիզոնում,
Այրում է, շնչում մի սուրբ գաղափար,
Որին ես առաջ եմ դնում...

Ո՛վ դու Գողգոթան արեան ու փառքի,
Ուր խաչուեց մարմինն, այլ ոչ գաղափար,
Աշխարհը թող ինձ թքէ, անարգի,
Ես կըգամ դէպ քեզ յոյսերով միշտ վառ...

Յոյսերով... այո՛. այժմ օր է ձմրան,
Երկրին տիրել է խաւարն ահարկու...
— Միթէ՞ վառ օրը ապագայ դարնան
Ցուորք է, միթէ՞ նա էլ չի՞ գալու...

Հր. Փալեան

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Իշխան Գ. Մ. Թումանովի օրագրութիւնները):

1906 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներում Պետերբուրգում կայացան մասնաւոր խորհրդակցութիւններ Թիֆլիսում բարձրագոյն ուսումնարանի բանալու առթիւ և այդ խորհրդակցութիւնները կատարուեցին, այդ միջոցին Պետերբուրգում գտնուող Թիֆլիսի քաղաքական դումայի ձայնաւոր և կովկասեան փոխարքայի մօտ այդ խնդրի համար կազմուած կամիտէտի անդամ, իշխան Գ. Մ. Թումանովի նախաձեռնութիւնով:

Խորհրդակցութեան մէջ մասնակցումէին Պետերբուրգի բարձրագոյն ուսումնարանների մի քանի պրոֆէսսօրներ և Պետերբուրգում բնակուող մի քանի կովկասցիներ: Առաջին խորհրդակցութիւնը կայացաւ Լեհնօյում, Պետերբուրգի պօլիտեխնիկական ճեմարանի շինութեան մէջ, սեպտեմբերի 21-ին:

Օրագրութիւն սեպտեմբերի 21-ի:

Խորհրդակցութիւնը կայացաւ Պետերբուրգի Պօլիտեխնիկական ճեմարանի դեկան Ա. Ս. Պօմնիկովի նախագահութեամբ:

Ներկայ էին. յիշեալ ճեմարանի պրոֆէսսօրներ՝ Ֆ. Ի. Լեհնսոն-Լիսինզ, Մ. Ա. Շատելին, Մ. Ա. Պաւլով, Ս. Ի. Դրուժինին, Ս. Պ. Բայկով, կանանց բժշկական ճեմարանի պրոֆէսսօր Վ. Ի. Վարդանով, առևտրի և արդիւնարհութեան նախարարութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Ս. Օ. Գուլիշաժարով, լեհնային դեպարտամենտի բաժանմունքի կառավարիչ Գ. Ֆ. Տիգրանով, Թիֆլիսի նախկին քաղաքապետ Ս. Ա. Վերմիշե, Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր իշխան Գ. Մ. Թումանով, Պետերբուրգի հալորդակցութեան ճեմարանի լաբօրանտ Գ. Ս. Զաւրիեւ, ինժեներ Իւզրաշեւ և Կասպի-Սև ծովեան նաֆթային ընկ. (Րօտշիլդի), ներկայացուցիչ Ա. Ի. Վանշեյդ:

Խորհրդակցութիւնը Լեհնօյում կայանալու պատճառով, Զոնուար, 1907

Պետերբուրգից հրաւիրուած մի քանի ասձինք չէին ներկայացել: Այսպէս օրինակ. պրոֆ. Մ. Մ. Կովալեակիյ, է. Լ. Նօբել, Պ. Օ. Ղուկասով, և այլք. ներկայ չէին Նոյնպէս, զանազան պատճառներով, պրոֆ. Ի. Է. Մարը և երկտասարդ գիտնականներ՝ իշխան Չ. Աւալով և Ջաւախով:

Հարցը քննադատելուց առաջ, խօսքը տրուեցաւ Գ. Մ. Թումանովին, որպէս մի անձի, որ ծանօթ էր այդ խնդրի դրութեան հետ Կովկասում:

Գ. Մ. Թումանովը ծանօթացնում է հանգիսականներին Թիֆլիսում բարձրագոյն ուսումնարան հիմնելու հարցի ծագման պատմութեան հետ: Այդ միտքը ծագեցաւ քաղաքի ներկայացուցիչների շրջանում դեռ 1880 թուականին և այն ժամանակ իսկ Քաղաքային Վարչութիւնը որոշեց իւրաքանչիւր տարի Քաղաքային եկամուտներից մաս հանել այդ գործի համար 10, 000 ռուբլի, մինչև որ կազմուի 100 հազար ռուբլու մի դրամագլուխ, որ միանգամից տրուի, եթէ Թիֆլիսում համալսարան բացուի: Այդ հարցը նորից ծագեցաւ քաղաքային վարչութեան կողմից 1894 թ. նախկին երկրագործութեան նախարար Երմոլովի Կովկաս այցելելու միջոցին և այս անգամում խօսքը վերաբերում էր ոչ թէ համալսարան, այլ երկու գիւղատնտեսական և լեռնապիտական բաժիններ ունեցող պօլիտեխնիկում բանալուն: Բացի 100 հազար ռուբլին բազալը վճռեց ապագայ պօլիտեխնիկումին յատկացնել 200 դեսեստինաչափ հող քաղաքի սահմաններում: Սակայն երկրագործութեան նախարարութիւնը հարկաւոր չգտաւ պաշտպանել այդ միջնորդութիւնը և իր կողմից առաջարկեց քաղաքին բաց անել երկրագործական միջնակարգ դպրոց, յատկացնելով նրան տարեկան 70 հազար ռուբլի: Բայց այդ առաջարկութիւնը չընդունուեց քաղաքի կողմից և Թիֆլիսում պօլիտեխնիկում բանալու հարցը նորից արթնացրեց քաղաքային ինքնավարութիւնը 1897 թ. Վարչաւայում և Կիևում պօլիտեխնիկումներ բանալու իշխանութեան որոշումից յետոյ և բացի առաջուան զօհաբերութիւնները քաղաքը պատրաստականութիւն յայտնեց օգնութեան ձեռք մեկնել ապագայ պօլիտեխնիկումին, յատկացնելով նրան տարեկան 30 հազար ռուբլու օժանդակութիւն: Համարեա, միաժամանակ նախարարինաբերողների ժողովը Բագում որոշեց յատկացնել տարեկան 17 հազար ռուբլի, Բաթումը և Փութայիւր երեք հազարական ռուբլի և այդպէս կնիադրուած տարեկան օժանդակութեան գումարը պօլիտեխնիկումի օգտին հասաւ մինչև 50 հազար ռուբլու: Միաժամանակեայ օժանդակութիւնը, որ որոշած էր Թիֆլիսի քաղա-

քային ինքնավարութիւնը, մեծացաւ մինչև 130 հազար
 բուբլի ու յետոյ աւելացաւ միանուագ յատկացրած նուիրա-
 տութիւններով. Թիֆլիսի քաղաքային կրեդիտի ընկ. կողմից
 50 հազար ռ., Թիֆլիսի Առևտրական Բանկի կողմից 30 հա-
 զար ռ., եղբ. Միրզոյեանցների և ընկ. կողմից 25 հազար ռ.,
 Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկ. կողմից 10 հազար ռ. և
 այլն և այլն, միանուագ յատկացրած նուիրատուութիւնների
 բոլոր գումարը հասաւ մօտաւորապէս 250 հազար ռ.: Սակայն
 շուտով նուիրատուութիւնների հոսանքը կանգ առաւ իշխա-
 նութեան կողմից նուիրատուութիւններ ժողովելը չլթոյլ տա-
 լու պատճառով: Առհասարակ տեղական հասարակութեան
 ձգտումը՝ հիմնել Կովկասում բարձրագոյն ուսումնարան, տեղա-
 կան ազմիրնիստրացիայի համակրութեանը չարժանացաւ: Վեր-
 ջինիս այդպիսի վերարեբնոցը դէպի ներկայ հարցը մնաց
 անփոփոխ և 1903 թ., երբ յայտնի նաֆթարդիւնաբերող Ա.
 Ի. Մանթաշեանը յայտնեց բարձրագոյն իշխանութեան (Կով-
 կասի գլխաւոր կառավարչապետին և ժողովրդական լուսաւո-
 ռութեան նախարարին) իր ցանկութիւնը՝ նուիրել ապագայ
 ոլորտեխնիկումի շինութեան համար 600 հազար բուբլի և նը-
 րա մէջ ստիպենդիաներ հիմնելու համար 100 հազար բուբլի:
 Ընդամենը 700 հազար բուբլի: Միայն ներկայ տարւոյս մէջ,
 երբ հայ-թուրքական խորհրդաժողովը նորից ձայն բարձրացը-
 րեց երկրի մէջ բարձրագոյն ուսումնարան բանալու կարիքը,
 որպէս միջոցներից մէկը, որ կարող է տկարացնել փոխադարձ
 ցեղական ատելութիւնը տեղական ազգութիւնների մէջ, իշ-
 խանութիւնը հարկաւոր համարեց աջակցել այդ միջամտու-
 թեան և Կովկասեան փոխարքայի վարչութեան մէջ հիմնուեց
 ներկայ թուականին առանձին կօմիտետ, կազմուած որպէս
 տեղական ազմիրնիստրացիայի նոյնպէս և տեղական հասարա-
 կութեան ներկայացուցիչներից, որպէսզի մշակուի Թիֆլիսում
 բարձրագոյն ուսումնարան հիմնելու հարցը: Կօմիտետը դեռ
 առաջ ցանկացաւ պարզել, թէ որպիսի նուիրատուութիւնների
 վրայ հասարակութեան կողմից կարելի է յոյս դնել: Պարզուե-
 ցաւ այստեղ, որ հաւանական է, թէ բոլոր առաջուան խոստա-
 ցած նուիրատուութիւնները կը տրուեն պօլիտեխնիկումին և
 միմիայն պ. Մանթաշեանը զրաւորապէս յայտնեց, որ հան-
 պամանքների փոփոխութեան և նաֆթային ձեռնարկութեան
 մէջ իր կրած միասնների պատճառով նա միջոց չունի առա-
 ջուան չափով նուէր տալ: Բարձրագոյն ուսումնարան բանա-
 լու համար գլխադրամը աւելացնելու համար կօմիտետը որո-
 շեց Կովկասում ամենուրեք հիմնել առանձին կօմիտետներ

նուիրարերութիւններ ժողովելու համար: Բացի այդ կօմիտե-
 տում քննութեան ենթարկուեցին այն հարցերը, թէ որտեղ
 և ինչ տիպարի բարձրագոյն ուսումնարան ցանկալի է հիմնել:
 Սակայն տեղի վերաբերմամբ հարցը Կովկասի Փոխարքան ու-
 ըռել էր արդէն յօգուտ Թիֆլիսի, համաձայն այն կարծիքների,
 որ արժարժուել էին արդէն տեղական հասարակութեան և մա-
 մուլի մէջ: Ինչ վերաբերում է տիպարին, կօմիտետի անդամ-
 ների կարծիքները այդ հարցի մասին զանազանուեցին: Ոմանք
 ինկատի առնելով երկրի գիտական շահերը կարծիք յայտնեցին
 յօգուտ համալսարանի: Միւսները, երկիւղ կրելով, որ արդէն
 նկատուած օրինակները հիման վրայ, համալսարանը աւելի
 շուտ կը տայ մեղ չինովիկներ, քան թէ գործունեաներ, նա-
 խադասում էին Կովկասում ունենալ պօլիտեխնիկում: Այդ
 կարծիքները հաշտեցնելու նպատակով կօմիտետը կանգնեց մի-
 ջին տիպարի վրայ: Ինկատի առնելով Պետերբուրգի պօլիտեխ-
 նիկական ճեմարանը, կօմիտետը միտք յայտնեց՝ հիմնել պօ-
 լիտեխնիկում հետեւեալ բաժանմունքներով՝ 1, տնտեսագիտա-
 կան (էկօնօմիկական), որ իր ծրագրով մօտ լինի համալսարա-
 նի իրաւագիտական ֆակուլտետին,¹ 2, լեռնագիտական, 3, դիւ-
 զատնտեսական և, 4, մեքենայագիտական: Սակայն այդ որո-
 շումը դեռ վերջնական չէ և կօմիտետը կը ցանկանար այդ
 հարցի վերաբերմամբ լսել հասարակութեան և մամուլի կար-
 ծիքը, որ հաւանական է, չի յապաղի պարզուելու նուիրատը-
 ւութիւններ ժողովելու միջոցին: Ենթադրելով, որ հանդիսա-
 կանները, որպէս գիտութեան ներկայացուցիչներ և միաժամա-
 նակ քաջ ծանօթների Կովկասեան արդիւնաբերութեան և կով-
 կասագիտութեան հետ, կարող էին այդ կողմից օգնութեան
 ձեռք մեկնել Թիֆլիսի կօմիտետին պ. Թումանովը ցանկու-
 թիւն յայտնեց, որ ներկայ ժողովի մէջ յայտնուէին կարծիք-
 ներ ապագայ բարձրագոյն դպրոցի աւելի ցանկալի տիպարի
 վերաբերմամբ: Թոյլ տալով, որ Կովկասագիտութեան բազմա-
 թիւ գիտական հարցերի մշակութիւնը պահանջում է համալ-
 սարան հիմնել, պ. Թումանովը այնուամենայնիւ համալսարան
 հիմնելը արդի հանգամանքներում համարից ղժուար իրագործելի,
 իսկ պօլիտեխնիկում հիմնելը աւելի իրագործելի: Տէրութեան ֆի-
 նանսական միջոցների ներկայ դրութեան մէջ ղժուար է յոյս
 ունենալ իշխանութեան ատատաձեռն օժանդակութեան վրայ,
 իսկ մասնաւոր անձանց օժանդակութիւնը կարելի է ստանալ
 աւելի պօլիտիկանիկում, քան համալսարան հիմնելիս, որովհե-
 տե առաջինը աւելի է համապատասխանում ուսանողների գործ-
 նական նպատակներին, քան թէ երկրորդը: Մինչև անգամ,

տրդէն ունեցած նուիրատուութիւնները կարող էին բաւարար համարուել անյապաղ բաց անել ու պոլիտեխնիկում երկու բաժանմունքով՝ տընտեսագիտական և լեռնամեքենայագիտական: Տնտեսագիտական բաժանմունքը չիպահանջի լաբորատորիաներ կազմակերպել և աժան կը հստի և բացի այդ կը գրաւէ դիպլոմի պոլիտեխնիկումը բազմաթիւ ունկնդիրներ և դրանով կը բարձրացնէ ուսումնարանի եկամուտը: Իսկ լեռնամեքենայագիտական բաժանմունքը կարեոր է երկրի նաֆթարդիւնաբերութեան գործի և միւս հանքագիտական արդիւնաբերութիւնների զարգացման համար և այդ արդիւնաբերութիւնները առատ աղբիւր են գտնուած ամբողջ Կովկասում: Ինչ վերաբերում է գիւղատնտեսական և քիմիագիտական բաժանմունքներին, նըրանք, աւելի էս առաջինը, պահանջելով մեծագումար ծախսեր, չեն գրաւուած դէպի արդէն գոյութիւն ունեցող տեխնիկական ուսումնարանները նշանաւոր թուով ուսանողներ, այդ պատճառով նըրանց կարելի էր բաց անել Կովկասում երկրորդ նուագին: Այդ կարծիքը ամբողջովն համար պ. Թումանովը ղեկուցանուած է, որ Բիգայի պոլիտեխնիկումից 1904 թ. աւարտել են իրանց դասընթացը գիւղատնտեսական բաժնից միայն 22 մարդ, այնինչ տնտեսական բաժանմունքը արձակել է ուսումնաւարտներ՝ 69 մարդ, մեքենայագիտականը՝ 39, ինժեներականը՝ 34: 1899 թ. Մոսկուայի գիւղատնտեսական ճեմարանում, որ ծառայում է ամբողջ Ռուսաստանի կրթութեանը այդ կողմից, ուսանում էին ընդամենը 198 մարդ, Նովո-Ալէքսանդրովսկի ճեմարանում՝ 260: Նոյն թուականին Պետերբուրգի տեխնոլոգիկական ճեմարանի քիմիագիտական բաժանմունքը ունեցել է ընդամենը 131 ուսանող, այն ինչ մեքենայագիտականը՝ 605: Խարկովի տեխնոլոգիկական ճեմարանի քիմիագիտական բաժանմունքը ունեցել է միայն 84 ուսանող, այն ժամանակ, երբ մեքենայագիտականը՝ 290, Մոսկուայի տեխնիկական ուսումնարանում քիմիագիտական բաժանմունքում կային՝ 127 մարդ, այն ինչ մեքենայագիտականում՝ 783:*) Մօտաւորապէս նոյնն է նկատուած, այժմս գոյութիւն ունեցող, միւս բարձրագոյն տեխնիկական ուսումնարաններում:

Ս. Ո. Գուլիշմոնքարովը կողմնակից է պոլիտեխնիկումին, կարծելով, որ համալսարանները կորցրել են իրանց առաջուան նշանակութիւնը, որպէս հանրակրթական հիմնարկութիւններ և բաւարարութիւն չեն տալիս կեանքի աժան պահանջ-

*) Տես Ֆինանսների նախարարութեան հրատարակութիւնը
«Россія въ концѣ XIX вѣка»

ներին: Համալսարանները ներկայումս ինքեանք էլ սկըսում են բաժանուկ զատ զատ ֆակուլտետներէ, որ ընդհանուր կապ չունին և որ ներկայացնում են անկախ միութիւններ: Միւս կողմից տեխնիկան էլ այնքան ընդլայնացաւ, որ նա էլ այժմուս չէ կազմում ինքնուրոյն ամբողջութիւն, այլ բաժանում է բաղմաթիւ առանձին մասնագիտութիւնների, որոնք կապուած են իրար հետ միայն մի քանի գիտութիւններով, որ հիմք են ամեն մի մասնագիտութեան: Ոչ ոք ներկայումս չէ ձգտում ստանալ ընդհանուր, այսպէս ասած, հանրակրթական ուսումն, այլ իւրաքանչիւրը ձգտում է կետրոնացնել իր ուժերը և ընդունակութիւնը մի որևէ մասնագիտութիւն ստանալու վրայ: Ներկայումս երիտասարդութիւնը, հնազանդուելով ժամանակի մերկանտիլական ոգուն, ամենից աւելի ձգտում է մտնել մասնագիտական տեխնիկական ուսումնարաններ և միայն անյաջողութեան դէպքում ուղղում է իր քայլերը դէպի համալսարանների բաց դռները, մինչև անգամ իրան հաշիւ չտալով՝ թէ որտեղ է նա գործադրւում իր ընդհանուր կրթութիւնը, դասընթացը աւարտելուց յետոյ: Տեխնիկական ուսումնարաններ, համեմատ ուսանողների այն թւին, որ նրանք կարող են տեղ տալ, աւելի սակաւաթիւ են, քան թէ համալսարանները: Համոզմունքով կարելի է ասել, որ մայրաքաղաքների երկու համալսարանները իրանց սաների թուով գերազանց են կայսրութեան բոլոր մասնագիտական ուսումնարանները միասին վեր առած: Վերջին ժամանակները փորձեր եղան փոքր ինչ հաշտեցնել համալսարանների ձգտումները պոլիտեխնիկական ուսումնարանների պահանջների հետ և նրանց ամենալաւ արտայայտութիւնն է ներկայացնում Ս. Պ. պոլիտեխնիկումը, որ զուտ տեխնիկական գիտութիւնների շարքում, բովանդակում է իր մէջ բաղմակողմանի մարդաշահ գիտութիւնների մի շրջան: Ուսումնարանի մի այդպիսի տիպար, որ թոյլատրում է զանազան կերպարանք տալ նրան, նայելով նիւթական միջոցներին և այն վայրի տեղական պայմաններին, ուր ցանկանում են նրան հիմնել, պ. Գուլիշաբարովի կարծիքով, ամենից աւելի են համապատասխանում ժամանակիս ոգուն և այդ պատճառով ներկայանում են աւելի ցանկալի: Կովկազում, նրա կարծիքով, հարկաւոր կը լինէր հիմնել պոլիտեխնիկում էկոնոմիկական ֆակուլտետով և առաջին նուագում էլէկտրոմեքենայագիտական բաժանմունքով: Հիմնական գիտութիւնները (բարձրագոյն թուաբանութիւն, ֆիզիկա, քիմիա, կենդանաբանութիւն, բուսաբանութիւն և հանքաբանութիւն) որ պէտք է մտնեն էլէկտրո-

մեքենայագիտական բաժնի ծրագրի մէջ, կը ծառայեն և որպէս հիմք միւս երկու ենթաբաժանումներին՝ նաֆթարդիւնաբերականին և գիւղատնտեսականին, որ պէտք է իրագործուին մօտաւոր ժամանակամիջոցում:

Կ. Մ. Զաւրիեւի ճակակարծիք է այս հայեացքներին և գրտնում է, որ Կովկասը ամենից աւելի կարօտ է համալսարանի՝ նրա բոլոր ֆակուլտետներով ի միասին: Միայն համալսարանը կարող է տալ լուրջ գիտական ուսում, իսկ տեխնիկական ուսումնարանները տալիս են միայն նեղլիկ մասնագէտներ: Կովկասը գիտական գործունէութեան համար մեծ աստղարէզ է ներկայացնում և այնպիսի ֆակուլտետները ինչպիսին են օր. ֆիզիկո-մաթեմատիքականը և արեւելեան-լեզուագիտականը հաստատապէս անհրաժեշտ են Կովկասի համար: Մեծ նշանակութիւն կարող էին ունենալ Կովկասի համար և բժշկական, և իրաւաբանական ֆակուլտետները: Յանկալի էր, պ. Զաւրիեւի կարծիքով կազմել Պետերբուրգում առանձին մասնախումբ գիտութեան ներկայացուցիչներից և Կովկասագէտներից, որոնք յանձն առնէին մի շարք ժողովներ կազմելով, մշակել մանրամասն նախագիծ Կովկասում համալսարան բանալու համար: Դա թափով առաջ կը մղէր լոյսը, որովհետեւ Կովկասում դեռ չկան բաւականաչափ գիտական ուժեր այդպիսի աշխատութեան համար և այդ պատճառով գործը կարող է կաղէ կաղ առաջ գնալ:

Ս. Ա. Շատելէն կարծում է, որ առհասարակ ազգայնակութեան մեծամասնութիւնը համեմատապէս շատ չէ հետաքրքրւում ժաքուր գիտութիւնով: Կեանքի մէջ գործադրելի առարկաները միշտ աւելի մեծ թւով ուսանողներ են գրաւում: Այդ պատճառով Կովկասի ապագայ բարձրագոյն ուսումնարանը պէտք է ձգտի ամենից առաջ բաւականութիւն տալ հասարակութեան գործնական պահանջներին: Նրբ ժողովրդի նիւթական վիճակը գիւղատնտեսութեան ու արդիւնաբերութեան զարգացման շնորհիւ բարձրանայ, բնականաբար նրա մէջ հետաքրքրութիւն կը ծագի դէպի գիտութիւնը և այնժամանակ համալսարան հիմնելը կը լինի անհրաժեշտ և ժամանակայարմար:

Մ. Ա. Շատելէնը կարծում է, որ այժմ Կովկասի համար աւելի ցանկալի է պօլիտեխնիկում հիմնել: Նրա կարծիքով հիմք չկայ սպասելու, որ պօլիտեխնիկումը կը տայ երկրին պակաս աստիճանի գիտնականներ, քան թէ համալսարանը, առաւել ևս, եթէ պօլիտեխնիկումի կազմի մէջ չմտնեն միայն տեխնիկական բաժիններ: Պրօֆ. Շատելէնի կարծիքով պէտք է երկրին տալ այնպիսի ուսումնարան, որի մէջ իմաստասիրութիւն գիտութիւններ, որոնց գործադրութիւնը աւելի սերտ

կապուած են երկրի առանձնայատկութիւններին հետ: Մտիկ-մաթիկական, պատմական, լեզուագիտական կրթութիւն կարող են ստանալ Կովկասցիները յաջող կերպով Օդեսսայում և Պարկովում, իսկ տեխնիկայի մի քանի բաժինները առանձնապէս յարմար է խմատասիրել այնտեղ, ուր ուսանողը կարող է գործադրել իւր տեղեկութիւնները գործնականապէս: Նոյնպէս շատ նշանաւոր է, որ էկոնոմիկական և իրաւագիտական առարկաների ուսանողները կրթութիւն ստանան Կովկասում, որովհետեւ միայն այդ պայմանում ուսանողը կը ծանօթանայ ազգայնականութեան էկոնոմիկական և իրաւաբանական առանձնայատկութիւններին հետ: Իհարկէ, շատ ցանկալի կը լինէր ստանալ և բժշկական կրթութիւնը հայրենիքում, սակայն բժշկական ֆակուլտետը այնքան թանկ արժէ, որ առձեռն միջոցները հազիւ թէ թոյլ տան այդ երազել: Ամփոփելով իւր ասածները Մ. Ա. Շատելէնը կարծում է, որ երկրի կարիքներն աւելի բաւականութիւն կը տար պօլիտեխնիկումը երեք գլխաւոր բաժանմունքներով՝ էկոնոմիկական, տեխնոլոգիկական և գիւղատնտեսական: Վերջինի ղեկարութիւնն է նրա մեծագումար արժողութիւնը, սակայն որովհետեւ երկրի առանձնայատկութիւններին ծանօթ լինելը գլխաւորապէս անհրաժեշտ է գիւղատնտեսներին, այդ պատճառով այդպիսի ֆակուլտետը չափազանց ցանկալի է: Ինչ վերաբերում է առաջին երկուսին, նրանք պէտք է բազմապէս, առաջինը՝ էկոնոմիկականից և իրաւագիտականից, երկրորդը՝ լեւնագիտականից, ինժեներո-կառուցականից և էլէկտրո-մեքենայագիտականից: Իւրաքանչիւր բաժանմունք կարող է բացուել հետզ-հետէ պօլիտեխնիկումի միջոցները մեծանալուն համաձայն: Այդպիսի պօլիտեխնիկումը Շատելէնի կարծիքով ամենից աւելի բաւականութիւն կը տար երկրի պահանջներին:

Ա. Ի. Վանցեյդ (Կասպիան—Սև ծովի նափթարգելահանութեան ընկ. ներկայացուցիչը), քննադատելով հարցը Կովկասի նափթարգելահանութեան տեսակէտից, գտնում է ամենաանհրաժեշտ նրա համար առարկայի հետ ծանօթ տեխնիկ-մեքենայագործներ, որոնք գործնականապէս ծանօթացած լինէին արհեստի հետ: Նա մինչև անգամ աւելի օգտաւէտ է համարում՝ ոչ թէ ինժեներներին, այլ կրթուած տեխնիկ-արհեստագէտներին: Իսկ աժմեան տեխնիկական ուսումնարանները տալիս են առաւելապէս թէօքէտիկներ, որ շատ օգտաւէտ չեն գործնականութեան մէջ, իսկ ինչ վերաբերում է քիմիագէտներին, նրանց ունենալու կարիքը նափթային արգելադրութեան մէջ մեծ չէ:

Վ. Ի. Վարդանով հնարաւոր չէ համարում սեղմել աղաքայն Կովկասեան բարձր ուսումնարանի ծրագիրը, միայն այն պատճառով, որ ներկայ ընդէին բաւականաչափ նիւթական միջոց չկայ: Յայտնելով որ ցանկալի է ընդարձակ ծաւալ տալ գիտնական բարձրագոյն կրթութեանը Կովկասում, պ. Վարդանովը կարծում է, որ ամենակարեւորն է համալսարանի տիպարը, որովհետեւ միայն համալսարանը: որպէս մարդկային գիտութեան բազմառեւակ ամփոփումն և ոչ թէ մի որեւէ մասնագիտական ուսումնարան, կարող է ազգայնութեան ողու բոլոր կողմերի արտայայտիչը լինել: Ինչ վերաբերում է այդ խնդրի իրականացնելուն գործնականապէս, ի նկատի առնելով միջոցների սղութիւնը կամայ ակամայ հարկաւոր կը լինի ֆակուլտետները բանալ հետզհետէ: Որոշելու համար այն հարցը, թէ որից իսկապէս սկսել, հարկաւոր կը լինել աւելի մանրամասն տեղեկութիւն ունենալ նիւթական միջոցների վերաբերմամբ, սակայն սկզբունքով Վ. Ի. Վարդանովը միանում է ներանց հետ, որոնք ցանկութիւն են յայտնում բաց անել առաջին նուագում իրաւագիտական և բնագիտութիւնների ֆակուլտետը:

Ի. Ա. Վերմիշըր յիշեցնում է, որ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը միջամտել է պօլիտեխնիկում և ոչ համալսարան բանալու համար, միայն գործնական դրդումներով: Ենթագրւում էր, որ իշխանութիւնը աւելի տրամադիր է բաց անել տեխնիկական ուսումնարաններ, քան թէ համալսարաններ: Իսկ եթէ հիմնուել պօլիտեխնիկում, նրա մէջ ամենամանրագիշտըն է գիւղատնտեսական բաժանմունքն ունենալ: Այժմումս գոյութիւն ունեցող ուսումնարաններում այդպիսի բաժանմունքները շատ քիչ գործունեաներ են մատակարարում, որովհետեւ իշխանութիւնը քաղաքական միտումներով ստեղծել է այնպիսի կարգեր, որոնք արգելք են գիւղական շրջանի մէջ լայնարձակ մուտք ունենալ, հեւացնելով վերջինից ընդհանրապէս ինտելիգենցիային: Սակայն ապագայում տեղական վարչութեան ժողովրդականանալուց և նրա գործնեութեան շրջանը ընդլայնանալուց յետոյ գիւղատնտեսագէտները կը գտնեն Ռուսաստանում շատ գործ: Առանձնապէս ցանկալի են Կովկասի համար տեղական տնտեսագէտներ, որպէս այն պատճառով, որ Անդրկովկասում գիւղատնտեսութիւնը ազգաբնակչութեան գլխաւոր պարագմունքն է կազմում, նոյնպէս և այն պատճառով, որ գրոյց եկող գիւղատնտեսագէտները, որպէս քիչ ծանօթներ տեղական պայմաններին մեծ արդիւնք չեն կարող տալ երկրին, այն ինչ երկրի բնական հարստութիւնները և նրա

տնտեսական պայմանները բաց են տնում լայնարձակ աստի-
րեզ ինտենսիվ գիւղատնտեսութեան համար, որ պահանջում է
գիտնականապէս պատրաստուած մասնագէտներ: Պէտք է նոյն-
պէս ի նկատի առնել, որ ոչ մի գործնական դիտութեան ճիւղ
չէ պահանջում այն աստիճանով յարմարուիլ տեղական պայ-
մաններին, որ աստիճանով գիւղատնտեսութիւնը: Ռուս մե-
քենայագէտը և քիմիագէտը կարող են առանց այլ ևս նոր պատ-
րաստականութեան գործադրել իրանց գիտութիւնը Անդրկով-
կասեան երկրում, նոյնը չի կարող անել ռուս գիւղատնտեսագէ-
տը, նա պէտք է կանխապէս փորձնական ճանապարհով մշա-
կէ այստեղ տեղի ու տեղը մեզ պիտանի տնտեսական միջոց-
ներ: Անդրկովկասեան պօլիտեխնիկումի գիւղատնտեսական
բաժանմունքը և կը ներկայանայ երկրի համար այն դպրոցը,
որի մէջ ընդհանուր գիտնական իմաստով կը մշակուին տե-
ղական գիւղատնտեսութիւնը առաջ տանելու գործնական մի-
ջոցները և այդպիսով տեղական պօլիտեխնիկումի ուսման արտ
գիւղատնտեսագէտները բաւականաչափ պատրաստուած կը լի-
նին իրանց գիտութիւնը երկրում գործադրելու: Աւելորդ է
ասել, որ այդպիսի ուսումնարանի երկրի մէջ գտնուելը միջոց
կը տայ ուսանողներին գործնականապէս հմտանալ հարաւային
կուլտուրային հարկաւոր ձեռնարկութիւններին մէջ, որ նոյն-
պէս շատ լաւ կը լինի, որովհետեւ առանձնապէս զօռւար է
ուսումնասիրել գիւղատնտեսութիւնը դրքերի օգնութիւնով:
Գիւղատնտեսական բաժանմունքից յետոյ, պ. Վերմիշեր ամե-
նացանկալին է համարում կովկասեան պօլիտեխնիկումում, ու-
նենալ լեռնագիտական (горный) և յետոյ էլէկտրատեխնիկա-
կան բաժանմունքները: Լեռնահանքաբանական գործը մեզանում
պէտք է ունենայ փայլուն ապագայ. ի նկատի առնելով մեր
հանքային հարստութիւնների առատութիւնը և բազմակերպու-
թիւնը, սակայն ծաղկելու համար նա ունի և մի այլ ոլայման.
այդ լեռնային գետերի առատութիւնը, որոնց շահագործելը
էլէկտրական ուժ ստանալու համար, ճանապարհ կը բաց անէ
ստեղծել երկրի մէջ մի շարք լեռնարդիւնաբերական ձեռնար-
կութիւններ, շնորհիւ աժան գնով ստացուող էլէկտրական է-
ներգիայի: Այսպիսով այդ երկու բաժանմունքները՝ լեռնա-
գիտական և էլէկտրատեխնիկականը կարող էին ի միասին օ-
ժանդակել շահագործելու երկրի ամենազլխաւոր բնական հա-
րըստութիւնները:

Մ. Ս. Պսլովը անհրաժեշտ է գտնում ապագայ կովկազ-
եան պօլիտեխնիկումի կուրսը յարմարցնել տեղական արդիւ-
նաբերութեան պահանջներին: Յանկալի է ունենալ ոչ թէ մե-

տալուրգիայի բաժանմունք (որովհետեւ Կովկազում բացակայում է համապատասխանող գործունէութիւն), այլ լեռնա-գործարանական, ուր, ինչպէս Լվովի պօլիտեխնիկումի մէջ, աւանդուէին՝ նաւֆթի տեխնիկան և տեխնալօգիան*)։ Սակայն մասնագիտական-տեխնիկական բաժանմունքներից առաջ հարկաւոր է ընդհանուր համալսարանական կուրս՝ որպէս զի երկիրը՝ լրջօրէն գիտնականապէս իմաստասիրելը զրուած լինի հաստատուն հիմքի վերայ։ Այդ պատճառով ցանկալի է ամենից առաջ բնագիտական ֆակուլտետ, իսկ յետոյ նրա ստորաբաժանմունքները լեռնագիտական և էլէկտրօ-մեքենայագիտական։

Ֆ. Պ. Տիգրանով։ Կովկազում բարձրագոյն ուսումնարան հիմնելու հարցը անցեալ 80-ական թուականների սկզբում տեղական հասարակութեան և Կովկասադէտների էական հոգսի առարկայ դարձաւ։ Տեղական մամուլը պարզ ձևակերպեց այն ժամանակները տիրապետող ցանկութիւնը համալսարան հիմնել։ Թիֆլիսը որոշեց իւր տարեկան բիւջէի մէջ մացնել, կարծեօք, 10 հազար ռուբլի օժանդակութիւն, որպէսզի զբանով հիմք դրուի համալսարան բաց անելու համար հարկաւոր պրամազուխը կազմելու սկզբունքին։ Սակայն մինչև որ այդ հարցը քննոււմ էր տեսականապէս, նրա գործնական իրականացումը ետեւ էր գնում ևւ 90-ական թուականների սկզբում յայտնի եղաւ ամենքին, որկա ռաւարութեան բարձրագոյն շրջաններում այդ գործին չեն համակրում։ Իսկ ամենավերջին տարիներում, երբ համարեա միաժամանակ տէրութեան դանազան վայրերում սկսեցին հիմնարկուել մէկը միւսի ետեից պօլիտեխնիկումներ և այդպիսով թւում էր, թէ իշխանութիւնը աւելի յօժարութիւնով համաձայնում է այդ ձևի ուսումնարաններ հիմնել և ահա Կովկազի քաղաքները և դասակարգերը սկսեցին կշռել այն հարցը, թէ արդեօք հարկաւոր չէ Թիֆլիսում պօլիտեխնիկում հիմնել, որ ստանան զոնեա որ և է բարձրագոյն ուսումնարան։ Այդ ծայրերկրի բարձրագոյն շահերի համար անշուշտ հարկաւոր են թէ համալսարան և թէ պօլիտեխնիկում։ Սակայն, քանի որ մենք պէտք է ի նկատի ունենանք ֆինանսական միջոցները և այնպէս կարծիք յայտնենք համալսարան կամ պօլիտեխնիկում հիմնելու մասին, ոչ մի տատանմունք չպէտք է լինի այդ հարցի լուծումը յօգուտ համալսարանի։ Կովկազը գլխաւորապէս համալսարանի է կա-

*) Մասնացոյց է լինում նոյնպէս Ամերիկայի օրինակի վերայ (справочникъ «Минерва».)

քօտ երկու պատճառով. համալսարանը որպէս գիտնականների կօրպօրացիա յառաջ կը մղէ և կը մշակէ կովկազագիտութեան վերաբերեալ գիտութեան մասնաւոր ճիւղերը և համալսարանը, որպէս բարձրագոյն կրթութեան տնկոց, կը բարձրացնէ այդ երկրում լուսաւորութեան հորիզոնը:

Չնայելով, որ Կովկազը Ռուսաստանի հետ միացնելու օրից ամբողջ դար է անցել, այդ երկիրը գիտականապէս բիշ է իմաստասիրութեամբ: Կովկազի ոչ մի ազգութիւն, որոնց վիճակը դարերով կապուած է եղել մեծագոյն հնադարեան և վերջին ժամանակների տէրութիւնների կեանքի հետ և որոնց դրութիւնը կրել է իրար յաջորդող կուլտուրաների ազդեցութիւնները, չէ ստացել մեր գիտնականներից իր պատմութիւնը: Կովկազեան լեզուների ամենալաւ լեզուագէտներ են՝ Փրանսիացիները, անգլիացիները և գերմանացիները: Եթէ այդ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ համար գոյութիւն ունի Ս. Պետերբուրգի համալսարանի արեւելեան լեզուների ֆակուլտետը: Նշանաւոր չէ՞ միթէ, որ Կովկազագէտ պրօֆեսորներից ամենաականաւորները կամ բնիկ են և կամ այնտեղ են ծնուել: Հաղիւ թէ անհիմն լինէր պնդել, որ եթէ բաւորապէս առաջ Կովկազում հիմնուած լինի համալսարան, մենք չէինք փորձի այն սարսափները, որ վիճակուեցաւ միզ կրել մօտ ժամանակ: Թէ՛ ռուսական հասարակութիւնը և թէ՛ իշխանութիւնը աւելի լաւ կը ծանօթանային Կովկազի հետ և իրանք էլ Կովկազի որդիները աւելի մօտ կը իմաստասիրէին իրար և իրանց երկիրը:

Այստեղ միտք յայտնուեցաւ, թէ մեր մերկանտիլ դարում երիտասարդութիւնը բնականաբար ձգտում է դէպի բարձրագոյն տեխնիկական ուսումնարաններ, որոնք առատ վարձատրուող յաշտօններ ստանալու գործունէութեան նախապատրաստութիւն են մատակարարում: Եւ համաժողովը այդպիսի կարծիքի: Չեմ կարծում, որ երիտասարդութեան մէջ այդպիսի ձգտումը իշխող լինի, սակայն եթէ դա իրաւի նկատուած է, այն ժամանակ բնական է ցանկալ, որ հիմնուի համալսարան և ոչ պօլիտեխնիկում և դրանով միջոց ստեղծուի երիտասարդութիւնը կրթելու ոչ թէ մերկանտիլ, այլ լուսաւորման դաստիարակական ձգտումներով:

Ինչ վերաբերում է համալսարանի նշանակութեանը Կովկասի համար, որպէս գիտութեան տնկոց, այդ կողմից ոչ ոքի համար պէտք է տարակուսելի չլինի, որ Կովկասի առաջադիմութիւնը յամենայն դէպս կարելի է, ստեղծելով մի խումբ լուսաւոր մարդիկ տեղական կեանքի ամենաբազմատեսակ գործու-

նէութիւններն շրջանում. աղմինիսրացիայի, գատարանների մէջ, նոյնպէս և ֆինանսական, տնտեսագիտական, հասարակական, դեմաւոյի և այլ համարկութիւններն մէջ: Տեխնիկներն ալեւոր են, բայց նրանք չեն երկրի լուսաւորութեան աւաջաւոր և զլխաւոր գործօնները, նրանք միայն լուսաւորապէս արտայայտած կամքի իմաստամիտ գործադրիչներ են: Բարձրակիր թեխնիկներ կուրկասը կը ստանայ վերջին ժամանակը բաղմացած պալիտեխնիկոմներէ: Կուրկասին աւելի պէտք են միջին ուսումով տեխնիկներ, իսկ այդ կողմից կառավարչական շրջաններում արդէն պատրաստ է Բաղուշում միջնակարգ լեռնագիտական ուսումնարան հիմնելու նախագիծը և նա, հաւանական է, որ շուտով կը իրագործուի: Իսկ և թէ բարձրագոյն ուսումնարանի տիպարը ընտրելիս համարել թէ նրանցից որը աժան կը նստի, ինչպէս այդ անում են ոմանք, այն ժամանակ իմ կարծիքով նիւթական միջոցների հարցը այդտեղ դեր չունի, որովհետեւ գծուար է ասել, որը աւելի ծախսեր կը պահանջէ՝ համալսարանը, թէ պոլիտեխնիկումը:

Ս. Բ. Գրումինինը գտնում է, որ կուրկասին հարկաւոր է բարձրագոյն կրթութիւն, որպէս ընդհանուր, նոյնպէս և մասնագիտական: Նրանցից որն է աւելի անհրաժեշտ գծուար է ասել, կարելի է միայն ասել համոզմամբ որ 9 միլիոն աղքատ բնակչութիւնը անհնար է զբիւլ, հայրենիքում բարձրագոյն ուսում ստանալու միջոցից: Ինչ վերաբերում է բարձրագոյն ուսումնարանի տիպարին, այսինքն, համալսարանի կամ պոլիտեխնիկումի ընտրութեանը, նա կարծում է, որ տեխնիկական գիտութիւնների այժման դրութիւնում մեծ դանազանութիւն չկայ այդ երկու տիպարների մէջ և կարծում է, որ լիովին հնարաւոր է միացնել այդ երկու տիպարները մի ուսումնարանի մէջ, անուանելով նրան համալսարան տեխնիկական բաժանմունքներով, կամ պոլիտեխնիկական ճեմարան գիտական ֆակուլտետներով:

Ի հարկէ, իսկապէս դա միևնոյնն է: Այդպիսի միութիւն համալսարանի և տեխնիկական ֆակուլտետների հետ ըրտրովին կտրելի բանէ. Եւրոպայում կայ այդպիսի միութեան օրինակ, այն է. Բուդապէշտի պոլիտեխնիկումը, ուր մաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետներին կից կան՝ տեխնիկական, մեքենայագիտական, շինողական, էլէքտրօմեքենայագիտական, հանքագիտական և այլ ստորարաժանմունքներ: Այդպիսի ձուլումն, Ս. Բ. Գրումինինի կարծիքով, վերին աստիճանի նպատակայարմար է, որովհետեւ, տեխնիկական բաժան-

մունքների առաջին դասընթացի լիկցիաները ընդհանուր են և պէտք է լինեն համալսարանի մաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետների լիկցիաների հետ, որ միջոց է ընծայում առաջինը խնայողութիւն անել պրոֆեսորների թուի վերաբերմամբ, միւս կողմից միացնել տեխնիկական բաժանմունքները այնպիսի ֆակուլտետների հետ, ինչպիսին են՝ Իրաւարտականը և էկոնոմիկականը, ինչպէս այդ տեղի ունի Ս. Պետերբուրգի պօլիտեխնիկական ձեռնարանում, էկոնոմիկական և երեք տեխնիկական բաժանմունքներ ունենալը շատ շահաւէտ է, որովհետեւ զանազան գործնական աշխատութիւնների պահանջած հիմնարկութիւնները մասամբ կը կառավարուեն հումանիտար ֆակուլտետների հաշուով: Այդ կերպարանափոխման շնորհիւ իւրաքանչիւր ուսանողի վրայ ունենալիք ծախսը երկրին աժան կը նստի:

Միմիայն տեխնիկական բաժանմունքներ բացանելու կողմնակիցները սովորաբար ցոյց են տալիս երիտասարդութեան առանձին ձգտումը զէպի տեխնիկական և իրաւի այդ բանը նկատելի էր մինչև այժմ և մասամբ հիմա իսկ: Սակայն այդ երևոյթը նրանով է մեկնւում, որ տեխնիկական ուսումնարանների ստիւտութեան պատճառով շատ սակուսութիւ ինժեներներ էին դասընթաց աւարտում և բացակայում էր աշխատանք ձեռք բերելու այն մրցումը, որ բնականաբար պէտք է ստորացնէր արուեստապէս ուղեցրած ինժեներական աշխատանքի վարձատրութիւնը: Վերջին 10 տարւում մէջ Ռուսաստանում տեխնիկական ուսումնարանների թիւը շատանալու հետ ի միասին իրաւի նկատում է երիտասարդութեան մէջ սառնութիւն զէպի տեխնիկական ուսումնարանները:

Ի նկատի առնելով բոլոր վերոյիշեալը, պ. Դրուժինինը նպատակայարմար կը համարէր հիմնել Կովկասում համալսարան ժողովրդական գիտութիւնների՝ մաթեմատիկայի և բնագիտականի ֆակուլտետներով: Միևնոյն ժամանակ այնպէս, որ վերջին ֆակուլտետները, մօտաւորապէս 3-4 դասընթացից սկսած, բաժանուեն՝ գիտական և տեխնիկական բաժանմունքների:

Մ. Ա. Պավլովը, ընդունելով այս կարծիքը, գտնում է, որ մի ուսումնարանի մէջ զանազան բաժանմունքների այդպիսի միացումը կը տայ և մի այլ արդիւնք. միևնոյն է տեխնիկական բաժանմունքներին հարկաւոր են զուտ գիտութեան ներկայացուցիչներ, իսկ վերջիններին աւելի գրաւիչ է համալսարանը, քան թէ պօլիտեխնիկումը: Տեխնիկական բաժանմունքները կարելի կլինէր պահել տեղական արդիւնաբերութեան տէրէ-

քի հաշուով, իսկ համալսարանական կուրսերը արքունի հաշ-
ւով:

Ա. Ա. Պոսնիկովը կարծում է, որ բարձրագոյն ուսումնա-
րանին անհնար է տալ ծառայակցական կերպարանք և թեո-
րետիկական ինդիւրները չպէտք է ստորադրուեն գործնակա-
նութեան: Բարձրագոյն դպրոցը պէտք է պահպանէ գիտա-կը-
թական ուսումնարանի բնաւորութիւն: Յանկալի է միայն, որ
նա չմնայ առաջուան նեղ շրջանակի մէջ: Համալսարանը,
ի նկատի առնելով ժամանակի պահանջը, մեկուսացրել է
բժշկական ֆակուլտետը, որ իւր գործնական նպատակներով
աւելի նման է տեխնիկական ուսումնարանի, քան թէ համալ-
սարանի միւս ֆակուլտետներին: Նոյնպէս էլ իրաւագիտա-
կան ֆակուլտետը կորցրեց իւր գուտ գիտական նշանակու-
թիւնը, ընդունելով իւր կազմի մէջ էկզոսմիկական և պետա-
կան գիտութիւնները: Այդ պատճառով պ. Պոսնիկովը կար-
ծում է, որ պէտք է բարձրագոյն ուսումնարանի մէջ միացնել
համալսարանական դասընթացները տեխնիկական բաժանմուն-
քների հետ:

Խ. Ա. Վերմիշևը, թէպէտ և կովկասի համար համալսա-
րանը անհրաժեշտ է համարում, սակայն գործնականապէս
աւելի իրադրոճելի է ճանաչում պոլիտեխնիկում՝ հիմնելու
ձրագիրը: Նրանից և պէտք է սկսել: Իսկ պոլիտեխնիկումի
մէջ պէտք է առաջին տեղը տալ իրաւաբանական և էկոնո-
միական բաժանմունքներին, ի նկատի ունենալով, որ այժմ
հասարակութեան մէջ լայնարձակ կերպով զարթնել է հետա-
քրքրութիւն դէպի պետականացման հարցերը: Թիֆլիզում իրա-
ւաբանական ֆակուլտետ լանալը կը գրաւէ մեծ գիտական ու-
ժեր, որ համալսարանի մէջ գործելուց զատ, անշուշտ, կը տան
իրանց ազատ ժամերը լայնարձակ կերպով ընդարձակելու ազ-
գաւանակութեան մէջ պետականութեան վերաբերեալ գիտութիւն-
ները, կազմակերպելով հանրամատչելի դասախօսութիւններ և
այդ ճանապարհով միջոց տալ հասարակական կեանքին
ժամանակցելու, ինչպէս մենք այդ տեսնում ենք ըստը համալ-
սարանական քաղաքներում: Գիտականապէս պատրաստուած
այդպիսի ուժերի ազդեցութիւնը, անշուշտ, առաւել ևս բարե-
պտուղ կը ներկայանայ այնպիսի ժամանակ, ինչպէս է այժմ
մերը, երբ ժողովրդական միտքը անդրդում թափով, որոնելով
լաւագոյն ձևեր հասարակական և պետական կեանքի համար,
առանց զանազանելու՝ ազահութիւնով յարձակւում է շուկայի
գրականութեան հրամցրած ամեն ինչի վրայ: Գիտական իմաս-
տը բոլորից արագ միջոց կը գտնի այդ գիտութեան ծարաւը

ուղղել գէպի աւելի մտաւարթուն ճանապարհով զնահատելու իրականութիւնը: Այդպիսի արգիւնաւէտ ազդեցութեան ազդիւր կարող է լինել իրաւարանական կամ աւելի ճիշտ պետադիտական ֆակուլտետը, ունենալով այն գիտական ուժերը, որ նա կը հաւաքէ իր շուրջը:

Ա. Ս. Պոսնիկովը, գերադասելով հանրակրթական դասընթացը, առաջարկում է սկսել իրաւարանական բաժանմունքից, սակայն, ոչ այն բովանդակութիւնով, որ նա ունի ռուսական համալսարաններում: Կարևոր է լրացնել նրան էկոնոմիկական և պետական գիտութիւններով, այնպէս, ինչպէս Ստրադուրգով իրաւագիտական աւարկաներին զուգընթաց կարդացւում է պետականագիտութիւն, Լայքցիխում միտցրած են իրաւագիտական և էկոնոմիկական բաժանմունքները: Պետերբուրգի պօլիտեխնիկական ճամարանում ենթադրուած էր էկոնոմիկական բաժանմունքի մէջ մտցնել հիւպատոսական բաժին, սակայն որովհետև արտաքին գործոց նախարարութիւնը ունի արդէն այդ մասի ժամագիտական դասընթացներ, ուստի չէր թոյլ տուած պօլիտեխնիկումի ծրագիրը ընդլայնացնել այդ ուղղութիւնով:

Ֆ. Յ. Լեննսոն-Լեսսինգ հակառակ աւելի առաջ յայտնած կարծիքներին, հարկաւոր է համարում ապագայ Կովկասեան համալսարանում ունենալ հանքագործական բաժանմունք և լեռնագիտական բաժանմունքի հետ միացրած էլէկտրօ-քիմիագիտական և ոչ թէ էլէկտրօ-մեքայանագիտական բաժանմունք: Այնուհետև ցանկալի է նոյնպէս գիւղատնտեսագիտականը:

Խ. Ա. Վերսիշևը հարկաւոր է ճանաչում բացի իրաւագիտական էկոնոմիկական բաժանմունքը, առաջին իսկ նուազում հիմնել գիւղատնտեսական բաժանմունք, որի համար կան արդէն միջոցներ՝ Թիֆլիս քաղաքը յատկացնում է 200 դեսեատին հող, գանձարանը մեծ գումար է տալիս Թիֆլիսի շերամագիտութեան ուսումնարանին, որը, ինչպէս և միւս գոյութիւն ունեցող գիւղատնտեսական կայարաններ և փորձնական դաշտագետինները (Սաքարինը և ուրիշները) կը մտնեն ապագայ Կովկասեան պօլիտեխնիկումի կազմի մէջ, որպէս նրա գործնական հիմնարկութիւններ:

Իշխան Գ. Մ. Թսւմանովը ներկայ եղող Կովկասցիներէ կողմից շնորհակալութիւն է յայտնում խորհրդակցութեան նախագահ Ա. Ս. Պոսնիկովին և խորհրդակցութեանը մասնակցող բոլոր պրօֆեսորներին և խնդրում է մի անգամ էլ ժողովուրդ: Առաջին խորհրդակցութեան մէջ մեծածախնութիւնը կողմնա-

կից է բարձրագոյն ուսումնարանի խառն տիպարին՝ համալսարանին տեխնիկական բաժանմունքներով: Սակայն ցանկալի է, բացի բարձրագոյն ուսումնարանի ընդհանուր տիպարը, որոշելը լսել նոյնպէս տեղեակ անձանց կարծիքը, ո՞ր ֆակուլտետներէջ հարկաւոր է սկսել բարձրագոյն դպրոց հիմնելիս և մօտաւորապէս որքան կարժեհայ նրա պահպանութիւնը:

Այդ հարցը լուծելը շատ կարեւոր է, որովհետեւ գործը նախաձեռնողներին նիւթական միջոցները սուղ են, այն ինչ ամբողջ երկիրը սպասում է շուտափոյթ բաց անել այդպիսի ուսումնարան:

Ներկայ եղողները ընդունեցին այդ առաջարկը և որոշեցին մօտ ժամանակ նորէն ժողովուել, սակայն արդէն ոչ թէ Լեւոնոյում, այլ Պետերբուրգում, որ հեշտանայ խորհրդակցութեանը մասնակցելու Պետերբուրգի մնացեալ բարձրագոյն ուսումնարանների ներկայացուցիչներին:

Օրագրութիւն հոկտեմբերի 7-ի 1906 թ.

Խորհրդակցութիւնը տեղի ունէր ճանապարհների հաղորդակցութեան ձեւաբանի գրադարանում: Ներկայ էին 22 մարդ. այն է՝ ճեմարանի ղերեկտօր Ա. Ա. Բրանդտը, Պետերբուրգի իդական բժշկական ճեմարանի ղերեկտօր Ս. Ս. Սալազկին, հանքագործական բաժանմունքի գեկան Յ. Ս. Գամբարով, Պետերբուրգի տեխնոլոգիան ճեմարանի դասատու Մ. Գ. Եւանգուլովը, ցեղագրագէտ պ. Պատկանովը, Բաթումի քաղաքագլուխ իշխ. Ի. Զ. Անգրոնիկովը, առևտրականութեան և արդիւնաբերութեան պաշտօնեայ պ. Գալիցկիյ, Լկօնօմիկական հարցերի մասին գրող Վ. Ֆ. Թոթոմեանցը, բժշկապետ Լորիս-Մելիկովը, ինժեներ Ալիբէկովը և սեպտեմբերի 21-ի խորհրդակցութեան մէջ մասնակցողների մեծամասնութիւնը:

Ներկայ եղողների խնդրանօք նախագահում էր՝ Ա. Ս. Պօսնիկովը:

Պրոֆեսօր Ա. Ա. Բրանդտը, յայտնեց որ նոմանը ամասնօրէն հարցը չէ իմաստասիրելի թւում է, թէ Կովկազին ամենից. աւելի հարկաւոր է լեզուագիտական ֆակուլտետ ցեղագրական բաժանմունքով: Ինչպէս յայտնի է Կովկազում. բազմաթիւ ազգութիւններ և պատմական հնութիւններ կան: Նրանց ոչ ոք բաւականաչափ չի իմաստասիրել, այն ինչ նրանք արդէն անհետաւում են: Այնուհետեւ, պրօֆ. Բրանդտի կարծիքով, երկիրը կարօտ է տեղական բնութեան և կեանքի հետ ծանօթ բժշկների, ֆունուար, 1907.

ուստի հարկաւոր է բժշկական ֆակուլտետ: Ասում են, թէ այդ ֆակուլտետը թանկ է, սակայն ի նկատի պէտք է ունենալ, որ մասնագիտական տեխնիկական ուսումնարաններն էլ թանկ են նստում, թանկ արժէ և ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը: Անհրաժեշտ են ի հարկէ և տեխնիկական բաժանմունքներ: Ամենից լաւն է, իբրեւ օրինակ, վեր առնել Պետերբուրգի տեխնոլոգիական ճեմարանի մեքենայադիտական բաժանմունքը, որը լաւ գործնական տեխնիկներ է ընծայում: Ինչ վերաբերում է իրաւագիտական—էկոնոմիկական ֆակուլտետին հակը դուրս թողնի միայն չինովնիկներ և ոչ թէ կեանքին հարկաւոր մարդիկ:

Պրոֆ. Ն. Ի. Կարէեւը նոյնպէս այն կարծիքին է, թէ ապագայ Կովկասեան բարձրագոյն ուսումնարանի համար ամենից աւելի ցանկալի է պատմական-լիզուագիտական ֆակուլտետ: Երկիրը կարող է գիտութեանը մատակարարել իմաստասիրելու համար հարուստ նիւթ: Միևնոյն ժամանակ այդ ֆակուլտետի ծախքերը այնքան մեծ չեն լինիլ, որքան միւս բաժանմունքներինը: Յանկալի է միտցն, որ յիշեալ ֆակուլտետը միւս այդպիսի ֆակուլտետների ընդօրինակութիւնը չլինի, այլ յարմարում լինի երկրի պահանջներին: Պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել՝ հնախօսութեան և տեղական լեզուների իմաստասիրութեան վրայ:

Պրոֆ. Վ. Ֆ. Գերիւմինսկին հակամիտ է պրոֆ. Բրանյատի կարծիքին, հա գտնում է, որ Կովկասին պիտանի է իրաւաբանական ֆակուլտետը: Եթէ վերջինս և մատակարարէ իսկապէս պաշտօնեաներ, անշուշտ լուսաւորումներ, իսկ այդ փոքրը ծառայութիւն չէ Կովկասեան ապագայ համալսարանի կողմից: Այժմ ուղղարեակութիւնը շատ է տանջւում նրանից, որ նրան կառավարում է ազէտ պաշտօնէութիւն: Սակայն Կովկասին պէտք չեն այնպիսի իրաւաբանական ֆակուլտետներ, ինչպիսին գոյութիւն ունի մեր համալսարաններում: Պէտք է ֆակուլտետ քաղաքագիտական և էկոնոմիկական գիտութիւնների, ուր, ինչպէս Լոնդոնի էկոնոմ. և քաղաքագիտ. գիտութիւնների ուսումնարանում, իմաստասիրէին այնպիսի առարկաներ, ինչպէս օր. կուլտուրայի պատմութիւնը, սօցիալական առողջապահութիւնը, սահմանադրական իրաւագիտութիւնը և այլն: Առհասարակ, անհրաժեշտ է ընդլայնացնել այժմեան իրաւաբանական ֆակուլտետի շրջանակը: Ապացոյց, թէ հա հնացել է, կարող է լինել այն, որ առեւտրաւ փրիսոփաներ էկոնոմիստներ և սօցիոլոգներ ինչպէս օր. Ջոն-Ստուարտ Միլը, Հերքերտ Սպենսեր և այլք, համալսարանից չեն դուրս գալիս: Այ-

հուհեատե, պրօֆ. Դերիւթինսկու կարծիքով, Կովկազին հարկաւոր են ֆիզիկօ-մաթեմատիկական, նոյնպէս և բժշկական ֆուկուլտետներ:

Գ. Խ. Ձաւրիւնը համակարծիք յայտնելով իրան պրօֆ. Դերիւթինսկու կարծիքին, թէ որպէս հիմք իրաւագիտական և առհասարակ հումանիտարական բաժանմունքներ, պէտք է դրուեն մարդկային հասարակութեան վերաբերեալ գիտութիւնները և նրանց հիմքի վրայ կանգնեցնել, որպէս իրաւաբանական, նոյնպէս և էկօնօմիկական ստորաբաժանմունքները պ. Ձաւրիւնը կարծում է համալսարանի միւս բաժանմունքին հիմք պէտք է դրուի ֆիզիկօ-մաթեմատիկական ֆակուլտետը և մինչև անգամ ֆիզիկօ-քիմիական բաժանմունքը: Այդ մտքի վրայ յենուած պէտք է շինուեն մնացեալ տեխնիկական և բնական գիտութիւնների բաժանմունքները՝ ինչպէս գումարտական կարգի, նոյնպէս բժշկական և գիւղատնտեսականը մի կողմից, իսկ միւս կողմից՝ մեքենայագիտական, լեռնագիտական և այլ, այսպէս անուանուող, տեխնիկականները: Այդպիսի կազմակերպութիւնից կը առաջանայ գիտական և տեխնիկական մասերի մի ներգաշնակ ամբողջութիւն, որովհետև տեխնիկական գիտութիւնները ճնշող ազդեցութիւն չեն ունենալ թէօրիտիկական գիտութիւնների զարգացման վրայ, այլ ընդհակառակը տեխնիկական գիտութիւնները, որ ներկայացնում են, որպէս թէօրիտիկական գիտութիւնների մասնաւոր զործադրութիւնը որեւէ որոշ հարցի վերաբերմամբ, կը օգտուեն միայն այդպիսի կապակցութիւնից: Չպէտք է մոռանալ, որ համալսարանը ներկայանում է՝ ոչ միայն ուսումնարան այլև ուսումնական հիմնարկութիւն: Եթէ տեխնիկական տիպար ունեցող ուսումնարանի մէջ հնարաւոր է թէօրիտիկական գիտութիւնների գասաւանդութիւնը կատարել ոչ աւելի վատ քան համալսարանում, նոյնը չէ կարելի տեսլ գործի գիտնական կողմի մասին: Արդէն այն բոլորից, երբ այլևս կարելի չլինի սահմանամանափակուել միայն հիմունքներով, այլ հարկաւոր լինի առաջնորդել ուսանողներին դէպի ինքնուրոյն գիտական իմաստասիրութիւններ, համալսարանական կազմակերպութեան և տեխնիկական ուսումնարանի մէջ գործածուող ուղղութիւնների վանազանութիւնը կը արտայայտուի ուժեղապէս: Նոյնը աւելի բարձր աստիճանով կանգնում է պրօֆեսսորի, որպէս իմաստասիրողի առաջը: Նա որպէս տեխնիկական ուսումնարանի ներկայացուցիչ, սահմանափակուած է թեմաներ ընտրելու մէջ:

Պրօֆ. Ս. Ս. Սալաջնիկովը ընդդիմախօսում է, որ կարելի

չկայ միացնել տեխնիկական բաժանմունքները համալսարանի հետ և թէ մասնաւորապէս կարելի չէ բժշկական ֆակուլտետը կանոնաւորապէս կազմակերպել. եթէ նա անկախ չէ ղըրուած, բացի այդ նա կարծում է, որ դեռ այժմս բժշկական ֆակուլտետը շատ թանկ կարծենայ կովկազին: Պետերբուրգի կանանց բժշկական ճեմարանը, չնայելով իւր համեստ կազմակերպութեանը տարեկան արժէ ոչ պակաս 300 հազար ռուբլուց, որից 160 հազարը ստացւում է ուսման վարձից, իսկ 140 հազարը օժանդակութիւն է նախարարութեան կողմից: Այդպիսի միջոցներ կովկազեան բարձրագոյն ուսումնարանը սկզբում, հաւանական է, որ չի ունենայ և այդ պատճառով լաւ կը լինի դեռ այժմս բաւականաւ ֆիզիկո-մատեմատիկական ֆակուլտետով: Սակայն պրոֆ. Սալագկինը ընդդէմ է, որ համալսարանական դասընթացքը խառն լինի պօլիտեխնիկականի հետ: Այդ դասընթացքները վանազան նպատակների են հետեւում և չեն կարող մի ամբողջութիւն կազմել: Թեօրետիկական աւարկաների դասաւանդութիւնը տեխնիկական ուսումնարաններում. չէ կարող կանգնել իսկական գիտական բարձրութեան վերայ:

Ի. Ֆ. Զաւրիւն, համաձայնելով այդ կարծիքի հետ, ցոյց է տալիս միայն, որ ենթադրուած բարձրագոյն խառն ուսումնարանի մէջ նպատակ չկայ թեօրետիկական գիտութիւնները ստորադրել տեխնիկային, որպէս զուտ տեխնիկական ուսումնարանում: Մենք կ'ունենանք իսկական ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետ, որի մէջ թեօրետիկական գիտութիւնները դրուած կը լինեն բոլորովին անկախ: Սակայն եթէ նրա հետ կից դրուած լինեն և տեխնիկական բաժանմունքներ, թեօրետիկական գիտութիւնները միայն շահ կ'ունենան, որովհետեւ բացի այն խնդիրները, որ բղխում են գիտութեան բնականաբար զարգանալուց, տեխնիկան կը ներկայացնէ թեօրետիկական գիտութիւններին իր խնդիրները: Այդ խնդիրները երբեմն բոլորովին կապուած չեն լինում գիտութեան ընթացիկ ուղղութեանը, որ յաճախ հնամուլ է լինում:

Պրոֆ. Ս. Ի. Կրուժինինը կարծում է նոյնպէս, որ կենսաբանները արդէն առաջ է մղել բարձրագոյն ուսումնարանի խառն տիպարի հարցը: Զիտսելով մինչև անգամ Բուդապէշտի համալսարանի մասին, բաւական է յիշել Հետտինգենի համալսարանը, ուր մաթեմատիկայի թեօրետիկական իմաստասիրութիւնը միացրած է դործնական տեխնիկական նպատակներին հետ: Ապագայ կովկազեան համալսարանի մէջ ցանկալի է բանալ ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետ և միաժամանակ բնագիտական բաժանմունքին կից կարելի է ունենալ հանրագիտական

ստորաբաժին, իսկ մաթեմատիկականին կից՝ էլեքտրօմեք-
նայագիտական ստորաբաժին:

Ա. Գ. Գուլիշանբարովը ընդլայնացնում է անցեալ խորհր-
դակցութեան մէջ յայտնած միտքը և գտնում է, որ այժմ
գիտութիւնը տեխնիկներ են առաջ մղում և թէ այդ պատճա-
ռով Կովկասում հարկաւոր է ունենալ պօլիտեխնիկում նաֆթի
տեխնօլոգիայի ամբիօնով:

Պրօֆ. Մ. Ա. Շատելէնը կարծում է նոյնպէս, որ բացի
քաղաքագիտական-էկօնօմիկական բաժանմունքից, պէտք է ուղ-
ղակի տեխնօլոգիկան ֆակուլտետ, առանց ֆիզիկո-մաթեմատի-
կականի, և միաժամանակ տեխնօլոգիկան ֆակուլտետին կից
կարելի է բանալ՝ լեռնագիտական, մեքենայագիտական, գիւ-
ղատնտեսական և հանքագործական բաժանմունքներ էլեկարօ-
քիմիականի հետ:

Ա. Ի Վանչիյտ և Մ. Գ. Ալիբեկովը ամենից առաջ ի նկատի
առնելով Կովկասեան արդիւնաբերութեան կարիքները ընդու-
նում են լրիւ պրօֆ. Շատելէնի կարծիքը:

Կ. Ֆ. Տիգրանովը կարծում է ընդհակառակը, որ ամենից
առաջ հարկաւոր են կալիպագէտներ, որոնց կարող է տալ
միայն համալսարանը առանց տեխնիկական բաժանմունքների:

Բժշկապետ Ի. Զ. Լորիս-Մելիկովը, ի նկատի ունենալով մի
կողմից երկրի կարիքները, իսկ միւս կողմից այն միջոցները,
որ ունին գործի ղեկավարները, կարծում է, որ հիմա իսկ կա-
րելի է հիմնել էկօնօմիկական և տեխնիկական բաժանմունք-
ներից մի փոքրածախս ունեցողը:

Վ. Ջ. Թումանյանը երկրի համար շատ հարկաւոր է համա-
րում գիւղատնտեսական բաժանմունքը և նրա հետ սերտ կա-
պակից է համարում էկօնօմիկականը, մատնացոյց է լինում
նորերումս հիմնած Բրիւսսելի 2-դ համալսարանի վերայ, ուր
առաջ բաց էր արած էկօնօմիկական-սօցիալականը, իսկ յետոյ
տեխնիկական բաժանմունքը: Էկօնօմիկական բաժանմունքը չը-
պէտք է լինի իրաւաբանականի միայն հատուածը, եթէ ոչ նա
աւելի միայն պաշտօնեաներ կը տայ:

Իշխ. Գ. Մ. Թումանով: Չը պէտք է հետեւի՝ ոչ նեղ գիտա-
կան և ոչ նեղ գործնական նպատակների: Բացառապէս գիտ-
նական ֆակուլտետներ-պահպանելը, ներկայ միջոցները վեր
առած, մեր ուժերից բարձր է: Այդ ֆակուլտետները շատ
փոքրաթիւ ուսանողներ են գրաւում և ուսման վարձի աննշան
քանակութիւնից ստիպուած հարկաւոր կը լինի գիմել գանձա-
րանի օժտնակութեանը: Ինչ վերաբերում է նեղ մասնագիտա-
կան բաժանմունքներին: Ինչպէս են, օրինակ, լեռնագիտակա-

նը և գիւղատնտեսականը, գործնական անձանց կարծիքով հարկաւոր են ամենից առաջ, միջնակարգ լեռնագիտական և գիւղատնտեսական ուսումնարաններ: Գերադասելի է կանգնել խառը բարձրագոյն ուսումնարանի տիպարի վերայ և բաց անել սոցիալ-քաղաքագիտական ֆակուլտետ իրաւաբանական և էկոնոմիկական բաժանմունքներով և ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետ էլէկտրո-մեքենայագիտական և էլէկտրո-քիմիական բաժանմունքներով: Այդ ֆակուլտետները կը գրաւեն բազմաթիւ ունկնդիրներ և իրանք իրանց ծախսերը կը լրացնեն՝ այն օժանդակութիւնների հետ ի միասին, որ խոստացել են քաղաքները և նաւթթարղիւնարեւրական ժողովը: Այդ ձեով բարձրագոյն ուսումնարան կարելի է բաց անել հիմա իսկ:

Պրոֆ. Յ. Ս. Գամբարովը հարկաւոր է համարում բաց անել ժողովրդագիտական ուսմունքների բաժանմունք իրաւագիտական և էկոնոմիկական ստորաբաժանմունքներով: Պրոֆեսոր Մ. Մ. Կովալեսկու յանձնարարութիւնով, որը պատահաբար չկարողացաւ մասնակցել այս խորհրդակցութեանը, պրոֆ. Գամբարովը առաջարկում է այդ բաժանմունքի մէջ հիմնել մահմեդական իրաւաբանութեան և համեմատական իրաւագիտութեան պատմութիւնն: Անհրաժեշտ է նոյնպէս ֆիզիկո-մաթեմատիկական բաժանմունքը:

Պրոֆ. Ա. Ս. Պոսնիկովը, պաշտպանելով այդ կարծիքը, առաջարկում է ընդունել իբրեւ հիմունք Կովկասեան ապագայ բարձր ուսումնարանի, բաւականութիւն տալ կեանքի պահանջներին: Աժմեան ուսումնարանները և ոչ միայն իրաւաբանական ֆակուլտետը միայն պաշտօնեաներ են տալիս: Իւրաքանչիւր ուսումնարան ձգտում է գայթակղել ուսանող երիտասարդութիւնը աստիճաններով, դուրս թողնելով ամեն մէկին որոշ աստիճանով: Նոր գպրոցը պէտք է աւելի մօտ կանգնի կեանքին և ստեղծէ գիտական և տեխնիկական ուսումնարանի խառը տիպար: Այդ իսկ ուշադրութեան առնելով, հանդիսականները այլ ևս չեն կարող մտնել աւելի մանրամասնութիւնների մէջ և որոշել, թէ բացի հանրակրթական բաժանմունքները, այլ ևս զրպիտի բաժանմունքներ են պէտք: Տեղական կեանքը ինքը պէտք է ցայց տայ, թէ արդեօք ինչպիսի տեխնիկական բաժանմունքներ հարկաւոր է բանալ ապագայ Կովկասեան համալսարանում:

Պրոֆ. Ֆ. Ի. Լեւնսոն-Լիսովնոյ կարծում է, որ խառն տեսակի բարձրագոյն ուսումնարանը չի կորցնի գիտական նշանակութիւն: Առանց համալսարանական դասընթացի մնալը անհնար է, նա բազմաթիւ լուսաւորուած մարդիկ է պատրաստում: Գի-

տուժեան և տեխնիկայի փոխադարձ ազդեցութիւնը կարեոր է: Գիտութիւնը ուժ է քաղուժ տեխնիկայից և փոխադարձը տեխնիկան օգտուում է գիտութիւնից: Կեանքը ինքն է առաջ մղում այդ հաւկայցողութիւնը: Քննադատելով Վարչաւայի հումայաւարանի և պօլիտեխնիկումի վիճակը, իշխանութիւնը այժմս ինքն էլ աչքի առաջ ունի այն կարծիքը, թէ ցանկալի է միացնել այդ երկու բարձրագոյն ուսումնարանները:

Իշխ. Ի. Չ. Անդրոնիկով: Նայելով հարցին մասնաւորապէս վրայ ազնուականութեան շահերի կողմից, չէ կարելի չցանկալի, որ հիմնուի գիւղատնտեսական բաժանմունք: Սակայն ի նկատի առնելով ներկայ բոլքի շահերը ընդհանրապէս, ցանկալի է ամենից առաջ ունենալ բազմակողմանի զարգացած հասարակական գործունեաներ, նրանց պատրաստում է էկոնոմիկական բաժանմունքը և այնուհետև ընագիտականը:

Իշխ. Գ. Մ. Թումանովը, ներկայ եզոյ կովկասցիներին կողմից շնորհակալութիւն յայտնելով պրօֆեսորներին, որ նրանք լսելով իրանց կոչը օգնութեան հասան, ցանկութիւն յայտնեց, որ ժայրաքաղաքի պրօֆեսորները յառաջիկայում էլ նոյնքան ուշադիր մնան գէպի հետո սահմանազրուիս երկրի մոտաւոր կարիքները. նա զուրկ է գիտութեան լոյսից և ցանկալի է, որ ձմռանս մէջ, նրանք համաձայն իրանց մասնագիտութեան բաժանուելով առանձնախմբերի, մի ամբամ ևս ժողովուեն այդ նշանաւոր հարցը մանրամասնօրէն մշակելու համար, որ կարելի լինի ամենամօտ ապագայսւս իրագործել կովկասի արդարացի պահանջը:

Այդ խօսքերը ընդունեցին միասիրտ ծափահարութիւններով և առաջարկը ընդունուեցաւ միաձայն: Ծափահարութիւնները ուղղած էին ուստական գիտութեան այն ներկայացուցիչներին, որոնք իրանց սրտին մօտ ընդունեցին օտար ծայրաերկրի կարիքները և իրանց մասնակցութիւնով յարգեցին յիշեալ խորհրդակցութիւնները:

Վերեւ առաջ բերած բոլոր կարծիքները. իշխ. Գ. Մ. Թումանովը զեկուցեց նոյեմբերի 18-ին Թիֆլիսում մեռաց Տեխնիկական Կայսերական Ընկերութեան կովկասեան բաժանմունքին. անդամները լիովին համամիտ յայտնեցին իրանց զեկուցանողի այն կարծիքին, թէ ի նկատի առնելով այնպիսի ընդարձակ և հարուստ երկրի բազմակողմանի կարիքները, ինչպիսինն է կովկասինը, տեղական աղագրնակութեանը կարող չէ բաւականութիւն տալ մի պօլիտեխնիկում կամ մի համալսարան, թէ հարկաւոր է բարձրագոյն ուսումնարան աւելի ընդարձակ ծրագրով, այն է՝ համալսարան տեխնիկական բա-

ժամանակներով: Տեխնիկական ընկ. Կովկասեան բաժանմունքը ղեկուցանողի հետ ի միասին կարծում է, որ միջոցների սըղութեան պատճառով, կարելի էր տուաջիկայ ուսումնական տարեշրջանում բաց անել դեռ այժմս համալսարան իրաւարանական և էկոնոմիական ֆակուլտետներով, իսկ հետեւեալ նուագում, նոր օժանդակութիւններ ստանալուց յետոյ, ֆիզիկո-մատեմատիկան ֆակուլտետ երկու տեխնիկական բաժանմունքներով:

Ներկայ եղողները այդպիսի եզրափակութեան հասան, ընդունելով ղեկուցանողի հետեւեալ քննադատութիւնները:

Ձեկուցանողի կարծիքով ապագայ Կովկասեան համալսարանում կամ պոլիտեխնիկումում կը նկատուի նոյնպիսի հոսանք ուսանող երիտասարդութեան, որպիսին նկատուում է ըստ լոր միւս բարձրագոյն ուսումնարաններում:

Ինչպէս երևում է Թիֆլիզում պոլիտեխնիկական ուսումնարան հիմնելու գլխաւոր կոմիտեաի կողմի նոր կոչից, Կովկասի կլասիկական գիմնազիօնները արձակում են տարեկան 700 ուսումնարարներ: Եթէ ինկատի առնենք, որ Կովկազում միջնակարգ ուսումնարանների թիւը համարեա իւրաքանչիւր տարի աւելանում է և թէ այժմումս ընդունում են բարձրագոյն ուսումնարանները ոչ միայն գիմնազիստներին, այլև բէալիստներին, սեմինարիստներին, կադետներին կորպուսներին աշակերտներին և մինչև անգամ կանանց, այն ժամանակ մեծ լատեհսութիւն չի լինիլ, վերոյիշեալ թիւը հասցնել մինչև 1000-ի: Այնուհետև պէտք է ինկատի առնել, որ միջնակարգ ուսումնարանների շրջանաւարտներից գնում են իրաւարանական ֆակուլտետը մօտաւորապէս նրանց քառորդ մասը, ներկայ գէպրում, ուրեմն 250 մարդ: Կարելի է ենթադրել, որ այդ թուից աւելս կը մնայ կէսը՝ 125, իսկ միւս կէսը կը հեռանան Կովկազից դուրս քաղաքներ և նրանց տեղը ոչ որ ուրիշ քաղաքներից չի ուզենալ մտնել կովկազեան բարձրագոյն ուսումնարանը: Այսպէս ուրեմն կովկազեան պոլիտեխնիկումը կամ համալսարանը, եթէ նա ունենայ իրաւարանա-էկոնոմիկական բաժանմունք կը մտնեն այնուամենայնիւ ոչ պակաս, քան թէ ամեն տարի 125 մարդ կամ 4 տարուան ընթացքում 500 ուսանող: Եթէ ըստ 500 ուսանող իրանք կամ բարեգործական ընկերութիւնների օգնութիւնով վճարեն ուսման վարձ 100-ակ ան ր. կը ստացուի 50 հազար ր. իսկ այդ գումարը նոյն չափի օժանդակութեան հետ որ խոստացել են և նախարարիւնաքերողների ժողովը, մասնագէտների կարծիքով լիովին բաւական է, որ պահուեն հասարակական և քաղաքագիտական գի-

տուժիւնների ֆակուլտետ երկու ստորաբաժաններէնէրով՝ (3 դասընթացից սկսած) իրաւաբանական և էկոնոմիկական:

Ինչ վերաբերում է ասպագայ կովկասեան բարձր ուսումնարանի շինութեանը, նրա մասին, իհարկէ, պէտք է շարունակ մտածել: Սակայն ուժ յայտնի է, թէ ինչպէս են բացուել այդպիսի ուսումնարանները ուրիշ տեղերում, նա կը հաշտուի առաջին նուազում և վարձած կացարանի հետ: Անցեալ տարի բացուեցաւ Պետերբուրգում կանանց բարձրագոյն պօլիտեխնիկական կուրսեր և չնայելով, որ հարկաւոր էր կազմակերպել ֆիզիկական կարիքներ, լաբորատորիա, նկարչարան և այլն, գործին նախաձեռնողները չգիտարացան կազմակերպել այդ բոլորը վարձած բնակարանի մէջ: Իսկ իրաւաբանա-էկոնոմիկական բաժաններէն համար, որ ենթադրուում է բաց անել առաջին նուազում, բաւական է 2—3 մեծ սենեակ: Առաջին դասընթացում սովորարար աւանդում են 5—6 առարկայից ոչ աւելի, միևնոյն ժամանակ բոլոր առարկաները չեն դասախօսւում շարաքննույ մէջ ամեն օր: Ուրեմն առաջին դասընթացի համար բաւական է և մի դահլիճ, լինի դա Կ. Ե. Ձուբալովի ժողովրդական տան մէջ, թէ մի այլ տեղ, վարձուած տան մէջ միևնոյն է:

Հիմնել համալսարան կամ պօլիտեխնիկում նրանց ամբողջ ծաւալով, իհարկէ, հեշտ գործ չէ: Սակայն գործը ձեռք առնել ղեկուցանողի կարծիքով կարելի է 1907 թ. սեպտեմբերին և բաց անել զոնեա մի ֆակուլտետ, իսկ երկու տարի յետոյ և միւսը: Դրա համար գործը նախաձեռնողներին բաւական է ցոյց տալ այն եռանդի կէսը, որ ունէին, օր. Պետերբուրգում կանանց բժշկական ճեմարան կամ Տոմսկում համալսարան հիմնողները:

Կ. Ջալալյան

ԴՈՐԾՈՒՆԵԱՅ ԿԵԱՆՔԸ:

(Խուզվելիք *)

Խօսելով ձեզ, արեմտեան ամենամեծ քաղաքի ժարդկանց և այն նահանգի մարդկանց, որ տուեց մեր երկրին Լինքոնը և Գրանտը, մարդիկ՝ որոնք զերազանցարար և որոշ կերպով պարունակում էին, ինչ որ Ամերիկական է Ամերիկացոյ բնաւորութեան մէջ, ես ուզում եմ քարոզել ձեզ ոչ թէ անարգ հեշտասիրութեան մի վարդապետութիւն, այլ գործունեայ կեանքի վարդապետութիւնը, ճշնութեան ու աշխատութեան կեանքը, ջանքի ու փութի կեանքը, քարոզել յաջողութեան այն ամենարարձր տեսակը, որը տրւում է ոչ այն ժարդուն, որը ցանկանում է միայն հեշտ, խաղաղ կեանք, այլ այն մարդուն, որը չի քաշւում կամ փախչում վտանդից, դժուարութիւնից, դառն աշխատութիւնից և որը դրանց միջոցով է, որ ձեռք է բերում վերջին փառաւոր յաղթանակը:

Ծոյլ-խաղաղալ կեանքը, այն հեշտ կեանքը, որը յատաջ է պալիս միայն մեծ-բարձր ձգտման վսեմ ցանկութեան և ուժի պակասութիւնից, այնքան անարժան է մի ազգի, որքան մի անհատի: Ես խնդրում եմ միայն, ինչ որ ամեն մի ինքնայարգ Ամերիկացի պահանջում է իրանից և իւր զաւակներին, նոյնը պիտի պահանջուի ընհանուր Ամերիկացի Ազգից: Ձեզանից ռըը սովորեցնում է իւր զաւակին, թէ հեշտասիրութիւնը, խաղաղութիւնը նրա ամենաառաջին խնդիրը, նրա ձգտման նպատակակէտը պիտի լինի: Դ՛ուք, Ձերակողմիք՝ այս քաղաքը

*) Նոյն վերնագիրը կրող գրքից հանած այս կտորը բնորոշում է աշխարհիս ամենամեծ հանրապետութեան անուանի նախագահի հայեացքները, որոնք տրպիկ են իմպերիալիզմի հովերով բռնուած բուրժուական զեմօկրատիայի ուղին ևս հասկանալու տեսակէտից: Ինչպիսի՞ պերճախօսութիւն իմպերիալիզմի գաղափարը ժողովրդականացնելու համար նոյն Ռեզվէլթի կողմից որ այնքան յառն և զգոյշ պատասխան տուաւ... «հայկական դատի» առիթով: Եւ զեւ զտնւում են մեղանում «արտաքին միջամտութիւն» առասպելներով թշուառ ժողովրդին մոլորեցնողները... Ծ. Խ.

մեծ էք չինամ, դուք, իլինոյիսի մարդիկ, ձեր մասը, ձեր պարտականութիւնը կատարած էք Ամերիկան մեծացնելու համար, որովհետեւ դուք ոչ քարոզում էք և ոչ փորձում այդպիսի մի վարդապետութիւն ունենալ: Դուք ինքներդ գործում էք և ձեր զաւակներին գործել տալիս: Եթէ դուք հարուստ էք և ձեր ազգին արժանի, ձեր զաւակներին կսովորեցնէք, որ նրանք իրենց պարապ ժամերը չպիտի վատնեն ծուլութիւնով, որովհետեւ իմաստութեամբ գործածած պարապ ժամերը, նշանակում է նրանք որ ունին այդ, ազատ լինելով իրենց ապրուստի համար գործելու հարկաւորութիւնից, աւելի պարտական են պարապուելու մի տեսակ չվճարող գործով—գիտութիւնով, գրականութիւնով, արուեստի հետախուզութիւնով ու պատմական հետախուզութեամբ, այնտեսակ գործերով, որոնց մենք շատ կարօտութիւն ունենք այս երկրի մէջ և որի յաջող յառաջ տանելը պատիւ պիտի բերէ մեր ազգին: Մենք չենք սքանչանում վախկոտ խաղաղասիրի վրայ: Մենք գիտէինք, որ յաղթական ձգտումներ ունեցող մարդու վրայ, այն մարդու վրայ, որը երբէք իւր դրացուն չի խաբում, որը պատրաստ է իւր բարեկամին օգնելու համար, և որը ունի այն առնական յատկութիւնները, որոնք հարկաւոր են իրական կեանքի, կոտոր մէջ յաղթող լինելու համար:

Չաջողուելը վատ է, բայց աւելի վատ է երբէք չաշխատել յաջողուելու: Այս կեանքի մէջ մենք ոչինչ չենք ձեռք բերում առանց աշխատութեան: Ներկայիս մէջ աշխատելուց ազատ լինելը, ցոյց է տալիս որ անցեալում եղած է խիստ աշխատութիւն: Մի մարդ կարող է գործելուց ազատ լինել այն ժամանակ միայն, երբ ինքը կամ իւր նախահայրերը անցեալում գործել են բարի նպատակով: Եթէ այդպիսով դնուած ազատութիւնը գործածուի ուղիղ կերպով և ժարդը շարունակէ գործել, թէև տարբեր կերպով, իբրեւ գրող կամ գեներալ, իբրեւ հետախուզող, քաղաքագէտ կամ ազգայնուր, նա ցոյց է տալիս, որ արժան է իւր հարստութեանը: Բայց եթէ նա այդ բնական գործից ազատութեան շրջանը գործ է ածում ոչ թէ պատրաստութեան, այլ դուարձութեան համար, թէև գուցէ անմեղ դուարձութեան, նա ցոյց է տալիս, որ ինքն միայն արգելք է երկրիս երեսի վրայ, և նա անկասկած կերպով անյարմարեցնում է իրեն իւր ընկերների գէմ իրեն պաշտպանելու, եթէ այդ անելու կարիքը չզգացուի: Հիշատակել կեանքի վերջը բաւականացուցիչ չէ. և բոլորից վեր, այդ մի կեանք է, որը անյարմար է դարձնում նրանց՝ որոնք հետևում են իրեն, աշխարհիս մէջ մեծ գործեր կատարելու համար:

Մի առողջ գրութիւն կարողէ գոյութիւն ունենալ միայն այն ժամանակ, երբ մարդիկ ու կանայք, որոնք կազմում են դրան, վարում են մաքուր զօրաւոր և առողջ կեանք, երբ երեսփոխները սովորում են, որ նրանք չպիտի փախչեն դժուարութիւնից, այլ յաղթել աշխատեն, հեշտութիւն չփնտռեն, բայց իմանան ինչպէս պէտք է յաղթութիւն ձեռք բերել աշխատութիւնով և վտանգի հսթադկուելով: Մարդը պէտք է ուրախ լինի մի մաքուր գործը անելու, համարձակելու, հանդուրժելու և աշխատելու, իրեն պահելու և իրենից կախում ունեցողներին հոգալու: Կինը պէտք է լինի տանտիրին, տնայինի ընկերը, շատ առողջ դաւակներ իմաստուն և աներկիւղ մայրը: Իօդէ իւր մի ուժեղ ու մեղմադճոտ գրքի մէջ խօսում է «ծննդեան երկիւղի մասին»-ներկայում երիտասարդ կնոջ սոսկման մասին: Եթէ այդպիսի բառեր կարելի է դրել ճշմարտապէս մի ազգի մասին, այդ ազգը փրած է մինչև իւր արմատը: Երբ մարդիկ վախենում են զործից—վախենում են արգար պատերազմից, երբ կանայք վախենում են մայր լինելուց, նրանք կորստեան ճանապարհի վրայ են և լաւ է որ նրանք ընաջինջ լինին երկրիս վրայից, ուր նրանք նախատինքի արժանի են այն մարդկանց ու կանանց կողմից, որոնք զօրեղ, քաջ և վիհանձն են:

Այդ ինչպէս վերաբերում է մի անհատի, նոյնն է և մի ազգի համար: Անարդ ու անարդար է ասել, թէ ուրախ է այն ազգը, որ պատմութիւն չունի: Երիցս ուրախ է այն ազգը, որ փառաւոր սլաւութիւն ունի: Շատ լաւ է համարձակուել մեծ գործեր կատարելու, փառաւոր յաղթանակներ տանելու, թէև դժուարութիւնների հանդիպելով, բան թէ խղճաողիների շարքը դառնալու, որոնք ոչ զուարճանում են և ոչ տանջւում. որովհետև նրանք տպւում են ազատ լոյսի մէջ, որը ոչ յաղթութիւնը դիտէ և ոչ յաղթուիլը: Եթէ 1861-ին մթութիւնը սիրող մարդիկ հաւատային, թէ խաղաղութիւնը բոլորի վերջն է և պատերազմն ու ճիգը բոլորից վատ է, և իրենց հաւատացածի պէս գործէին, մենք հազարաւոր կեանքեր աղատած կլինէինք, մենք միլիոնաւոր դոլարներ խնայած կլինէինք: Եւ բացի արիւն ու գանձ խնայելուց, որը մենք այն ժամանակ թափեցինք, մենք շատ կանանց սրտերը կտրելուց կապատուէինք և շատ տներ աւերումից կպրծացնէինք և մենք մեր երկիրը կխնայէինք այդ ամօթու տառապանքի ամիսներից, երբ թուում էր թէ մեր բանակը միայն ջնջուելու է արշաւում: Մենք կարող էինք խոյս տալ այդ բոլոր տանջանքից, միայն փախչելով աշխատանքից: Եւ եթէ մենք այդպէս խուսափէինք,

մենք ցոյց տուած կրինէինք մեր փոքրոգութիւնը և մեր ուրիշ մեծ ազգերի շարքում դասուելու անյարմարութիւնը: Պէտք է փառք տալ մեր հայրերի արեան մէջ երկաթ գտնուելուն հաժար, այն ժարդկանց համար, որոնք Լինքոնի իմաստութիւնը պաշտպանեցին և սուր ու հրացան կրեցին Գրանդի բանակի մէջ: Թող մենք այն ժարդկանց զաւակներս, որոնք իրենց հաւասար ցոյց տուեցին այն մեծ օրերին, թող մենք այն մարդկանց զաւակներս, որոնք մեծ քաղաքական պատերազմը յառաջ տարան մինչև յաղթական վերջաւորութիւնը, մեր հայրերի Աստուծուն փառք տանք, որ խաղաղութեան զգուշ խորհուրդը մերժուեցաւ, որ չարաչարանքը, ու կոբուստը, յուսահատութեան ու տխրութեան սևութիւնը աներկիւղ կերպով դիմադրուեցաւ և չարչարանքի տարիները հանդուրժուեցան: որովհետև վերջում դերութիւնը ջնջուեցաւ, միութիւնը վերահաստատուեցաւ և հզօր Ամերիկական Հասարկապետութիւնը, նորից իբրև պսակաւոր թագուհի դրուեցաւ ազգերի մէջ:

Մենք՝ հերկայ սերունդս, այն խնդիրներին զխմադրելու չենք, որոնց դիմադրեցին մեր նախահայրերը, բայց մենք մեր խնդիրները ունենք, և վայ մեզի եթէ պարտազանց գտնուինք: Մենք չենք կարող եթէ նոյնիսկ ուզենք էլ, Չինաստանի դերը խաղալ և բաւականանալ մեր սահմանի մէջ կամոց-կամաց նախատելի հեշտամիրութեան յարելով—չհտաքրքրուելով ինչ որ կատարուած է մեզանից գուրս. խորասուզուած միայն վաճառականութեան մէջ, անտեղեակ բարձր կեանքից, միայն զբաղուելով օրուայ մեր ժարմնի պէտքերով, մինչև յանկարծ գտնենք, առանց տարակուսանքի, ինչ որ արդէն Չինաստանը գտաւ, որ այս աշխարհում այն ազգը որ սովորել է կղզիացած և անպատերազմ հեշտ կեանք վարել, ստիպուած է վերջումը ուրիշ ազգերին զոհ դառնալ, որոնք առնական ու յառաջադիմական յատկութիւնները կորցրած չեն: Եթէ մենք իսկապէս մեծ ազգ կուզենք լինել, մենք պէտք է ամեն կերպով աշխատենք աշխարհիս մէջ մեծ դեր խաղալ: Մենք չենք կարող մեծ խնդիրների հանդիպելուց խուսափել: Ինչ որ մենք կարող ենք որոշել մեզ համար, այն է՝ թէ արդեօք մենք լաւ թէ վատ կերպով հանդիպենք այդ խնդիրներին: 1898-ին մենք չէինք կարող Սպանիայի հետ դէմ առ դէմ պատերազմ դուրս գալու խնդրից խուսափել: Մենք միայն կարող էինք որոշել, թէ, վախկոտների պէս պէտք է յետ քաշուել կոտորից, թէ ասպարէզ նետուել իբրև քաջ և բարձրաոքի ժողովուրդ. և մէջ մտնելուց յետոյ, կարող էինք որոշել, յաջողութիւնը թէ անյաջողութիւնը պէտք է մեր զրօշը պսակէ: Այդպէս է և այժմ: Մենք չենք

կարող խուսափել այն պատասխանատուութիւնից, որը մեզ վրայ դրուած Հաւայիի, Քուրայի, Փորթորիկոյի և Ֆիլիպեան կղզիների մէջ: Բոլորը որ մենք կարող ենք որոշել այն է՝ թէ արդեօք այնպէս պէտք է վարուել, որ մեր ազգին պատիւ բերէ, թէ այնպէս պէտք է անել, որ մեր այդ խնդրի հետ վարուելը մեր պատուութեան մէջ մի սև ու ամօթի էջ թողնէ: Մերժել նրանց հետ յարաբերութիւն ունենալը, նշանակում է վատ վարուել: Մեզ մի խնդիր է տրուած լուծելու: Եթէ մենք յանձն առնենք լուծելու, ի հարկէ միշտ ուղիղ լուծել չկարողանալու երկիւղը կայ, բայց մերժել լուծել յանձն առնելը, միմիայն նշանակում է մենք չենք կարող երբէք ուղիղ լուծել: Երկչոտ մարդը—ծոյլ մարդը, այն մարդը որ վատահուժիւն չունի իր երկրին. բարձրակիրթ մարդը, որ կորցրած է մեծ կոռւի բարձր աստիճանութիւնները, տգէտ մարդը, տխմարը՝ որի հոգին չի կարող զգալ այն զօրեղ բարձրացումն, որը շարժում է մեծ մարդկանց կայսրութիւնը իրենց ուղեղների մէջ»—այդ բոլորը իհարկէ վախենում են տեսնելով նոր հաւատորմի և բանակի պատրաստութիւնը մեր պէտքերին համեմատ, վախենում են տեսնելով աշխարհիս գործի մէջ մեր գերը կատարելիս, քաօսի միջից օրէնք դուրս բերելով մեծ և գիղկեցիկ տաք կղզիներում, որից մեր զինուորները ու հաւատախները դուրս են քշել Սպանիացոյ զօրջակը: Դրանք են այն մարդիկ, որոնք վախենում են աշխատաւոր կեանքից, որոնք վախենում են միակ ազգային կեանքից, որը արժանի է վարելու: Նրանք հատուտ են այն cloisterof կեանքին, որը ծծում է մի ազգի աստիճանութիւնները, ինչպէս և մի անհատի, կամ թէ նրանք կաթած են այն յիմար շահախնդիր ոգուն և հաւատքին, որը ազգային կեանքի մէջ վաճառակաւութիւնը ճանաչում է իբրեւ ամեն ինչ, փոխանակ ճանաչելու որ՝ թէ և մի հարկաւոր տարր է, բայց և այնպէս շատ բաներից մէկն է, որոնք միասին ծառայում են մի ազգի մեծութեան համար: Ոչ մի երկիր երկար գիմտնայ չի կարող, եթէ նրա հիմքերը դրուած չեն խոր նիւթական յաջողութեան մէջ, որը զալիս է աշխատութիւնից, գործի խանդից ու ձեռնածուխ լինելուց, զժուար ու անխնայ ջանքից արդիւնագործութեան գործօն դաշտի մէջ: Բայց երբէք ոչ մի ազգ հաստատուպէս մեծ չի եղել, եթէ նա միայն իր նիւթական յաջողութեան վրայ է յենուած: Ամեն պատիւ պէտք է տալ մեր նիւթական յաջողութեան արքիտէկտներին—արդիւնագործութեան մեծ կապիտաններին, որոնք շինած են մեծ գործարանները, երկաթուղիները, զօրաւոր մարդկանց՝ որոնք ուղեղով կամ ձեռքով

աշխատում են հարստութեան համար, որովհետեւ մեծ է մի ազգի պարտականութիւնը գէպի սրտնց և սրանց նմանները: Բայց մեր պարտականութիւնը աւելի մեծ է այն մարդկանց նկատմամբ, որոնց ամենարարձր ախպը կարելի է գտնել Լիւերոնի նման քաղաքագէտի մէջ, և Գրանդի նման զինուորի մէջ: Նրանք ցոյց տուեցին իրենց կիանքովը, որ նրանք ճանաչում էին դոքսի օրէնքը—աշխատելու օրէնքը. նրանք⁸ աշխատեցին յաջողութիւն ձեռք բերելու համար, իրենց և նրանց համար, որոնք իրենցից կախում ունէին. բայց նրանք ճանաչեցին, որ կային ուրիշ աւելի բարձր պարտականութիւններ—պարտականութիւններ գէպի ազգը և իրենց ցեղը:

Մենք չենք կարող պարփակուած ապրել մեր սահմանների մէջ և կազմել ժանրապաճառների մի ժողով, որոնք երբէք հող չեն անում, թէ ինչ է կատարւում իրենց չորս կողմը: Այդպիսի մի քաղաքականութիւն կարող է մինչև անկամ վատ վերջաւորութիւն ունենալ, որովհետեւ ինչպէս որ ազգերը աճում են և ունենում լայն շահեր և աւելի մօտիկ յարաբերութեան մէջ են մտնում, եթէ մենք պէտք է մեզ պաշտպանենք հաւային և առեւտրական շրջանի մէջ առաջին լինելու ձգտման մէջ, մենք պէտք է մեր ուժերը մեր սահմանից դուրս տարածենք: Մենք պէտք է Իստման ջրանցքը շինենք և պէտք է մեր բուռն զոյնք այն կէտերը կամ տեղերը, որ կարողանային մեզ Արևելեան և Արևմտեան Ովկիանոսի ճակատագիրը որոշելու ժամանակ մեր խօսքը ընդունել տալ:

Այսքան վաճառատնականական կողմի մասին: Միջազգային պատուի կողմից փաստը աւելի զօրաւոր է: Այն թնդանօթները, որոնք որոտացին Մանիլայի և Սանդիակոյի մօտ, մեզ թողեցին փառքի արձագանքը, բայց նրանք թողեցին մեզ համար նաև մի կտակուած պարտականութիւն: Եթէ մենք դուրս քշեցինք մի միջին դարի թոնակալ, միայն վայրենի անարխիստութիւնը տեղ տալու համար, մենք աւելի լաւ արած կը լինէինք, եթէ հրէք ձեռք առած չլինէինք այդ խընդիրը: Ունայնութիւնից աւելի վատ է ասել, թէ մենք ոչինչ պարտականութիւն չունենք կատարելու և կարող ենք իրենց ճակատագրին թողնել այն կզոյնները, որոնք հուսաճել ենք: Այդպիսի մի լաւ ընթացք խայտառակ մի ընթացք կլինի: Այդ կզոյնների մէջը անմիջապէս քառօր կը օխրէ: Մի աւելի զօրաւոր, քաջ տէրութիւն ներս կը մտնէ և այդ գործը կանէ և մենք մեզ տկարներ ցոյց տուած կը լինենք, անկարող յաջող վերջաւորութեան հասցնելու այն աշխատութիւնը, որ մեծ և մեծանդի ազգերը ուրախ են յանձն առնելու:

Գործը պէտք է անել: Մենք չենք կարող ազատուիլ մեր պատասխանատուութիւնից. և եթէ մենք մեր ազգին արժանի ենք, մենք պէտք է ուրախ լինենք գործը կատարելու առթի համար, ուրախ պէտք է լինենք այն յարմար առթի համար, որով ներկայ քաղաքակրթութեան զրած մեծ խնդիրներն մէկին, մեզ հաւասար ցոյց տալ կարող ենք: Բայց թող մենք մեզ չխաբենք խնդրի նշանաւոր լինելու մասին: Թող սխալ հառաջնորդութիւնը փառամոլութեամբ, չհաշուելով այն զոհաբերութիւնը, որ կարող է այդ մօր ուժերի վրայ դնել: Ամենից առաւել, թող ինչպէս որ մենք մեր պատիւը գնահատուեմք, պատասխանատուութիւնը մեր վրայ առնենք յատուկ լրջմտութեամբ, քաջութեամբ և բարձր որոշումներով: Մենք պէտք է պահանջենք ամենաբարձր հաւատարմութիւն և նկատողութիւն մեր այն հասարակութեան գործիչներից, որոնք պիտի մարտնչեն այդ նոր խնդիրների հետ: Մենք պէտք է խիստ պատասխանատու ճանաչենք այն հասարակութեան ծառայողներին, որոնք անհաւատարմութիւն են ցոյց տալիս ազգի շահերին կամ թէ տկարութիւն բարձրանալու նոր պահանջների բարձրութեան վրայ:

Ի հարկէ մենք չպէտք է դատենք մի որեւիցէ հասարակական գործիչ միայն մի գործով, այլ յատկապէս պէտք է զգուշ լինենք որ չյարձակուենք այն մարդկանց վրայ, որոնք միայն պատահարներ են և ոչ թէ պատճառներ զժախտութեան: Թէ ինչ եմ ուզում ասել, թող բացազրեմ բանակով և նաւատորմի-
զով: Եթէ քսան տարի առաջ մենք պատերազմի գնալինք, մենք պիտի գտնէինք մեր նաւատորմիղը այնքան անպատրաստ, որքան մեր բանակը: Ան ժամանակ մեր նաւերը չէին կարող յաջողութեամբ կուռն: Ուսանեացոց նաւերի հետ, աւելի քան, եթէ մենք այսօր դնենք անմարդ զինուորներ—հոգ չէ որքան քաջ—որոնք զինուած են ու մառդի գործիքներով, կանոնաւոր լաւ մարզուած զինուորների դէմ, որոնք զինուած են նոր սիստեմի ամենաբարձր տեսակ արագաձիգ հրացաններով: Բայց 18-րդ դարի սկիզբներում մեր ազգի ուշադրութիւնը դարձաւ մեր նաւատորմի պակասութեան վրայ: Քօնգրէսը (ծերակոյտի ժողով) ամենախոհեմ կերպով շատ փող յատկացրեց նոր նաւատորմի շինելու գործին և մի կարգ կարող ու հայրենասէր քարտուղարների միմեանց յաջողելուց յետոյ, որոնք երկու կուսակցութեան էլ պատկանումէին, նաւատորմիղը կամաց-կամաց մեծացաւ, մինչև որ մաթերիալը հաւասար եղաւ իւր պէրսոնալին, այն հեռեանքով՝ որ 1898-ի ամառը նա բարձրացաւ իւր տեղը, իբրև ամենալաւ և գեղեցիկ կուռող նաւատորմիղնե-

րից մէկը աշխարհիս մէջ: Մենք արժանաւոր կերպով պատուում ենք այն մարդկանց, որոնք սուաշնորհում էին նաւատորմդին այն ժամանակ, երբ նա այդ մեծ գործերը կատարեց: Պատիւ թող լինի քարտուղար Լօնգին և ադմիրալ Դուվէին—այն կապիտաններին՝ որոնք վարում էին նաւերը պատերազմի մէջ, համարձակ լէյտենանդներին, որոնք մեռան փոքրիկ նաւերի մէջ և Վաշինկտոնում եղող պաշտօնապետներին, որոնք հսկեցին, որպէսզի նաւերը այնպէս կառավարուեն, զինուուն պատրաստուեն որ ամենալաւ հետեանքներ յաւաջ բերեն:

Բայց թող միշտ յիշենք, որ այդ բոլորը ոչինչ կարող էր լինել, եթէ անցեալ տասնուհինգ տարուայ մարդիկը իմաստութեամբ մեր նաւատորմիցը չպատրաստէին: Յիշեցէք նաւային քարտուղարներին այդ ժամանակամիջոցում, յիշեցէք սենատորներին և քօնգրէսմաններին, որոնք իրենց քուէով տուեցին այդ փողը, որ հարկաւոր էր նաւեր շինելու և զրահաւորելու մեծ թնդանօթներ շինելու և նաւաստիներ կրթելու համար: Յիշեցէք նաև նրանց, որոնք իրականապէս շինեցին նաւերը, զրահները և թնդանօթները, և յիշեցէք ծովապետ ադմիրալներին և կապիտաններին, որոնք կառավարեցին պատերազմանաւերը, բրուջները, ամբաձիգ նաւերը ծովի վրայ, սովորեցնելով նաւաստիութիւնը և հրացանաձգութիւնը և միասին գործելու ուժը, որը իրենց յաջորդները վառաւոր կերպով ցոյց տուեցին Մանիլայում և Սանթիագոյում: Եւ պարոններ, յիշեցէք յարաբերութիւնն էլ: Յիշեցէք որ արգարութիւնն էլ երկու կողմ ունի:

Հաւատարիմ եղէք այն անձինքներին, որոնք շինեցին նաւատորմիցը, երկրի ապագայի համար, յիշեցէք և այն մարդկանց, որոնք հակառակեցին նաւերի շինութեանը: Կարդացէք «ծերակոյտական արձանագրութիւնը», դաէք այն սենատորներին և քոնկրէսմաններին, որոնք հակառակեցին նոր նաւեր շինելու արտօնութեանը, որոնք հակառակեցին զէնքեր ձնելուն՝ առանց որին նաւերը արժէք չունէին: Որոնք հակառակեցին մեր նաւային ղեկարարմանտի յարմար պահպանելուն և ջանացին նաւերի կառավարողների թիւը պակսեցնել: Այն մարդիկը, որոնք այս գործերը կատարեցին, բոլորն էլ մեր երկրի կորստեանն էին աշխատում: Նրանք Մանիլայի և Սանթիագոյի յաղթութեան փառքի մէջ մաս չունեն: Նրանք մեր կապիտաններին քաջութեան վրայ հպարտ դպալու պատճառ չունեն և ոչ էլ մեր գրօշակի համբաւին: Նրանց մօթիւները կարող էին լաւ կամ վատ լինել, բայց նրանց գործքերը չարութեամբ ծանրաբեռնուած էին: Նրանք մեր ազգային պատմութեան դէմ գոծե-
Յունուար, 1907.

ցին, բայց մենք յադիեցինք Հնայելով նրանց չար հակառակութեանը:

Այժմ այդ լուրը թող մեր ներկայ հասարակական գործիչներին վերաբերենք: Մեր բանակը երբէք այնպէս պատրաստուած չէ, ինչպէս որ պէտք է լինի: Եւ չպէտք է քննել այսպիսի մի ունկնդիրների առաջ, այն սպայական թեւադրութեան կարծիքը, թէ Լօթանասուն միլիօն ազատասէր ժողովուրդ ունեցող մի ազգ. իր ազատութիւնը կորցնելու վտանգի մէջ է 100,000 զօրք ունենալու պատճառով, որի երկու երրորդը հեռաւոր կղզիներէ մէջ և սահմաններում պիտի ծառայեն և հնդկներին զսպելով պիտի զրազուեն: Ոչ մի բարի զգացում և քաջ սիրտ ունեցող անձնաւորութիւն կարող է այսպիսի մի առաջարկութիւն լրջօրէն ընդունել: Եթէ մենք այսպիսի խղճալի մարդիկ լինենք, ինչպիսին կարծիքը նշանակում է, այն ժամանակ մենք ազատութեանը անարժան կնքումին դէպքում: Մ. Ն.—ի մէջ, ոչ ոքի երկիրը այնքան պարտական չէ, որքան քաջ պաշտօնեաներին, կանոնաւոր զօրքին և հաւատարմներին: Երկիրը չունի ուրիշ մէկը, որից քիչ պիտի վախենայ և չունի ուրիշը, որով աւելի պիտի հպարտանայ և որը աւելի բարձրացնելու պիտի աշխատի:

Մեր զօրքը հիմքից բարենորոգելու կարօտութիւն ունի ոչ միայն մեծացնելու—և բարենորոգութիւնը կարող է միայն դալ, իբրև հետեանք օրէնսդրութեան: Մի յարմար գեներալներին խումբ պէտք է հաստատուել և կոմիսարների, կարգապահների, գլխաւոր մատակարարի պաշտօնները պէտք է զօրքերի շարքից լրացնել: Ամենից վեր զօրքին պէտք է միջոց տալ մեծ խումբերով մարզելու: Այլևս մենք երբէք չպէտք է տեսնենք, ինչպէս որ տեսանք սպանիացոյց պատերազմի ժամանակ, դեռ ներառնելը մեծ բաժանումների հրամանատար, որոնք երբէք միանգամից երեք խմբի հրամանատար եղած չէին: Բայց և այնպէս անհաւատալի է ասելու, որ Քոնգրէսը այդ պատերազմից մի քանի դասեր սովորելու անկարողութիւն է ցոյց տուել: Երկու մասի մէջ էլ կային մարդիկ, որոնք հակառակ էին պատերազմի հրատարակելուն, որոնք հակառակեցին խաղաղութիւն կնքելուն, որոնք հակառակեցին զօրքի բարձրացնելուն կամ աւելացնելուն և որոնք մինչև անգամ հակառակեցին աժան դնով նաւերի համար գէնք գնելուն, որով և վերջ գրին հոր պատերազմանաւեր շինելուն: Եթէ առաջիկայ տարիներում մի գծրախտութիւն պատահի մեր զօրքին, ծովի վրայ թէ ցամաքում և Մ. Ն.—ին նախատինք բերել, յիշեցէ՛ք՝ որ յանցանքը այն մարդկանց վրայ է, որոնց անունները Քոն-

կրէսի դրքի մէջ երեւում է այդ հարցին հսկանակ: Երանց վրայ կընկնի մեր դրօշի անպատուութեան և ամեն մի զինուորի մահուան պատասխանատուութեան ծանրութիւնը, և ձեր ու այս երկրի մարդկանց վրայ կընկնէ յանցանքը, եթէ դուք չմերժէք անսխալ կերպով, ինչ որ այդ մարդիկ արել են: Յանցանքը չի ընկնիլ անվարժ զօրքի անշարժ հրամանատարի վրայ, մի գեղարտմենտի քաղաքական պաշտօնեաների վրայ, որոնց կանոնաւորութիւնը բոլորովին զանցէ առնուած, կամ թէ մի անբաւական թւով նաւեր ունեցող ազմիրալի վրայ. բայց այն հասարակութեան վրայ, որոնք ողբալի կերպով կանխապէս չեն խորհած այդ հարկքի առաջն առնելու համար—և այն ազգի վրայ, որը այդ հասարակական գործիչների հետեւն է կանգնում:

Այսպէս ներկայ ժամուռ մեր եղբայրների արեան և իրենց վայրենի և տգէտ թշնամիների արեան պատասխանատուութեան մեծ մասը, ընկնում է այն մարդկանց շէմքի վրայ, որոնք երկար դիմացան խաղաղութեան գաղաղութեան կապելուն և նրանց վրայ, որոնք աւելի քան յիմար խօսքերով հրաւիրեցին վայրենի ժողովրդին պատերազմի մէջ նետուել, որը ազէտալի պիտի լինէր իրենց համար—և մի պատերազմ նաեւ, որի մէջ մեր քաջ զինուորները, որոնք հետեւում են մեր դրօշակին, պիտի իրենց արիւնովը վճարեն, այն անամօթ, մերկ մարդասէր տղաների համար, որոնք նստում են տանը խաղաղութեան մէջ:

Զօրքը և նաւատորմիղը սուր ու վահան են, որ պէտք է մեր ազգը կրէ, եթէ ազգերի մէջ իր պարտքը կատարել է ուղում—եթէ չպէտք է կանգնի միայն իրրեւ արեւմտեան կիսագնդի Զինատանը: Մեր յարմար ընթացքը դէպի Սպանիայից առած Այրեցեալ Գոտիի կղզիները այն է, որ այդ բոլորում պարտականութիւնը մեզ վրայ դրեց: Ի հարկէ մենք ստիպուած ենք մեր տան գործերը լաւ կերպով կառավարել: Մենք պէտք է տեսնենք՝ որ քաղաքական հաւատարմութիւն կայ, քաղաքական մաքրութիւն, քաղաքական բարի զգացում մեր ազգի, նահանգի և քաղաքի կառավարութեան մէջ: Մենք պէտք է աշխատենք պաշտօնի առաքինութիւն ձեռք բերելու համար, անհատական զգացման ամենալայն ազատութեան համար, ուր որ կարելի է, և հաւասարակական զգացման ամենախոհեմ քննորդի համար, ուր որ այդ հակառակ է շատերի բարեկեցութեանը: Բայց որովհետեւ մենք մեր տունը լաւ կարգի տակ դրած ենք, մենք զբաւով ազատ չենք մեր պարտքը կատարելուց աշխարհի մեծ գործերում: Մարդու առաջին պարտա-

կանութիւնը դէպի իւր տունն է, բայց նա զրանով ազատ չէ դէպի նահանգը ունեցած իւր պարտքից, որովհետեւ եթէ նա իւր երկրորդ ալարաքը կատարելուց յետ է մնացել, նա ազատութիւնը կորցնելու պատժի տակ է մնում: Միևնոյն կերպով՝ մինչպէս մի ազգի առաջին պարտականութիւնը իւր սահմանի մէջ է, նա զրանով ազատ չէ իւր պարտականութիւնները կատարելուց, ընդհանուր աշխարհի նկատմամբ, և եթէ նա մերժում է այդ, նա միայն կորցնում է իւր իրաւունքը—մի տեղ ձեռք բերելու համար, մարդկային ճակատագիրը ձեռկերպող ժողովրդների մէջ:

Ամերիկական հնդիկների և Ֆիլիպպին կղզիների մէջ միանման մենք դժուարալուծելի խնդիրներ ունենք մեր առաջը դրած: Վախկոտութիւն է այդ ուղիղ կերպով լուծելուց քաշուիլը. որովհետեւ զրան պէտք է լուծել, եթէ մենք չենք լուծիլ, մեզանից աւելի զօրեղ ու մարդոտէր տղերքից մէկը կանի: Եթէ մենք տկար ենք և անձնասէր, կամ շատ յիմար զրան լուծելու համար, ուրիշ զօրեղ ու կարող ժողովուրդ պիտի յանձն առնէ լուծելու: Անձնականապէս ես իմ երկրի մեծութեանը և իմ հայրենակիցների ընթացքին շատ թունդ հաւատացողներից եմ, մի բոլորէ չեմ կարող ընդունել, որ մենք ստիպուած պէտք է լինենք ամօթալի կերպով յետ քաշուիլ:

Խնդիրները տարբեր են տարբեր կղզիների մէջ: Փորթուրիկոն մեծ չէ, մենակ չի կարող մնալ: Մենք պէտք է կառավարենք նրան լաւ և իմաստութեամբ—եականապէս իւր ժողովրդի շահի համար: Կուրան, իմ դատողութեամբ, պէտք է ինքը որոշէ, թէ ո՞վ պիտի կառավարէ իրան, մի անկախ պետութիւն պէտք է լինի, թէ հասարակապետութիւններից ամենազօրեղի մի ժառը:

Բայց մինչև կարգ աւ կանոնի հաստատուիլը, մենք պէտք է մնանք այնտեղ նրանց ապահովելու համար: Անվերջ դատողութիւն, չափաւորութիւն և քաջութիւն պէտք է ցոյց տան մեր զինուորական և քաղաքական ներկայացուցիչները կղզին խողալ պահպանելու, աւաղակախմբերին արմատախիլ անելու մէջ և միևնոյն ժամանակ ճանաչելով արժանիքը՝ այն մարդկանց, որոնք կուեցին Կուրայի ազատութեան համար:

Ֆիլիպպին կղզիները աւելի ծանր խնդիր են ներկայացնում, նրանց ազգաբնակչութիւնը կաղմուած է կիսավայրենիներից, քրիստոնեաներից, պատերազմասէր մուսուլմաններից և վայրենի հեթանոսներից: Նրանց մեծամասնութիւնը ինքնաւառավարութեան պատրաստ չեն և պատրաստուելու էլ ոչ մի նշան ցոյց չեն տալիս: Ուրիշները գուցէ ժամանակով պատ-

րաստ լինեն, բայց ներկայում կարող են միայն մաս ունենալ ինքնակառավարութեան մէջ, մի խոհեմ կառավարչի ձեռքի տակ, շատ օգտակար կերպով: Մենք սպանիացող բռնակալութիւնը վաճած ենք կղզիներից: Եթէ այժմ մենք թող ստանք, որ վայրենի անիշխանականութիւնը փոխանցէ նրան, մեր գործը վնասակար է հղած և ոչ թէ օգտակար: Ես չեմ կարողանում համբերել այն մարդկանց, որոնք վախենում են Ֆիլիպպեան կղզիների կառավարութիւնը յանձն առնելուց և որոնք բացարձակաբար խոստովանում են թէ վախենում են և կամ քաշոււմ են դրանից, որովհետեւ ծախք ու չարչարանքը շատ է: Ես ևս դեռ ևս աւելի անհամբեր եմ այն մարդկանց հետ, որոնք մտրդափրութիւնը դիմակ են շինում իրենց վախկոտութիւնը ծածկելու համար և որոնք ճանում են «ազատութեան» և «կառավարութեան արտօնութեան» մասին, որպէսզի իբրր կատարեալ մարդ, իրենց պարտքը կատարած չլինելու համար, պատճառ ունենան: Նրանց վարդապետութիւնը եթէ յառաջ տարուի, մեզ կպարտաւորեցնի թողնել Արիզոնայի Ապաչները իրանց փրկութեան համար իրենք աշխատեն և չմիջամտել Հնդկիների պահպանութեան համար: Նրանց վարդապետութիւնը դատապարտուած ձեր և իմ նախահայրերի մինչև անգամ Միացեալ Նահանգներում բնակութիւն հաստատելը: Անգլիայի Հնդկաստանի և Եգիպտոսի տիրելը, մեծ օգուտ է տուել Անգլիային, որովհետեւ դա կրթել է մարդկային մի ուրիշը, որը սովորած է նայել հասարակական կեանքի աւելի բարձր և մեծ կողմին: Այդ աւելի օգտակար է եղել և Հնդկաստանին ու Եգիպտոսին: Եւ վերջապէս ամենից առաւել՝ այդ պատճառ է եղել քաղաքակրթութեան յառաջադիմութեանը: Այսպէս՝ եթէ մենք մեր պարտականութիւնը կատարենք Ֆիլիպպեան կղզիներում, մենք աւելացրած կլինենք այն ազգային հրոչակը, որը ազգային կեանքի ամենաբարձր և ամենալաւ մասն է և մեծապէս օգնած կլինենք այդ կղզիի բնակիչներին և ամենից առաւել, մենք մեր դերը լաւ կատարած կլինինք մարդկային ազգի բարձրացման գործի մէջ: Բայց այդ գործը անելու համար միշտ յիշեցէ՛ք որ մենք պէտք է ցուցնենք ամենաբարձր աստիճանի քաջութիւն, հաւատարմութիւն և լաւ դատողութիւն: Դիմադրութիւնը արմատախիլ պէտք է անել: Ամենաառաջին և գլխաւոր գործը անելու համար, մեր զբօշի գերիշխանութիւնը հաստատելն է:

Մենք պէտք է վար գլորենք զինուած հակառակութիւնը, նախ քան թէ մենք կարող ենք ուրիշ բան անել, և բանակցութիւն, տարակուսութիւն չպէտք է լինի, մեր թշնամու հետ

գործ ունենալիս, իսկ ինչ վերաբերում է մեր երկրում եղող այն մարդկանց, որոնք քաջակերում են թշնամուն, մենք կարող ենք նախատեսել կերպով անտես անել նրանց. բայց այդ էլ պէտք է յիշել, որ նրանց ասածները արհամարհելի լինելուց ի դատ, չեն ապաստում մատնութիւն լինելուց:

Երբ մենք զինուած հակառակութիւնը միանգամայն արգելած ենք, երբ միանգամից մեր կառավարութիւնը ճանաչուած է, այն ժամանակ աւելի գծուար հարց կրակաի, որովհետեւ այն ժամանակ մենք պէտք է տեսնենք, որ կղզիները բոլորովին արդարութեամբ են կառավարուած և լաւ դատողութեամբ: Եթէ մենք թոյլ տանք, որ կղզու հասարակական պաշտօնները որս դառնան պոլիտիկաների աւերումներից, մենք սկսած կլինէինք դնալ այն ճանապարհով, որով Սպանիան զնայ դէպի իւր կործանումը. Մենք պէտք է ուղարկենք այնտեղ միայն կարող և լաւ մարդիկ, ընտրուած իրենց յարմարութեան համեմատ և ոչ թէ ընտրուած իրենց կուսակցութեան համեմատ և այդ մարդիկ ոչ միայն պէտք է հաւասար և անկողմնակալ կերպով դատեն ընդհանրը ու ծառայեն իրենց կառավարութեանը հաւատարիմ ու անկեղծ կերպով, այլ և պէտք է ցոյց տան խիստ տակաւ և հաստատամտութիւն, յիշելով որ այդ ժողովուրդի մօտ, որի հետ մենք գործ ունենք, տկարութիւնը յանցանքների ամենամեծն է և որ տկարութիւնից յետոյ, դալիս է նրանց սկզբունքների և նախապաշարումների նկատումն առնելու պակասութիւնը:

Ես քարոզում եմ ձեզ, ուրեմն, իմ հայրենակիցներ, որ մեր երկիրը պէտք ունի ոչ թէ հեշտութեւ, այլ անդուլ ձգտող կեանքերի:

Քոստաներուդ դարը բացւում է մեր առջև, շատ մեծ ազդերի դատակնիքով: Եթէ մենք մի կողմ կանգնենք պարտաւ, եթէ մենք միայն փնտռենք ուսած, ծոյլ հեշտութիւնը և տնարդ խաղաղութիւնը, եթէ մենք փախչենք գծուար մրցումից, ուր մարդիկ պիտի յաղթեն, իրենց կեանքը վտանգի ենթարկելով և իրենց բոլոր սիրելիների կորստեան վտանգով, այն ժամանակ աւելի քաջ և դժուար ժողովուրդները մեզանից կանցնեն և աշխարհի իշխանութիւնը իրենց համար կառնեն: Թող ուրեմն քաջութեամբ դէմ առ դէմ իջնենք կեանքի կոուր գաշտը, որոշած մեր պարտականութիւնը լաւ մարդու պէս կատարելու, որոշած՝ արդարութիւնը վեր բարձրացնելու, գործով և խօսքով, որոշած՝ անվախ և հաւատարիմ լինելու, բարձր գաղափարներին ծառայելու, բայց և այնպէս գործնական մեթոդներ գործածելով: Ամենից առաւել՝ թոյլ ոչ մի ձգտումից

չվախենանք, բարոյական թէ փիղիկական, ազգի մէջ կամ թէ ազգից գուրս, միայն վստահ լինելով՝ որ ձգտումը արդարացի է, որովհետեւ միայն աշխատութիւնով դժուար ու վտանգաւոր ձգտումով է որ մենք պէտք է վերջապէս հասնենք ճշմարիտ ազգային միութեան նպատակակէտին:

ԲՃ. Ե. Տ. Սարգիս

ՅԻՇԻՐ, ՀՈՂԱԾԻՆ...

(Պ Լ Ե Ն Ն Ե Լ Ի Ն)

Յիշիր, հողածին, որ պարտք կայ վերադ,
Օգնելու նրան, ով մերկ ու աղքատ,
Հոգսի բեռան տակ՝ շրջում է ցաւոտ,
Աչքին արտասուք, օգնութեան կարօտ...
Յիշիր, որ Աստուած և՛ նրան, քեզ պէս,
Ստեղծել է ազատ, բախշել միապէս
Սնւրբ իրաւունքներ—ապրել երջանիկ,
Ճաշակել կեանքի վայելք ու բարիք:

Յիշիր և այն քանջ, աղնիւ, անձնուէր
Նահատակներին, որոնք անվեհեր
Յառանջ են կոչել անուս ամբօխին,
Դավնու տեղ՝ փրշեայ պլսակներ դըլխին...
Թոյ խեղճ եղբայրներդ դանեն ապաստան
Խաղաղ յարկի տակ հիւրասէր քո տան.
Եւ ազատ վշաից, հեռու փոթորկից,
Քաղեն սիրոյ խօսք—եղբօր շրթմունքից:

Ա. Ծատուրեան

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պ ա տ կ ե ր

(Կրթութեան բարձրագոյն կոնսերվատիվ)

I

—17-րդ №-ը ազատ է.

—Այո, ազատ է.

Ուրեմն—ուղարկէ՞ք չէ՞մօղանո—ասաց և կառքից իջաւ մի միջանասակ, փոքրիկ «փորով», լայն ուսերով, առողջ կազմութեամբով պարոն և կարճ ու հաստատ ոտներով սկսեց շուտ-շուտ բարձրանալ Թիֆլիսի գլխաւոր հրապարակի վրայ մի շքեղ հիւրանոցի աստիճանները։ Նա այնպէս շտապ էր փութում քայլերը, որ հիւրանոցի բարապանը՝ մի ձեռքով ոսկէհուն շրջադպետի փեշերը վեր քաշած, միւս ձեռքին լիք ու ծանր չէ՞մօղանը և ճամփորդական պաշարի սիրտն զամբիւղը կռան տակ, հագիւ էր կարողանում յետևից հասնել։

—Էլի առաջուայ պէս խաղճող է՝ ձեր հիւրանոցը,

—Այո, այո, բոլորովին խաղաղ, պատասխանեց բարապանը, որ գործում էր և խօսում մեքենայօրէն։ 15 տարի նա բարապան էր, միշտ էլ տեսել էր հիւրեր ըստ երևոյթին խաղաղութիւն սիրող, բայց ճանապարհ գցելիս միշտ էլ այլ կերպ էր դուրս եկել...

Միջանցքում նրանց ընդունեց հիւրանոցի տէրը, մի փոքրիկ մարմնով, ճաղատ գլխով, խորամանկ ու մանրիկ աչքերով վրացի, պաշտօնական ժպիտը դէմքին։

Նա ցոյց տուեց 17-րդ № և հրաւիրեց հիւրին ներս։ Այդ №-ը երկու մեծ լուսամուտ ունէր, մէկը մի գեղեցիկ շիրմայով զատած՝ ննջարանի համար։ Թէ ննջարանի մասը և թէ ընդունարանը շատ ճաշակով և շքեղ կահաւորած էր, ոչինչ պակաս բան չկար։ Հիւրը անցաւ ննջարանի կողմը, նայեց մահճակալի գեղեցիկ նկարներին, որ ինչ որ տեսարան էր

լեռները ու լճերը աշխարհից, աչքին ընկաւ գեղեցիկ մարմար լուացարանը՝ շքեղ հայելիով: Նա մեքենայաբար լարձրացրեց ձեռքը, մատները զրեց քթի միջնորմի մօտ՝ փոքրիկ բեխերի վրայ և սղալեց, յետոյ շփեց լիքը թշերը և փոքրիկ ու սուր միջուկը, որից մի փունջ բռնելով՝ տարաւ բերանը և առնելով սպիտակ ատամները մէջ՝ սկսեց կրծել միջուկի մազերը և իր գէմքը զիտել լուացարանի յստակ հայելու մէջ: Նայեց ճակատին, որ շատ լայն էր և խոշուն, նայեց աչքերին—գետ վառվռուն էին, նայեց լիքը թշերին—գետ շատ թարմ էին, նայեց կարծ ու սև մօրուքին—բաւական սպիտակ մազեր կային—նա մի յոգնած հայկացի պեղեց հայելու վրայ և շուտ եկաւ նրանից:

—Հաւանճում էք, հարցրեց վրացին:

Հիւրը որ աւելի իր գէմքով էր զբաղուած, քան թէ Ք զիտելով, զարմացած հարցրեց.

—Միթէ ինձ չէք ճանաչում, այս Ք-ում ես շատ անգամ եմ իջել:

Վրացին ներողութիւն խնդրեց և յիշեց: Գուցէ կեղծեց, բայց յիշեց թէ ճանաչում է, որ մի քիչ շոյած լինի պարոնի փառասիրութիւնը: Եւ իրաւ, ի նշտէս էր նա մոռացել Գերասիմ Գաւրիլիչին, գաւառի այդ յայտնի փաստաբանին, որ 15 տարուայ հուշակ ունէր և Թիֆլիս գալիս համարեա միշտ էլ այգտեղ և այդ նոյն Ք էր իջնում:

Գերասիմ Գաւրիլիչն իրաւունք ունէր մի քիչ «ուռչելու». 15 տարուայ փաստարան էր և շատ լաւ անուն ու դիրք ունէր գաւառում, անուն ու դիրք, որ ձեռք էր բերել միմիայն իր սեպհական խելքով և տոկոսութեամբ:

Ի բնէ ընդունակ և ոտը, նա շուտ ըմբռնում էր իրերի և հանգամանքների փոխադարձ յարաբերութիւնները և որոշ գէպքերի որոշ հետեանքները: Այդ էր պատճառը, որ նա համարեա ամեն բանում էլ յաջողութիւն էր գտնում: Դեռ երիտասարդ ուսանող՝ նա էր «ամենապարգաւատ» իր ընկերների մէջ և ամենից լաւ բիլլիարդ խաղացողը. նորաւարտ իրաւաբան և կլուրի անգամ՝ նա էր աչքի ընկնում իր խելքով և ազարտ խաղերով: Եթէ մի բան նա չսիրէր, չէր էլ սկսի և ձեռք էլ չէր տայ, բայց որ սկսեց, կը կատարէր շատ լաւ և շատ բարեխիղճ: Երեւի այդ էր պատճառը, որ նա շատ շուտ անուն հանեց և պատկառելի տեղ բռնեց գաւառի անհաստատ և մեռած կեանքում, ուր շատ դժուար է տիրող ճանճի մակերևոյթից բարձրանալ, ուր շատ ընդունակութիւններ կուլ են գնում և խեղտում:

Նրան յարգում էր «գործառնը», որովհետև շատ բարեխիճ էր և փողի յիսեից շատ չէր բնկնում: Նրան յարգում էր գաւառի «խնտեւիկներն», որովհետև «առաջադիմական զաւարներն» ամենաջերմ պաշտպանը նա էր, որ բոց ճակատով, նախած հանգամանքին, համարձակութեամբ մտրակում էր «կեղտոտ աղայականութիւնը» և «փշրում նրանց կուռքերը», ինչպէս սովորաբար ասում են գաւառի վարժապետ—թղթակիցները... Նրան յարգում էին բաղաբի լաւ ընտանիքները, մանաւանդ հմբանայտ աղջիկների տէրերը, որովհետև նա «լաւ փեսացու» էր: Նրան սիրում էին այլի կամ ամուսնաւոր կանայք, որովհետև նա նման չէր մօղայական ջրալի «կատաբներին» և գատարկ ֆրաւներ չունէր, աւելի գործնական էր...:

Նրան շատ էր օգնում և այն, որ նա հասարակաց կարծիքից միշտ իրան բարձր էր պահում, գլուխ չէր դնում «ասէկօսներին» և վարում էր բոլորովին իր զգացմունքների, իր խելքի թելադրած ձեով մի «քնական կեանք»: Նա այն համոզման էր, որ անհատական ազատութիւնը առաջին տեղն է բռնում բոլոր «ազատութիւնների» մէջ: Նա ազատ էր ամեն նախապաշարժունքներից և ոչինչ նրան չէր կաշկանդում. նրանից բոլորը ակնածում էին և զգոյշ էին պահում իրանց նրա մօտ: Այդ նրա մէջ դարգայրեց մի քիչ գոռոզութիւն, թէև նա ոչ մի կերպ չէր արտայայտում այդ...:

Օ, այդ բանում նա բաւական խելօք էր և համեստ: Կաւ ճանաչելով հասարակութեան և մարդկանց հոգին, գիտէր թէ ինչն է աւելի գրաւում և խաբում նրանց: Լինել դատող, բայց ձեռնալ համեստ, լինել պահանջող, բայց ցոյց տալ իրան սակաւակետ, լինել փառասէր, բայց ցոյց տալ խորին արհամարհանք դէպի «նանիր փառք», լինել փողատէր, բայց մի քանի շուշլութեամբ ցոյց տալ, որ նրա աչքում ոչ մի նշանակութիւն չունի «փողը», վերջապէս լինել մինչև ոսկրների ծուծը իդամոլ, բայց հեռու մնալ նրանցից ցերեկները՝ հասարակութեան մէջ, բայց շատ մօտ նրանց՝ առանձնառեւակում...:

Նա ունէր և անապին րաջութիւն արհամարհելու իր հակառակորդին, լինէր նա ուժեղներից ուժեղը, թէ հարուստներից հարուստը, որովհետև իր յոյսը իր խելքի և իր մասնագիտութեան վրայ էր, լաւ զգալով, որ այդ երկուսն էլ նրան չեն դաւաճանիլ երբէք, և նա չփոշմանեց: 15 տարուայ տոկոսն մրցութիւն ու աշխատանքը նրան շատ բան տուին և նա այսօր լաւ տեղ էր բռնում և հասարակական կեանքի մէջ ստեղծել էր մի «դիւք», որ ունէր շատ «համակրելի» զէմք:

Մի բան միայն մի քիչ կարող էր նսեմացնել նրա այդ

դիրքը, եթէ նա շուտով միջոցներ ձեռք չառնէր: Այդ այն էր որ նա գաւառում ապրում էր ամուրիի կեանքով, սիրուհիներ յետեից քաշ գալով, թէև ի հարկէ շատ պոյշ և տակտով էր նա շարժում:

Մյգ մէկ, միւս կողմից էլ տարիների ծանր պարապմունքները բաւական հոգս էին պատճառել նրան և նա բաւական յողնած էր զգում իրան: Շարունակ ծանրաբեռնուած սիրունիկերով, որոնց «նաղը» քաշելը բաւական զժուար բան է, նա արդէն մտածում էր, որ ժամանակ է խաղաղ հաւանանգստի» մասին մտածել և այդ նոր հոգսն էր, որ շուտ—շուտ նրան բարշտում էր թիֆլիս, ուր նա հաւանել էր իր մի սիրուհու զեղեցիկ և մատաղ քրոջը:

II

Նա բաց արեց չէմօդանը, հանեց մի փոքրիկ վերմակ, դրեց մահճակալի վրայ, յետոյ հանեց նոր փոխանորդ, գուլպաներ, օւլալած շապիկ, նոր փողպատ, թաշկինակ և ամենը դրեց կողքին, որ պատրաստ լինի. ապա հանեց իր նոր գտակը, դրեց աթոռի վրայ, սև ըրիւկը և լալն օձիք ժիլետը՝ դրեց ֆրակի մօտ: Փակեց չէմօդանի այդ մասը, բաց արեց միւս մասը, հանեց մի քանի դրքեր, հանեց մեծ պօրտֆելը. զրբերը, դարսեց մէջը, եղած թղթերի մօտ, չէմօդանը հրեց մի կողմ: Նստեց մահճակալի վրայ, հանեց ոսկէ մեծ ժամացոյցը, որի ոսկէ շղթան ժիլետի մի կողմից կամարի պէս կախուած էր նրա կրտիկ փորի վրայ: Նա տեսաւ, որ զեռ ժամի 7-ն է, մինչև 10ը երեք ժամ կար: Նա ուզում էր հանգստանալ, սրովհետև զիշերը վագոնում չէր քնել: Իր հետն էր մի ուսու օրիորդ, որի ազգանունը չգիտէր, որին ամենը վարեա էին ասում: Նա շրջանային գատարանի գրադիրն էր՝ րեմինգտոնի վրայ: Վարեայի ծնողները թիֆլիս էին և նա օգտուելով առիթից, խնդրեց Գերասիմ Գաւրիլիչին իրան ուղեկցել զատկուայ տօներին՝ ծնողների մօտ լինելու համար:

Գերասիմ Գաւրիլիչը աւելի հանգիստ լինելու համար, հանեց չորերը և մեկնուելով փափուկ անկողնու վրայ, վրան քաշեց իր վերմակը: Անկողնի սառնութիւնը ստիպեց նրան մի քիչ կուշ կալ և ոտ ու գլուխ հաւաքելով նա վճռեց ոչ մի բանի մասին չմտածել, քնել:

Նրան չյաջողուեց շուտով ազատուել իր մտքերից: Նախ նա մտածում էր իր «գործի» մասին, յետոյ միաքը եկաւ իր ողջ ճանապարհորդութիւնը և զիշերը վարեայի հետ միեւնոյն

կուպէում: Յիշեց թէ ինչպէս համոզեց կանգուկոթը ին և անյառ կանանց մասը, — լաւ էր, որ այնտեղ ուրիշ կանայք չկային, — մտածեց նա և շփեց դէմքն ու աչքերը: Այդ մտքի վրայ նա մի քիչ սթափուեց և յիշեց բոլոր մանրամասնութիւնները: — Օ, ինչ անհանգիստ գիշեր էր, որքան կենդանի, վառվռուն է այդ անպիտան աղջիկը, որքան չարածճի — և նա միտք բերեց աղջկայ բոլոր չարութիւնները, վերջը հասաւ իր գործած մեծ չարութեան, նա մի առանձին եղանակով մըմնջաց. — Դա, և շուտ եկաւ միւս կողքի վրայ, այինդ փակեց աչքերը և սկսեց խռովացնել, որ քունը տանի:

Հինգ րոպէ չանցած՝ № 10-ի դուռը բացուեց և ստիպեց ներսն գլուխը վերմակի տակից հանելու:

— Կառապանը սպասում է, յայտնեց ծառան:

Գերասիմ Գաւրիլիչը յիշեց, որ մոռացել էր կառապանին և իզուր կէս ժամ նրան սպասեցրել էր: Ձեռքը մեկնեց, արթոռի վրայի իր ժիլետը առաւ, գրպանից մի լուրլի հանեց. —

— Առ, ասաց աղայաբար ծառային, ողջ տուր իրան:

Ծառան դուրս եկաւ: Նա կրկին կծկուեց վերմակի մէջ և աշխատեց քնել:

Ծառան կրկին երկաց դռներում:

— Ձեր անցաթուղթը:

— Միթէ յետոյ չէր կարելի, չէ՞ք թողնում մարդ քնի:

— Ներեցէք, մեզ հստիկանութիւնը շատ է դժուար, էլի վախենում են անկարգութիւններից:

— Ի՞նչ բան է:

— Ո՛վ է իմանում, ասում են որպէս թէ Պետերբուրգից նոր սոցիալիստներ են եկել և...

— Ուղի՞ղ է, ի՞նչ մանրամասնութիւններ գիտէք, — անկեղծ հետաքրքրուեց Գերասիմ Գաւրիլիչը, գաղաւի ուրախութիւն զգալով, որովհետեւ... հոգով մարմնով ինքն էլ «յեղափոխական» էր մեծ համակրութեամբ էր վերաբերում «բանուորական հարցին»: Նա յիշեց, թէ իր ուսանողութեան ժամանակ որքան բան էին անում իրանք այդ ուղղութեամբ, որքան ազատ գրքեր ու մտքեր տարածում: Այն ժամանակ «գործը» դեռ հասունացած չէր: Միթէ 15 տարուայ մէջ այնքան զարգացաւ, որ հիմա արդէն կոխը դարձել է անխուսափելի... Ձէ՛ր սպասում:

— Դեռ ոչինչ չկայ, միայն ասում են Սալգատսկի Բաղարը լիքը զինուոր ու կազակ են կանգնացրել, — խօսեց ծառան և վերցնելով անցաթուղթը, դուրս գնաց:

Գերասիմ Գաւրիլիչը դուրս եկաւ վերմակի տակից, ոտաբորիկ՝ ցուրտ յառակի վրայ ման գալով՝ գնաց փակեց № 10-ի

դուռը, բանալին հանելով դրանի կողմից և մի անգամ հետ պըտտելով ներսի կողմից, շուտով մտաւ տեղը, շփեց մըսած ոտքերը, զլուխը կոխեց վերմակի տակ, աշխատեց քնել: Կէս ժամից յետոյ արդէն նա քնել էր և կանոնաւոր շնչառութիւնը ուռցնելով և իջեցնելով բարակ վերմակը, ցոյց էր տալիս, թէ ինչ աստղջ կրծքից է ելնում օդը:

III

Միւս օրը, ուղիւ 10-ին նա վարժնեց, լուացուեց, շորերը փոխեց, պաշտօնական ֆրակը հագաւ, վերարկուն ծածկեց, պորտֆեն առաւ և դուրս եկաւ փողոց, նստեց առաջին պատահած կառքը և վնաց:

— Ո՞ւր քչեմ, հարցրեց կառապանը, քաղաքավարի կերպով կռնալով դէպի պարոնը:

— Գատաստանական պալատը:

Կառապանը ուղղուեց իր տեղում, շարժեց սիրուն սանձերը և սովոր ձիերը սովոր գնացքով արշաւեցին քաղաքի մեծ պողոտայով:

Գատարանում դեռ վաղ էր. իրաւարանների սենեակում ծանօթներ չկային: Գերասիմ Գաւրիլիչը տեղեկացաւ նշանակած գործերի ցուցակից, որ իրանց գործը շուտ կըսկսի, մի քիչ ուրախացաւ, որ շուտ կ'ալըծնի: Նա արդէն ձանձրանում էր և շտապում: Նստեց և զրուշուրեկան համար մէկ էլ աչքի տնցրեց իր գործի հանգամանքները: Նա բոլորովին համոզուած էր, որ գատաստանական պալատն էլ անպատճառ կ'աւտատի շրջանային դատարանի վճիռը՝ իր օգտին:

Դա բաւական հետաքրքիր գործ էր. հետաքրքիր, որովհետեւ Շարիաթը և «գարևոր սովորութիւնները» մեծ տեղ էին բռնում այդ գործում: Այդ հիմքերով նախիջեանի հարուստ խաներից մէկի վեց աղջիկների հաւատարմատարը ուղում էր խանի ահադին կարողութիւնը, նրա մահից յետոյ, հաստատել տալ աղջիկների օգտին. զրկելով միակ օրինաւոր ժառանգին, խանի որդուն: 6 աղջիկների համար նա պահանջում էր ողջ կարողութեան ⁶/₇-ը, այնպէս որ խանի որդուն պիտի մնար ¹/₇-ը:

Գերասիմ Գաւրիլիչը այնպէս քանդեց իր հակառակորդի բոլոր իրաւաբանական «կախարդութիւնը» որ թէ Շարիաթը և թէ «գարևոր սովորութիւնները» մնացին մի կողմ: Նա շնորհակալեց Շարիաթի սոսկ խօսքերը. «Իւրաքանչիւր աղջիկ ստանում է հօր ժառանգութեան ¹/₇ մասը» որպէս օրէնք և հաստատեց

ներս թիւր լինելը: Ինչո՞ւ:— Շատ պարզ պատճառով: Նա ֆրանսիկի համար, ասաց, որ եթէ խանը ունենար ոչ թէ 6 այլ 16 աղջիկ, հետաքրքիր է, ինչպէս պիտի վարուէր Շարիաթի ուժով իր պ. հակառակորդը. չէ որ ողջ կարողութիւնը 7/7 է, որտեղից վերցնել մնացած 9/7 և այլն:

Շրջանային դատարանը գտաւ, որ միայն և միայն 1/7-ը կհասնի խանի աղջիկներին. լինին նրանք վեց, թէ 16 հոգի, իսկ մնացած կարողութիւնը հաստատեց խանի միակ որդու վրայ:

Հակառակորդ իրաւաբանը բողոքեց դրա գէժ և գործը անցաւ Դատաւանական Պալատը:

Դատաւանական Պալատի զահլիճը կամաց կամաց լըցւեց բազմատեսակ խաւը հասարակութիւնով: Քանի մօտենում էր ժամանակը, այնքան շատանում էր տենդային իրարանցումը պաշտօնեաների մէջ:

Դահլիճում համեմատաբար շատ մեծ հասարակութիւն էր կար: Մի ուսու կին, սեւեր հագած, ինչ որ ծերունի գեներալի հետ հեռու քաշուած՝ խօսում էին: Ծերունին մի բան էր բացատրում, կինը երեւի չէր հասկանում կամ չէր համաձայնում նրա հետ:

Եկան մի քամի իրաւաբաններ, սև ֆրակները հագներին՝ արծաթ նշանները կրծքներին և անցան իրանց սենեակը: Երկաց նաև Դերասիմ Գաւրիլիչի հակառակորդ իրաւաբանը, մի տարիքաւոր ծերունի, սպիտակ մազերով և գեղին, մոմի դոյն երեսով: Նրանք բարեկեցին իրար և աչքերով մէկ-մէկու ուժ չափեցին:

Լուսեց մի թեթև զանգահարութիւն: Մի ծառայող դարձաւ գէլի հասարակութիւնը և ինչ որ վնիթվնթաց:

Բոլորը ոտքի ելան: Ամբիօնի զոնները բացուեցին և աջ ու ձախ կողմերից միաժամանակ ներս մտան դատաւորները, դատախազը և քարտուղարը՝ պաշտօնական «սուրտուկներ» հագած և լուրջ գէմը շինած: Նախագահը՝ մի փոքրիկ ծերունի, խրուկեց մեծ բազկաթոռի մէջ: Ընդարձակ սեղանի յետևից հագիւ ցցել էր զլուխը և ճպոտտ աչքերն էր տրտում: Նա Գլուխը թեքեց նախ աջ ընկերին, յետոյ ձախ կողմը և մի ինչ որ փափոց սկսուեց նրանց մէջ: Հեռու նստած դատախազն էլ շարժուեց իր տեղում: Քարտուղարը մի քանի բացատրութիւններ տուեց: Նախագահը տմբամբացրեց գլուխը և անզամներից մէկը սկսեց «գեկուցումը»:

Զեկուցանող անդամը կմկմալով բացատրում էր գործի էութիւնը և շուտ շուտ թերթում ձեռքի տակ կգած «գործը»:

Ինչպէս երևում էր, նա ուշադրութեամբ չէր կարդացել տանձ այլ գործը, և ուզում էր հէնց այդ տեղ և՛ կարդալ, և՛ ղեկուցանել: Դրա համար էլ շարունակ կմկմացնում էր և՛ ը՛ ը՛ ը՛ անում: Վերջապէս ղեկուցումը վերջացաւ: Նոր վեպեր չկային, հերթը հասաւ իրաւարաններին և նախագահը ականջները սրեց, որ գոնէ նրանցից մի որոշ կարծիք լսի գործի մասին:

Նախ վերկացաւ Գերասիմ Գաւրիլիչի հակառակորդը և փորձուած ու բան տեսած իրաւարանի լրջութեամբ և պաղարիւնութեամբ կրկնեց թեթեալի գործի էութիւնը, իր բողոքի մօտիւնները, յիշեց Շարխաթի և դարեւոր սովորութիւններէ ուժը, յիշեց մի քանի զոյնանման վճիռներ Շրջանային Գատաւանում դեռ հին ժամանակներից և վերջը խնդրեց քանդել Շրջանային Գատաւանի վճիռը և հաստատել իր պահանջները:

Նախագահը և միւս անդամները լսում էին նրան և աչքերը ճպճալացնում: Գատաւագն էլ իր մատներէ ելուններն էր կտտրում փոքրիկ մկրատով:

Արդարադատութիւնը իր գործն էր տեսնում... Յետոյ սկսեց խօսել Գերասիմ Գաւրիլիչը.—Նա շատ կարճ կապեց իր «ճառը» և խնդրեց գործին նայել զուտ օրէնքի և յօդուածների տեսակէտից: Չմերժեց նա ի հարկէ «Շարխաթի և դարեւոր սովորութիւնների» ծածկած առակի ուժը (այդ խօսքերի վրայ մի թեթեւ ժպիտ անցաւ դատախազի դէմքին), սակայն գտաւ որ, եթէ առանց խորը մտածելու այդպէս են վարուել մինչև օրս՝ դա դեռ չի կարող օրէնքի ուժ ստանալ, որի հիմքը պիտի լինի լոգիական ճշմարտութիւնը: Իսկ երբ նա յիշեց ¹⁾ 7-ի հաշիւը, նախագահը ժպտաց և նայեց իր ընկերներին:

Գերասիմ Գաւրիլիչը վերջացրեց և նստեց իր տեղը: Անցաւ մի քանի տաղակալի բոպէ: Հակառակորդը խօսք խնդրեց և առաց էլի մի քանի բան, բոլորն էլ համարեա կրկնութիւն. նոր ոչինչ չկար: Գատաւորները արդէն հասկացել էին «գործի» էութիւնը և է՛լ նրան չէին լսում: Նախագահը քաղաքավարութիւնից ստիպւեա՞ծ՝ նայում էր խօսացող իրաւարանին և ցոյց էր տալիս, թէ լսում է նրան, թէև յոգնել էր և ոչինչ էլ չէր լսում, չէր ուզում լսել:

Յետոյ խօսքը դատախազինն էր: Նա թողեց իր եզունդները, կանգնեց և սկսեց մի ինչ որ բան կմկմալ, նրա կրմկմոցից ոչ ոք ոչինչ չէր լսում և ձեռի համար նախագահը շարժում էր ձերունի գլուխը ու հաւանութեան նշաններ տալիս:

«Գործի» ընթացքը վերջացաւ: Գատաւորները վերկացան, գնացին խորհրդակցելու: Լոբիկ դահլիճը կենդանութիւն

ստացաւ: Ասող, խոսող իրար խառնուեցին: Մօտ եկաւ խանի միակ ժառանգը և բարենց իր պաշտպանին: Սա ժպտաց և յոյս տուեց: Սանի միակ որդին, որ կլոր, թրաշած գէժքով, սև բեխերով, ճարձու և քնատ աչքերով, սև խուճուճ մազերով մի երիտասարդ էր, մի քիչ ուրախացաւ: Եթէ այդ գործում նա տարուէր, ի՞նչ պիտի անէր առանց ժառանգութիւն ստանալու: Կաւ ուտող, խմող, քէֆերի սովոր մի ազնուական ինչ կարող էր անել ազրատանալուց յետոյ:

—Սան, դու մնա, լսիր վճիռը, յետոյ կգաս ինձ մօտ, հիւրանոց, ես քեզ ասում եմ, որ բոլորովին միամիտ եղիր:

—Բաշուստա, խօսեց խանի որդին և ճանապարհ դրեց Գերասիմ Գաւրիլիչին:—Կգամ և քեզ լուր կրերեմ:

—Ինձ լուր հարկաւոր չի. գիդեմ արդէն այդ լուրը. դու ինձ փող բեր,—տեղացրեց նա կամաց,—շատ հարկաւոր է:

Սանը մնաց և մտածում էր: Հօր մահից յետոյ այդ առաջին անգամն էր, որ նա հոգսի մէջ էր ընկել և շատ վախում էր: Բայց երբ լսեց, որ վճիռը իւր օգտին է, ուրախութիւնից փափախը հանեց և սիրուն բեխերը սկսեց ոլորել: Իր ներքին ուժը զգացող վազրի՝ պէս նա դուրս սողաց դահլիճից և վազեց հիւրանոց՝ իւր ուրախութիւնը թափելու:

Նրա մօտ 1900 թ. փող կար, որից 800 թ. պիտի տար Գերասիմ Գաւրիլիչին:—1000 մանէթ կտամ, խօսում էր նա ուրախացած,—մաշալլա:

Գերասիմ Գաւրիլիչը անհող նախաձաշիկ էր անում՝ Վարեայի հետ, երբ Սանը ներս ընկաւ ուրախ ու զուարթ:

Նա էլ ոչինչ չկարողացաւ խօսել, չսեց նստելու հրաւերը և մաշալլա, մաշալլա էր կրկնում: Յետոյ նա հանեց ծոցից երկու հատ 500 թ.՝նոց թղթադրամ ու դրեց Գերասիմ Գաւրիլիչի առջև: Գերասիմ Գաւրիլիչը ժպտաց, հանեց իր ծոցի ցուցակը, և երկու հատ հարիւրանոց մեկնեց Սանին:

—Եօխ, ասաց Սանը. երկու ձեռքերը վերե բարձրացնելով: Կմկմալով բացատրեց իր խորին շնորհակալութիւնը և չուզելով խանգարել նրան, շուտ եկաւ ու դնաց, որ իր ընկերներին յայտնի և մի լաւ քէֆ սարբի:

Վարեան, որ մի թխլիկ և առողջ կաղմուածքով, փարթաւ մազերով, մեծ ու գրաւիչ աչքերով աղջիկ էր, այդքան փող չէր տեսել, զարմացրեց կախեց դուխը և նայում էր իր հացի սարքին: Յետոյ, երբ նա բարձրացրեց գլուխը և նայեց Գերասիմ Գաւրիլիչին. նրա հայեացքը արտայայտում էր մի խորին հաւատ գէպի նրա ամենակարողութիւնը:

Գերասիմ Գաւրիլիչը երեւի չտեսաւ, կամ չախնելու

տուեց իրան, վերցրեց փողերը, դարսեց ցուցակի մէջ, իսկ մի հատ հարիւրանոց թողեց սեղանի վրայ, Վարեայի ձեռքին մօտ:

—Այս ինչո՞ւ թողիք, հարցրեց աղջիկը զարմացած:

—Դա քեզ համար թողի, վերցրու դատկուայ համար բաներ կանես:

—Ախ, հարկաւոր չի, ինչ նեղութիւն, առանց այն էլ ես ձեզ շատ նեղութիւն տուի իմ ձեզ հետ գալովս:

—Դէ լաւ, խնդրում եմ, շարունակեց Գերասիմ Դաւրիլիշը, որ միշտ էլ անյարմար դրութեան մէջ էր ընկնում, երբ ստիպուած էր լինում կեղծ քաղաքավարութեան դէմ կեղծ ձեւերով խօսել:—Դու ինձ ոչ մի նեղութիւն չես տուել, ընդհակառակը... Նա էլ չշարունակեց, այլ բռնեց աղջկայ երկու ձեռքերը և պինդ համբուրեց: Յետոյ նա իր ձեռքով հարիւրանոցը դրեց նրա բեղիկիւղի մէջ և ծիծաղեց:

Նրանք վեր կացան սեղանից:

—Ես մի քիչ գործ ունիմ, ասաց Գերասիմ Գաւրիլիշը, ձեռքի մաքուր անձեռոցիկը ցած դնելով,—դու աղատ ես. ես վաղը գուցէ չկարողանամ դուրս գալ, յամենայն դէպս երեկոյեան հանդիպիր, ես կասեմ, թէ երբ կարող եմ գնալ:—Նա ուզում էր նրան իր մօտ ունենալ երեկոյեան, դրա համար էլ հնարեց այդ ձևը:

Վարեան հասկացաւ և ուրախացաւ. մի թեթեւ կարմրեց և փոքրիկ ձեռքը մեկնեց՝ մնաս լաւրելի:

Գերասիմ Գաւրիլիշը բռնեց մեկնած ձեռքը և միւս ձեռքով գրկելով նրան խոտեց աղջկան և մի պինդ համբուրով սեղմեց նրան իր կրծքին: Աղջիկը ուշ սթափուեց և աղատուկով նրա գրկից, շուտ շուտ դուրս եկաւ ձեռքից:

Գերասիմ Գաւրիլիշը մի քիչ հանդստացաւ յուզմունքից, լուաց ձեռքերը, սրբեց, և գլխարկն առնելով՝ դուրս ելաւ փողոց:

IV

Գեղեցիկ գարնանային օր էր. մէկը այն դուրեկան օրերից, որ մարդուն, մանաւանդ երիտասարդ մարդուն, քաջում է դուրս, ընտելեան հետ խառնելու իր սրտի զեղմունքը և տարուկու հրճուանքների ու անորոշ յոյզերի մի անբացատրելի թափով: Նորաբաց գարնան այդ մատաղ օրերն են, որ յաճախ լցնում են մարդու սիրտ մի անուշ թախիծով, որին փարատելու համար՝ մարդ աշխատում է գտնել մի ընկեր, մի սրտի բարեկամ: Եւ զնում էր Գերասիմ Գաւրիլիշը այդ իր սրտի ընկեր

մօտ, դէպի այն տունը, ուր շատ էր եղել նա որպէս սիրահար մի սիրուն կնոջ, իսկ հիմա նա արդէն դնում է այնտեղ որպէս «փեսացու»...

Հին անուանի, այժմ նսեմացած մի ընտանիք էր այն, որ ապրում էր հին փարթաւութեան փշրանքներով: Գաւառը չկարաց տանել նրա «ազատ հայկացքները» և նա, այդ ընտանիքը, բոլորովին տեղափոխուեց Թիֆլիզ, ուր հասարակաց կարծիքը շատ ազատ է և ոչ բռնադրօսիկ: Տիկին Թէլլին էր այդ ընտանիքի գլխաւոր գէմքը, որի վաղեմի գեղեցկութիւնից մնացել էր այնքան, որքան նրա հօր վաղեմի հարստութիւնից: Բայց և այդ գեղեցկութիւնը բաւական եղաւ տարիներով կապած պահել իր հետ Գերասիմ Գաւրիլիչի պէս մի սիրականի: Թելլին խելօք կին էր և տեսնում էր, որ Գերասիմ Գաւրիլիչին աւելի զբաւիչ «խայծ» է հարկաւոր, զրա համար էլ նա պատրաստեց իր փոքր քրոջը՝ որպէս ապագայ հարսնացու այդ մարդու համար: Փոքրիկ Հեղինէն, այդ 15 տարեկան անմեղ հրեշտակը, «սիրոյ խայծ» լինելու բոլոր հրապոյրները ունէր: Երբ նա աւարտեց ուսումը Թիֆլիզի գիմնազիականից մէկում, իւրացնելով նաև արտաքինի սեթեւութեան հետ և դուր գալու բոլոր մանրակրկիտ ձևերը, 17 տարեկան էր և մի հազուադիւս գեղեցկութեան օրինակ: Հին ազնուականների արիւնը տուել էր նրան նուրբ և զրաւիչ դիմագծեր, երկար հասակ և հազուել իրանք: Փարթամ մազերից յետոյ մեծ տեղ էին ընծում նրա գեղեցիկ աչքերը, որոնց թերթեւանքները սովորականից աւելի երկար էին և մի առանձին զրաւչութիւն էին տալիս նրա դէմքին: Նա լաւ զգում էր այդ զրաւչութեան ուժը և երբէք էլ չէր մոռանում, երբ նրանց մօտ էր լինում Գերասիմ Գաւրիլիչը: Նա հասկանում էր իր մեծ քրոջ զիտումները և աշխատում էր թէև չքմեղս ձևանալ, բայց մի ներքին համակրութիւն միշտ էլ մղում էր նրան դէպի այդ «անունով փաստաբանը» որ արժանաւոր և նախանձելի փեսացուի բոլոր արժանաւորութիւններն ունէր:

Այդ զարնան սիրուն օրերին, ուրիշ թիւ եկող՝ աղջիկների պէս, նա պահանջ չէր զգում տանից շուտ դուրս գալ: Նա լաւ զգում էր այն գաղտնի համակրութիւնը, որ քաշում էր գաւառից դէպի իրանց Գերասիմ Գաւրիլիչին և չէր սխալւում: Մինչդեռ սեղանատանը նստած, նա հաւաքում էր հէնց նոր խմած սուրճի գաւաթները՝ ներս մտաւ այդ Գերասիմ Գաւրիլիչը, որպէս շարունակութիւնը Հեղինէի ծով-մտքերի:

Հեղինէն խիստ շփոթուեց. նա դեռ տանու հազուատով

էր և չսանրած մաղերը՝ ուսերին ցրիւ։— Ախ, հազիւ կարողացաւ ասել նա և մեկնեց սիրուն ձեռքը։

— Ոչինչ, ես հէնց այնպէս եկայ, լռնչալէս էք, Վարդանն ո՛ւր է։ Վարդանը տիկին թելլու ամուսինն էր։

Ներս ամաւ տիկին թելլին, մի լիքը և առողջ կին, քիչ մազերով, լիք ու չաղ թշերով։ Նա ընդունեց հիւրին հին ծանօթութեան բոլոր անկեղծութեամբ, իսկ Հեղինէն քաշուեց իր սենեակը՝ դարդարուելու։ Շուտով եկաւ և Վարդանը, մի առողջակաղմ, խիստ շէկ միրուքով, 40-ը անց գիւղացի երիտասարդ՝ եւրոպական հագուստով։ Սա Գերասիմ Գաւրիլիչի գիմնադիպի ընկերն էր և կառավարչի պաշտօն ունէր մի մեծ գործարանում։

— Լաւ մեծ գործ ես տարել, խօսեց Վարդանը, սովորական հարց ու փորձից յետոյ, նոր լսեցի գալիս, Իբրահիմ խանը պատմեց, մաշալա էր որ ասում էր։

Գերասիմ Գաւրիլիչը զրուիք շուռ տուեց և սպասում էր, թէ երբ է դուրս գալու Հեղինէն։

Հեղինէն դուրս եկաւ թեթի հագնուած, սանրուած և աւելի ևս գեղեցկացած։ Նրա բոլոր շարժումները, ձևերը, խօսուածքն ու ծիծաղը, ժպիտն ու հայեացքը— ողջ կարծես ասում էին, երանի նրան, ով տէր է դառնալու այս չքնաղ ծաղկին։

Նայում էր Գերասիմ Գաւրիլիչը այդ ծաղկին և սիրտը լցում էր մի անզուսպ փափագով։ Նրան յուզող զգացմունքին նա չէր կարող սէր անունը տալ, այն մտքով, որով առհասարակ հասկանում են իդէալական մաքուր սէրը երկու հոգիների, որովհետեւ նրա զգացմունքը աւելի առնական—սեռական հակումներից էր բխում, քան թէ սրտի մաքուր աղբիւրից։ Նրա սրտի աղբիւրը վաղուց էր պղտորել և նրա տարիքն ու կեանքը էլ չէին կարող թոյլ տալ անցած դարձնել։ 20-22 տարեկան ժամանակները եթէ դեռ նա հաւատում էր կնոջ սիրուն, որպէս մի մաքուր զգացմունքի, բայց յետոյ, նրա աչքում նսեմացաւ այդ «սէրը» և կորցրեց «վեհ հրապոյրները»։ Կինը դարձաւ նրա համար սեռական բաւականութիւնների մի անսպառ աղբիւր։ Խորատուգուած իր զբաղմունքների մէջ, ազատ ամեն լուռինսական սկզբունքներից, բարձր հասարակական կարծիքից և բամբաւանքից—նա դարձել էր մի ետական մարդ և չէր կարողանում ընդունել մի քանի «նոր» ճշմարտութիւններ կանանց հարցի խնդրում։

Այն հայեացքը, որով նա նայեց Հեղինէին, այլ շրջանի կանանց համար զոհէ, վիրաւորական կլինէր, բայց տիկին

Թեղիին ուրախացաւ և զգաց, որ մօտ էր իր «հաշիւների» գեղեցիկ վախճանը:

—Որքան գեղեցկացել է Հեղինէն.—խօսեց Գերասիմ Գաւրիլիչը, սրտով ցանկանալով իր «նշանի» մասին խօսք գցելու:—Հեղինէն կախեց գլուխը և մի քիչ կարմրեց: Սկսուեց խօսակցութիւնը և նրանք դուրս եկան պատշգամբը: Հեղինէն ազատ շունչ առաւ և մագերը ուղղեց: Աղախինը բերեց ճաշի սարքը և սեղանը սկսեց բանալ:

Ճաշն անցաւ շատ ուրախ: Գերասիմ Գաւրիլիչը թէև գինի չէր խմում, բայց երբ իր սիրած կնոջ և աղջկայ մօտ էր լինում, արդէն հարբած էր զգում իրան: Ասում, խօսում, հանաքներ անում և ամեն կերպ ցոյց տալիս, որ անչափ երջանիկ է, երբ նստած իր «հարսնացուի» մօտ, զգում է իրան գուրգուրող այդ հայեացքները: Շատ չի անցնիլ և նա կանոնի այդ հրեշտակին, կտանի իր մօտ, իր բնակարանը, և սթանք կապրեն մի գեղեցիկ և անուշ կեանքով, որին կնախանձեն շատ շատերը, մտածումէլ մեր բուրժուայը:

Նրան այժմ ոչինչ չէ հարկաւոր, ոչ փող, ոչ դիրք, ոչ ժիտ, ոչ էլ կնոջ խելքը—այդ բոլորը նա ունէր, և փող, և դիրք, և խելք, նրան պակասում էր միայն մի կին, սիրուն և բնքուշ, որ միշտ իր մօտ լինի, միշտ գուրգուրող և փաղաքշող: Նրա կարծիքով և համոզմունքով ամուսնութեան հարցում դա բոլորում էր ամենագլխաւոր տեղը. այդ էր պատճառը, որ նա սկի չէր էլ մտածում այն «երկուութեան» մասին, երբ մի սրտի մէջ հրկու կամ երեք կին կարող են բուն դնել: Առնելով Հեղինէին և գուրգուրելով Վարեային, նա չէր ընդունում դրա մէջ առտնձին «ստորութիւն».—մաքուր զգացմունքի գաղափարը նսեմացել էր նրա մէջ և սիրուհիները վաղուց խառնել, պղտորել էին «մաքուր սիրոյ» աղբիւրը...

Ամբողջ ճաշից յետոյ Գերասիմ Գաւրիլիչը նուիրեց զբօսանքի՝ Հեղինէի հետ: Տիկին Թեղիին երեխաների պատճառով տանից դուրս չեկաւ, Վարդանն էլ գնաց իր գործարանը:

Գեղածիծաղ է Թիֆլիզի գարունը: Արևի գուրեկան ճառագայթները, մեղմացնելով մի քիչ եղանակի զովութիւնը՝ մի տեսակ անուշ տրամադրութեան էին հակում զբօսողներին և Գերասիմ Գաւրիլիչը՝ տարուած այդ գուրեկան հոսանքին, ոչ մի բանի մասին չէր մտածում: Նա ուրախ էր, թեթեւ, վճռել էր վերջացնել իր «նշանի» բանը Հեղինէի հետ, միայն դեռ չէր իմանում ոնց սկսի և վերջացնի: Նա այդպիսի դէպքերում գործում էր լոպէի ազդեցութեան տակ և սպասում էր այդ «լոպէին»:

Հեղինէն կարծես հասկանում էր որ «բոպէն» մօտ է ու շատ անհանգիստ էր: Նա լաւ ճանաչելով Գերասիմ Գաւրիլիչին, վախում էր մի քիչ նրա սգաւտ հայեացքներէց, դրա համար էլ քանի գնում, շատանում էր նրա յուզմունքը:

Զբօսնելով՝ նրանք հասան մի շքեղ և փառաւոր շինութեան, առջևը հսկայ մաքուր սիւների մի հովանոցով: Հովանոցի տակ միապաղաղ սպակիները խանութի՝ գրաւեցին նրանց ուշքը իրանց ետևում ի ցոյց դրած փարթամութեան զարդերով: Դրանք առանց բացառութեան բոլորն էլ օդեր ու մատանիք, մանեակ ու ապարանջան, շղթայ ու մեղալիօն ու հազար տեսակ անգին քար ու շողակ ակունքներ, ամենավերջին ճաշակով կերտած և դեկորատիւական նկարներով քանդակած:

Գերասիմ Գաւրիլիչը կանգ տաւ և Հեղինէի հետ սկսեցին դիտել: Այնքան սիրուն և գեղեցիկ իրեր կային, որ մարդու աչքը չգիտէր որի վրայ մնար: Մանաւանդ աչք էին ծակում նրանց վրայի գները՝ 300 ռ., 450 ռ., 950 ռ., և այլն:

Գերասիմ Գաւրիլիչը բաց արեց խանութի դուռը և ներանք ներս մտան: Գեղեցիկ գործակատարուհին ժպտուն նազանքով դիմաւորեց նրանց և սկսեց ցոյց տալ մի քանի հաւանելի իրեր: Հեղինէի ուշքը գրաւեց մի մատանի, որ խիստ լաւ ճաշակով էր շինած, ներկայացնելով երկու օձեր, իրարու պինդ զրկած և բաց ընթանները մի մի գեղեցիկ շողակ-ակնով սեղմած: Մանաւանդ գեղեցիկ էին այն փոքրիկ քարերը, որ կազմում էին «սիրող» օձերի փոքրիկ աչքերը: Այդ 5—6 ակները մի այնպիսի գեղեցիկ ճաշակով էին յարմարեցրած, որ մարդ որքան նայում էր, այնքան աւելի էր սկսում հասկանալ «սիրող օձերի» ներքին իմաստը:

Գերասիմ Գաւրիլիչը վերցրեց Հեղինէի ձեռքը և իր ձեռքով նրա հաւանած մատանին դրեց նրա մատը: Բախտի բերմամբ մատանին նրա մատովն էր: Գերասիմ Գաւրիլիչը ժպտաց, մի քիչ կարմրեց և բարձրացնելով Հեղինէի ձեռքը՝ սեղմեց իր շրթունքներին: Սովոր գործակատարուհին իրան չտեսնելու տուեց, իսկ Հեղինէն սկսեց հանել մատանին մատից: Նա կարծում էր, թէ հանած է անում Գերասիմ Գաւրիլիչը:

— Թող մնա, բռնեց նրա երկու ձեռքից Գերասիմ Գաւրիլիչը և խանդարեց հանել:— Այդ ես առայ քեզ համար և դա թող լինի իմ նշանի մատանին, չէ որ ես... նա չկարողացաւ շարունակել և կրկին համբոյր տուեց նրա ձեռքերին:

Մի թունդ ալիք համակեց Հեղինէի սիրտը և նա կարմրեց ու զգաց, թէ ինչպէս տաքանում է երեսը և քրտնում վրդն ու ուսերը: Սպասած «բոպէն» էր:

Գերասիմ Գաւրիլիչը վճարեց մատանու գինը և նրանք դուրս եկան խանութից: Դրսեի հովը մի քիչ շունչ տուեց Հեղինէին և նա սթափուելով շփոթմունքից՝ առաջին անգամ համարձակուեց թեւարկել Գերասիմ Գաւրիլիչին և մի թոյլ կերպով սեղմելով իր բորբոքուած մտքերով լի գլուխը նրա հպարտ ուսին, ուղեց անխօս կերպով ասել, թէ որքան սիրել է նրան և սիրում է հիմա: Նա հայում էր մատի նոր մատանի-օձերին և ժպտում մի անհուն ժպտով: Այն միաքը, որ վերջապէս ինքը նըշանուած է և իր նշանածը Գերասիմ Գաւրիլիչի պէս անունով և դիրքով մի իրաւաբան է, մի այնպիսի մեծ և անսպասելի ուրախութիւն էր պատճառում նրան, որ նրա փոքրիկ սիրտը անհամբերութիւնից ուղում էր ճաքի: Նա փափաղ էր զգում պատմելու այդ ուրախութիւնը ծառերին, թռչուններին, աջ ու ձախ ծանօթ, թէ անծանօթ ընկեր ու ընկերուհիներին,—բայց դա «ընդունուած չէր» և նա լռիկ գնում էր տոաջ, մի անհուն երջանկութեան թափով հրապուրուած:

Գերասիմ Գաւրիլիչն անշափ ուրախ էր, ոչ թէ նրա համար, որ նշանուած էր ու սիրահարուած, ոչ, այլ որ շատ հասարակ և պարզ կերպով վերջացրեց այդ հարցը, մինչդեռ ուրիշները բաւական ծանր ու թեթեւ են անում: Նա զգում էր, թէ որքան մեծ բերկրութիւն է պատճառում իր սիրով Հեղինէին և նրա սիրտը լցւում էր մի անուշ դորովով դէպի այդ անփորձ երեխան: Նա սառնասրտութեամբ մտածում էր, որ այդ «նորութիւնն» էլ կանցնի իր համար:

V

Դիշերը բաւական ուշ էր, երբ իր Անն դարձաւ Գերասիմ Գաւրիլիչը: Նա ամեն բան վերջացրել էլ և առաւօտեան դուրս էր գալու: Խնդրեց ոչ մի նեղութիւն չլրել զօնազանդատարկ ծախսերի համար և չգալ իրան ճանապարհ գցելու կայարանում: Նա այդպիսի «ցոյցեր» չէր սիրում: Մնաս բարեի հանար մի քանի բոլէ առանձնացաւ Հեղինէի հետ և նրան տուեց խանից ստացած թղթադրամներից մէկը, 500 ռ. նոյ և ստիպեց աւելորդ ծախսերի տակ չգցել Վարդանին: Ամեն բան կարգաւորած էր, հարսանիքը լինելու էր մի ամառանոցում, որ յետոյ պիտի որոշէին: Առ այժմ դեռ դործերը ստիպում էին նրան գաւառը գնալ:

Հանգիստ և խաղաղ սրտով նա փոխում էր իր մանր քայլերը Սոլովակի սիրուն մայթի վրայով և դիմում իր Անն: Նա մոռացել էր, որ Վարեան կարող էր գալ և, գուցէ, սպասէր

Նրան: Որքան եղաւ նրա զարմացքը, երբ տեսաւ իր Ա-ի ճրագները վառ և Վարեայեայի գլխարկն ու ձեռնոցները սեղանի վրայ: Տուած խօսքին համաձայն ելել էր խեղճ աղջիկը և վճռել էր սպասել Գերասիմ Գաւրիլիչին: Նրա սիրտը բոլորովին հրապուրուած էր: Եւ ինչպէս չհրապուրուէր. 20 տարեկան մատաղ և ջանել սիրտը սէր էր պահանջում՝ իսկ տանը աղքատութիւն, դատարանում կեղտոտ գրագիրներ, որ շարունակ նրա դէմն աւնում էին (претензии), որոնք բոլորն էլ իր նման քաղցած ու թշուառ մարդիկ էին, նրանցից ոչ մի խելքը գլխին բան չէր կարող սպասել և յուսալ: Ուրիշ բան էր Գերասիմ Գաւրիլիչը. լաւ իրաւաբան և ամուրի: Այդ էր պատճառը, որ նա մի քիչ նկատելով Գերասիմ Գաւրիլիչի քընքուշ վերաբերմունքը դէպի ինքը, սկսեց տեղի տալ և վերջը ինքը բոլորովին հրապուրուեց նրանով: Այդ ճանապարհորդութիւնը մի գեղեցիկ պօէմա էր նրա կեանքում, որ թէի օրինաւորութեան կանոններէն դուրս էր, բայց երիտասարդ սրտի համար մի անդառնալի պօէզիա էր: Նա շատ վաղուց էր պաշտում Գերասիմ Գաւրիլիչին, բայց համեստութիւնը թոյլ չէր տալիս նրան կարծելու, որ ինքը կարող է մի օր նրա պէս «բարձր» մարդու ուշադրութիւնը գրաւել: Նա սխալուել էր: Այս օրուայ հարիւրանոցը բոլորովին ապահովեցրեց նրան, և նա մատաճ կերպով մտնեց կապել իր կեանքն ու ապագան այդ ուժեղ մարդու հետ, թէկուզ նոյնիսկ գաղանի և ապօրինի:

Կոթնած նրա անկողնու վրայ՝ նա մտածում էր և վախում, գուցէ թէ սխալուել է իր հաշիւների մէջ: Այս օր ճաշից յետոյ նա տեսել էր Գերասիմ Գաւրիլիչին թեանցուկ զրօսանքի մի շատ դեղեցիկ հայունու հետ, և «հակառակորդի» միտքը եկաւ. բոլորովին փշրելու նրա սիրուն ամբողջները սիրային: Նա դեռ չէր հաւատում, թէ կարող է լինել մի այդպիսի հակառակորդ: Ինչ և լինի, մտածում էր նա, էլի լաւ բան չի գուշակում այդ գեղեցիկունին և այդ թեանցուկ զրօսանքը: Նա քաջ գիտէր, որ երբէք սովորութիւն չունէր Գերասիմ Գաւրիլիչը թեանցուկ զրօսանք անել:

—Ախ, Վարեա, դու դեռ սպասում ես,—խօսեց Գերասիմ Գաւրիլիչը զարմացած,—ես ուշացայ, երբ ենք գնում:

—Զգիտեմ, խօսեց Վարեան, մագերը ուղղելով, եւ թէ և կ'ուզէի մնալ մի քանի օր, բայց եթէ դուք գնում էք, ես չեմ կարող մնալ, ի հարկէ: Բայց որքան սուշ է, ես կարծեցի դուք շուտ կը գաք և սպասեցի, պէտք է գնամ. տանը կը սպասեն:

Նա սուտ էր ասում, տանը յայտնել էր, որ գիշերը տուն

չի գալու, իր մի ընկերուհու մօտ կը մնայ, իսկ միտքն այն էր, որ Գերասիմ Գաւրիլիչի մօտ մնայ:

—Ո՞ւր, մէկից անց է և ես խորհուրդ չեմ տալ, մնացէք ինձ մօտ. ես Ձեզ ինչպէս կարող եմ թողնել այսպէս գիշերին: —Նա բռնեց Վարեայի ձեռքը և համբուրեց: Վարեան նստեց տեղը, գլուխը թեքեց դէպի նրա ուսը: Գերասիմ Գաւրիլիչը շփում էր նրա սիրուն մազերը և անմիտ հարցեր տալիս, ինքն էլ զարմանալով իր անմիտ հարցերի վրայ:

—Է, ասա տեսնեմ այսօր ինչ ես արել:

Վարեան ցոյց տուեց իր նոր կօշիկները:—Շատ բան չուղեցի տանել, որովհետեւ մի բան... Նա խօսքը կիսատ թողեց և նայեց ուղիղ Գերասիմ Գաւրիլիչի աչքերին,

—Ի՞նչ բան, հարցրեց նա:

—Ո՞վ էր այս օրուայ աղջիկը ձեզ հետ թեմայուկ:

Հարցը շատ անսպասելի էր և որոշ:

—Ի՞նչ ես անում:

—Ոչինչ, շոտ «լաւն էր», ուղիղն ասիր, ինձ չեա «խարում» —խօսեց Վարեան և մի փաղաքշող կատուի պէս սեղմուեց նրան:

—Ես քեզ չեմ խաբիլ, նա իմ հարսնացուն էր, որի հետ ես այսօր նշան դրեցի:

Վարեայի սիրտը կարուեց. եթէ դուք չէք կարող հասկանալ, թէ ինչ ասել է «սիրտ կտրուեց» ես ձեզ ոչինչ չեմ կարող աւելացնել: Հարսնացու, նշան... այդ բառերը կործանեցին խեղճաղջկայ ամիսներով փայփայած սիրային պօէզեան:

Առաջին հարուածը տեղի տուեց մի խիստ թուլութեան և նա մի խորը փափազ դգաց երեխի պէս բարձր հեկեկալու, հառաչելու, սակայն խոհեմութիւնը խեղդեց նրան, նա թեքուեց մօտի բարձերի վրայ և մի խուլ ու լռիկ հեկեկոց կատաղի փոթորկի պէս լցրեց նրա կուրծքը:

Դա այնքան արագ եղաւ ու անսպասելի, որ Գերասիմ Գաւրիլիչը ժամանակ չունեցաւ մտածելու, թէ ինչ մեծ սխալ և մեծ յիմարութիւն էր արել: Մի քանի րոպէ նա իրան կորցրեց, վերկացաւ և սկսեց ման գալ սենեակում:

Որքան խիստ է լուրւ փափազը, այնքան էլ շուտ է հանգստանում ազատ լացից յետոյ յուսաբեկ սիրտը: Վարեան հեկեկաց, հեկեկաց և մի անուշ թուլութիւն պատեց նրան:

Գերասիմ Գաւրիլիչը սկսեց շատ անշնորհ կերպով սիրտ տալ. մխիթարել նրան:

Վարեան բարձրացրեց գլուխը, կանգնեց տեղից և մի վճռական ձայնով ասաց,—Ո՞վ էլ լինի քո հարսնացուն,

հրքան էլ պինդ սիրես դու նրան, ես էլի չեմ հեռանալ քեզանից և այսպէս պինդ զրկած չեմ թողնիլ, որ դու ինձ ձգես:—Նա զրկեց Գերասիմ Գաւրիլիչին և ուզում էր խեղդել իր բազուկների մէջ:

—Վարեա, հոգեակս, հանգստացիր, ոչ ոք քեզ չի ձգիլ, դու այժմ յուզուած ես, յետոյ մենք կը խօսենք:

—Դու չե՞ս խաբում,

—Մի՛թէ, ես երբ և իցէ խաբել եմ...

Վարեան պինդ համբուրեց Գերասիմ Գաւրիլիչի ճակատը և մի լացակրկնած ժպիտ մայր մոնող արևի պէս շառագունեց նրա սիրուն դէմքը: Գերասիմ Գաւրիլիչը ժպտաց և նրանք արդէն հաշտուել էին...

Գ. — 17.

ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵՐՁԱԿՈՐ ԳՈՐԾԵԼԱԿԵՊԻ ՄԱՍԻՆ
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Մոսկուայում հրատարակուող «Современная Жизнь» ամսագրի խմբագրութիւնը անցեալ տարուայ վերջերում դիմել էր Արեւմտեան Եւրոպայի ականաւոր սոցիալիստներին, խնդրելով կարծիք յայտնել Ռուսական Յեղափոխութեան բնոյթի և սոցիալ-դեմոկրատների բռնելիք գործելակերպի մասին: Յիշեալ ամսագրի նոյեմբեր և դեկտեմբեր համարներում տպուած են այդ կարծիքները: Այդ նոյն հարցերի մասին մենք ևս փորձել ենք յեղափոխութեան հէնց առաջին ամիսներից ձևակերպել մեր տեսակէտները: Համեմատելով մեր առաժները եւրոպական սոցիալիստների յայտնած մտքերի հետ դտնում ենք որ ըստ էութեան մեր պաշտպանած տեսակէտները յեղափոխութեան բնոյթի և գործելակերպի մասին նոյնն են եղել:

Առաջ բերենք ականաւոր սոցիալիստների կարծիքները, մի քանի աննշան կրճատումներով, բայց առաջ այստեղ դնենք ռուս ամսագրի յարուցած հարցերը:

1. Ի՞նչպէս է հանդիսանում ռուս յեղափոխութեան բնու-հանուր բնոյթը: Ներկայ ենք արդեօք բուրժուազական յեղափոխութեան թէ սոցիալիստական յեղափոխութեան:

2. Ի՞նչպիսի ունենալով ռուս կառավարութեան յուսա-

հատ ջանքերը՝ չէղօքացնելու յեղափոխական շարժումը, ո՞րը պէտք է լինի ս.-դ. կուսակցութեան վերաբերմունքը դէպի բուրժուական դեմոկրատիան, որ իր ձեռով է կուռւմ քաղաքական ազատութեան համար:

3. Ո՞րը պէտք է լինի կուսակցութեան գործելակերպը Դեմոկրատիայի ընտրութիւնների ժամանակ, որպէսզի «հին բեժիմի» դէմ կռուելիս որքան կարելի է օգտուել բուրժուական ընդգիծագիր կուսակցութիւններից, լիովին ֆնալով Ամստերդամեան բեղօլիցիայի հողի վրայ:

Այդ հարցերին պատասխանել են զանազան երկրների սոցիալիստներ:

1) Խոտլացի սոցիալիստներից կարծիք են յայտնել. Միլանից Ֆիլիպպ Տուրատտի և Հոմբից Անրիկօ Ֆերրի, անուններ, որոնք անծանօթ չեն մեր «Արտաքին Տեսութեան» հետևողներին:

Ֆիլիպպ Տուրատտի ասում է.

— «Տակաւիկայի հարցերը տխրան բծախնդիր են և այնքան դժուար են լուծուում նոյնիսկ տեղն ու տեղը, նրանց կողմից որոնք ապրում են բուն երկրում և գիտեն իրերի և մարդկանց, կառավարութեան, քաղաքական կուսակցութիւնների և այլն և այլնի բոլոր առանձնայատկութիւնները, — որ ես կը համարէի ծայրայեղ ինքնավստահութիւն՝ որևէ խորհուրդ տալ ռուսական շարժման հիացմունքի արժանի զիւղաղներին: Ինձ թւում է թէ՛ այդ կարելի էր հետուից անել չափազանց դժկտրինիօրական ոգով և, հետևարար, անխուսափելի սխալներով:

Որքան ես կարող եմ վճռել կարծիք յայտնելու, — ի նկատի ունենալով աղգարնակութեան այդքան մեծ մասի յետամնացութիւնը, չի կարելի կարծել որ մենք ներկայ ենք սոցիալիստական յեղափոխութեան:

Սակայն, որովհետև բանուորական հարցը ծագել է արդէն և մուսաստանում, շատ կարելի է որ բուրժուական յեղափոխութիւնը դէթ մի քիչ սոցոքորուած կը լինի սոցիալիզմով: Բուրժուական խառնուրդի մէջ սոցիալիզմի մասը որոշել — դա մի խնդիր է որ դուրս է իմ տեղեակութեան սահմաններից»:

Աւելի երկար է Էնրիկօ Ֆերրիի կարծիքը.

— «Պատմական փորձը և սոցիալական գիտութեան աւելի հաւաստի եզրակացութիւնները ցոյց են տալիս, ինձ թւում է, որ ռուսական յեղափոխութիւնը իր ընդհանուր բնոյթով բուրժուական յեղափոխութիւն է, սլարդ արտայայտուած սոցիալիստական տենդենցի ազդեցութեամբ:

Զարգացման ֆազերը կարող են արագացնուել, բայց ոչ

բնաւ ջնջուել—լինի դա անհատի, թէ ժողովուրդների պատմութեան մէջ:

Մարդը չի կարող մանկութիւնից անցնել առնական հասակը, չանցնելով նախ պատանեկութիւնը:

Ժողովուրդը չի կարող ֆէօդալական միջնադարեանական նութիւնից անցնել սոցիալիստական օրինակարգը, առանց անցնելու նախ կապիտալիստական ֆազը, բուրժուական լիբերալիզմի ֆազը:

Անկառիկած ռուսական յեղափոխութեան ոգին, աւելի է սոցիալիստական, քան ֆրանսիականինը, որի մէջ Բաբեօֆ *) սոցիալիզմի միայն փայլակն էր, մինչդեռ Ռուսաստանում այժմ մենք նկատում ենք նաև սոցիալիզմի կայծակն ու սրտը:

Եթէ այդ ուղիղ է, այդ դէպքում ես կարծում եմ, որ ռուս սոցիալիստները,—ինչ տեսակի և լինեն նրանց գործելու եղանակները,—օգտակար են սոցիալական զեռուեռի այս վարկեանում, միայն թէ նրանք ձգտէին միևնոյն նպատակին—ռուս սոցիալիստները չպէտք է տանուէին այն խաբուսիկ ցնորքով որ իւրի թէ կարելի էր անցնել ֆէօդալիզմից դէպի սոցիալիզմը, մի կողմ թողնելով բուրժուական կապիտալիզմը:

Այդ ֆազը Ռուսաստանում, ի հարկէ, կը լինի նուազ տեւողական և կընթանայ աւելի արագ թափով, քան եւրոպական միւս երկրներում, սակայն միանգամայն հեռացնել այդ ֆազը անկարելի է:

Ուստի ես եզրակացնում եմ, որ սոցիալ-դեմոկրատիական կուսակցութիւնը պէտք է մասնակցի Պետական Դումայի ընտրութեան պայքարին, բացարձակ դուրս գալով այնտեղ, ուր յաղթելու որ և է գրաւական կայ և, յամենայն դէպս, օգտակար գործադրութիւն տալով բուրժուական ընդդիմադրութեան ոյժերը ինքնակալութեան դէմ: Մանաւանդ որ Ռուսաստանում սոցիալիստական կուսակցութիւնը, բարեբախտաբար, բաւականաչափ ուժեղ է, որպէսզի, յեղափոխական յաղթանակից և քաղաքական ազատութիւններ նուաճելուց յետոյ, ամեն տեսակ բուրժուական կառավարութեան վրայ բաւականաչափ տիրի և ուղղի նրան՝ քաղաքային և գիւղական պրոլետարիայի շահերի համեմատ:

2) Ֆրանսիացի սոցիալիստներից Կարծիք էն յայտնել Պարիզից իզ. Վալեան, Ժիւլ Գէզ և Դրամէյլից Պօլ Լաֆարգ:

*) Ֆրանսուա Նօէլ Բաբեօֆ (1760—1797) ֆրանսիական մեծ յեղափոխութեան նշանաւոր գործիչ, ծայրայից եակորինական, մասնաւոր սեփականութեան թշնամի:

Ժիւլ Գէյ.

—«Ես կարծում եմ որ սխալուում են նրանք, որոնք ուսական արդի շարժման մէջ տեսնում են միայն բուրժուազիայի կողմից իշխանութեան ուշացած նուաճումը, ինչպէս սխալուում են նաև նրանք, որոնք տարբերութիւններ չդնելով Եւրոպայի ընդհանուր պայմանների և Ռուսաստանի առանձնաշատուկ պայմանների մէջ և հիմնուելով ուսական ազատագրական շարժման մէջ բանութեան տարրի կատարած նշանաւոր դերի վրայ, եզրակացնում են՝ ուսական պրօլետարիատի կողմից իշխանութեան արագացրած նուաճման մասին:

Եթէ «համայն Ռուսիայի» սահմանները պարփակուէին այն բնագաւառների սահմաններում, ուր արդէն զարգացել է արդիւնագործութիւնը, ի հարկէ, մի անկարելիութիւն չէր լինի նրանում եթէ Ֆրանսիական բուրժուական, քաղաքական 89 թուականի նման պատմական մի աստիճան մի կողմ թողած, ձեզանում իրագործուէր ուղղակի սոցիալիստական յեղափոխութիւնը. բայց այդ անկարելի է, եթէ ի նկատի ունենանք ձեր ահագին և այնքան բազմացեղ ազգաբնակչութիւնը, որի մէջ քաղաքաբնակ և գիւղական պրօլետարիատը կազմում է միայն մի երրորդականը:

Այդ պատճառով մենք ներկայ ենք մի յեղափոխութեան, որ միաժամանակ և բուրժուական է և բանութեան այն մտքով որ հաւասարապէս ճնշուած լինելով ինքնակալութիւնից, երկու դասակարգերն էլ, որոնք այլ երկրներում պայքարի են բռնուած, որովհետև բուրժուազիան զինուած է, իսկ պրօլետարիատը դրոշ է տալիս—ձեզանում միևնոյն ժամանակ տպստամբուում են միևնոյն թշնամու դէմ—անցեալի մնացորդ ինքնակալութեան դէմ:

Այդ տեղից բխում է փոխադարձ համաձայնուած գործողութիւնների ոչ միայն կարելիութիւնը, այլ և անհրաժեշտութիւնը. սոցիալիստները և լիբերալները, որպէսզի ժաքին իրենց ներկայացրած դասակարգերի համար տեղ, պէտք է ունենան միատեսակ ցանկութիւն և միատեսակ մերձաւոր նպատակ—կտրել նրանց ճանապարհը կտրույ խոչնդոտը, որ նոյն է երկուսի համար ևս, այլ խօսքերով—ոչնչացնել հին ինքնակալութիւնը:

Եթէ ևս զղուանք չգլխի դէպի համեմատութիւնները, որոնք երբեմն նպաստում են ճշտութեան, իսկ աւելի յաճախ շփոթեցնում են, ևս կասէի, որ բուրժուազիան և պրօլետարիատը նետուած միևնոյն գերեզմանի մէջ, պէտք է միահամուռ տապալույ ջանքեր անեն, որպէս զի յետոյ հնարաւորու-

թիւն ունենան ապրել ինքնուրոյնօրէն և իրար դէմ մաքառելով:

Հմրկ կայ արդեօք աւելացնել որ, այսպիսի կարծիք ունենալով, ես յուսահատութեամբ տեսնում թէ ինչպէս իմ ընկեր—սոցիալիստները նախ բոյկոտ էին անում Դուժան, իսկ յետոյ անտարբեր վերաբերմունք էին ցոյց տալիս պէպի Դուժան, այն պատրուակով, որ նա չի իրագործում մեր ծրագիրը, մինչդեռ այդ առաջին ժողովրդական ներկայացուցչութիւնը, որքան էլ նա աշխնդակուած լինի, դառնում էր կենտրոն, անհրաժեշտ յեղափոխական կենտրոն, որ միջոց էր տալիս բոլոր ընդդիմադիր ոյժերին միանալ բեմից իջնելու հրաժարուող «հին բեթիմի» դէմ և նրա դէմ ընդհանուր յարձակում գործել. կեցցէ Գուժան! Ձեռք ձողնիլ ծեռ տալ Գուժան!

Ուստի ես ամենամեծ ուրախութեամբ նկատում եմ որ մեր բարեկամները փոխել են իրենց հայեացքը և մտադիր են այս անգամ մասնակցել ընտրութիւններին, Դուժայում տեսնելով այն, ինչ որ նա իսկապէս կը լինի. ինչ էլ լինի նրա կազմը, նա կը հանդիսանայ իբրև հզօր մարտական գործիք հին ինքնակալութեան դէմ, որ ստիպուած կը լինի «կամ ենթարկուել կամ հեռանալ»:

Թող լինի յաջողութիւն այդ ճանապարհի վրայ, որի ծայրում ազատութեան սկիզբն է! Եւ մանաւանդ չպէտք է վախենալ բացարձակ համաձայնութեան մէջ մտնելու այսպէս կոչուած «կապտաների» հետ այն գէպքերում, երբ հսրկաւոր կը լինի քայքայել հին կարգի այս կամ այն հիմքը:

Մենք ինչ գործ ունենք թէ գնդակները արձակուած կը լինեն ոչ մեր հրացաններից, միայն թէ նրանց նշանը մերինի հետ նոյնը լինի և տապալեն այն, ինչ որ մենք պէտք է տապալենք:

Եթէ դուք կը հետևէք այս բնականօրէն—անհրաժեշտ միակ յեղափոխական գործելակերպին—որովհետև միայն նա է հնարաւոր կացուցանում յեղափոխութիւնը, այն ժամանակ ձեր կողմը և ոչ ձեզ դէմ կը լինի ամստերդամեան որոշումը, որ արգելելով և դաւաճանութիւն համարելով ամեն մի գործակցութիւն քաղաքական իշխանութիւն ունեցող բուրժուազիայի հետ—ընդհակառակը, հրամայում է բոլոր միջոցները գործ դնել որպէս զի իսպառ բնաջինջ անուի արսօլիտիզմի բոլոր ձևերը և այդպիսով ստեղծել այն բեթիմը, որի մէջ պատկարգերը մաքառուել են իրար դէմ իշխանութեան համար, և որի մէջ այդ իշխանութիւնը երեւի վերջ ի վերջոյ կը նուաճուի կազմակերպուած բանուորական դասակարգի ձեռքով:

Հռչակաւոր ֆրանսիացի մարքսիստ Պօլ Նոֆարդի կարծիքը:

—Ռուսական յեղափոխութիւնը բուրժուազական յեղափոխութիւնն է, բայց նա տարբերուած է Անգլիայի և Ֆրանսիայի յեղափոխութիւններէրէ, ինչպէս դրանք էին իրարից զանազանուած այն միջավայրի պայմաններով, ուր նրանք տեղի ունեցան: Պատմանութիւնը կրկնուած է միայն վարեացիաներով:

Ռուսական միջավայրի պայմանները առաւել ևս տարբերուած են Ֆրանսիական միջավայրի պայմաններէրէ, քան այս վերջին պայմանները զանազանուած էին անգլիական միջավայրի պայմաններէրէ:

Ռուսական յեղափոխութեան իբր շարժիչ ոյժեր են հանդիսանում. 1) թոյլ բուրժուազիան, արդիւնագործական և առևտրական, 2) գիւղացիական ահադին ազգաբնակչութիւն, որ ազատուած է ճորտական կախումից և անցեալ համայնքային կալիքով հողային սեփականութիւնից դիմումէ դէպի տնտեսական հողային սեփականութիւնը և 3) արդիւնագործական պրոլետարիատ, աւելի մեծաքանակ, քան այն որ գոյութիւն ունէր Ֆրանսիայում 1789 թուականին. այդ պրոլետարիատը նոր է ստեղծուած օտարերկրեայ կապիտալիստների շնորհիւ զարգացած արդի խոշոր արդիւնաբերութեամբ: Այդ օտարերկրեայ կապիտալներից ենթադրուած են որ միայն Ֆրանսիան մատակարարել է աւելի քան 2 միլիարդ: Այդ պրոլետարիատը գտնուելով ևրոպական սոցիալիզմի ազդեցութեան տակ, յեղափոխութեան ամենազօրեղ մղիչնէր: Աւելի քան հաւանական է որ առանց այդ պրոլետարիատի հռանգուն և վճռողական միջամտութեան, բուրժուազիան չէր խիզախիլ կռիւ դուրս գալ ինքնակալութեան դէմ, թէև հէնց նա, այդ բուրժուազիան, պէտք է օգտուի յաղթութեան առաջին պտուղներով, թէև նա կարող է շարունակել իր զարգացումը միայն ջախջախելով այն երկաթէ օղակը, որի մէջ նրան սեղմուած է բիւրօկրատիայի բռնապետութիւնը:

Բուրժուազիային, օգնութեամբ այդպիսի ձեռնարկու և համարձակ պրոլետարիատի, կաջողուէր տապալել ինքնակալութիւնը, եթէ այդ վերջինը իր տրամադրութեան տակ չուներնար ընդդիմադրութեան այնպիսի ոյժեր, որ չունէին Անգլիայի և Ֆրանսիայի վեհապետները: Ռուս ինքնակալութեան կատարելագործուած ապպարատը և կազակ զօրքը, որ Ռուսաստանի վրայ նայում է իբրև օտար թշնամի երկրի վրայ, ինքնակալութեան տուին հնարաւորութիւն իրար յետևից յաղթիլ քաղաքների և գիւղերի ապստամբութիւնները: Ինչպէս և բուրժուազական արդիւնագործութիւնը, ինքնակալութիւնը օգտուեց օտարերկրեայ կապիտալներով՝ պահպանելու և զար-

գացնելու ձնշման և զսպման ոյժերը, և մինչև որ Ռուսաստանից դուրս փող ճարուի, ինքնակալութիւնը հնարաւորութիւն կունենայ երկարել իր սոսկալի հոգեվարքը:...

Տնտեսական յարաբերութիւնների ոյժը տիրողաբար պահանջում է ռուսական յեղափոխութեան յաղթութիւնը: Որքան շուտ վրայ կը հասնի յաղթանակը—այնքան լաւ կը լինի արդիւնադորձական և երկրագործական պրօլետարիատի համար:...

Այդ պատճառով ևս կարծում եմ որ սոցիալիստները պէտք է բոլոր միջոցները դործ դնեն, որպէսզի ինքնակալութեան դէմ դուրս բերեն այնպիսի մի Դուժա, որին ինքնակալութիւնը անկարող լինի արձակել:...

Անցքերի ճակատագրական, անխուսափելի ընթացքը կը յանձնի իշխանութիւնը բուրժուազիային: Բայց եթէ անկարելի է ոչնչացնել պատմական ֆազան, այնուամենայնիւ կարելի է կրճատել նրա տեսութիւնը:...

3). Շվեյցարական սոցիալիստներից կարծիք է յայտնել Լյուդար Միլլօ: Նկատելով որ հեռուիցվուար է ճիշտ կարծիք յայտնել և միայն բուն երկրի մէջ գտնուող ընկերները ձեռքի տակ ունեն իրական փաստերի ամբողջ համագումարը ձեռնհաս դատողութիւններ ապու համար, նա ասում է.

—«1. Ես ռուսական յեղափոխութեան մէջ չեմ տեսնում սոցիալիստական յեղափոխութիւն: Նրա էութիւնը, կուրը չէ կապիտալի դէմ, այլ քաղաքական արսօլիւտիզմի դէմ:

Սակայն ես հրոժարւում եմ անուանել նրան բուրժուազական յեղափոխութիւն, նախ և առաջ այն պատճառով որ նա արդիւնք է աւելի շուտ բանուորների և գիւղացիների ջանքերի բուրժուազական տարրերի, երկրորդ այն պատճառով որ նա քաղաքական ազատութեան հետ միաժամանակ ձգտում է ձեռք բերել նաև յեֆօրմներ յօգուտ քաղաքի և գիւղի բանուորական մասսաների:...

Ես նկատում եմ ռուսական յեղափոխութեան մէջ քաղաքական յեղափոխութիւն սոցիալիստական տեսլենցներով:

2. Ինքնակալական կառավարութեան ակներև շահը կայանում է նրանում որ բաժանի իր հակառակորդներին: Պակաս ակներև չէ որ յեղափոխութեան շահերը պահանջում են որ ինքնակալութեան հակառակորդները իրանց ոյժերը չվասնեն իրար դգգգելու վրայ, այլ ինքնակալութեան վրայ յաղթանակ տանելու վրայ: Իհարկէ, սոցիալիստական կուսակցութիւնը պէտք է ամբողջապէս պահպանի իր աւտօնօմիան, որպէսզի հնարաւորութիւն ունենայ ազատօրէն քննադատել աահանջած

դէպքում՝ բուրժուազական դեմոկրատիան և միել ռուսական յեղափոխութիւնը որքան կարելի է աւելի սոցիալական կողմը: Սակայն անձեռնմխելի պահպանելով իր աւտօնոմիան նա պէտք է բոլոր ոյժերով աջակցի բուրժուական դեմոկրատիայի այն ջանքերին, որոնց նպատակն է ազատութեան նուաճումը:

3. Պէտք է աշխատել որ Դուման կազմած լինի ընդիմադիր կուսակցութիւններէջ. դրա համար հարկաւոր է ընտրողական համաձայնութիւն գրանց մէջ:

4). Բելգիական սոցիալիստներէջ է. Վանդերվելդէն տպուէս է ձեռնկերպում իր հայեացքները:

—«Ճիշտն ասած ես չեմ հասկանում թէ ինչպէս կարելի է այսպիսի մօտենալ, երբ ամեն ինչ զործողութեան մէջ պէտք է լինի, դատողութիւններ անել Ռուսական Յեղափոխութեան բուրժուական թէ սոցիալիստական լինելու մասին:

Կատարում է մի յեղափոխութիւն, որ ժամանակագրական կարգով լինելով վերջինը, պիտի իր վրայ աւելի կրի սոցիալական պրոլետարիատի կնիք, քան նախորդները:

Արդեօք կը հասցնի՞ նա սոցիալիզմի անմիջական յաղթանակին:

Այդպիսի եզրակացութեան դալու համար, պէտք է ենթադրել, որ մի ժողովուրդ $\frac{9}{10}$ գիւղացիներէջ բաղկացած, ընդհանուր առմամբ անգրագէտ, աւելի է հասունացած սոցիալական յեղափոխութեան համար, քան այն ժողովուրդները, որոնց մօտ արդիւնազորական պրոլետարիատը կազմում է ազգաբնակչութեան մեծամասնութիւնը!

Երբ բուրժուական դեմոկրատիան մասնակցում է շարժման, սոցիալ-դեմոկրատիան գնում է նրա հետ միասին. երբ բուրժուական դեմոկրատիան կանգ է առնում կամ յետ-յետ է նահանջում, սոցիալ-դեմոկրատիան գնում է առանց նրան, կամ նրա դէմ... Չնայելով բուրժուական դեմոկրատիայի բոլոր թուլութիւններին, նա մնում է անհրաժեշտ ֆակտոր ազատագրական շարժման, որի մէջ շահագրգռւած է ոչ միայն պրոլետարիատը, այլև ինքնակալ բուրժուարիայի բոլոր թշնամիները և զոհերը:

3. Ես կարծում եմ որ իւրաքանչիւր երկրի կուսակցութիւնը ինքը պէտք է որոշի իր տակտիկան... Եթէ ազատագրական շարժումը յաղթանակի, ես պարզասրտութեամբ ասում եմ, որ ինձ ընտելացաւ չի պատճառիլ, որ նրա յաղթանակը կատարուէջ ոչ Ամստերդամեան բեղովիցիայով որոշուած կանոնների համաձայն:

Ինչ վերաբերում է Դումայի ընտրութիւններին, ես

Թոյլ կը տամ ինձ նկատել, որ իւրաքանչիւր անգամ հրք մի յեղափոխական կուսակցութիւն քարոզել է չմասնակցել ընտրութիւններին, բայցօտ, նրա զօրքերը լքել են նրան, կամ թէ հանգամանքները ստիպել են նրան փոխել իր սկզբնական վճիռը:

Գերմանական սոցիալիստները երկար ժամանակ մերժում էին մասնակցելու պրուսական լանդտագի ընտրութիւններին. այժմ նրանք մասնակցում են գրա մէջ և ես չեմ լսել որ այդ բերէր որևէ ֆրաս սոցիալիզմին:

Նապօլէօն III-ի ժամանակ ֆրանսիական յեղափոխականները խորհուրդ էին տալիս Պարիզի բանուորներին չգնալ քուէատուփերի մօտ. և պարիզեան բանուորները հակառակ նրանց գնացին և յետագայ անցքերը ապացուցին որ բանուորները իրաւացի էին:

Նմանապէս, եթէ ես լինէի Ռուսաստանում, ինձ թուում է թէ ես դէմ կը լինէի բոյկոտին, և եթէ իմ մէջ տատանումներ լինէին անմիտ ընտրողական սխտեմի, ինչպէս և Դու մայի օրէնսդրական անուժութեան պատճառով, Դու մայի որ այնուամենայնիւ կը լինի երկրի մէջ միակ շատ թէ քիչ ազատ տրիրունը, ուր դեռ երէկ բոլորովին գոյութիւն չուներ այդպիսի մի տրիրուն, կառավարութեան ղերքը ինձ կը թելադրէր իմ անելիքը, իմ ընթացքը, որովհետեւ կառավարութիւնը ուզում է չափաւոր և հլու Դու մա: Դա բաւականաչափ հիօք է նրա համար որ սոցիալ-դեմօկրատները պործ գնէին իրենցից կախում բոլոր ջանքերը, որպէսզի կառավարութեան հակադրին յեղափոխական Դու մա, որի մէջ լիբերալ տարրերը հաշուի առնեն սոցիալիստական տարրերի աւելի արմատական ձգտումները»:

Նման կարծիքներ են արտայայտել և Անսէլ, Կամիլլ Գիւլիոմանս:

Անգլիական սոցիալիստները Գ. Կվեյչ ասում է.

1. Մենք կասկածում ենք որ Ռուսաստանը անտեսադէս բաւականաչափ զարգացած լինի լիակատար սոցիալիստական յեղափոխութեան համար:

2. Տակտիկները կախում են հանգամանքներից, իսկ ներկայ հանգամանքներում աշխատակցութիւնը բուրժուազական դեմօկրատիայի հետ կարող է անհրաժեշտ լինել կառավարութեան յետադէմ (բէակցիօն) ջանքերն յաղթահարելու աեսակէտից: Զպէտք է կարծել, որ այդպիսի աշխատակցութիւնը կարող է որևէ չափով անուանարկել կամ վտանգի են-

թարկել սոցիալ-դեմոկրատական շարժման յեղափոխական բնույթը:

3. Անցքերը, ըստ երևոյթին, վկայում են, որ սոցիալ-դեմոկրատները սխալ գործեցին, ընդհանուր յայտարարելով առաջին Դոմալին, այդ պատճառով յիշեալ փորձը պէտք է որ նրան թելադրէր ներգործական մասնակցութիւն առաջիկայ ընտրութիւններում, անկախ—ամենուրեք, ուր այդ կարելի կը լինի, և այլ դէպքերում՝ բուրժուական օպպոզիցիայի հետ միասին:

Բերելով այս քաղաքականութիւնը մենք կը ցանկանայինք որ այս կարծիքները դաստիարակող ազդեցութիւն ունենային մեր այն սոցիալ-դեմոկրատների վրայ, որոնք իրեն մտածողութեամբ ու տեմպերամենտով աւելի շուտ դաւադիր—յեղափոխականներ և անարխիստներ են, քան Մարքսի աշակերտներ:

S.

ՀԶՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՑ ՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ

I

Զինուորական թանգարաններում կարելի է երբեմն հանդիպել երկաթեայ ծանր ռազմագեղատու զարդարուած միջնադարեան ասպետների մոնեկէնների, որոնց արտաքինն արդէն ներշնչում է դիտողին զարմանք և երկիւղ բոլորնցքային իրաւունքի դարեշրջանի այն քարացած արձանի առջև: Որքան դժբախտ են եղել սրանց ժամանակակիցները, որ հենց այս սոսկալի բազանի տակ դարեր տանջուել են միայն շնորհիւ այն հանգամանքի, որ անկարող են եղել բողոքելու գիշատիչ բարոնների ու սրանց մանկաւիղների վոհմակների դէմ և թագացրել են մինչև գերեզման իրենց արտասուքները:

Բայց բաւական էր վերցնել նրանց վրայից այդ խրոխտ մետաղեայ զրահը, բաւական էր հասարակ որսորդ վիլհելմ Տէլլի աներկիւղ կոչը յանուն ժողովրդական ազատութեան, որպէսզի

աւստրիական ինքնակալ ու հզօր ասպետների ընտիր բանակը ջարդուէր դիւղացիների բրիչներէ, փոցխերի ու բահերի դիմաց:

Մեր ժամանակը նոյնպէս հարուստ է այդ տեսակ մոնէկէններով, սակայն սրանք կենդանի էակներ են զրահաւորուած մոսիւններով, մաուզէրներով ու նազաններով. լանջապանակի տեղ սրանք ծածկուում են գեղազարդ փամփշտակալներով ու նիզակի տեղ ափի մէջ ամուր սեղմում շառաչող մըրալէն ու կնուտը: Ի՞նչ փոյթ, թէ այդ ասպետների անունը կնքուած կը լինի սուս թէ «ազգային կողակ» անունով. երկուսի գերը միանգամայն հոմանիշ է: Գիւղերը սարսափում են երկուսի ստուերից, և ամեն անգամ մի կերպ ազատուելով հարիւրականներից կամ ֆիդայիների խմբերից՝ շինականները շիշեր են փշրում, աղերսելով երկնքին հեռու պահել հայ գիւղերը այդ պատուհասից ու զուլումից: Զանգեզուրում հրէշ Շիրին հրամանատարի յետևից սարսափած գիւղացիները գոչում էին. «հրաժարիմք՝ի սատանայէ», և այդ խմբերը պաշտպանում էին հայոց աշխարհը ճիշտ նոյն մեթոդով, ինչպէս որ միջնադարում կոյսերական ու պապական զօրքերը՝ հոովմէական սրբազան կոյսերութիւնը:

Յիշում էք, ընթերցողը, շատ մօտ անցեալը, երբ մեռելային լուսթիւն էր տիրում մամուլի մէջ «ազգային կառավարութեան» հերոսների մասին և դաշնակցական թերթերը, թերթիկներն ու թուոցիկները ծունկ չոքած խունկ էին ծխում իրենց Միլիքների, Շիրինների, Գեորգների և ուրիշների մշուշապատ դէմքերի առաջ, դիֆիրամբներ մոգոնում նրանց հասցէին և յայտարարում, որ նրանց սրբազան գործունէութիւնը նոյնքան պայծառ ու անարատ է, որքան և արեգակի լոյսը, որ ժողովուրդն երջանիկ զգալով իրեն դաշնակցութեան դրօշի և սրա ընդմենտի տակ, ուրախութեամբ կնքում էի լբանունը «դաշնակցական»: Յիշում էք Սուրբ Դաշնակցութեան մայրերին ու քոյրերին, երբ նրանք զգայուն ու արտասուալից հայեացքներով լսում էին ազգային փրկիչների դիւցազնութիւնները մեծ պղտիկ ու պրոֆեսիօնալ ճառախօսների բերնից և գոչում. «Միթէ կարելի է հայ լինել և ոչ դաշնակցակալա՞ն»:

Սակայն հարեցողութեան օրերն անցան և հիացման հմայքը չբացաւ գաւառներում թափուած արեան ծովի մէջ: Մղձաւանջը խեղդում էր բոլորիս կուրծքը, բայց ամենից ուժեղ տիրապետում էր հասարակական կեանքի հրապարակին կազմ ու պատրաստ դաշնակցական ղինուորական բիւրօկրատ-

իան իւր զօրքով, դատարաններով, բանդերով, պատժական արշաւանքներով:

Եղկելի օրեր, երբ ամեն մի յեղափոխական տեսնում էր, թէ ինչպէս «յեղափոխութեան» վահանով քօղարկուած մի կուսակցութիւն ի մի ձուլելով իւր դրօշի տակ զժրախտ հայրենիքի բոլոր ագուաներին¹⁾, հետզհետէ իւրացնում էր տաճարակային ընադդներ ե խեղդում ամեն տեղ, ամեն վայրում ժողովրդական բողոքի ամենաթույլ նշոյլն անգամ, երբ գիւղերում նրա ագենտներն անամօթաբար էկսպրոպրիացիայի էին կենթարկում ուրիշի շարժուն, երբեմն կենդանի դոյրը և իրենց մտրակների սուլոցով խլացնում՝ տառապողներին հառաչը, երբ նոյնիսկ կազմակերպուած ներկայացուցչական ժողովները յամառ ու խիստ պայքարը դաշնակցական բիւրօկրատիզմի և զուլթուրկրատիզմի դէմ ազգային իշխանների ամենախիստ դիմադրութեան էր հանդիպում, երբ մի խօսքով՝ ստրկութեան շղթաներով կապկապուած ժողովուրդը, տեսնելով ազգային յեղափոխականների այդ էկսպրոպրիացիաները, միանգամայն կորցնում էր յեղափոխուելու իւր ակործակը և ձգտում իւր ցաւադին ու դժբախտ դուլսը խոնարհեցնել պետական, թէպէտև բիւրօկրատիական իշխանութեան առաջ:

Բայց ահա կամաց կամաց մամուլը սկսում է պատուել մթին ու մռայլ իրականութեան քօղը. նետում են հրապարակ անվեհեր գրիչներ, որոնք բարձրացնում են դաշնակցական պոլիցիական կառավարութեան վարադոյրը և օգը թնդում է կեղծ, ողբերգակ ֆրէյլինցլիների խլացուցիչ հայհոյախառն բացականչութիւններից:

Կատաղի ածականներ էին ժայթքում դաշնակցական հրաբուխները. «զուք դաւաճաններ էք, լրտեսներ, զրպարտիչներ, սրիկաներ, ստորներ, պրոմակատորներ, զուք ստում էք, կեղծում կուրացած կուսակցական շահամուլութեամբ» և այլ շքեղագարդ գրական գոհարներ էին թափում սրանց գոգուում ու խոցոտուած գրիչների տակից: «Հայ ժողովրդի աշխատաւոր մասնաների՝ ամբողջ հայ ազգաբնակչութեան 90% -ը հպարտ քայլում է դաշնակցութեան դրօշակի տակ, փառաբանում նրա հերոսների յիշատակը, ուրախանում նրանց անշահամուլութիւնից, ազնուութիւնից ու անձնուէր գործունէութեանը:

¹⁾ Պատիւի ու փամփլիկ բուրժուայներին, հայր. կենսամթերքները ու դրամի վաշխառուներին, յեղափոխութեան ուրուականից փախչող կալուածատէրերին ու ֆէօդալներին, դէնք ու ռազմամթերք վաճառողներին և ընդունակ խուլիգաններին, գրգռելով դրանց զիջատիչ անյատակ ակօրծակը:

թիւնից. դաշնակցութեան կաժըը ժողովրդի կամքն է և ով կը համարձակուի հակառակ ընթանալ այդ կամքին, կը յայտարարուի դաւաճան և կը ստանայ համապատասխան պատիժ». ահա դաշնակցական մամուլի բովանդակութիւնը կէս տարի առաջ: Իսկ այսօր. վերջրէք, թերթեցէք «Յառաջ=Աւիք=Զանգ=Երկիր=Փամանակի» համարները, տեսէք, ինչ խոստովանանքներ ևն հետզհետէ սպրտում նրանց էջերում, ինչպէս դաշնակցութեան դրական մոլորակները ստիպուած լինելով հաշտուել անհերքելի փաստերի հետ, փնտրում են հետզհետէ մեղմացուցիչ դէպք յանցանաց, արդարանալու երկաթիայ օղակներով նրան սեղմող օպպօզիցիօն մամուլի ներկայացուցիչներին առաջ: Պաւառական քաղաքներում կրկին անդամ կենդանանում է պայքարը, և ամեն կողմից, ամեն անկիւնից հնչում են բողոքներ ու ձայներ, թէ բաւական է որքան լռութիւններ են կատարուել. ժամանակ է յանձնել ինքնապաշտպանութեան դործն իրեն ժողովրդին:

Ի հարկէ, մի խաւար բիւրօկրատիական կազմակերպութիւն հողիւ թէ կարողանար զիմանալ գիտակից տարրերի այս գօրեղ արշաւանքին. պէտք էր այս կամ այն կերպ բաւարարութիւն տալ ժողովրդի խիստ դժգոհութեան. պէտք էր նրան «ազատութիւն» շնորհել: Եւ ահա դաշնակցութեան մամուլը փոխում է իւր նէյնիմները ու հայ ժողովրդի գնդակի ու մտրակի սուլոցին սովորած ախանջը սկսում են շօյել անոյշ մեղեդիներ: Երանի՛ քեզ, առաւապեալ ժողովուրդ. քեզ կամենում են նուիրել սահմանադրութիւն. այսուհետեւ ազատ կը զգաս քեզ և ինքդ կը կտառվարես քո գործը...

Բայց այստեղ էլ, ինչպէս յատուկ է միայն ուժի ու բողոքի առաջ խոնարհող խորամանկ բիւրօկրատներին, դաշնակցական մամուլի շէֆերը հնչեցնում են փողերը, թէ իրենց խիստ պատասխանատու ու սրբազան գերը կատարած են համարում այս արիւնոտ շրջանում, պաշտպանելով անդէն ու անպատրաստ ժողովրդին վերջնական կորստեան ճանկերից, թրքի խէնչալից ու գնդակից, իսկ այժմ, ինչպէս վայել է մի յեղափոխական կուսակցութեան՝ որոշել են յօժարակամ յանձնել ինքնապաշտպանութիւնը ժողովրդին:

Կեղծող փարիսեցիներ:

II

Անցնենք Շուշու իրականութեան: Այստեղ էլ «Ապառաժ»-ը որոշեց յանձնել ինքնապաշտպանութիւնը ժողովրդին: Այ-

ստեղ էլ թաղային ժողովներում, որոնք հասարակ մասնիկներ են դաշնակցական բիւրօկրատիայի ահագին մեքենայի մէջ ու զուրկ ինքնորոշման ամեն մի նշույլից, պրոֆեսիօնալ ճառասուններն ու ջատագովները սիրապետուն ոճով ու քաղցրալի ժպիտներով դրուատեցին դաշնակցութեան ազնիւ ցանկութիւնը և առաջարկեցին ամեն մի թաղի հեղ հօտին ընտրել 15 հոգի քաղաքացիներ, որոնց ընդհանուր ցուցակից կրկին անգամ պիտի գտուէր ժողովրդական ընտրութիւններով մի գործադիր մարմին բաղկացած 15 հոգուց:

Հինգ թաղերում էլ հնչում էին դեղեցիկ խոստումներ. գործադիր մարմնի ընտրութիւնները, ասում էին, կայանալու է քառանգամ սիստեմով. դաշնակցութիւնը կը յանձնի նրան իր հաշիւներն ու վերջին հրաժեշտը կը տայ ինքնապաշտպանութեան գործին:

Շուտով ժողովուրդը կը լինի իր գլխի տէրը, իր կեանք ու գոյքի պաշտպանը և այլն *): Այնուհետև քաղաքում սկսում են պտտեցնել համարներով նշանակած թերթիկներ, որոնց վրայ տպած էին թաղային ժողովներում ընտրած 49 թեկնածուի անունները: Քաղաքացիները պարտաւոր էին խաչերով նշանակել ցանկացած 15 հոգուն: Ընդհանուր քուէարկութեան արդիւնքը ցոյց կը տար երջանիկ խորհրդի կազմը:

Իր ժամանակին ընթերցողներն երեւի ծանօթացած կը լինեն զանազան թղթակցութիւններից այդ «աչքակապուկային» ընտրութիւնների հետ: Թէ ի՞նչ ապօրինութիւններ են կատարուել դաշնակցութեան ծրագրով կատարուած այդ «խնամակալուած» և աչառու ընտրութիւնների շուրջը, մեզ համար միանգամայն անհետաքրքիր են: Փառտն այն է, որ ընտրութիւնները վերջացել են, և պարզուած է քուէարկութեան հետեանքը:

Սակայն նոր խորհրդի Ա. նիստում տարաձայնութիւններ են առաջանում դաշնակցութեան տեղական տկանաւոր գործիչ

*) Այս թաղային ժողովներով վերջացաւ դաշնակցութեան նախընտրական ագիտացիան: Ի դէպս պէտք է ասել, որ ինքնապաշտպանութեան և այլ ինդիւիդուալ մասին ագիտացիա մղելու նախադրութիւն չունին միւս կուսակցութիւնները, ոչ այնքան շտրկաւ պատերազմական զրութեան, որքան դաշնակցութեան զարգացած շփօնաժին, որ աշալուրջ հրուզում է իր ինամքին յանձնած հեղ հօտի ամեն մի շարժումը: Թաղային պաշտօնական ժողովներում էլ միանգամայն անկարելի է ազատ քննադատել «տիրապետներին» ռազմական տակտիկայի շտրկիւ: Մտքի ազատ մրցման ճանապարհը կտրուած է այսպիսով մեր նուաճուած իրականութեան մէջ անանցանելի ամբարտակներով:

վ,-ի հրաժարականի պատճառով: Նրա օրինակին ցանկութիւն են յայտնում հետեւի նաև մի քանի տնդամներ: Դրութիւնը լրջանում է, և 15-ի խորհուրդը որոշում է գումարել առանձին հրաւիրաթղթով աչքի ընկնող քաղաքացիներին խորհրդակցութեան: Դեկտ.-ի 26-ին տեղի է ունեցած խառը ժողովին ներկայ էին մօտ 60 հոգի, խորհրդով և զաշնակցութեան ներկայացուցիչներով հանդերձ. այստեղ, ժողովում, տեղի են ունենում զաշնակցութեան ղորավարի հռչակաւոր խոստովանութիւնները, որոնց վրայ կէտ առ կէտ այժմ կենդրոնացնենք մեր ուշադրութիւնը:

III

Ձօրավարը յայտարարում է, որ այս ընտրութիւններն երկու սեռերի հաւասար մասնակցութեամբ քառանդամ սիստեմի գործադրութեան միակ և առաջին օրինակն է Ռուսաստանի պատմութեան մէջ և որ այդ անգուղական գործը կատարուեց, ի պատիւ յեղափոխական զաշնակցութեան, վերջինիս ղեկավարութեան տակ: Դաշնակցութիւնն ուրեմն գիմել է այն հոնապարհին, որին սովորաբար ձգտում են գիմելու բոլոր միւս յեղափոխական կուսակցութիւնները, ապա ուրեմն նրա կատարած դերը միանգամայն յեղափոխական է: Յննենք մի առ մի: Իրան այդ ընտրութիւնները քառանդամ սիստեմով են կատարուած, թէ սա մի սիրուն, ճոճոսն Ֆրաղաքանութիւն էր ժողովրդի առջև յեղափոխական փետուրներով ներկայանալու:

Ինչդէս յայտնի է, քառանդամ սիստեմ ասելով հասկանում ենք ընտրողական ձևի չորս անբաժան ֆունկցիաներ՝ ուղղակի, գաղտնի, ընդհանուր և հաւասար քուէարկութիւն:

ա. Ընտրութիւններն ուղակի չեն կարող համարուել, քանի որ թեկնածուների ցուցակը կազմուել է թաղային ժողովներում և ապա այդ թեկնածուների սահմանափակ ցուցակով ժողովուրդը ստիպուած էր առաջնորդուել ընտրութիւնների ժամանակ: Նոյն իսկ թեկնածուների մի մասին քուէարկութեան են ենթարկել առանց նրանց համաձայնութիւնն առնելու: Մինչդեռ քառանդամ սիստեմը պահանջում է, որ ցանկացողներն անմիջապէս դնեն իրենց թեկնածութիւնը, իսկ այնուհետև ժողովուրդն ազատ է ընտրելու նրանց միջից իր ցանկացածներին:

բ. Ընտրութիւնները գաղտնի չեն եղել, այլ պարզ, որովհետև ընտրողական թերթիկների ծայրին կային համար-

ներ, որոնցով հեշտ կարելի է խմանալ, թէ ո՞վ, ո՞ւմ է ձայն տուել:

գ. Ընտրութիւններն ընդհանուր չեն եղել, որովհետեւ չորում թերթիկներն քանակն եղել է մօտ 300.) (ինչպէս յայտնեցին ժողովում), մինչդեռ 20 տարեկան հասակից սկսած Շուշում երկու տեղից կարելի է հաշուել մօտ 5000 հոգի: Ես յետում եմ հետեւալ թուերի վրայ՝ 1887 թ.-ի ստատիստական տեղեկութիւնների մէջ Շուշում հայ ազգաբնակութեան թիւը հասնում էր 15,160 հոգու (8712 տղամ. 6448 կին): Դժբաղդաբար ձեռքիս տակ չունիմ 1897 թ.-ի ընդհանուր վիճակագրական տեղեկութիւնները, որպէսզի կարելի լինէր աւելի մօտ անցեալից վերցնել այն թուերը:

Ամենայն հաւանականութեամբ ազգաբնակութեան քանակը անմիջապէս մինչև կոտորածները շատ չնչին փոփոխութիւնների է ենթարկուել, ուրեմն ընդունում ենք բնակիչների թիւը կոյոր թուով 15000: Կոտորածներից յետոյ սկսեց դժուր գաղթականութիւն քաղաքից դուրս և զիւղերից քաղաք: Maximum կարող է գաղթականութեան դիմած լինել արգարնակութեան $\frac{1}{3}$ մասը:

Ուրեմն Շուշում մօտաւորապէս ապրում են այժմ 10,000 հայ: Տեսնենք զաշնակցութեան ուղեպատով քանի՞ տոկոսն ընդունակ էր լինէր ընտրութիւններին մասնակցելու:

Դիմենք ստատիստիկային: Բոսան տարեկանից ցած հասակ ունեցողները կազմում են Բուլղարիայում 50,7⁰/₀, Անգլիայում 45,2⁰/₀, Գերմանիայում 44,9⁰/₀, Ճապոնիայում 43,2⁰/₀, իսկ Ֆրանսիայում ամենաբիշ տոկոսը՝ 34,7⁰/₀: (Custav Schmol- l., Grundriss d. allg. Volkswirtschaftsl. 1901, հատոր 1 երես 160): Բուլղարիան առաջին տեղն է բռնում, Ֆրանսիան վերջին: Դիցուք Շուշին էլ հաւասար է Բուլղարիային իր երեխաների առատ քանակութեամբ: Ապա ուրեմն Շուշում ընտրութիւններին պիտի մասնակցէր առնուազն 50⁰/₀-ը՝ 20 տարեկան հասակից վեր հաշուած, այսինքն մօտաւորապէս 5000 մարդ. մինչդեռ թերթիկները բաժանուած էին 3000-մէջ: Կը նշանակէ ընտրութիւններն անկարելի է հաւասար համարել, բանի որ քաղաքացիների մօտ 40⁰/₀-ը, հաւանականօրէն և աւելի, զրկուել է ձայնատուութեան իրաւունքից: Իբրեւ անհատ, ես գիտեմ գէպքեր, որ մի քանի բնակիչներ ընտրողական թերթիկներ չեն ստացել:

դ. Ինքն ըստինքեան հասկանալի է, որ այդ ոչ ընդհանուր ընտրութիւնները չեն կարող հաժարուել և հաւասար, անի որ քաղաքացիների մի մասը զրկուած էր քուէ տալու հնարաւո-

բութիւնից, մինչդեռ միւս մասը վայելում է այդ իրաւունքը, իսկ կանայք միանգամայն զրկուած էին ընտրուելու իրաւունքից:

Աւելորդ չէր լինի այստեղ մի քանի երկրորդական մասնաւորմանութիւններ ևս յիշել «Ապառաժեան» ուրոյն քառանդամ սիստեմի մասին: Թերթիկները վրայ չէր յիշուած 15 հոգու ընտրութեան նպատակը. այդ ծանր հոգսի խնամատարութիւնը թողնուած էր թերթատարներին: Այս հանգամանքն էլ նամանաւանդ կարեւոր է այն տեսակէտից, որ թաղային ժողովներում ընդհանուր առմամբ հազիւ եղած լինեն 300—400 հոգի. պարզ է, որ միւսներին անհրաժեշտ էր ծանօթացնել ընտրութիւնների նպատակի հետ: Չարմանալի չէ ուրեմն, որ այսօր ժողովուրդի մի խոշոր սոկոսը միանգամայն մթութեան մէջ է խաբխափում, գործադիր մարմնի կատարելիք՝ գերի մասին:

Չափազանց տարօրինակ էր նաև բուէներ հաւաքելու չլսուած ձևը. որոշ ժամանակին թղթատարներն սկսում են կըրկին պատիկ քաղաքը և յետ ստանալ թերթիկները «ծրարներում» (սա գաղտնի բուէարկութիւն է! Sic!): Ով կարող էր երաշխաւորել, որ նրանք չէին փոփոխի այդ ծրարներն իրենց ցանկացած մարդկանց բուէներով: Ո՞րտեղ և ո՞ր ժամանակ էք լսել, ընթերցող, ընտրութիւնների այս այլաոեւուած կղանակի մասին*)

Կարծում եմ, «հաւաքողական» ընտրութիւնները չպէտք է խանդարէին «Ապառաժ»-ին յետ ստանալու այդ ձևով 3000 թերթիկները. սակայն հաւաքուած էր միայն 2284 հատ. պատճառն անհասկանալի:

Եւ սա կոչւում է քառանգամ սիստեմ! Ողորմելի ընտրութիւններ, որոնց ստեղծագործութեան համար զաշնակցութեան գաւառական տաղանդները մօտ երեք ամիս է հալ ու մաշ են լինում «Ապառաժ»-ի ալքիմիական լաբորատորիայում և որոնցից կարելի է հանել միայն մի պարզ տրամաբանական եզրակացութիւն, որ զաշնակցութիւնը գործի (և ոչ խօսքի!) մէջ նոյնքան տիպիկական ուրոյն հասկացողութիւն ունի քառանգամ սիստեմի, որան և ազդարային, կուլտուրտրիգերական և այլ խնդիրների մասին, այսինքն՝ ամեն ինչի վրայ զբօշմում է հայկական տիրացուական՝ բարբարոս բիւրօկրատիզմի կնիքը:

*) Ամեն գաղտնիք, սկզբունք այլասեւել, խեղաթիւրել, կարրիկատուրային դարձնելով «հայացներ»—դա զաշնակցական ինքնուրոյն սիստեմն է. այս պէս նրանք սրբագրումեն և փիլիսոփայութիւնը, և սօցիալիզմը և դէմօկրատիզմը, և մտքի ազատութիւնը, և կուլտուրան, և քառանգամ ընտրութիւնը և այլն: Ամեն լան գլխիվայր, կեղծ, այլանդակ, իմաստակօրէն...

IV

Դաշնակցութեան ներկայացուցիչը պարզեց ժողովի առջև 15-ի խորհրդի նպատակը. այս խորհուրդը ինքնապաշտպանութեան գործադիր մարմինն է և ունի կատարելու հետեւալ գործը. նախ՝ ստանձնելու դաշնակցութիւնից ինքնապաշտպանութեան հաշիւը, երկրորդ՝ վարելու իր պատասխանատուութեամբ ինքնապաշտպանութիւնը, երրորդ՝ կազմակերպելու «օրէնսդիր մարմին» ընտրութիւնները: Քաղաքացիներն առաջին երկու կէտերի մասին գեո մինչև ընտրութիւնները զազափար ունէին, բայց այժմ ընտրութիւններից յետոյ, դաշնակցութեան թեւադրութեամբ 15-ի խորհրդին արւում է մի նոր, անձանօթ լիազօրութիւն, այն է ձեռնարկել ներկայացուցչական ժողովի ընտրութիւններին:

Սկզբունքային տեսակէտից դաշնակցութեան այս մանկօլը միանգամայն անհասկանալի է. «քառանգամ սխտեմով» ընտրւում է ինքնապաշտպանութեան վարչութիւն, որը պէտք է լիազօրութեամբ և իր պատասխանատուութեամբ վարի «գործը», նշանակում է՝ պիտի կազմի բիւդժէ, հարկահանութեան սխտեմ, միլիցիա և այլն: Եւ յանկարծակի այդ նոյն վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպւում են օրէնսդիր մարմնի կամ ներկայացուցչական ժողովի ընտրութիւնները: Ի՞նչ ֆունկցիաներ ունի վարելու ներկայացուցչական ժողովը: Եթէ վերջինս իրաւ ժողովրդի ներկայացուցչութիւն լինի, ապա ուրեմն զործեր ստանձնելու և տնօրինելու միակ գերիշխանութիւնը վերապահւում է նրան, ինչպէս արել է այդ Շուշու ներկայացուցչական ժողովը անցեալ տարի: Իբր ժողովրդական փոքրիկ սէյմ, նա լիազօր իրաւունք ունի իր մեծամասնութեան միջից ընտրել ինքնապաշտպանութեան «գործադիր մարմինն» ու այլ մարմիններ և սահմանել սրանց հաժար օրէնքներ ու կանոններ, կազմել բիւդժէ, հարկահանութեան սխտեմ և այլն: Ժողովուրդն ընտրում է պարլամենտը, իսկ վերջինս վարչութիւնը. միթէ այս ծածմուած ճշմարտութիւնը մինչև օրս պարզ չէ՞ դաշնակցական շէֆերի համար: Յոյց տուէք մի պարլամենտարական երկիր, որտեղ «քառանգամ սխտեմով» նախ կառավարութիւնն են ընտրում և ապա պարլամենտը, և ես կը լռեմ: Պատմութիւնը դիտէ միայն մի եղակի օրինակ, այն է Նապոլէօն III-ի ընտրութիւնները 6,000,000 ձայնով: Եթէ դաշնակցութիւնը ներկայ գէպրւմ

տրամադրութիւն ունի լողալ բռնապարտիզմի ջրերում, դա այլ խնդիր է:

Սակայն ի նկատի ունենալով մի այլ հանգամանք, ժողովըն եկաւ հետեւեալ եզրակացութեան. քանի որ ինքնապաշտպանութեան հաշիւները դաշնակցութիւնից կարող է օրինաւոր ճանապարհով ստանալ միայն ժողովրդի իսկական ներկայացուցչութիւնը, քանի որ ինքնապաշտպանութեան գործում միակ զերիշխողն ու պատասխանատուն կարող է լինել էլի ներկայացուցչութիւնը, անհրաժեշտ է սահմանափակել 15-ի խորհրդի լիազօրութիւնները տալ նրան միայն իրաւունք ձեռնարկելու ներկայացուցչական III ժողովի ընտրութիւններին: Իսկ մինչև այն թողնել դաշնակցութեան՝ ինքնապաշտպանութեան հոգսը: Դաշնակցական ներկայացուցիչները տրամաբանօրէն ոչ մի առարկութիւն չկարողացան լոյս աշխարհ հանել, այլ միայն խոստացան զննել խնդիրը «Ապառաժի» առաջ:

Դեկտեմբերի 27-ին Ապառաժը հրապարակ հանեց իր վճիռը: Նոյն օրը թաղային ժողովներում պաշտօնապէս յայտարարուեց, որ ապառաժը վերջնականապէս որոշել է 15-ի խորհրդին յանձնելու ինքնապաշտպանութեան հաշիւներն ու գործը և տրամադրութիւն չունի սպասել ներկայացուցչական ժողովի րացման: Սակայն ի՞նչ պատճառաբանութեամբ, միթէ այդ կուսակցութիւնը, որ միահեծանօրէն վարել է գործը աւելի քան երկու տարի, այլևս այնքան անպօր է, որ շնորք չունի սպասել մի օր անգամ. կամ դուցէ գործն այնքան քաղախել ու ջուր է ձծել, որ Ապառաժը ստիպուած է փութկոտութեամբ փաթաթել գործը տարբեր ու հետերդէն տարբերեց բաղկացած մի ընտրովի կառավարութեան վրին, հեռացնելով անվտանգ իրանից ամբողջ գործի պատասխանատուութիւնը: Այնուամենայնիւ դաշնակցութիւնը չկամեցաւ օլիմպիական բարձրութիւնից պատճառաբանել իր կատարած քայլերը, այլ նազանքով շուայեց հանգիստականների առջև ինքնապաշտպանութիւնը ժողովրդին յանձնելու անկեղծ փափազին նուիրած ապոլոգիայով և դիմեց իր աւանդական սովորական տրամաբանութեան. «վտանգը մօտ է, թող կադմալուծուած ժողովուրդը շուտափոյթ սթափուի, կազմակերպուի իր ուժերն ու իր գլխի ճարը ասանի»:

Կրկին հայ-թուրքական կոտորածներէ խրտուիլակներն են, որ պիտի վախեցնեն ժողովրդին, այլ ոչ համոզեցուցիչ փաստեր ու պատճառներ: Սակայն Վերին եկեղեցու Նահատակի թաղերի «անգիտակից» ժողովուրդը միանալով մասնաւոր խորհրդակցական ժողովի որոշման, պահանջեց սահմա-

նափակել նորընտիր զործադիր մարմնի ֆունկցիաները լոկ ներկ. ժողովի ընտրութիւններով: Կը յամառի՞ արդեօք դաշնակցութիւնն իր նոխկին որոշման վրայ, այդ գէտքում ժողովրդի բոլոր խաւերի զօրեղ պայքարը դաշնակցութեան դէմ անխուսափելի է: *)

V

Վերջը կարեւոր է կանգ առնել մի քանի տկամայ խոստովանութիւնների վրայ, որ արեցին դաշնակցութեան ներկայացուցիչները. նրանք միաբերան պնդում էին ընտրութիւնների վաւերացման վրայ, առարկելով, որ ժողովուրդը դեռ անգիտակից է, անհասուն՝ և որ աւելի լաւ ձևի ընտրութիւնների հաղիւ թէ կարելի լինէր ձեռնարկել նրա մէջ: Ժողովուրդը տգէտ է, անհասուն: Ինչո՞ւ. որովհետեւ շ. Յեղափոխական Դաշնակցութիւնը միացած տիրապետող վաշխառածու ու բէզական դասակարգերի հետ կսուել է նոյն ժողովրդի աղատագրական ձգտումների դէմ և խեղդել ամեն անգամ, երբ նա կամեցել է իր գլխի տէրը լինել, նրա արդար բողոքը, նրա ինքնաորոշման տենչը. (բաւական է յիշել Շուշու ներկայացուցչական ժողովները). որովհետեւ նա զօրավարի բերանով խոստովանեց, որ «յեղափոխական պրոպագանդա մղելու ժամանակ չի ունեցել, այլ ստիպել է ժողովրդին գնել՝ փամփուշտ, հրացան և գնալ գիւրքերը, թշնամուն գիմաւորելու»: Որովհետեւ սարսափած գիւղական ազգաբնակչութիւնը տնքում էր իր ծոցում տաքացրած ազգային օպրիշնիկների ու զափթիւնների բաշխուղուկային արարողութիւնների տակ. որովհետեւ ամբողջ գիւղեր անպատիժ քայքայւում էին ամեն տեսակ օրինաւոր ու ապօրինի տուրքերից ու աւարից. որովհետեւ աշխատաւոր մասսաներին չթողին վերջը ոչինչ, բացի կեղտոտ լաթերից, ցնցոտիներից ու գատարկուած դարադամներից. որովհետեւ դաշնակցութեան գաժան դատարաններում, ինկվիզիցիաներում, լռեցնում էին ամեն մի արդար բողոք, մեռցնում՝ ամէն մի ինքնուրոյնութիւն, որովհետեւ «դաշնակցական» գիւղերում միւս կուսակցութիւններին արգելուած իր մուտքը, դաշնակցական ամբոխին «խելքից չհանելու, չմոլորեցնելու» նպատակով, որովհետեւ ժողովրդի աչքի առաջ են կատարուել

*) Դաշնակցական շէֆերից մէկը Վերին Թաղի ժողովում արտասանեց հետեւեալ հռչակաւոր տենդենցը. «Լաւ, համարեցէք այս ընտրութիւններն օրինաւոր և դաշնակցութեան վերջին բնութիւն»: Վերջինս. . . չաւատանք արդեօք:

Խնձորեսկի ու Ապարանի արինոտ ղէպերը. ինչո՞ւ այսօր այս բոլորը մոռացութեան են տալիս դաշնակցութեան» ժողովրդասէր» ներկայացուցիչները և ուրանում՝ պատմութեան հասարակ այն դասը, թէ միայն աղատութեան և ոչ բռնութեան ծոցում է զարգանում ժողովրդի գիտակցութիւնը:

Ինչո՞ւ դաշնակցութեան քարոզած մոդերն դադափարները ժողովրդի գերիշխանութեան մասին երկու տարի դանակոծւում էր, հարստահարւում՝ դաշնակցութեան թէ իդէօլոգիական և թէ ֆիզիքական արսենալով... և այս բոլորից յետոյ... «ժողովուրդն անգիտակից է», ճիշտ նոյն առարկութիւնը, ինչ որ անում են իւնկերներն ու հարբող սպաներն իրանց մեղքերի հետքերը ոչնչացնելու համար:

«Ժողովուրդը ձեզանից գանգատւոյ է», ասենք հէնց մի դառամեալ ծերունու բերանով, որ մասնակցում էր ժողովին: «Դուք ճիշտ է, պաշտպանել էք ժողովուրդը թուրքերի դէմ, բայց անցել էք ձեր իրաւունքի սահմանները. դաշնակցութիւնը բռնութիւններ է կատարել և՛ քաղաքում, և՛ գիւղերում: Ժողովուրդը վախենում է պատմել զրանց մասին, բանալ իր սիրտը. պէտք է պատուել այն «փարզան» որ բաժանում է ձեզ և ժողովուրդին». և այն ժամանակ միայն մենք կը ծանօթանանք «անգիտակից» ու «անհատուն» ժողովրդի մարտիրոսների հետ, երբ կը յայտարարուի դաշնակցութեան կողմից անձի, խօսքի խղճի ու մտքի ազատութիւնը, երբ մեր առաջ «դաշնակցական» գիւղերը չեն կաղմի մի terra incognita, որի սահմանները թեւակոխելու իրաւունքը վայելում են միմիայն ընտիր ու արտօնեալ շէյխերը:

«Այսուհետև էլ չեն լինի բռնութիւններ, այսուհետև էլ չեն լինի պոլիցիական ճնշումներ, թող ժողովուրդը կազմակերպուի, գործի, որպէսզի կարողանայ ապագայում, եթէ զրացիներն անմիտ տեղը խախտեն խաղաղութիւնը, պաշտպանել իր կեանքը և չկոտորուել: Հակառակ դէպքում՝ ձեզ կը կոտորեն ոչխարների պէս» — դաշնակցութեան հին հերոսի շրթունքներից թուած այս անկեղծ խոստովանութիւնը պէտք է լսէին բիւրօյականները, որպէսզի վերջնականապէս համոզուէին: Որ «բռնութիւններն ու պոլիցիական ճնշումները» կաղմիլ են մինչև օրս դաշնակցութեան արտօնութիւնը, նրա սխտեմը, բեժիմը, էութիւնը, իսկ ֆրէյլինեան գրական շուկան հեղեղող փաստաբանութիւնները մոռաւոր ու բարոյական սնանկութեան նշաններ են և ոչ թէ գէպի «աշխատաւոր մաստաները» տաժած կեթերային զթափուութեան և գուրգուրանքի արտայայտութիւն:

Բաւական է, որքան մաշեցիք խեղճ ու գժբախտ պատա-

ներսերի ուղեղը ձեր յեղափոխական ֆոկուսանիկութեամբ ու ֆիզիկարութեամբ, բաւական է, որքան խաբեցիք ժողովրդին և ճգմեցիք ձեր երկաթեայ բռունցքի մէջ նրա ազատութիւնը: Բաւական է որքան դեմօկրատիան կեղծեցիք դեմադոգիայով: Մի կողմ թողէք կեղծ ու պատիր ուրոյն «քառասնգամ սիստեմները», քողարկուած ժողովրդատելութիւնը, զուլդուրտրէզերութիւնը, ճնշումները, մտրակը. ժողովրդի ստրկութեան շղթաների շփնդը ձեզ քուն չպէտք է տայ, իսկ գուր... ինքնապաշտպանութեան ժողովրդականացման գիմակի տակ կրկին անգամ սարքում էք նորանոր դաւեր ու ափերներ...

Տուէք ժողովրդին իսկական ազատութիւն և ոչ թէ բիւրօկրատիական մամուլի տակլից հանած թղթէ սահմանադրութիւններ ու քառասնգամ սիստեմներ, առանց որ և է բովանդակութեան:

Հալառակ դէպքում մօտ է ժամը, երբ ձեր գիշալցօների վրայից կը քարշեն հռովմէական տոգան և կը մերկանան վերջապէս ձեր մտաւոր—բարոյական այլանդակութիւնները:

Շուշի 1906²⁹ XII

Մ. Ղ.

Յ. Գ. Սակայն ի՞նչ կարող է անել մի դժբաղդ զօրավար իր անկեղծութեամբ, երբ նրան շրջապատող խորհրդականներն այլ տեսակ են ըմբռնում «ազատութիւնը»: Չանցաւ մի օր. դեկտեմբերի 28-ին դաշնակցական «ամբօխը» կատարեց իր առաջին դերիւարը շնորհած ազատութեան գրկում: Թաղային ժողովում ներկայ էր և «Մշակ»-ի թղթակից «Ոսկու Ձօնը», որին վիճակուեց բռունցքների տակ ստորագրել իր մի յօդուածի հերքումը, որ լոյս էր տեսել «Մշակ»-ի 282-րդ համարում, ներկայ ընտրութիւնների մասին:

Դժուար է նկարագրել նրա անելանելի դրութիւնը յեղափոխական դաշնակցութեան տրիրտունալի առջև. մինչդեռ զայրացած «հրեշտակները» ուժակոծում էին նրան սպառնալիքներով, գլխաւոր շէֆը քաշուած մի անկիւն՝ խմբագրում էր թուն ընկած որսի մասին դատաւճիւր:

«Սահմանադրութեան» յայտարարման օրից մամուլի ազատութեան ասպարիզում սա առաջին քայլն է, որով բայում է դաւառական դաշնակցութիւնն իր աշխարհահայեցողութեամբ: Ի՞նչ անցեալ տարի երկու ուրիշ թղթակիցներ ճաշակեցին ծածր. որոնցից մէկը պաշտօնապէս բռնութեան կնթարկուեց դաշնակցութեան դատարանում: Ուրիշների շրթունքներին կողպէք դնելու այս մեթոտն այնքան սովորական է դարձել, որ հին փառքից հրաժարուելու համար, Ապառաժը, երեւի, դեռ կարօտ է երկար դաստիարակութեան:

Մ. Ղ.

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ *)

1.

Մարքսի կեանքը, սօցիալ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը եւ գրական վաստակները.

Segui il tuo corso elascia
dir le genti
Հետեիր ճանապարհիդ, և թող
մարդիկ խօսեն, ինչ ուզում են.
Գուցէ.

24 **)

Ինտերնացիօնալի պաշտօնական վախճանը Ամերիկայում:—Մարքսի կեանքի և գործնական շնորհալուծի շրջանը:—«Կապիտալ»ի գերմ. երկրորդ հրատարակութիւնը և նրա թարգմ. ուրիշ լեզուներով:—Մարքսի աշխատանքը թարգմ. վրայ:—Մարքսը մատնում է մշտապես հիւանդութեան գիրկը:—Նրա կեանքի հետաքրքրութիւնը պանագան երկրների բանուորական շարժումով:—Մարքսի սուր ու կծու. կրիտիկան Գերմ. սօց.-դեմ. կուսակց. Գոթայի ծրագրի դէմ:—Մարքսի ոչ իրաւացի վերաբերմունքը:—Ֆրանս. սօց. կուսակց. մարքսիստական ծրագիրը:—Մարքսի փաստական գիրքը բանուորակ. շարժման մէջ:

Իր կենտրոնը Ամերիկա տեղափոխած Ինտերնացիօնալը կորցրեց համարեա իր ամբողջ նշանակութիւնը Եւրոպայի բանուորական շարժման համար: Ընդհանուր խորհուրդը գրեթէ չէր ստանում որեւէ աջակցութիւն ու օժանդակութիւն Եւրոպայից: Եւրոպական երկրների ազգային սեկցիաները մէկ առ մէկ խլ-զում էին—երկրի բնական ընթացքով—իրենց յարաբերութիւնները կենտրոնից. կարճ՝ Ինտերնացիօնալի իրական ու կենդանի, գործօն գոյութիւնն վերածուել էր ֆիկտիւ գոյութեան:

*) Տե՛ս «Մուրճ» 1906 թ. № 11—12

**) Անցեալ համարի 19, 20 և 21 գլուխների փոխարէն պիտի լինէին 21, 22 և 23 գլխ.

1876 թուականին յուլիս ամսին գումարում է նիւ-կօրքում Խնտերնացիօնալի բանուորական կազմակերպութեան կօնֆերենցիան, որին բացի Գերմանիայից և Շվեյցարիայից, չի մասնակցում Եւրոպական ոչ մի ազգային սեկցիա: Այդ կօնֆերենցիայում վճռում է անորոշ ժամանակով յետաձգել Խնտերնացիօնալի համագումարները և առհասարակ կազմակերպական գործնէութիւնը: Այդ վճիռը դարձաւ Խնտերնացիօնալի նաև Պաշտօնական գոյութեան վախճանի ու մահացման վերջնական կնիքը:

Խնտերնացիօնալի փաստական վախճանից յետոյ (1872թ.), Մարքսի համար սկսւում է կեանքի ու գործնէութեան մի նոր շրջան, — միաժամանակ վերջին շրջանը: Կռուի դաշտում մարտնչող տիտանը յետ է քաշւում և ամբողջապէս նուիրւում կարենէտային-գիտական զբաղմունքներին:

«Այդ ժամանակից ՚ի վեր, — ասում է մեծ յեղափոխականի և մեծ մտածողի անդուգական ընկերը, — Մարքսի համար օտար էր հրապարակական ագիտացիան, սակայն նա սովաւ չէր գործում եւրոպական և բանուորական շարժման համար: Նա նաժանկազրութեան մէջ էր գանաղան երկրների գրեթէ բոլոր պարագլուխների հետ, որոնք հնարաւոր դէպքերում և կուրկոր առիթների ժամանակ դիմում էին նրա անձնական խորհուրդն իմանալու. նա աւելի ու աւելի դարձաւ շատ որոնուող և մշտապէս պատրաստական խորհրդատուն մաքառող պրոլետարիատի համար: Այդ ամենով հանդերձ Մարքսը կարող էր այժմ կրկին գաճալ իր ուսումնական զբաղմունքներին, որոնց դատը մինչ այդ շատ էր ընդարձակուել: Մի մարդ՝ որ իւրաքանչիւր առարկայ քննում էր ըստ իր պատմական ծագման և նախապայմանների, ՚ի հարկէ նրա մօտ իւրաքանչիւր մասնակի հարցից բնութեւն էին նոր հարցերի մի ամբողջ շարք: Նախապատմութիւն, ազրօնօթիա, ուսումնական և ամերիկական կալուածատիրական յարաբերութիւններ, երկրարանութեան և այլն, այդ բոլորի ուսումնասիրութեան ձեռնարկեց Մարքսը, որպէսզի յատկապէս «Կապիտալի» III դրքի այն հատուածը, որ վերաբերում է հողային հասոյթին (Grundrente) մինչ օրս գեւ չը փորձուած լիակատարութեամբ մշակելու»: 86)

Յը. Էնգելսի այս հակիրճ խօսքերը զաղափար և բաւարարութիւն են տալիս արդէն երկու հարցի՝ արդե՞ր Խնտերնացիօնալից յետոյ, 70-ական թուականներից սկսած՝ ինչ աբժէք ու ազդեցութիւն ունէր Մարքսը Եւրոպայի պրոլետարատ-

⁸⁶⁾ Fr. Engels, «Karl Marx «(տե՛ս «Handwörterbuch a. Staatswissenschaft» 2 հրատ. V հատ. եր. 706.)

կան շարժման համար և, միևս կողմից, որն էր նրա անհատական մասնաւոր կեանքի պարունակութիւնը:

Յորապէս համոզուած լինելով Ինտերնացիօնալի բնական վախճանի պատմական իրաւացիութեան մէջ, այնուամենայնիւ Մարքսը, ինչպէս և Էնգելսը, չէին դադարում Լոնդոնից—Նիւ-Եօրք առաքել իրանց ազդեցիկ խորհուրդներն ու ինստրուկցիաները, իբրև հմուտ ու փորձուած ռահվիրաներ: Մարքսը արթուն աչքերով հսկում էր, որ իր փայլալայած ու գուրգուրած ձեռակերտի՝ վերջին բեկորներն իսկ փառքով դիւրեման իջնեն, որ նրա վերջին լիբերալիզացիան բաղունխտներէ մի քանի սեկցիաների հետ լինի պատուով ու յաղթական Ինտերնացիօնալի անուան համար:

72—73 թուականին Մարքսը ձեռնարկում է «Կապիտալ»-ի հրկրորդ հրատարակութեան (գերմ.), որի ամբողջ ուղղադրութիւնը ծանրացել էր նրա վրայ: Բացի զրանից նա ցանկանում էր, որ իր դարադուլիս կազմող երկը որքան կարելի է շատ մատչելի դառնայ եւրոպական միևս առաջնակարգ ազգերին՝ ասել է ամենից առաջ թարգմանուի ֆրանսերէն և անգլիերէն լեզուներով: Նա առանձին զոհոնակութեամբ է հաղորդում իր ընկեր Զորգէին, որ «Կապիտալ»-ը (I հատ.) խիստ յաջող թարգմանուել է ռուսերէն լեզուով, որի (զրքի) մասին ռուս. սօցիալիստական օրգանը մեծ գովասանքով մի քանի առաջնորդողներ էր նուիրել: Մարքսին գրում են Պետերբուրգից, որ ռուսական ցենզուրը դադարեցրել է նրա աշխատութեան թարգմ. հրատարակութիւնը, նախ քան հիմնական քննութեան ենթարկելը. քննութիւնից յետոյ ցենզուրը յայտնել է հետեւեալ բնորոշ, մինչև օրս իսկ սովորական վճիռը. «Թէև հեղինակը ըստ իր համոզմունքների մի կատարեալ սօցիալիստ է և ամբողջ գիրքը կրում է կատարելապէս որոշ սօցիալիստական բնաւորութիւն, այնուամենայնիւ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրա վերլուծութիւնը չի կարող բոլորովին ամեն մէկի համար մատչելի լինել, որ միևս կողմից այդ վերլուծութիւնը լինում է խիստ մտքեմատիկական-գիտական ապացոյցների ձևի,—ցենզուրական կօմիտէն անկարելի է գտնում այդ աշխատութեան հետապնդումը դատարանի տուաջ»⁸⁷: 87) Մարտի 27-ից մինչև մայիսի 15-ը 3000 օրինակ տպուած «Կապիտալ»-ից վաճառւում է արդէն 1000 օրինակ. մի փաստ, թէ որ աստիճան ու-

⁸⁷) Karl Mark an Sorge (տես «Briefe und Auszüge aus Briefen an F. A. Sorge u. Andere» Էր. 60).

Յունուար, 1907.

ժեղ ու կենդանի էր դեռ 70-ական թուականին ուսական հետաքրքրութիւնը դէպի մարքսիստական այդ խոշոր երկը. և այդ ու նմանօրինակ փաստեր անչափ գոհացնում էին այդ մարդուն, որ առաջնորդում էր մարդկային զեկերող միտքը դէպի պաղտարնիքի ու խղճանքի մի նոր հարուստ ու հաստատուն աշխարհ:

Միաժամանակ հոգացում է «Կապիտալ»-ի Ֆրանսերէն թարգմանութեան համար, որից յետոյ արդէն դիւրին կը լինի անգլիերէն թարգմացութիւնը: Սակայն ինքը Մարքսն էր, որ անձամբ հետեւում և հոգում էր իր երկրի օտարալեզու հրապարակութիւններին. նա մեծ զգուշութեամբ է վերաբերում դէպի թարգմանական ձեռնարկը, որպէս զի լրիւ և ճշտութեամբ հաղորդուեն իր գիտական վաստակները օտարալեզու ընթերցող հասարակութեան: Որքան մեծ հոգս ու նեղութիւն է պատճառել նրան Ֆրանսերէնի թարգմանութեան բեվիզիան:

«Ֆրանսերէնի թարգմանութեան բեվիզիան—գրում է Մարքսը գանգատօւոր տոնով—ինձնից շատ աւելի ժամանակ է խլում, քան թէ ամբողջ թարգմանութիւնը ես ինքս կատարէի: Եթէ ես չգտնեմ անգլիերէնի կատարեալ կօմպետենտ թարգմանիչ, ապա ես ինքս պիտի ձեռնարկեմ նրա (անգլիական) թարգմանութեան. Ֆրանսերէնի հրատարակութիւնը արգելել է ինձ արդէն և պիտի արգելէ մինչև աւարտելը, որպէսզի ես ձեռնարկեմ երկրորդ հատորի («Կապիտալ»-ի) վերջին մշակման»⁸⁸):

Այսպէս տեսնում ենք, որ Մարքսը իր գիտական զբաղմունքների ինտենզիւ բոլէններին դժբաղդաբար հարկադրուած է եղել այժ ու ջանք չինայել այնպիսի պոսիւ աշխատանքների վրայ, ինչպիսիք են՝ թարգմանութիւնը կամ թարգմանութեան բեվիզիան, զոհելով դրանց վրայ իր նորանոր հետազօտութիւնների յատկացրած թանգագին ժամերը:

Սակայն այդ դեռ բաւական չէ: 1873 թուականից սկսած բուն է գնում Մարքսի երկաթէ առողջութիւն ունեցող օրդանիզմի նուրբ խորշերում քայքայող ու կազմալուծող որդը.— Մարքսը մատնւում է խրօնիքական հիւանդութեան գերկը, որի մերթ թեթև ու մերթ բարդ ու վտանգաւոր վիճակը շարունակական ահ ու երկիւղի մէջ էր դրել թէ իրեն, թէ իր սիրեցեալ ընտանիքին և թէ իր մտերիմ ընկերներին ու ծանօթներին: Նա ստացել էր ապօպլեքսիա (կաթուածահարութեան մի տեսակը) և տուժում էր երկարատև գլխացաւից:

⁸⁸) Ibid, եր. 93.

⁸⁹) Ibid, եր. 136.

1874 թ. նրա լեարդերի հիւանդութիւնը այնքան է ուժեղանում, որ նրան բոլորովին անընդունակ է դարձնում «Կապիտալ»-ի ֆրանսերէն թարգմանութեան ընթերցման աւարտելու, այնպէս որ նա խոնարհւում է ճակատագրական անհրաժշտութեան առաջ և բժիշկների խորհրդով գնում է Կարլսբադ բժշկուելու:

«Ինձ հաւատացնում են—ասում է Մարքսը—որ ես վերադառնալուց կատարելապէս ընդունակ կը լինեմ աշխատանքի. և իրաւ., աշխատանքի անընդունակ դառնալը նշանակում է մահուան գատաւձիւ ամեն մի մարդու համար. եթէ նա անասուն չէ»⁸⁹⁾: Որպէսզի Մարքսը վերստին կաղուերէ իր քայքայուած, բայց դեռ այնքան հարկաւոր ֆիզիքական ոյժերի, ոչ նիւթական աղքատիկ միջոցները և ոչ աւստրիական կառավարութիւնից հեշտապնդուելու երկիրը յետ չեն կասեցնում նրան իր որոշումից—Կարլսբադ գնալու:

«Այն ժամանակամիջոցում—գրում է Մարքսը 74 թ. իր մի այլ ընկերոջ՝ դոկար Քուգելմանին,—երբ ես գրելու անընդունակ էի դարձել, ժողովել եմ բաւական նոր նիւթեր երկրորդ հատորի («Կապիտալ»-ի) համար: Սակայն ես անկարող եմ ձեռնարկել նրա վերջնական մշակմանը, նախ քան ֆրանս. թարգմ. աւարտելը և իմ առողջական դրութեան կատարեալ վերականգնումը»⁹⁰⁾:

Ուրեմն ինքը Մարքսը դեռ 9 տարի իր մահուանից առաջ պարզ խոստովանում է, որ իր կենդանութեան օրով ընթերցող հասարակութիւնը կը կարգայ «Կապիտալ»-ի երկրորդ հատորը միայն այն ժամանակ, երբ նա կատարելապէս կը բժշկուէ, կը վերականգնէ իր քայքայուած ոյժերը. մի իղձ ու բաղձանք, որ երբէք չկատարուեց, և, հետեւապէս, չվիճակուեց նրան իր սեփական աչքերով տեսնելու իր մտաւոր կոլոսալ երկունքի շարունակութիւնը հրապարակի վրայ:

Զնայելով իր բաղձապիտի զբաղմունքներին և հիւանդութեան, Մարքսը կենդանի կերպով հետևում էր պրեթէ բոլոր երկրների բանուորական շարժման ելեէջներին. նա՝ միջազգայնութեան այդ կենդանի մարմնացումը, այդ օրիգինալ տիպը այնքան էր շահագրգռուած այս կամ այն երկրի բանուորական շարժումով, որ պրոլետարիատի ամեն մի յաջողութիւն ու յաղթութիւն՝ ընկերներ զստակարգերի դէմ ունեցած իր մաքառման պրօցեսում, թուում էր Մարքսին որպէս իր սեփական յաջողութիւնն ու յաղթութիւնը. իսկ ամեն մի անաջողութիւն ու

⁹⁰⁾ «Briefe von Karl Marx an Dr. L. Kugelmann» (տե՛ս «Neue Zeit, XX տարի, 2 հատ, էր. 800)

պարտութիւն, նա նոյնքան մօտ էր ընդունում իր միջազգային հոգուն: Ինչ յառաջադիմութիւն էր գործում բանուորական շարժումը—քաղաքական թէ տնտեսական հոգի վրայ, տեսական թէ գործնական տեսակէտից,—Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Ամեր. Միացեալ Նահանգներում, Աւստրիայում, Բելգիայում, Իտալիայում և այլն, ինչպէս էր երկրի ընթացքը Ռուսաստանում.—այդ բոլորի մասին հարուստ տեղեկութիւններ էր ստանում Մարքսը պաշտօնական թէ մասնաւոր, յայտնի թէ գաղտնի աղբիւրներից: Նրա աչքից չէր վրիպում և նա չէր լռում, երբ որեւէ կուսակցութիւն գործում է այս կամ այն սխալը, սկզբունքային շեղումը: Նա աշխատում է արտայայտուել այդ առթիւ և լրացնել եղած պակասը, ուղղել թերին:

Մի այդպիսի յայտնի դէպք տեղի է ունենում գերմանական սոց.-դեմ. կուսակցութեան մէջ: 1875 թ. գումարում է Գոթայում Այզենխայնների (մարքսիստական թե) և Լասսալեանների միացեալ կոնգրեսը, ուր մշակում է մի ընդհանուր ծրագիր և ուր միաձուլւում են երկու թշնամացած թեքը մի կուսակցական ամբողջութեան մէջ: Մարքսը վերին աստիճանի սուր տոնով և խիստ կծու արտայայտութիւններով քննադատում է միացեալ կուսակցութեան այդ ծրագիրը:

75 թ., մայիսի 5-ին Մարքսը ուղարկում է Բրակէին իր քննադատական ձեռագիրը մի նամակով հանդերձ, որով յանձնարարում է նրան այդ քննադատութիւնը ցոյց տալ կուսակցութեան պարագլուխներին—Լիբկնեխտին, Բեքելին, Աուէրին և այլն, և ապա յետ ուղարկել իրան՝ քննադատութիւնը թէ նամակը:

«... ես պատրաստ եմ—գրում է Մարքսը Բրակէին իր նամակում—իմ կարծիքով միանգամայն պարսաւելի և կուսակցութիւնը անբարոյականացնող այդ ծրագիրը ոչ դիպումատիական լուծեամբ ընդունել»: Այսինքն Մարքսը մի տեսակ պատասխանատու և շահագրգռուած էր չգում արտայայտուելու մի ծրագրի առթիւ, որ պիտի ղեկավարէ մի երկրի (մասնաւոր իր հայրենիք Գերմանիայի) պրոլետարիատի քաղաքական-տնտեսական շարժումը: «Երկրի շարժման իւրաքանչիւր քայլը աւելի կարեւոր է, քան մի դիմին օրագրները»—ասում է նա իր նոյն նամակում (նօտրագիրը մերն է): 91) Սոցիալ-քաղաքական տեսակէտի այս կոնկրետ արտայայտութիւնը մի փառաւոր ապ-

⁹¹⁾ «Zur Kritik des Sozialdemokratischen Parteiprogramms» (տե՛ս Neue Zeit» IX տարի, 1 հատ. եր. 562).

տակ է այն շաղակրատ «քննադատների» հասցէին, որոնք անդադար կրկնում են, որ Մարքսը, այնուհետև մարքսիստներն ու մարքսիստական սոցիալ-դեմոկրատիան առհասարակ, կտրուած են իրական կեանքից և մեխուած դոկտրինայի և դոգմայի շըրջանակում: Միև կողմից չպէտք է չափազանցեալ իմաստով հասկանալ, անպայման, Մարքսի վերաբերեալ խօսքերը: Նա ոչ թէ դրանով ժխտում կամ ցածր է գնահատում սկզբունքային ծրագրների արժէքը. ամենևին ոչ, միայն այն ժամանակ, երբ անհամակերպելի մեծութիւններ միանում են միեւնոյն նպատակի—միեւնոյն ծրագրային սկզբունքների և ձգտումների—շուրջը, ահա այդ դէպքում է միայն, որ նա իրական արժէք ու կենսունակութիւն չէ տալիս ծրագրներին, որովհետև նրանք ներկայացնում են իրանցից մի-մի «Prinzipenschacher» («սկզբունքների կարկատանք») ինչպէս ինքն է ասում: Ներկայ դէպքում Այդհնախցիների և Լասալեանների կուսակցական ամբողջութեան ծրագիրը, Մարքսի կարծիքով, ներկայացնում է «սկզբունքների մի կարկատանք», որովհետև իր Ինտերնացիօնալի credo-ն և Լասալեանի դմբ անհամակերպելի մեծութիւններ են: *):

Այնքան սուր, կծու և անխնայ էին Մարքսի քննադատութիւնը թէ նամակը, որ էնգելսը 1891 թ. «Neue Zeiten»-ում հրատարակելու ժամանակ անհրաժեշտ է համարում դուրս ձգել մի քանի արտայայտութիւններ, աւելացնելով, որ ինքը Մարքսը եւ կ'անէր նոյնը, եթէ ապրէր և ուզեցէր ներկայ մօմէնտում հրատարակել իր 15 տարի առաջ գրածը: Իհարկէ էնգելսը չի մոռնում ներածարար յիշելու այն մեղմացուցիչ հանգամանքները, որոնք դրդել են Մարքսին այդքան խիստ ոճով քննադատել Գոթայի ծրագիրը: Մարքսը ու էնգելսը անհամեմատ մօտ էին կանգնած Գերմանիայի բանուորական շարժման, քան որեւէ այլ երկրի. գերմանական կուսակցութեան իւրաքանչիւր քայլը՝ զրական թէ բացասական ուղղութեամբ, խիստ շահագրգռում էր նրանց: Եւ Մարքսը, ինչպէս և էնգելսը, արտայայտւում էին այդպիսի դէպքերում գործ ունենալով որպէս իւրայինների հետ. հասկանալի է, ուրեմն, թէ ինչու Մարքսը խիստ սուր կրիտիկա է դործագրել ծրագրի նկատմամբ: Միև կողմից աւելացնելու է, որ դուրսը՝ ամենից առաջ անտրախիստների շարքերում, Մարքս ու էնգելսին պատասխանատու էին

*) Մարքսը աւելի շատ կողմնակից էր, որ այդ երկու ֆրակցիաները միանային միայն իրանց կուտի ակցիօնի մէջ ընդդէմ ընդհանուր թշնամու, մինչև որ իրական շարժման հասունացումը պատրաստէր նրանց համար իսկական միութեան պատփօրմ:

համարում այն բոլորի համար, ինչ տեղի են ունենում Գերմանիայի բանուորական շարժման շուրջը:

Մարքսի կրիտիկան, որ «Randglossen zum Programm der deutschen Arbeiterpartei» («Գերմ. բանուորական կուսակց. ծրագրի նկատմամբ բացատր. (լուսանցքային)») վերնագիրն է կրում, շոշափում է մի շարք տեսական սկզբունքային կարևոր խնդիրներ՝ աշխատանք, աշխատանքի միջոցներ, աշխատանքի արդիւնք, բանուոր դասակարգի ազատագրութեան խնդիրը և ապա ծրագրի դեմոկրատական պահանջներն ու բաղադրական պոստուլատները, որոնց վրայ չենք ուզում այստեղ ծանրանալ: Էնդելսը ասում է այդ ծրագրի առթիւ հետևեալը. «Առաջին անգամ ամենայն պարզութեամբ արտայայտուում է այստեղ Մարքսի դիրքը դէպի Լասալի ուղղութիւնը՝ սկսած նրա ազիտացիայի սահմանում ունեցած գործունէութիւնից. և իրաւ, Մարքսը արտայայտուում է Լասալի ինչպէս տնտեսական պրինցիպներին, այնպէս էլ տակտիկայի վերաբերմամբ»: 92)

Բայց ինչպիսի տոնով ու ոճով է արտայայտուում Մարքսը յատկապէս դէպի Լասալը իր կրիտիկայի մէջ. միայն երկու նմուշ:

«Լասալը գիտէ կոմունիստական մանիֆեստը—ասում է Մարքսը—անգիր, բերան արած այնպէս, ինչպէս իր հաւատացեալները անգիր գիտէին իր հեղինակած փրկարար գըրուաժները: Եթէ նա այդպէս կոպիտ կերպով կեղծել է, ապա միայն նրա համար, որպէս զի իր դաշնադրութիւնը արսօլիտիստական և ֆէօդալական հակառակորդների հետ՝ ընդդէմ բուրժուազիայի, շտկէ, գեղեցկացնէ:» «Լասալը—ասում է Մարքսը մի ուրիշ տեղ—ըմբռնել է բանուորական շարժումը նեղ ազգային տեսակէտից՝ հակառակ կոմունիստական մանիֆեստի նախկին սօցիալիզմի: Եւ մարդիկ (խօսքը վերաբերում է գերմ. սօց.-դեմ.) հետևում են նրան (Լասալին) այդ բանում Ինտերնացիօնալի գործնէութիւնից յետոյ: 93)

Պէտք է խոստովանել, որ Մարքսը իր նկատողութիւնների մէջ՝ ձեւի, ուժեղացրած որակի տեսակէտից, այնքան էլ իրաւացի չէ եղել. նա շատ աւելի սև ու բացասական գոյներով է պատկերացրել. իրեն գերմ. սօց.-դեմ. միացեալ կուսակցութեան ծրագրի տեսական արժէքը, քան նա իրապէս է: Մարքսի ոճը ենթարկուել է պաթոսի և ինտօլերանտ վերաբերմունքի ուժեղ բռնկման դէպի յատկապէս Լասալն ու լասալեան-

92) Ibid, հր. 561.

93) Ibid, հր. 569.

ները: Լասալեանները երբէք չեն յաղթանակել՝ Ալլիանսիստներին հասանջման գնով: հաշուութեան *modus vivendi* երկու Ֆրակցիաների մէջ կայացել է միայն նրանց երկուսի տեղաւորութեան և զիջումների հաշուով: Ինքը փաստը՝ երկու Ֆրակցիաների միաձուլուելը մի կուսակցական ամբողջութեան մէջ, մի տակտիկական անհրաժեշտութեան կենսական արդիւնք էր, իր հետեանքներով այնքան բարեբար ու նպաստաւոր, այնպէս որ Մարքսը կանխել է իր ենթադրութեան մէջ, կարծելով թէ Այգենաիցի Բեքին ու Լիբկնիխտը անհետատեսօրէն տանուլ են տուել մարքսիստական սկզբունքները Լասալեանների հանդէպ: Այգենաիցիները տակտիկական այդ խելացիութիւնը զգում է յետոյ ամենից առաջ հէնց ինքը Ֆր. Էնգելսը:

Մենք համաձայն ենք Ֆրանց Մերինգի այն կարծիքի հետ, որ նա արտայայտում է Մարքսի դէպի Լասալն ունեցած խորատագոյն դատաւճռի նկատմամբ:

«Չպէտք է ուրանալ,—ասում է Մերինգը—որ Մարքսի առ Լասալն ունեցած անտիպապիան (հակակրօթիւնը) ունեցել է իր զոյգութիւնը նրա այս նախապնդում (ըննադատութեան մէջ) արտայայտած կարծիքի վրայ...: Լասալը ոչ դաշն է կապել (Ֆէօդալ-արսօլիտիստական հակառակորդների հետ) և ոչ կոպուլաբար կեղծել է կոմունիստական մանիֆեստը»:⁹⁴)

Ինչ ասել կուզի, որ այստեղ խնդիրը վերաբերում է արտայայտման եղանակին, ուժեղացրած որակին, ապա թէ ոչ Մարքսի տեսական-սկզբունքային կրիտիկայի պոզիտիւ արժէքը և այսօր՝ երեսուն տարի անցնելուց յետոյ իսկ, պահպանել է իր թարմութիւնը. նա ունեցել է յետագայում գերմ. սօց.-դեմ. կուսակց. ծրագրի վերջին մշակման ժամանակ իր խոշոր ազդեցութիւնը:

«Թէև կուսակցական շահերը արգելում էին իսկոյն ընդունել Մարքսի առաջարկները, այնուամենայնիւ սօցիալիստական բացառիկ օրէնքի վերացումից յետոյ, կուսակցութեան ծրագրի բովիզիկայի ժամանակ՝ նրանք ունեցել են իրենց կատարելալ արժէքը, իսկ կուսակցական նոր պրօգրամի («Էք-ֆուրտեան») համար այդ առաջարկները ուղղեցոյց են եղել, ասում է տակտիկական խոր հոտառութիւն ունեցող ծերունի Լիբկնիխտը իր յիշողութիւնների մէջ ⁹⁵), որ եղել է ամենա-

⁹⁴) Eranz Mehring. «Die Geschichte der deutschen Sozialdemokratie» 2 հրատ. IV հատ. էր. 88

⁹⁵) W. Liebknecht, «Karl Marx zum Gedächtniss», էր. 18.

մեծ ձեռներէջն ու աշակցողը թշնամաբար մաքառող ֆրակցիաների սերտ միաձուլման:

Հինգ տարի յետոյ Մարքսը առիթ է ունենում մի նմանօրինակ ազդեցութիւն թողնելու նաև Ֆրանսիայի բանուորական շարժման տեսական-գործնական դեկա խորութեան վրայ:

70-ական թուականների վերջերին ժիւլ Գէղը անցել էր արդէն մարքսիստական բանակը (մենք տեսանք անցեալ յօդուածում, որ նա գտնւում էր ալլիանսիստների շարքերում): Գէղը գալիս է անձամբ Լոնդոն Մարքսի մօտ, որպէսզի նրա, Էնգելսի և Լաֆարգի հետ միասին մշակեն Ֆրանս. սոցիալիստական կուսակցութեան ծրագիրը, պարլամենտական տակտիկը: Այդ ժամանակուանից սկսած արդէն մուտք է գործում Ֆրանսիայում մի իսկական պրոլետարական-դասակարգային շարժում՝ սոցիալիստական (մարքսիստական) կուսակցութեան ղեկավարութեամբ: Բլանքիզմն ու պրուդոնիզմը երկրի բնական ընթացքով տեղի են տալիս գիտական սոցիալիզմին:

«Մի հսկայական քայլ էր այդ՝ ֆրանսիական բանուորների ֆրագանների մասնախուզից ցած իջեցնելու իրականութեան հողի վրայ. այդ պատճառով այդ քայլը (նոր մարքսիստական ծրագիրը Բ. Ի.) գրգռեց ֆրանսիական շատ նենգամիտների գլուխները, որոնք ապրում են այդ ամպամած մասնախուզներից (վերացական—ուտոպիական գաղափարներից Բ. Ի.): Ծրագիրը ընդունւում է՝ անարխիստների ուժեղ օպպոզիցիայից յետոյ, նախ կենտրոնական մասերում, այսինքն Փարիզում և նրա շրջակայքում, իսկ յետոյ բանուորական ուրիշ շատ բայոններում... Ծրագրի այդ ընդունելութիւնը... նշանակում է իմ աչքում, որ դա առաջին բանուորական իրական շարժումն է Ֆրանսիայում: Մինչև այժմ կային այնտեղ միայն սեկտեր (աղանդներ), որոնք ի հարկէ իրենց mot d'ordre (լօզունգն) ստացել են այդ սեկտերի հիմնադիրներից, մինչդեռ պրոլետարական մասսան հետևում էին ռադիկալներին կամ ռադիկալ—գործող բուրժուաներին և վճռականութեան ըսպէսներին (յեղափոխութեան, բաղաքական ակտերի ժամանակ, Բ. Ի.) մարտնչում էին նրանց համար, որպէսզի յաջորդ օրը նըրանք մասնաշարար կոտորուեն և հալածուեն այն սպառնալիներից, որոնք նրանց (պրոլետարիատի) միջոցով ստանձնել են տիրապետութեան դեկը 96): Այս խօսքերն ասում էր Մարքսը խորին գոհունակութեամբ, տեսնելով, թէ ինչպէս սեծ ուռու-

⁹⁶⁾ K. Marx an Sorge *in* «Briefe und Auszüge aus Briefen an F. A. Sorge u. Andere», *h.p.* 170—171).

պիտոնների կլասիք հայրենիքում ևս մուսք է գործում մի պրո-
լետարական շարժում, որի ղեկավարութիւնը ստանձնել է մի
զուտ դասակարգային կուսակցութիւն՝ իր դասակարգային
կուռի լոզունգով. մի կուսակցութիւն, որի մոտձեկակերպն ու
գործակերպը բղխում էին մարքսիստական թէօրիայի ու պրակտիկայի
անադարտ սկզբունքներից: 80-ական թուականին արդէն լոյս է
տեսնում Լիօնում նորակազմ (գեգիստական) կուսակցութեան
պաշտօնական օրդանը՝ «Emancipation» անունով, կառուցուած
գերմանական (Մարքս-էնգելսեան) սոցիալիզմի հիմքերի վրայ:

Այսպէս գիտական-կարենեային ծանր աշխատանքը մի
կողմից, ֆիզիքական ոյժերի աստիճանական քայքայումը միւս
կողմից, չէին խանգարում Մարքսին կենդանի հետաքրքրու-
թեամբ հետեւելու թէ ընդհանուր քաղաքական երևոյթներին և
թէ բանուորական շարժման ելեէջներին, տալով ծրագրային-
սկզբունքային ուղղեցոյց և խորհուրդներ բանուորական կու-
սակցութիւնների ղեկավար մարմիններին: Ինտերնացիօնալը
լուծուկուց յետոյ նրա բոլոր հատուածները՝ Ուկրաինայի այս
թէ այն կողմում, կաղմակերպւում էին ազգային-քաղաքական
հողի վրայ, ինքնամփոփւում՝ դասակարգային շրջանակի մէջ:
Եւ որպէս զի այդ հատ-հատ ու անջատ կաղմակերպութիւն-
ները հետեղական լինեն գիտական սոցիալիզմի տեսական սկզբունք-
ներին մէջ և հաւատարիմ՝ Ինտերնացիօնալի գործնական պատու-
ւտոններն, անհրաժեշտ էին համարում մեծ թէօրէտիկի և դե-
կավար ռահմիրանի խորհուրդներն իմանալու: Եթէ մինչև
72 թուականը՝ ինտերնացիօնալի գործնէութեան շրջանում,
Մարքսը, ինչպէս և էնգելսը, համարում էին պաշտօնական ու
փաստական առանցքը պրոլետարական միջազգային շարժման,
ապա այդ թուականից ի վեր մինչև իրենց մահը նրանք պահ-
պանեցին իրենց փաստական դիրքը:

Սակայն միջազգային պրոլետարիատին չէր վիճակուած
երկար լսելու և հետեւելու իր մեծ քարեկամի իմաստուն խոր-
հուրդներին: Մարքսի կեանքի տարիները հաշուած էին. քանի
գնում, այնքան ուժեղանում, սասականում էր նրա հիւանդու-
թիւնը, նեարդերի քայքայումը: 1876 թ. նա նորից գնում է
Կարլսրադ և երկու ամսուայ ընթացքում փոքր ինչ կազդուր-
ւում: Այդ վիճակի մէջ նրան յաջողւում է 77 թ. հրատարակել
«Կապիտալ»-ի ֆրանսերէն թարգմանութիւնը, որ այնքան
թանկագին ժամանակ է խլել նրանից: Հիւանդութիւնը խան-
գարում է նրան իր միւս ցանկութիւնը ևս իրականացած տես-
նել, այն է՝ «Կապիտալ»-ի անգլիերէն թարգմանութիւնը իր
ձեռքով, նոյն թուականին հրատարակւում է «Կապիտալ»-ի ի-

տալերէն թարգմանութիւնը ևս, մի երևոյթ, որ ուրախացնում է Մարքսին, տեսնելով, որ իր երկը զգալի արագութեամբ մատչելի է դառնում եւրոպական առաջնակարգ աղգերին, որոնց մէջ ամենից առաջ կարիք կայ նոր սերմը ցանկու։ Մարքսը գրում է Զօրգէին իր նամակներից մէկում, որ «կապիտալ»-ը անհամեմատ շատ է կարդացւում և ընդունելութիւն գտնում Ռուսաստանում, քան այլուր։

70-ական թուականների վերջերից սկսած արդէն Մարքսը անդարձ ուղիով և վճռական քայլերով գիմաւորում է իր կեանքի վերջալոյսին, որին կը դառնանք մենք յաջորդ անգամ։

Բ. Իշխանեան։

(Կը շարունակուի)

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Գօղերաշվիլի, Խնչ արաւ օրօրոցի երգը, թարգմ. Ղ. Կ., նկարներով, Թիֆլիս 1907, գինն 10 կ.
- 2) Ս. Բուսովա, Զուրիցերիա ազատ ժողովրդական հանրապետութիւն, թ. Ս. Տ. Ան., Թիֆլիս հրատ Զ. Դաւթեանի 1906 թ., գ. 15 կ.,
- 3) Վ. Բրակէ. Կորչեն Սոցիալ-Դեմօկրատները, թ. ՏՏ Շուտ, Թիֆլիս, 1906, գ. 12 կ. հրատ Զ. Դաւթեանի։
- 4) Ռ. Ալիքեան, Ծփանքներ դէպի Անդունդ, Ազամին Անէծքը, Տնակա., 1906, Գահիրէ, գ. 5 զահեկան։
- 5) Ա. Դիւնան, ժողովրդական օրէնսդրութիւնը դաշնակցական Զուրիցերիայում, պատմ. տես., 1906, Թիֆլիս, գինն է 20 կ., «Յառ.» գրադարան։
- 6) Ա. Նիկօլաի, Կօօպերացիա, թ. Յ. Թ. Թիֆլիս, 1906, գ. 15 կ., «Յառ.» գրադ.
- 7) Ս. Ան.-Սկից, Դիւզացիական Հարցը Ֆրանսիայում, թ. Հ. Հ., Թիֆլիս, 1906, գ. 7 կ. «Յառաջի» գրադ.
- 8) Կ. Կառլցկի, Ազգութիւնների Հարցը Ռուսաստանում, Թիֆլիս, 1906, գ. 3 կ., «Յառաջի» գրադ.
- 9) Գօլուբեվ, Խնչ է ժողովրդապետութիւնը, թ. Լ. Ղ. Թիֆլիս, 1906, գ. 2 կ.
- 10) Բ. Տէր-Դրիդորեան, Իմ Պատասխանը Դ. Բայովին, 1907, Թիֆլիս.
- 11) Седракъ Мандинянь Начальная Русская Хрестоматія для армянъ. 1-ая книжка, Ռուսերէն Հատընտիր Հատուածներ Հայերի Համար (դասաւանդութեան բացատրութիւններով) կազմեց Ս. Մանդինեան։ Ա. գրքոյկ, Թիֆլիս, 1907, գ. 55 կ., հրատ. «Գուտտներերդ»։

ՔՆՆԱԳԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԼՏԵՆԱԽՅԱՌԹԻՒՆ

Առաջիկ նախաճիւղում «Առակներ», Թիֆլիս. 1906 թ. 192 էջ., դիմը 50 կ.

Մեր վիպական բանաստեղծութեան մի ճիւղը՝ առակը՝ մինչև օրս իր արժանաւոր ներկայացուցիչը չունէր։ Մխիթար Գոշի և Վարդանի առակները՝ միջնադարեան դրոշմ կրելով իրանց վրայ և զուրկ լինելով գեղարուեստական արժանաւորութիւններից, չեն կարող գոհացնել մեզ, ժամանակակից ընթերցողներին։ Անբաւարար են նոյնպէս և Խ. Աբովեանի առակները՝ խիստ երկար, ձգձգուած և անարուեստ լինելու պատճառով։ Իրաւ է, մենք ունինք Եղոպի և Կոիլովի լիակատար թարգմանութիւնները, բայց իմ խօսքը ինքնուրոյն առակների մասին է։

Բոլորովին պատահամբ ձեռս ընկաւ մի գրքոյկ, որի վերնագիրը յիշուած է վերև։ Ոչ առանց նախապաշարմունքի,— ինքս էլ չգիտեմ ինչու,—բաց արի գրքոյկը, սկսեցի կարդալ։ Սկզբից և եթ հեգնական ժպիտս տեղի տուից լըջութեան, և ես ինձ մեղաւոր զգացի։ Առակին յարմար երկար ու կարճ տողերը, սահուն և բնորոշ, գրաւեցին իմ ուշադրութիւնը։ Այս բոլորը նորութիւն էր ինձ համար։ Յետոյ ուշադրութիւն դարձրի առակների բովանդակութեան վրայ, այս կողմից էլ ես միանգամայն գոհ մնացի։ Ինձ թուաց, որ մի գիւտ եմ արել։ Սկսեցի յառաջաբանը կարդալ, և տեսայ, որ առակների հեղինակը մեծ պատրաստութեամբ է գրականական ասպարէզ եկել։ Հեղինակը լաւ ծանօթութիւն է ցոյց տալիս եւրոպական, ռուսաց և հայոց առակագիրների հետ։ Իհարկէ, Առ. Նալբանդեանը ոչ Լաֆոնտէն է և ոչ Կոիլով։ Բայց և նոյնպէս նա իսկական առակագիր է։ Նա ինքն էլ այդ լաւ գիտակցում է և ահա ինչու գրքի երեսի վրայ ամենայն համեստութեամբ գետեղել է հետեւալ տողերը. «Բարձր հանձարներ լայնածաւալ գետերու պէս կ'ոռոգեն ընդարձակ դաշտեր. իսկ համեստ գրողները առուակներու նման փոքրիկ ագարակներ. լայն թէ նեղ, խոր թէ ծանծաղ ջուրը կենսարար է»։ Աւելի ևս մեծ խո-

Նարհութեամբ նա իրան անուանում է մի մոլորակ, որ իր լոյսը ստանում է լուսատու հանճարներից, և դեռ չէ համարձակում նոյն իսկ իրան անուանել «ասակագիր»: Ըստ իս, մենք ունենք արդէն մի լաւ ակադագիր յանձին Առաքել Նալբանդեանի:

Այն, ինչ որ նա կ'ուզէր գտնել Մխիթար Գոշի առակների մէջ, այսինքն՝ կծու ոճը և նրբին քանդակը, և չէ գտնում, մենք գտանք ներկայ առակների մէջ: Այստեղ առակը ստացել է «հայկական ձև, ոճ և ոգի, յարմարութիւն ազգային ճաշակին, բարոյից և սովորութեանց»:

Ինքնուրոյն առակները անհամեմատ աւելի շատ են թարգմանած կամ փոխադրած առակներից. երկու տեսակի առակներն էլ հաւասարապէս լաւ են:

Ինքնուրոյն առակներից շատերը այլաբանական պատմութիւնների առկ թաղցրած են բրեւէ կեանքի իմաստութիւն կամ խրատ: Օրինակ, մայրը իր հիւսած ծաղկէ պսակը տալիս է այն որդուն, որը ուրիշի համար է բարի գործել.

«Լաւ է, ասաց մայրը որդուն,
Մեծ եղբայրդ ծառայել է իր շահուն,
Այլ դու՝ ինչպէս որ օտարին
Պաճալանել ես կեանքն ու բարին,
Ուստի պսակն ես քեզ ի վարձ
Կ'ուտամ գործիդ փոխադարձ»: («Պսակ»).

Մի ուրշ տեղ («Սարգ և Ժանճ») սարգը ծծում է ճանճի արիւնը նրա համար, որ նա ուտում, խմում է ուրիշների վաստակը.

«Ձեռ լսած, որ բաղմայ համար
Ճանճն է միջատ մընաստկար,
Նա միշտ ազատ համարձակ
Ուտէ, խրմէ ալոյց փոստակ»

Եւ մի շարք առակների մէջ պարունակւում են, օրինակ, այսպիսի իմաստներ: Յիմարները իրանց շահերի տեսակէտով են չափում օգտակարը և անօգուտը («Ծառ և Ագռաւ»): Շատ անգամ մարդիկ սովեստութեամբ են արդարացնում իրանց յանցանքները («Արագիլ և Սագ»): Որքան սարբերութիւն կայ շատ մարդկանց գործի և խօսքի մէջ («Կատուն և Մկները»): Որքան թանկ արժէ սեփական աշխատանք-

քով վաստակածը («Ոսկի»): Ինչ մեծ նշանակութիւն ունի միութիւնը՝

«Ուր սերտ բանակ,
Անդ յաղթանակ: (Ձիեր եւ Գայլեր)»

Չափազանց մեծ համբերութեան վնասը («Համբերատար Աղուէս»: Ինչ չափով ուրիշներին չափես, նոյն չափով քեզ կը չափեն («Նժոյգ եւ Գրաստ»): Մի շարք առակաների մէջ ծաղրի են մատնուում մարդկային արատները: Ահա, օրինակ, ինչպէս է ծաղրուում ազահութիւնը: Ազահ մարդ հոգեվարքի մէջ պատուիրում է, որ ճրագը հանգցնեն, որովհետեւ միութեան մէջ էլ կարելի է հողին աւանդել («Ազահը»): Ահա ինչ է առում նա իր ազգականներին, որոնք սպասում են կտակի.

«Ինչու ցրտոր իզուր տեղը կը վառի.
Լաւ կը լինի, որ մարի.
Մի մոռանաք, որ չքաւոր եմ ու խեղճ.
Ես իմ հողիս կարող եմ տալ միման մէջ:»

Եւ այսպէս առակազրի խայթոցից ազատ չեն մնում ստախօսը, ինքնահաւան մարդը («Յուպուպ»), մնապարծ մեծամիտը («Կաղամախ եւ Ագռաւ»), նախանձտար («Գեղջուկ, Ձի եւ Օձ»), քննող մարդը («Երկու Շներ»), իրանց նախնիքներով պարծեցող մարդիկ («Աշխարհագիր»), բռնաբաստէր կանայք («Կանանց գաղտնապահութիւնը»),

Մի քանի առակների նիւթը հեղինակը վերցրել է յունական կեանքից եւ առասպելութիւնից՝ «Պանդորա», «Իկար», «Ֆիզիաս», «Դիօգէն»:

«Պանդորան» յունական իմաստալից առասպելն է վերածուած տաւի: Երկրի բոլոր դժբախտութիւնների հետ Ձևսը տուել է մարդուն միայն մի յոյս, որ առաջնորդում է մարդուն կեանքի ամբողջ ընթացքում. իսկ առակի երգիծական կողմը—կանայի սեռին յատուկ հետաքրքիր բնոյթն է: «Իկարը» այդ մարդն է, որ իրան պարզեւէ աղատութիւնը դործադրում է թեթեամտութեամբ եւ փոխանակ լոյս արեւին մօտենալու զահավիժում ցած: «Ֆիզիասի» մէջ ծաղրուում է սոգէս եւ ոնճաշակ քննադատը: «Դիօգէնը» բարձրացնում է հոգեղէնը եւ արհամարում է մարմնականը եւ նիւթեղէնը:

Առ. Նալբանդեանի առակների մի մասը թարգմանութիւններ կամ փոխադրութիւններ են Լաֆոնտէնից, Յուրիանից, Կոխովից եւ Եզրպից: Փոխադրութիւնը կատարուած է մեծ

շնորհքով. համարեա բոլորն էլ յաջող են: Դրանում համոզուելու համար բաւական է վնդցնել և կարդալ «Գեղջուկ և Օձ», «Ազոաւ և Աղուէս», «Գորտ և Նգ», «Աքաղաղ և Մարգարիտ», «Ծեր և Մահ», «Երկու Շուներ», «Էշ և Սոխակ», «Ջողը կաղնույն ներքե» և այլն:

Մեր նոր առակագրի արժանաւորութիւններն են՝ «ահուն և գողտրիկ ոտանաւորը, որ առակի բովանդակութեան համեմատ արագ փոփոխւում է՝ մերթ երկարելով մերթ կարճանալով: Առակի յարմար լեզուն և ոճը՝ լիքը նուրբ դարձուածնեւորով, սրամտութեամբ, անակնկալ համեմատութիւններով և, վերջապէս, առակների հայացքած ընդհանուր ոգին:

Մնում է միայն ցանկանալ, որ «Առակները» երկրորդ տպագրութիւնը ազատ լինի այն բազմաթիւ վրիպակներէց, որոնցով լիքն է գրքոյկը:

Հետոն Մանուէլեան

Վ. Բրուկէ կորչեն սօցիալ-դեմօկրատները, հրատ. Յ. Դաւթեանի, Քիֆ-լիս, 1906, գինը 12 կոպ.

Մեր հայկական իրականութեան մէջ ամեն մի գաղափար տարածւում է մեր ժողովրդի մէջ սարսափելի կերպով այլանդակուած, թարս: Վերցրէք ընտրութիւնը գաշնակցական իմաստով, դեմօկրատիան գաշնակցական դեմագոգների հասկացողութեամբ, «ազգընտիր կաթողիկոսի» միահեծանութիւնը նոյն կամարիլայի բացատրութեամբ և այլն և այլն: Սոցիալ-դեմօկրատների մասին էլ թէ այդ հայ աղգասէրները և թէ նրանից շատ էլ հեռու չգնացած հնչականները ամենախակ իմաստով կարծիքներ են տարածել ժողովրդի մէջ: Ներկայ բըօշիւրը կարող էր փառատել այդ թիւը հասկացողութիւնները: Անհասկանալի է թէ ինչու ժողովրդական այդպիսի մի հրատարակութեան մէջ գերմաներէն ցիտատները բերուած են առանց հայերէն թարգմանութեան: Մի՞թէ գերմաներէն հասկացող ըկարիք կը ունենար Շուտի կատարած այդ բըօշիւրի թարգմանութեան: Անփոյթ և անիմաստ բան է այդ, չէ՞:

Նոյն գրքի թարգմանութիւնը «Բան-Գրադտ.» հրատարակութեամբ արժէ 10 կոպ:

Na

Եւզոբ Դօ լիբաւիլլի, Ի՞նչ արաւ օրօրոյի երգը, Թիֆլիս 1907 պատկեր-
ներով, դինն է 10 կոպ-

Վրաց համակրելի գրող և մանկավարժ Դօգեբաշվիլիի այս պատմութեամբը տարածուել է վրաց ընտանիքներում տաս-
նեակ հազարներով: Ի՞նչ է պատճառը աջողութեան:

Կախէթի վաշլեան գիւղում ապրում էր իր հարստու-
թեամբ յայտնի իշխան Ձուրաբ Դարթուիլաձէն, որ ամուս-
նացել էր բարեօրտ, թոյլ կազմուածքով Մագդանի հետ:
Մագդանը հիւանալի ձայն ունէր, իսկ Ձուրաբը գեղեցիկ կեր-
պով թառ էր անում: Նրանք ունէին Քէթօ անունով գեղեցիկ,
կայտառ, ուրախ մի փոքրիկ աղջիկ:

Երկու լեզգիներ փախցնում են Դադստան փոքրիկ աղ-
ջկան որ նրա հօրից յետոյ փրկանք ուղեն:

Երբ ծնողները իմացան այս գժրաղղութեան մասին մայ-
րը ուշաթափուեց, իսկ Ձուրաբն 20 զինուած քաջերի զլուխ
անցնելով չի կարողանում լազգիներին գտնել: Լեզգիները
տանում են Քէթօին Դադստան և կուսակալին իարեւով ա-
սում թէ «այս երեխան ճանապարհին անտառում գտանք»:

Կուսակալը և իր կինը շատ սիրում են փոքրիկ Քէթօյին
և որովհետեւ անգաւազ էին, վարձատրելով լեզգիներին վերցը-
րին Քէթօին: Կուսակալը և իր կինը այնպէս քաղցր, սիրալի և
փաշաքշանքով էին վարում Քէթօյի հետ, որ շուտով մուսցը-
նել սուլին իր ծնողներին: Երկու-երեք տարուց յետոյ նա իո-
կական ծնողների տեղ էր ընդունում կուսակալին և նրա ա-
մուսնուն: Մայրենի լեզուն Քէթօյի մէջ կամաց-կամաց տեղի
տուաւ լեզգերէնին, Կախէթիայի զաւակը դառաւ Դադստանի
զաւակ:

Մի քանի ժամանակից յետոյ վշտաբեկ Ձուրաբը իմա-
նում է մի լեզգուց որ իր աղջիկը Դադստանի կուսակալի մօտ
է: Ձուրաբը ապագրում է նրան թէ «այդ աղջիկը իմ դուստրն
է, որին ծածուկ փախցրել են. ինչ որ պահանջես կտամ, մի-
այն թէ վերադարձնես»: Կուսակալը պատասխանում է. «Եթէ
առաջուց գիտենայի, որ այս նրեխան քո դուստրն է, ես ին-
քս կը վերադարձնէի, բայց այժմ արդէն ուշ է: Թէ ինձ և թէ
կնոջս համար միակ ուրախութիւնն այս աղջիկն է. նա էլ մեզ
շատ է սիրում, այս տեղերին սովորել է, ձեզ բոլորովին մո-
ռացել է:» Ուժով յետ իլել Ձուրաբին չի աջողում: Ձուրաբը
ծպտեալ գնում է մի հաւատարիմ լեզգու հետ Դադստան:

կուսակալը բացակայում էր: Ձուրարին աջողում է փախցնել անտառի մօտով անցնող Քէթօյին:

Քէթօն հասնելով իր ծնողների տունը վշտից տանջւում էր, ոչինչ չէր ուտում, լալով յիշում էր կուսակալին և նրա կնոջ, որոնց իր իսկական ծնողների տեղ էր ընդունում: Իր շուրջը ամեն բան խորթ էր թւում: Միայն մօր օրօրօցի երգը վերջապէս նորոգեց նրա մօռացած մանկական յիշողութիւնները. յետոյ Քէթօն է լինում որ հաշտեցնում է և բարեկամացնում կուսակալին իր հօր հետ:

Այդպիսով սիրող սիրտը բախտաւորեցնում էր իր մերձաւորներին, ինչպէս մարդասիրութեան մի անսպառ աղբիւր:

Այդ սիւժետը ինձ յիշեցնում է Մայն-Րիդի պատմութիւններից մէկը, որի վերնագիրը այժմ մօռացել են. բայց յիշում եմ որ հնդիկների փախցրած աղջկայ մէջ ինչպէս սպիտակամորթ ծնողները կարողանում են յարուցանել մանկական յիշողութիւնները օրօրի երգով:

Պատմուածքը իր մարդասիրական տենդենցով, հետաքրքրական հիւսուածքով և ոճով այնքան գեղեցիկ է որ իբրեւ ընթերցանութեան գրքոյկ յանձնարարելի է: Նկարներն էլ բաւական աջող են, ինչպէս և թարգմանութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պայքար Դուժայի բնօրոքիւնների շուրջ.—Բիւրօկրատիական մանեօլիւներ.—Դաշ-
նակցութիւնը ժողովրդի մէջ.—Կղերական բիւրօկրատից մի ժամանակաւոր կար-
գազրութիւն:—Մի դոկումենտ եւս:

Տարին սկսւում է Երկրորդ Դուժայի ընտրողական պայ-
քարով: Մենք այժմ էլ պաշտպանում ենք նոյն տեսակէտը, որ
բացորոշ արտայայտել ենք Առաջին Դուժայի ընտրութիւննե-
րից առաջ (տես 1906 թ. Ներք. Տես. №№ 1, 3): Ռուսական
յեղափոխութեան ամենաառաջին գործն է վերացնել արսօլիւ-
տիզմը, չինովնիկական անկոնտրոլ տիրապետութիւնը և փո-
խարէնը հաստատել իսկական դեմօկրատիա: Պատմական զար-
գացման ֆազը, բէալ ոյժերի համախմբումը կարող են լաւա-
գոյն դէպքում իրագործել ժողովրդապետութեան այն ձևը, որ
տիրող է այժմ ամենակուլտուրական երկրներում—այսինքն
պարլամենտարիզմը: Այդ առաջին և ապագայ էվօլիւցիայի
համար անհրաժեշտ կեանքի հիմքը նուաճելու համար պէտք
է բոլոր ձախակողմեան մաքուր քաղաքական կուսակցութիւն-
ները միացած ոյժերով գործեն, բլօկներ կազմակերպեն:

Այդ տեսակէտը, ինչպէս գիտեն մեր ընթերցողները,
պաշտպանում էին և այնպիսի ոուս սոցիալ-դեմօկրատներ,
ինչպիսիք են Պլեխանով, Ասկելըրոզ և առաջին Դ. ընտրութիւն-
ների ժամանակ նաև «մենշեվիկները», որոնք աւելի բէալիստ-
ներ են քան աղանդաւոր, բունտարական բոմանտիզմով և
դոկտրինեօրութեամբ տարուած «բօլշեվիկները»: Այս համա-
րում մենք առաջ ենք բերում Էւրոպական ալանաւոր սոցիա-
լիստների կարծիքները սոսական յեղափոխութեան ընոյթի և
սոցիալ-դեմօկրատների բռնելիք ղիբքի վասին: Ընթերցողը
կը տեսնի թէ փորձուած, խոհուն մարքսիստները ի՞նչպէս են
հասկանում իրերի դրութիւնը: Բարեբախտաբար մի տարուայ
փորձը մեծ փոփոխութիւն է մտցրել և մեր սոցիալ-դեմօկրատնե-
րի լայն խաւերում: Մասնաւորապէս Կովկասում սոց.-դեմ.
հայ կազմակերպութիւնը իր «Ձայն» շաբաթաթերթով փոխել
Յունուար, 1907.

է իր տնցեալ տարուայ բօյկօտի տակտիկան, իսկ սոցիալ-դեմօկրատիական «Հոսանքը», ինչպէս և նրա նախորդ «Կայծը», պաշտպանում է «մինչեվիկական» տակտիկան:

Մեր իրականութեան մէջ գուտ ինդուստրիական բանուորութիւնը գեւ համեմատաբար քիչ է. բանուորները մեծագոյն մասը կէս—գիւղացիական կենցաղ է վարում: Իսկ գիւղը, խաւարի և բռնութեան մատնուած գիւղը, մինչև օրս մեզանում միայն տեսել է. մտրակ. բանտ, կեղեքում, հարկահանութիւն ուսուցիչ և ազգային բիրօկրատիայի ձեռքից: Այս վերջին, այսինքն «ազգային» բիրօկրատիան յանձին Դաշնակցութեան ներկայացուցիչների, վերջին տարիների ընթացքում այնքան բարբարոս է եղել, անխիղճ և ենիշերական, որ գիւղացու աչքում ուսուցիչ բիրօկրատիան նրա համեմատութեամբ դառել է մի բախտաւորութիւն: Այսպիսով կեղծ յեղափոխական մի ընկերակցութեան անկօնտրոլ, անպատասխանատու խժոժութիւնները հայ ազգաբնակչութեան ահապահութեան մեծամասնութիւնը ոչ միայն յետ է մղել ազատագրական շարժումից, այլ և խուլիգանացրել է, աւելի աջակողմիան, յետադէմ դարձնելով: Իրան հայ ժողովրդի «արտասուքը սրբող, կեանքն ու գոյքը պաշտպանող» հռչակող զաշնակցական բիրօկրատիան կատարում էր իր զինուորների, շըրջիկների, լիազօրների և կօմիտէների ձեռքով անլուր ոճիրներ, որոնք քօղարկուած էին ու արգարացնում շէֆերի և նրանց օրդանի միջոցով: Եթէ այդ շէֆերը և օրդանները իրանք ևս սոսկային իրականութեան տուած անհերքելի փաստերի գլխաց և չաշխատէին սպառնալիքներով, անուանարկութիւններով, տհաքեկումներով լսեցնել բողոքի ձայնը, խեղտել քննադատութիւնները, փաստաւրանելով այնպէս որ իւր թէ ազգասիրութիւնը պահանջում է ծածկել զաշնակցական սխրագործութիւնները,—մենք կը հաւատայինք շէֆերի անկեղծութեան: Սակայն դրանք շատ ուշ՝ «սրիկաներ», «խաչագողներ», «աւազակներ» անուանեցին միան այն զաշնակցական խմբապետներին և հաղարաւոր զինուորներին, որոնք հաւատարիմ մնալով «հին ուխտին», ապստամբուեցան շէֆերի օլիգարխիական որոշումների դէմ: Շէֆերին հաւատարիմ մնացած ոճրագործները, կեղեքիչները, բռնակալները դարձեալ «հերոսների», «սրբեր»—են...

Անցեալ տարուայ սկզբից սկսած պայքարը զաշնակցական բեմի դէմ սպառնալիքներից և հաւածանքներից չդադարեց. տհաքեկուած ազգաբնակչութեան մէջ գտնուեցան խիզախ տարրեր, որոնք մի շարք մերկացումներով երևան հանեցին քստմեկի իրողութիւններ: Մամուլի մէջ սկսած բանակաւորները հրապարակ հանեցին զաշնակցական աշխարհա-

յեացքի, դորժեղակերպի և սխտեմի կեղծ, հակասական, ֆլատակար և թեթևամիտ հիմքերը, այդ բեթիմի դեմագոգիական-թայֆայական ամբողջ այլոնդակութիւնը:

Բոյկոտ յայտարարելով Պետական Դուռային մեր «աղերքը» վանդալական անխտրականութեամբ կաղմակերպեցին «ազգային-եկեղեցական» սեփական դուռայի ընտրութիւնները: Էջմիածնի կենտրոնական ժողովի ընտրական տրագիկոմեդիան և այդ «պարլամենտի» մէջ դաւեշտական խաղմոտութիւնները և դան դաշնակցական բեթիմի առաջին հրապարակական խոշոր պարտութիւնը—նրա բիւրօկրատների Մուկդէնը:

Իր ընկած պրեստիժը վերականգնելու նպատակով երկու մասի ճեխքուած դաշնակցական ընկերակցութիւնը այնուհետև հետուեց կուսակցական արհեստակցական միութիւններ կազմակերպելու գործի մէջ և բուռն կերպով պատրաստուեց Պետական Դուռ «սեփական» ներկայացուցիչներ ուղարկելու: Ասուած է թէ սովորութիւնը դառնում է երկրորդ բնոյթ: Տարիներ շարունակ գործադրելով «նպատակը արդարացնում է միջոցները» անբարոյականացնող սկզբունքը, մեր դաշնակցական շէֆերը ընտրողական պայքարի մէջ մոտրին իրանց փորձուած սխտեմները: Բարեբախտաբար այս անգամ դաշնակցականների դէմ կանգնած չէին, ինչպէս էջմիածնի ընտրութիւնների ժամանակ, չկաղմակերպուած տարբեր և «խտելիլգնատ խողովակներ», այլ սոցիալ-դեմոկրատիայի նման մի կաղմակերպուած քաղաքական կուսակցութիւն իր գիտակից բանուորութեամբ: Եւ ինչպէս Ստոլըպինի բոլոր հնարները անկարող և դան խեղդել ազգաբնակչութեան իսկական պրոգրեսիւ մասի կամքի արտայայտութիւնը, այնպէս և մեր փոքրիկ Ստոլիպինների և Ստամբուլիւների ջանքերը հազիւ թէ աջողութեամբ պսակուեն, թէև Գանձակի և Երևանի նահանգները դեռ ապատուած չեն դաշնակցական կօշմարից... Այդ սպասելի պարտութիւնը կըլինէր դաշնակցական բիւրօկրատիայի համար Յուշիման... Բայց խուժանը դեռ դաշնակցական է...

Սակայն բիւրօկրատիան հեշտութեամբ չի գիշում իր գրաւած դիրքերը. նա արսօլիւտիզմի ժամանակաւոր ոյժից աշխատում է ամեն կերպ օգտուել, երկարելու համար իր տիրապետութիւնը: Ազգային բիւրօկրատների համար այդպիսի մի արսօլիւտիզմ է էջմիածնի կաթողիկոսութիւնը, որի վեհարանական կամարիլան կոնդակներով և ժամանակաւոր կարգադրութիւններով ձգտում է ապահովել ազգային բիւրօկրատների գրաւած պաշտօնները և անպակաս անել մեր ժողովրդի գլխից նրա խնամակալութիւնը:

Աւելի տգէտ, անսկզբունք և անշնորք լինելով մեր կղերական արքայի տիղմը բնականաբար զանազան «ընկեր» գիւսանապետների թելադրած ակտերն էլ դուրս են դալիս միամտօրէն անհեթեթ, անմիտ, հակասական: Այդպիսի մի նմուշ է ներկայացնում ժամանակաւոր կարգադրութիւնը թեմական տեսուչներ և ուսումնական խորհուրդը ընտրելու մասին: «Ժամանակի» № 3-ում առաջարկւում է «մի կողմ թողնել Էջմիածնի այդ կարգադրութեան թերութիւնները ի սէր մեր նորարդը՝ դպրոցական գործի» — մի պատճառաբանութեամբ. «քանի որ այդ կարգադրութիւնը ժամանակաւոր է»: — Այսինքն՝ հակասական, թերի կարգեր կարելի է մտցնել կեանքի մէջ և «ի սէր նորարդը՝ դպրոցական գործի և մինչև երկրորդ կնիւրոնական ժողովի դումարումը սպասել որ կամայականութեան շարունակուի... Կամայականօրէն շնորհել ընտրելու իրաւունքները միայն որոշ ֆունկցիաների համար թայֆայական բունի միջոցներով ընտրուած անձանց, ապա բոլոր դպրոցների ղեկավարութիւնը կենտրոնացնել ներսիսեան դպրոցի հոգաբարձուներից, ուսուցիչներից (դաշնակցական մաղով անցկացրած կամ հաճակերպուած եւ կաշին փոխած չինովնիկներ), ձեմարանի ուսուցիչներից և վեհարանից նշանակած 3 անձաց ձեռքում (Ուսումնական խորհուրդ) և ապա այդ բոլորի վրայ տարածելով վեհարանական Դիւանի դիսկրեցիօն իրաւունքը — և կարծիք թէ գրանով որ և է բարեփոխութիւն է անւում. — դա զուտ Էջմիածնական քաղաքականութիւն է: Ում էք ուզում մոլորեցնել այդպիսի «ժամանակաւոր» և «ժամանակին» սիրելի կարգադրութիւններով...

Լ. Ս.

25 դեկտ. 1907 թ.

Շատ ճշգրիտ կերպով է պատկերացնում մեր դաւաճներում Հ. Յ. Դաշնակցութեան ստեղծած կարգերը մի անկեղծ գործիչ, որի նամակը առաջ ենք բերում այստեղ, արտատպելով «Մշակից» № 18: Թող թայֆայական կուրութեամբ չայլանդակած մարդիկ տեսնեն թէ ինչ «Травля»-ի, հալածանքների է ընդունակ մի կաղմակերպութիւն, որի օրգանները հանապաղ «ադատութիւնից» և «յեղափոխութիւնից» են բաղբառում: Ահա այդ նամակը:

Կաղզվան, դեկտեմբերի 21-ին:

«Ներկրի» № 64-ի յաւելուածում իմ դէմ գրածին պատասխան ստիպուած եմ գրել «Մշակում», որովհետեւ փորձով համոզուած եմ, որ այն թերթը իր «Թայֆայական» գրչակներով ամիեղցփեղ գրուածներին տեղ է տալիս՝ դանց առնելով զըրպարտուածների գրուածները: Օրինակի համար, մի քանի ամիս առաջ տեղիցս գրուած յօդուած տպուեց այդ թերթում, ուր միանգամայն անտեղի կերպով շօշափուած էր տեղիս պարոցի՝ շատերից յարգուած աւագ ուսուցիչ Զ. Զամբաղեանի, Մ. քահ. Տ.-Գրիգորեանի և նուաստիս պատիւը: Մենք մասնաւորապէս գրեցինք այդ զրպարտութեան դէմ, սակայն «Ներկրի»-ը չտպագրեց, հասարակութեան կողմից 74 ստորագրութեամբ բողոք գրուեց այդ առիթով, այդ էլ չտպագրուեց, որովհետեւ այդ գրողը «Իրանցից» էր: Ուստի, խնդրում եմ, որ բարեհաճէք տեղ տալ գրութեանս, որը կը լինի սուաջին և վերջինը, այնուհետեւ որքան ուզուի են գրեն իմ դէմ այդ թերթում, ես միայն կը լռեմ:

Այժմ ձեզ եմ դիմում, «Ներկրի» խմբագիր, որովհետեւ իմ դէմ գրողը իմ հարուածներից դադուած ասպետներից է, շատ բնական է, որ դատապարտեալի նստարանի վրայից այդ լեզուով կը խօսի դատապարտողի դէմ, իսկ դուք ինչպէս էք զետեղում ձեր թերթում այդպիսի անմիտ ֆրագներ, որ ինձ նման «բաղդախդիրը նոր եմ դուրս ցատկել» և անձնական հաշիւներից պրզուած Դաշնակցութեան գեղծումները մերկացնում եմ: Միթէ դուք էլ չգիտէք, որ այժմ ամբողջ հայ մասուլը և օտար ազգերի մի քանի թերթերը զբաղուած են Դաշնակցութեան սխրագործութիւնները մերկացնելով, և մեր ժողովրդի «արեան ու արտասուքների» աղբիւրը Դաշնակցութեան ասպետների արարքներից է բղխում. գոնէ մեղանում սովորականից դուրս ոչ մի չարիք չկայ անկախ այդ կուսակցութիւնից, ուրեմն էլ ի՞նչ խօսք կարող է լինել անձնական հաշիւների:

Ձեր գրչակը մի այլ անմիտ ֆրագ է գրում, որ ես «ժողովրդին կեղեքելով եմ զբաղուում»: Սա խօսք յաղթուած դիւղացու «ուսես մախոխն» է յիշեցնում. այդ ի՞նչ անորոշ անարկ է. ես էլ խոսք «կոմիտաշուքիւն» չեմ անում, որ «ամեն բանից խէրով է». այլ պարապում եմ քրտինքի արդար վաստակով—երկրագործութեամբ, որին ձգտել եմ իմ կեանքի ամբողջ ընթացքում, որ ուսուցիչ լինելով հանդերձ և՛ մշակու-

թիւն հմ արեւ, և՛ բանուորութիւն, և՛ կարաւանջութիւն և այլն:

Այն, «Երկրի» խմբագիր, ինքս էլ խոստովանում եմ, որ իմ գրածներս կարող են «անհամ» լինել, սակայն դրանով չի հերքւում, որ նրանցում պարզ ճշմարտութիւններ կան դաշնակցութեան սխրագործութիւնների դէմ, և իհարկէ անհամ կը լինեն ու ձեզ դուր չեն գալ: Եւ գիտէք, ձեր այդ անտեղի խրախուսանքներով ձեր գաւառական արքանեակներին այն աստիճան ամբարտաւանացրել էք, որ նրանք իրանցից դուրս ոչ ոքի չեն տեսնում և իրանց անտեղի «փսփոտցներով», անմիտ «խլրտումներով», «գոռում-գոչումներով» և ամենայնաւորն աղքատի գրգռանից փող կորզելով՝ կարծում են թէ մեծ-մեծ գործեր են կատարում: Հէնց այդ հիման վրայ էլ ձեր գրչակ պատանին ինձ գործելու ճանապարհն է ցոյց տալիս դէպի գիւղերը, ուր «շատ գործեր կան կատարելու»... Իսկ ես պատասխանում եմ, որ Դաշնակցութեան այդ խակ համբալների շնորհիւ գիւղերում ամեն գործ տալին ու վրայ է եղել, թշուառ ժողովուրդը թէ նիւթապէս և թէ բարոյապէս ճնշուել է, և ով ուղում է լինի, այժմ թէ գիւղ մտնի, յեղափոխական կը համարուի—գիւղացու հայեացքով դող ու աւաղակ կամ մի թուրք պաշտօնեայ... Հետեւաբար, Դաշնակցութեան ասպիտները ամեն տեղ գործելու ասպարէզը ոչ միայն խլել են, այլ և ասպականել, ուր մոռնողը անշուշտ կը մրոտուի. ուրեմն նախ պէտք է ասպարէզը մաքրել...

Դաշնակցութեան դէմ իմ գրելու «անձնական հաշիւ» էք համարում, առարկելով, որ «մի խումբ սրիկաներ այրել են խանութս 1901 թւին»: Ձեր պարզամիտ ասպետը իր խօսքերով ամեն բան հաստատում է հակառակ իրան: Ուրեմն այդ սրիկաները դաշնակցականներ էին, որ լարուեցի Դաշնակցութեան դէմ: Ես մինչև օրս էլ հաստատապէս չգիտեմ, թէ ովքեր են եղել խանութս այրողները, բայց այս շատ լաւ գիտեմ, որ Դաշնակցութեան ժողովներից մէկում է վճիռը կայացել. իսկ ձեր ասպետը շատ լաւ գիտէ, որ նրանք «իմ նախկին աշակերտներից են, ինչպէս նաև ինքը, ուրեմն ինքն էլ է մասնակցել այդ չարագործութեան, ի հարկէ ոչ անմիջապէս, այլ «տիկ եղող և ուրիշների բերան անող»-ներից է, ինչպէս ամեն մութ գործերում վարվում են այդպիսիները, և լ՛նչ զարմանք, քանի որ Քրիստոսի 12 աշակերտներից մէկը «յուդայացաւ», իմ հարիւրաւոր աշակերտներից մի քանիսն էլ կարող էին... Եւ եթէ նրա ականարկած և իմ կարծեցեալ նախկին աշակերտնիրս սրիկաներ են համարւում, այդ դէպքում ես

վատահորէն կասեմ, որ զո՞նէ մեղանում նրանցից բարձր հաղուագիւտ բացառութեամբ դաշնակցականներ կան:

Այժմ այլ հարց. եթէ ես խանութիս վառելու համար անձնական հաշիւ ունեմ և դրա համար եմ Դաշնակցութեան դէմ գրում, արդեօք ինչո՞ւ էին վառում խանութիս այդ «մի խումբ սրիկաները», այրելուց վերջն էլ խանութիս վրա յարձակւում, ինձ սպանելու գիտաւորութեամբ, (խանութից բացակայ լինելով՝ ազատուեցի մահից), որ եթէ «բաղդախնդիրս նոր եմ դուրս ցատկի» Դաշնակցութեան զեղծումները «քննադատելու»: Ձէ՞ որ ես իմ մի բանի ընկերներով կռիւ սկսեցի Դաշնակցութեան դէմ 1901 թւից և ամեն կերպ աշխատում էինք խանգարել այժմեան «սաթայէլական» ըեժիմի հիմնարկութիւնը մեղանում,*) որից և առաջացաւ իմ խանութի այրուելը...: Այո, թէև այժմ Դաշնակցութիւնը, երբ քայքայման վրայ է, իրան վտանգաւոր ըէժիմը առաջ տանելու ոյժ ու սատար կազմողներին սրիկայ է անուանում, բայց առաջ «նրանց գործի համար ամենակարեւոր անդամներ էր» համարում: Երբ Կարսից եկած Դաշնակցութեան «Վարչութեան» անդամները ինձ առաջարկում էին տեղիս «կօմիտէտի» անդամ լինել (այդ չէն կարող ուրանալ նաև տեղիս իմ հակառակորդները, որ մի բանի անգամ միենոյնը իրանք են առաջարկել), իսկ ես իմ կողմից առաջարկում էի այժմեան՝ իրանց բերանով խոստովանած՝ սրիկաներին հեռացնել յեղափոխութեան ասպարէզից, ասաւ կը մտնեմ գործի մէջ, նրանք ասում էին, որ չեն կարող, որովհետև «նրանք աւելի կարևոր են գործի համար»: Ես այն ժամանակ նրանց չէի հասկանում, իսկ այժմ շատ լաւ գիտեմ, որ այդ, Դաշնակցութեան մէջ «սրիկայական» խումբը, որի վրա է բարդւում բոլոր չարիքների մեղքը, դեկավարների ձեռքում մի գործիք էր, այլ խօսքով կատարեալ զոհ, որի «ձեռքով էին բռնում ամեն փուշ...»: Այժմ ես հաւատացած եմ, որ այդ «սրիկայ» կոչուած զոհերը աւելի բարձր են դաշնակցութեան զեկավարներից՝ զո՞նէ պաւստներում, նրանք զո՞նէ պարզամիտ են, որոնցից կարելի է զգուշանալ: Դրանցից մէկը մի անգամ

*) Ես խանութիս այրուելուց առաջ ոչ միայն յօդուածներ ունեմ գրած այդ մասին, որոնք մնացել են Մշակի» արխիվում, այլ և իմ ընկեր Տ. Տէր-Ներսիսեանցի հետ յատուկ գնացել եմ Թիֆլիս և այդ սկսուող շարիքների մասին ըողորել թէ Ս. Զաւրեանին և թէ Տ. Յովհաննիսեանին: Այժմ նոր եմ հասկանում, թէ ինչո՞ւ այդ պարոնները ոչ միայն «խօսքը կիտլոն էին գցում» այլ և բոլորովին անտարբեր էին վերաբերւում մեր՝ սիրտ կարատող բողոքների դէմ, երբ այնտեղ ներկայ եղող Եղուպեան մէկը խելով արտասուեց,

անկեղծ սրտով խոստովանեց թէ, «ինչ կըսես վարժապետ, ես տեսնում եմ որ ինձանից շատ-շատ բարձրները, ուսում առած մարդիկ, ամեն բան անում են իրանց շահի համար, էլ ես ինչո՞ւ չանեմ...»: Մի այլին, որը խանութիս վրայ է յարձակուել ինձ սպանելու ղիտաւորութեամբ (նա վերջը խոստովանեց, որ իրան հարբեցրել էին), երբ ես գրգռուած՝ «սրիկայ» անուանեցի, նա անկեղծ պայրոյթով բացականչեց. «զուք մեզ սովորեցրի՞ր սրիկայութիւնը», որը մի արդար ըսողք էր Դաշնակցութեան ընթիմի դէմ (նա տաճկահայաստանցի էր):

Աւելորդ չեմ համարում աւելացնել, որ իմ յօդուածը տպագրուելուց շատ առաջ իմ դէմ գրող ապետը բացակայ էր տեղիցս, այժմ էլ նա Թիֆլիսումն է. հաւանական է՝ որ իմ դէմ գրած յօդուածը խմբագ. անդամներից մէկն է շարադրել և հէնց այդ կեղծութիւնը ծածկելու նպատակով նամակը կապուանից է իրրեւ:

Մ. Ղազարեան

Կոմենտարիաները թող անի ընթերցողը!

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մարդկային կեանքի ովկիանոսը—Շարժումներ.—Պարսկական սահմանադրութիւնը—Փրանսիական դեմոկրատիզմը.—Բայիսագի վերջին ընտրութիւնների սուլթով.—Նոր դասիստականքը.—«Ամէնիայի» խոստովանք:

Ուղիւ վեց տարի առաջ նոյն այս էջերում մեր «տեսութեան» մէջ արել էինք մի համեմատութիւն, որ այժմ կրկին գալիս է մեր գրչի տակ, երբ ընդհանուր հայեացք ենք ձգում այն խոր ազդեցութիւնների և ժողովրդական շարժումների վրայ, որ ամենուրեք առաջացան ոռոտական յեղափոխութեան ծփանքներից: Այդ. «մարդկային կեանքը երկրիս վերայ մի համատարած ովկիանոս է, որի մէջ անկարելի է սահմանափակել շարժումը որոշ վայրերում և արգելել որ ծագած ալեկածութիւնը չտարածուի շուրջը և չհասնի նոյն իսկ ամենահեռաւոր եղերքներին» (1901, № 1): Միջազգային հա-

դորդակցութիւնների ներկայ կատարելագործուած միջոցները, մարդկային մասսաների ընդհանուր հասարակական-քաղաքական զարգացման աւելի բարձր աստիճանը աւելի ևս արագացնում են և դիւրացնում մարդկութեան հատուածների զանազան մասերի շփումը իրար հետ: Եւ ծփում է մարդկային կեանքի միշտ շարժուն և կենսունակ համատարած ովկիսներ իր անդուսպ կոհակների իւրաքանչիւր դրոշով մի բան խլելով խաւար լռնութիւնից:

Մենք միշտ մատնանշել ենք այն յարաճուն դեմօկրատիզացիան որ տարէջ տարի յաղթանակներ է տանում ժամանակակից մարդկութեան բոլոր հատուածներում: Դեմօկրատիական առաջխաղացումը առանձին թափ ստացաւ ռուսական մեծ յեղափոխութիւնից: Եւ յոստենները իրանց աչքերով տեսան ոչ միայն յեղափոխական շարժումներ ռուս մահմեդական մասսաների մէջ, որոնք սթափուելով երկու տարուայ ընթացքում տասնեակ տարիների պրոգրեսս կատարեցին, այլ և յետաձգացութեան սովորական օրինակներ դառած Թիւրքիայում և Պարսկաստանում:

Պատմութիւնը իր մանրամասնութիւններով, ի հարկէ, չի կրկնում երբէք, որովհետեւ ոչ մի անցք տեղի չի ունենում բոլորովին միևնոյն հանգամանքներում: Բայց զարգացման ֆազերը պահպանում են իրենց տիպիկ ընդհանուր կողմերը: Այդպէս, օրինակ, Պարսկաստանի մէջ մուսք գործեց սահմանադրութիւնը առանց արսօլիւտիզմի գինուած ընդդիմադրութեան առանց արիւնհեղութեան, լոկ ֆէօդալ-կղերական-բուրժուական ազատամիտների ջանքերով: Չինիք Պարսկաստանի ուրոյն քաղաքական դիրքը ռուս-անգլիական մրցման շնորհիւ, չլինէր նրա մէջ միլիտարիզմի, և ռազմական տեխնիկայի թուլութիւնը, դուցէ այլ կերպարանք ստանար պարսկական խաղաղ յեղափոխութիւնը: Մուզաֆֆէր-էդդին Շահը շատ մեծ հեռատեսութեամբ իր վերջին օրերը անցկացրեց այս աշխարհում, տալով ժողովրդին այն, ինչ սյլ ևս նրան հարկաւոր չէր և տանելով իր հետ պատմական ամենամեծ փառքը՝ Նրա ժառանգ Մահմեդ-Ալի Շահը գահ բարձրանալով պակաս քաղաքական հասունութիւն չցոյց տուեց, յայտնելով թէ «ինքը կոյր կը լինէր և անարժան կառավարելու Պարսկաստանը, եթէ չընդունէր որ միայն լիբերալ սահմանադրութիւնը կարող է բաժրացնել երկիրը և ապահովել նրա փառքն և բարգաւաճումը»: Սահմանադրական օրինակարդը միջոց կը տայ որ Պարսկաստանում աւելի ուժեղ թափով զարգանայ տնտեսական կեանքը: Խոկ հաղորդակցութիւնների, արդիւնաբերութեան և առևտու-

րի վարպաշման հետ հասարակական-քաղաքական առավարէղ
կը դուրս գան ըստ ժողովրդական խաւերը, որոնք և առաջ
կը տանեն այդ սահմանադրութեան դեմօկրատիկացիան, մի
պրօցեսս որ երկար տարիներէ աճման արգասիք է: Նոյն իսկ
ամենաառաջադէմ բուրժուա-դեմօկրատիական ֆրանսիայում
նոր-նոր են մաքրում կեանքից այնպիսի հին հակադեմօկրա-
տիական և բէակցիօն հաստատութիւններ, ինչպիսիք են
պետական եկեղեցին և զինուորական դատաստանները: Ար-
մատական-սոցիալիստ կլեմանսօի մինիստրութեան պատ-
մական կոչումը կարծես հէնց կայանում լինի նրանում որ իս-
պառ վերջացնի հանրապետութեան հաշիւները անցեալի այդ
մնացորդներէ, որոնք իրենց խաւար և տմարդի գերը այնքան
սոսկալի չափերով ցոյց տուին Գրէյֆուսեան տիտանական
պայքարի ժամանակ: Բուրժուական դեմօկրատիան իր
պատմական միասիան կատարելով այնուհետեւ առաջնութիւնը
պիտի զիջի սոցիալիստական դեմօկրատիային, որ և նոր հա-
սարակութեան ստեղծիչը կը հանդիսանայ...

Էվօլիւցիօնական այդ լաւատեսութեան իբրեւ թէ կարող
է հակասել այն պարտութիւնը, որ կրեց գերմանական սոցիալ-
-դեմօկրատիան ընտրութիւններէ ժամա-
նակ: Սակայն եթէ այդ երևոյթի վրայ նայենք նոյն էվօլիւ-
ցիօնական տեսակէտով, կը տեսնենք որ այդտեղ ևս կատար-
ւում է մի ընական պրօցեսս: Ժողովուրդը իբրեւ ամբողջու-
թիւն վերցրած չի կարող այնքան շարժուն լինել և իր աշ-
խարհայեացքով արագ կերպարանափոխուող, ինչպէս նրա մի
շերտը, մի դասակարգը: Եթէ կազմակերպուած պրօլետարիա-
տը դաստիարակուելով զիտական սոցիալիզմի մթնոլորտում
արդէն ազատուել է բուրժուական ֆրադէօլօգիայի և նախա-
պաշարմունքների սղդեցութիւնից և բուժուել շօվինիզմի թոյ-
նից, դեռ չի կարելի տեսլ որ նոր հասարակական կարգերի
համար մարտնչող այդ աւանգարդի պէս են մտածում և ժողովրդ-
դական մասսայի միւս տարրերը: Բիսմարկի երկաթի և ար-
եան քաղաքականութեամբ փառաւորուած «Փատերլանդի» (հայ-
բենիք) զաւակները միթէ թոյլ կը տան որ օտարների աչքում
«նսեմանայ» հզօր Գերմանիան, ինչ որ զիջումներ անելով իր
զաղութային ագգրեսիւ քաղաքականութեան մէջ... Այն թու-
նաւոր կաթը որ ծծում է ժողովուրդը շօվինիստական մտքերով
վարակուած գրականութիւնից և մամուլից, պէտք է փոխուի և
նոր դաստիարակութիւն տրուի նրան. այդ նոր դաստիարա-
կութիւնը պիտի ընթանայ գիտութեան այն նոր ճանապար-

հով որ բացուել է 2. Դարվինի և Մ. Մարքսի հանճարով...

Սոցիալ-դեմոկրատների ներկայ տեղատույթիւնը մի ժամանակաւոր երևոյթ է, աւելի հուժկու մակընթացութեան համար:

25 Յունուարի

Արտասահմանում բուն գրած դաշնակցական բիւրօկրատիայի օրդանները—«Ռազմիկ», «Հայրենիք» և այլն, արձագանք են դառնում այդ կազմակ. կովկաս. զլխաւոր օրդանի հարայհրոցներին, զրպարտութիւններին և խնսխուացիաներին: Անշուշտ, այդ ընկերակցութեան բոլոր անդամների շահերը պահանջում են որ քննական ոգին չգարթնի հայութեանմէջ և նրանք շարունակ իշարը գործ դնեն, հարստահարեն ժողովրդի միամտութիւնը: Բայց և այնպէս քննական ոգին օրէց օր նորանոր նուաճումներ է անում: Ուշագրաւ է այդ կողմից «Արմէնիա» (№ 17) թերթում, սլ. Մ. Փորթուգալեանի հետեւալ խոստովանութիւնը:

«Կարգ մը մարդեր կան որոնք հաճոյք կը զգան խաբուելու մէջ: Դըժբաղդապէս ասոնք մեծ թիւ մը կը կազմեն մեր մէջ: Խօսէ ատոնց ճշմարտութիւնը, մինչև անգամ իրենց բացայայտ և անհերքելի ճշմարտութիւններ, քեզի իրաւունք տալով մէկտեղ՝ դարձեալ կը հակի խաբուելու որովհետեւ թըշուառութիւնն ու տգիտութիւնը թմրեցուցած, անգործութեան մասնած են իրենց դատողութիւն և զօրացուցած են իրենց երևակայութիւն, այնպէս որ հաճոյք կը զգան երևակայական յոյսերով ապրելէ, կողեւորուեն իրենց երազի մէջ տեսած ու շօշափած ոսկիների գէգերով, որոնք անշուշտ շատ դիւրին է ձեռք բերել երազի մէջ, քան թէ իրականութեան մէջ տեսնուած երկաթի ու պողպատի կտորներով, որոնք ձեռք բերելու և յղկելու համար պէտք է բաւական աշխատիլ, պէտք է գործել:

Հարցուր Թուրքահայաստանէն նոր եկողի մը երկրին վիճակը. բոլորովին յուսահատական ցոյց կուտայ քեզ (այս ալ ծայրայեղութեան մէկ կողմն է), ամենատխուր գոյներով նկարագրելով, այնպէս որ այդ դժոխքի մէջ ապրիլն ալ անկարելի դարձած լինելով ստիպուել է ինքն դաղթիլ և եթէ դիւրութիւն լինի, ամէնքն ալ պիտի ձգեն հեռանան: Այդ մարդ կերթայ Ամերիկա. հոն կը լսէ ճառախօսութիւններ որոնք կը պատմեն թէ հայ զօրքերի մեծ խումբեր կը գտնուին Թուրքահայաստանի մէջ ուր մեծամեծ քաջութիւններով յաղթահարած են:

Թիւրք զօրքերին և ահուսարսափի մէջ կը պահեն Թիւրք կառավարութիւնը: Եւ այդ մարդ որ Հայաստանէն գեռ նոր եկած է, որ գիտէ ինչ վիճակի մէջ կը գտնուի երկիրը, որ ինք արգէն պատմած էր թէ երիտասարդները հետզհետէ կը թողուն կը հեռանան և Թիւրք կառավարութեան դէմ տպստամբելու և կռուելու համար կը մնան հոն գրէթէ միայն պատանեակներ և պառաւ կընիկներ, Ամերիկայի մէջ կըսկսի հաւատալ իրեն հաճելի բայց երեակայական պոռոտախոսութիւններէ քան թէնոյն իսկ իր աչքերով տեսածին և իր ճակատի դառն քրտինքով վաստակած դրամները կը յանձնէ Հայաստանի մէջ Թիւրք զօրաբանակներին դէմ կռուող հայ զօրքերին զրկուելու համար: Այլ աւելին կայ. բուն իսկ իր աչքով տեսածները մոռանալով, կըսկսի ուրիշներու աչքերով տեսածները ինքն ալ իր կարգին պատմել իբրեւ ականատես, որով ոչ միայն իր յիշողութիւն կը կորուցունէ և ինքզինք կը խաբէ հաճոյք մը զգալով խաբուելուն մէջ, այլ և ուրիշների ալ խաբուելուն պատճառ կը դառնայ:

Մինչև իսկ կըմեղադրեն Արմենիան որ բէքլամներ, պոռոտախոսութիւններ ընել չուզեր, ուստի գործել չը գիտեր կըսեն:

Խաբուիլ ուզելու այս ախտը այնչափ համաճարակ դարձած է այժմ մեր ազգի մէջ, որ կրնայինք շատ մը օրինակներ մէջ բերել մեր ըսածը աւելի պարզօրէն Յոյց տալու համար: Բայց փոքր ի շատէ դատելու կարող ամէն ընթերցող ալ կրնայ նոյն բանը ընել երբ ուզէ քննութեան առնել իրեն մօտ գտնուող հայ ազգային շրջանակները:

Եթէ մի ուրախալի երևոյթ կայ, այն ալ այս է որ միտքերը հետզհետէ կըսկսին արթննալ այժմ, կուզեն քննել ու քննադատել անցեալն ու ներկայն և վնասել ճշմարտութիւնը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՑ

«Մուրճ»-ի շապկի վրայ տպուած ալեգորիան (այլաբանութիւնը) աւելորդ չենք հասարոււմ մի քանի խօսքով բացատրել: Գիտական ոգին իր ջանով լուսաւորում է այն նոր նանապարհը, որ ցոյց տուին Դարվինի և Մարքսի վարդապետութիւնները: Նա է տանում դէպի լուսաւոր ապագան, կապիտալիստական ֆազիսի միջից անցնելով: Խաղաղութեան ձիթենին կաճի միայն այն ժամանակ, երբ մարդկութիւնը կընթանայ այդ նոր ճանապարհով: Հին կեանքի ստեղծած նախապաշարմունքների ժայռանման սլաքը խորտակելով իր մուրճով մարդկութեան աշխատանքի մասը, նոր սերնդին եւ կանանց սեռին, ինչպէս և քնից զարթած և շղթաները փշրած առիւծանման ժողովրդին, ցոյց է տալիս այդ նոր կեանքի ուղին: Այդ է մեր ալեգորիայի իմաստը:

Մեր այդ իդէան նախ պատկերացրեց իրրեւ բարեւիէֆ քանդակագործ Մ. Միքայէլեանը. սակայն Թիֆլիսում դժուար եղաւ մաքուր կլիշէ շինել այդ բարեւիէֆից և մենք մի քիչ փոփոխած նկարել տուինք այդ տեխնիկօրէն աւելի դիւրին ձև տալով նրան:

1907 թուի բաժանորդագրութիւնը քանալով «Մուրճում» յայտնել էինք մեր մտադրութիւնը, ամսագիրս պատկերազարդ դարձնել, եթէ բաժանորդագրութիւնը սկզբում աջող դնայ: Բայց մեր հրապարակախօսական սեպուհ պարտքը և կոչումը կատարելով, կոխ. յայտարարեցինք Դաշնակցութեան նման մի ահեղ կազմակերպութեան ոճրախնամ արարքների, նրա այլասերող և անբարոյականացնող ընծիմի դէմ և զրանով յարուցինք այդ ընկերակցութեան խուլիգանացած շատ գործակալների կատաղի հալածանքը... Դաշնակցական травля-ն, որսորդական հալածանքը ամենուրեք, ուր տարածուած

է անգիտակից հայ ժողովրդի վրայ զրա ճիգունթական
ցանցը անհետեանք չմնաց... Մենք այդ գիտէինք, բայց
մեր դեմիզն է եղել՝ գերագասել վտանգալից ազատու-
թիւնը զանազան համակերպութիւններէրից:

Malo periculosam libertatem!

Շատ գրագարան-ընթերցարաններից մեզ դիմում են,
խնդրելով ձրիաբար «Մուրճ» ուղարկել: Այդպիսի խնդրեքներ
մենք կը կատարենք միայն այն դէպքերում, երբ կը դառնուն
աւելորդ բաժանորդագներ ուղարկողներ: Ուլիա-Նորաշէնի հա-
մար ուղարկում ենք 1907 թ. «Մուրճ», Բաղուից ըփ. Գար.
Սարգսեանից ստացած բաժանորդագնով:

Խմբագիր—Հասարակիչ՝ Լ. Սարգսեան
Իրուստր՝ Վ. Վանանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՅԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ

1907 թւի

Չ Ա Յ Ն

Քաղաքական, տնտեսական, հասարակական
շարքաբերքի

Բաժանորդագինը՝ Թիֆլիզ տարեկան 3 ը.
կէս տարին 1 ը. 60 կ., ամսական 30 կ., հատով
7 կ. Թիֆլիզից դուրս տարեկան 3 ը. 50 կ.
կէս տարին 2 ը. ամսական 35 կ. հատով 8 կ.:
Արտասահման տարեկան 4 ը. 50 կ. կէս տարին
2 ը. 50 կ. ամսական 45 կոպ.

ԲԱՆԻՈՐՆԵՐ, ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԻԵՑԷՔ ԶԵՐ ԹԵՐԹԻՆ

Հասցէն՝ Тифлисъ, редакция «Дзайнъ», Малая-
Ванкекая, № 4. Արտասահմանից՝ Tiflis, rédaction du
«Dzaïn», Malaja-Vanskaja, 4.

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(35-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ

1907

ԹԻՍՎԱՆԻՆ

«Մշակը» կը հրատարակէ նոյն պըտգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր լացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը. «Մշակի». տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեմէկ ամսանը՝ նոյնպէս 10 ռ., տասն ամսանը՝ 9 ռ., ինն ամսանը՝ 8 ռ., ութը ամսանը՝ 7 ռ., եօթն ու վեց ամսանը՝ 6 ռ., հինգ ամսանը՝ 5 ռ., չորս ամսանը՝ 4 ռ., երեք ամսանը՝ 3 ռ., երկու ամսանը՝ 2 ռ. և մի ամսանը՝ 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւնը. Ամ Եւրիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրեւէ կարելի է խմբագրատանը (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրեւէ չափաւ համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս՝ պէտք է զիմեւ հետեւեալ հասցէով. ТИФ-ЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունուում են բոլոր լեզուներով:

Ազատիկ բաժանորդագրութիւն չէ ընդունում:

ОТКРЫТА ПОДПИСКА
НА 1907 г.

На журналъ

„СОВРЕМЕННАЯ
ЖИЗНЬ“

Журналъ выходитъ одинъ разъ въ мѣсяцъ при ближайшемъ участіи Бельтова. Редакція считаетъ возможнымъ съ достаточной ясностью кратко выразить цѣль, преслѣдуемую журналомъ: она состоитъ въ изложеніи и всесторонней разработкѣ теоріи Маркса. Подписка принимается въ главной конторѣ редакціи журнала „Современная Жизнь“: Москва, Пеглинная, 4, «Журнальное Дѣло» и во всѣхъ книжныхъ магазинахъ.

Подписная цѣна на годъ—10 руб.; $\frac{1}{2}$ г.—5 руб. $\frac{1}{4}$ г.—2 руб. 50 коп. Заграницей на годъ—12 руб. 40 к. $\frac{1}{2}$ г.—6 руб. 20 к. $\frac{1}{4}$ г.—3 руб. 10 к.

Отдѣленіе конторы редакціи въ Петербургѣ при книжномъ складѣ Б. О. Соловьевой и Б. Г. Никольской. Петербургъ, Троицкая, 3.

Продолжается подписка на послѣднюю четверть 1906 г.

Продолжается подписка
НА ГАЗЕТУ

— Б А К У —


ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкой въ Баку: на годъ 7 р., 11 м. 6 р. 50 к., 10 м. 6 р., 9 м. 5 р. 50 к., 8 м. 5 р., 7 м. 4 р. 50 к., 6 м. 4 р., 5 м. 3 р. 50 к., 4. 3 р., 3 м., 2 р. 50 к., 2 м. 1 р. 50 к., 1 м. 1 р. Съ пересылкой въ другіе города: на годъ 8 р. 50 к. 11 м. 7 р. 50 к., 10 м. 7 р., 9 м., 6 р. 50 к., 8 м. 6 р. 7 м. 5 р. 50 к. 6 м.

За границу: на годъ 15 р., на полгода 8 р.

Подписывать можно на всѣ сроки, но не иначе какъ съ перваго числа каждаго мѣсяца. За перемѣну адреса просить высылать 5 семикопеечныхъ марокъ.

Отдѣльные нумера „Баку“ продаются въ конторѣ газеты и у разносчиковъ по 5 к.





ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

(Նոր շրջան VII տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

ԲՈՒՍԱՍԱՆ	ՊԱՐԵԿԱՆ	տարեկան	10 ռ.	ԱՐԱՍԱԿԱՆ	տարեկան	12 ռ.	(32 ֆ.)
		կէս տարին	5 ՝ 40կ		կէս տարին	7 ՝	(18 ֆ.)
		ամսական	90 կ.		ամսական		(3 ֆ.)

Բաժանորդագիրնը կարելի է վճարել նաեւ մաս-
մաս(5—5 ռ.), սերկըրող վճարը լինում է մայիսին: Տարր.
դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանող-
ների, զինուորացիների և քանուղւորների համար բաժանոր-
դագիրն է (Ռուսաստ.) Տ քուրլի տարեկան, որ կարելի
է վճարել մաս-մաս(4-4)ռ.:

Հասցէն. Тифлис «Мурчъ» Tiflis «Mourtech»

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զրել պարզ
վանաւանդ քուեր, յասուկ անուններն ու օտար բառեր, եւ քերթի միայն մի
հետի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտադուրեան, ուղղագրութեան եւ
մոտ պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք
է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը:
2. Չընդունուած մեծ յօդուածները (36 հրեսից աւելի) պահուած են
խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացուում են: Ձեռագիրը յետ ստա-
նալու համար պէտք է ուղարկել հանապարհախար. Փոքր յօդուածներն ու
նոտանաւորները չեն վերագրանում:
3. Դրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւ-
նը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները հա-
մարում են անվճարելի:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները
փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք
է պատասխանի համարուղարկեն նամակադրոշմ կամ պոստային
բւանկ:
6. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ:
Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր
ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի ս.ա. չիկայ համարն
ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ
պէտք է յալանել նաեւ հին հասցէն:

Խմբագիր՝ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ